


ՄԱՏԵՆԱՆՆԱՐ “ՆՈՐ ՕՐ”, ԹԻԻ 14-- ՍՅԷՆՔ

ԵՍ ԿՈՅԱՆԵՐ

Հ Ե Ղ Ի Ն Ս Վ
Մ Ս Ր Ս Է Լ Բ Ռ Է Ղ Օ

84
Պ-92

ՏԳՍԳՐ. “ՆՈՐ ՕՐ” - ԱՌԷՆՔ
1927



20 APR 2006

19 NOV 2010

ԿԷՍ ԿՈՅՍԵՐ



ՀԵՂԻՆԱԿ՝
ԱՐՍԷԼ ԲՈՒԿՈ

Թ.Ս.Բ.Ս.՝
ՊԱՐԳԵՒ ՄԱՐԿՈՍԵԱՆ



ՏԳԳՐ. ՎՆՈՐ ՕՐ՝ = Ա.ԹԷՆՔ
1927

05.09.2013

Հայաստանի Հանրապետության
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՈՑԻԱԼԻՍՏԻԿԱՆ ԿՐԹԱԿՆՆԵՐՈՒԹՅԱՆ
ՄԻՆԻՍՏԵՐԱՆ

701X

Կր. Հարություն Չիբիչով

Մ Ա Ս Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն

Ա.

Մինչ Սոս պզտիկ սրահին գրասեղանին առջև նստած աշխուժորէն կապոյտ հեռագիր մը կը գրէր, մայրը՝ Տիկին տը Ռուվորը, մօտիկը, երկար աթոռի մը վրայ երկընցած, յօդացաւայիններու յատուկ անշարժ գիրքի մը մէջ՝ իր անգլիերէն վէպը առաւ եւ սկսաւ կարդալ:

Գրասեղանը — Սոտի երկար հասակին համար շատ ցած — էր մին այն մահակներէ կարասիներէն, արտառոց, հանդստաւէտ, զոր Լոնտոն կը շինէ եւ Փարիզ սկսած է որդեգրել: Առջնապէս, կահաւորուած պզտիկ սրահին եւ միւսին, շատ աւելի ընդարձակ, որ կը նշմարուէր անվարագոյր որմնածակին բացուածքէն, կը կրէր դրոշմը անդր-Մանչի հաճելի եւ քիչ մը կեղծ ճաշակին, ուր կ'ապաւինի արգիական նրբութիւնը, յաիրացած, զանոնք շատ տեսած ըլլալուն համար, վերջին դարու Ֆրանսական հեշտաւէտ եւ մաքուր ոճէն ետք: Կոր գաւազանիկներով շինուած եւ ազօտ կահանաչով ու ճերմակով ներկուած աթոռներ, կղզիներու փայտով պիտակուած շատ լայն թիկնաթոռներ, որոնք, փոխանակ մետաքսեայ եւ փետուրէ կակուղ բարձիկներու, ծածկուած էին մարդկներէ տափակ եւ պարզ նստոցներով: Պատի ծանկոցները, դրան վարադոյրները կը թողուն վար կախուած, կապոյտ, մոլորագոյն եւ նարնջափայլ ծաղիկներով նախշուն թեթեւ քեփէ եւ միապոյն փռաէ շինուած իրենց երկա՛ր ծալքերը: Դեղինի վրայ մամուագոյն փոսք մը կը ծածկէր գետինը, բրտամական բառէ մը քաղուած թարմ դալարիքի մը նման:



418-95

Ու յարկարածինը, ինչպէս իր զարգարանքը, ցոյց կուտար արդիականութեան նուրբ ճաշակ մը, երէկի հանգրստաւէտութեամբ շտկուած եւ զանոնք օգտագործելու արամադրութեամբ: Երկրորդ յարկն էր այն հսկայ տուներէն միայն, որոնցմով փարիզցի ճարտարապետ մը վերջերս օժտած էր Սոք տը Թրիօմֆի մերձակայ շատ մը ծառուղիները: Ասիկա կը նայէր էթուալի հրապարակին մօտիկը, Իլէպէր փողոցին վրայ. տասնըհինգ պատուհան ունէր ճակատէն եւ մեծ պանդոկի մը տարածութիւնը: Երեք բնակիչներէն իւրաքանչիւրը, (Տիկին տը Ռուվոր ամուսնալուծեալ, յետոյ այրի, կ'ապրէր իր երկու աղջիկներուն՝ Մոտի եւ Ժազըլինի հետ) հոն ունէր իր առանձնայատուկ խուցը, ճակատին զուգահեռական երկար նըրբանցքին նայող: Պարահանդէսի օրերը, մեծ եւ շարժուն հոլ մը որ տան ներքին փակը ամբողջովին կը բռնէր, զերելակներով իւրաքանչիւր յարկի վրայ կը բարձրացուէր եւ այսպէսով տարածութիւնը կը կրկնապատկէր:

Մոտ տը Ռուվորի անհաճոյ չէր այս շրջանակը՝ զորինք ուզած էր եւ ինք յարգարած անոր արդիական վայելչութիւնը: Հակառակ կլորիկ ազդերուն եւ հասուն կուրծքին, նա կ'երեւէր նուրբ, իր հասակին ճկուն երկայնութեանը պատճառաւ. ուսերէն թափթփող շնորհալիութիւնը տոգոյն գլուխի մը փոքրութիւնը, թուխ մազերով պսակուած, թո՛ւլս մը հաղուաղիւտ, նման ոսկեայ հիւսուածքի մը՝ զոր կը թխացնեն եւ որ սակայն, ժանգիմ տակէն, կը թողու ցոլացնել, մետաղին լուսաւոր շառագոյնը: Իր թուլս եւ ծանր մազերը՝ յարգարուած ձաթնական ձեւով, մէջտեղ եր հանէին նեղ ճակատ մը՝ ստորագրծուած մաքուր յոնքերով, նման վրձինի մը գիծին: Հափաւոր մեծութեամբ տննման կապոյտ փայլով աչքերու քիթը տակաւին հրապուրիչ էր, վերի մասը՝ նուրբ, ոնգունքներու վրայ՝ լայնցած, ծայրը պղտիկ վեր ցոցուածքով մը, որ դէմքին կուտար մեծամիտ շարահճութիւն մը եւ կ'որոշէ ֆուստրվարուառին մէջ մեծ պչրուհիներու կոչումը: Միայն բերանը քիչ մը կ'աւրէր գիմար

գիծերուն ներդաշնակութիւնը, պղտիկ, հրաշալի ակոսանքով, բայց աւելի կլորցած քան ճեղքուած, այնպիսի շրթունքներով՝ ուր այլասերումի սպիներու հետաքրքիր բժիշկ մը, հազիւ թէ նշմարելի ուղղաձիգ ծալքեր պիտի նշմարէր, եւ անկասկած այդ ձեւափոխումի հետքերը պիտի մտնեցնէր մինչեւ սիրուն ականջները, որ վարի կողմէն կը փակէին գլխուն. գրեթէ անբլդակ:

Բայց ո՞վ գիտէ, թերեւս այս թեթեւ աններգաշնակութիւններն էին որ խղելով կանացի գեղեցկութեան միօրինակութիւնը, կը կաղմեն թելազրիչ ձգողութիւնը եւ դաղտնիքի խայծը, որոնցմով կարգ մը կիներ կ'ըլլան ամէնէն վտանգաւոր կերպով սիրուածները: Մոտ, ծոած մարդկանիէ պլոթերին վրայ, չիր երկայն գիրերով ծածկեցով թուղթին քառակուսիները, անյաղթելիօրէն հոն կը սեւեռէր իր նայուածքը, որ թերեւս պիտի խուսափէր անտարբերութեամբ աւելի դասական ձեւերու եւ գիծերու վրայէն:

Մետաքսեայ գօտիով իր թխագոյն եւեփէ պարզ հագուստը առանց գոհարի. իր երկար ձեւքերը՝ առանց մատանի. իր մորթին գամելիայի նմանող կարմութիւնը, թեւերուն զճագրութեան մէջ, չե՛ս գիտեր ի՛նչ անորոշ բան մը, և պարանոցին յօրինուածքը զայն կը ցուցնէին տակաւին ծաղկատի աղջիկ մը — ոչ թէ փոքրիկ աղջիկ մը, այլ հազիւ քսանը անցուցած —: Ու լայն աղջրերը, հասուն իրանը, եւ հաստատուն բիրերով աչքերը, զոր այժմ թուղթին վրայէն կը վերցնէր, կը խածնէին իր գրչին ժազղուքը: Խուսափուկ բառի մը փնտուտեքէն փոքով մը եղբրուած ճակատը — տակաւին քիչ մը պատրանքէ ազատ իր ձեւերուն եւ նայուածքին մէջ ոչ մէկ վճռական եւ վերջնական բան չգիտցուելուն, մարդ պիտի վարանէր եւ հարցնէր իւրովի. «Կի՞ն է»: Ստուգիւ օրերու եւ զարգարանքին համեմատ, կը թողուի զինքը կօշիկ «Օրիորդ կամ տիկին» ան վաճառատուներուն մէջ, ուր, երկար ատենէ ի վեր առանձինն կ'երթար իր կառքով, թողով Տիկին Ռուվորը, իր գաղթածինի բնական անփութութեան մէջ ինկած,

քրոնիկ յօդացաւի հետեւանօք :

Ոչինչ աւելի քիչ կը նմանէր Մոտի քան այս խեղճ մայրը հիւանդկախ, այդ վայրկեանին տարածուած իր երկար աթոռին վրայ, գէժքը, ցաւազար իր հիւանդութեան ընդհատ հարուածներէն, և չկարենալով այլեւս, իր թոշնեցը ձեռքէն նետած էր գորգին վրայ: Ելլիւրա Էոնանդէֆ գեղեցիկ եղած էր սակայն, իր երիտասարդութեան մանք սնկարները վկայ էին ատոր, այն ատեն երբ Ֆրանսուս տը Ռուվոր, ի խնդիր բախտի Քուպա կը մեկնի, 1868ին, կը սիրէ՛ այս կինը, կ'ամուսնանայ հետը, և այսպէս առաջին թափով, տէր դառնալով իր հետագնդած հարուստ արկածախնդրութեան: Այդ գեղեցկութենէն եւ մի հետք կը մնայ ներկայիս արթըրթիզմէ չքացած այդ մարմնոյն մէջ, և ոչ ալ անհաւատալիօրէն ուսած, խոռոչացած, ծալածալի զէմքին վրայ՝ զոր անտանելի կերպով կը փոշոտեր, ինչ որ կուտար իրեն հետեւորդ կնոջ մը երեւոյթը՝ ուսկից քտասունը անցուկ շատ քիչ սպասուհիներ անկից կը խուսափին: Իր շնորհներէն զրկուած. այնքա՛ն չարչարանքներու մէջ՝ տակաւին կը պահէր իր ունայնամտութիւնը, նրիտասարդութեան անփոյթ լաւատեսութիւնը զարգարանքի յամառ ճաշակով մը, աչքի զարնող քուրջերով, ոսկեայ սեծ դոճարներով և գունաւոր քարերով պճնելով ինքզինքը. ու Մոտի տիրական հեղինակութիւնն էր, որ կ'արգիլէր զայն, պտոյտի օրերուն, հագնելու արտառոց արդուզարդներ՝ զոր գաղտնի ապսպրել կուտար: Ընդհակառակըն, երբ յօդացաւր զայն կը նեղէր, վերջին աստիճան թափթփած վիճակ մը կ'առնուր, անկողնի հագուստներով, մինչեւ երեկոյ: Այսօր, օրինակի համար թէեւ երեքշաբթի է և օրն ընդունելութեան, մինչեւ ժամը երկուք. տակաւին նա, հովանայի գոյն ժապաւէններով թխալոյն գիշերազգեստի մը մէջ ծրարուած՝ ասդին անդին կը քաշկըռտըւէր. բնա՛ւ չսանտրուած, չլուացուած, միայն երեսները ձերմկցուած բրինձափոշիով:

Մոտ իր հեռագիրը կը լմնցնէր. կ'ստորագրէր, թուականը կը գնէր — 4 Փետրուար 1893 — պահարանը կը փակցնէր և հասցէն կը գրէր:

— Որո՞ւ կը գրես, հարցուց մայրը:

— Ահարոնին: Կէսօրէ վերջ իր գրասենեակը կը գըտնուի. «Կապոյտ»ը կը զրկեմ կաթոլիկ Քոնթուառը:

Տիկին տը Ռուվոր՝ սրտնեղած դարձաւ իր աթոռին վրայ:

— Եւ ի՞նչ կ'ուզես այդ անշա՛ն արարածէն:

— Վաղուան համար, Օբերայի օթեակ մը կ'ուզեմ, առաջին ներկայացման: Իրեն գրեցի, այս իրիկուն զայն բերելու: Անցեալ երեքշաբթի, զինքը այնքա՛ն գէշ ընդունեցայ որ չհամարձակիր վերստին գալու: Իմ պզտիկ տոմս ամէն ինչ պիտի փարատէ, և զայն պիտի տեսնենք այս իրիկուն ժամը 5ին:

Մոտ հեռագիրը մատերուն մէջ պահեց քիչ մը հետը խաղալով: Յետոյ աւելցուց.

— Տնօրէն կաթոլիկ Քոնթուառի. ասիկա լա՛ւ պիտի հնչէ Շանթելներու ականջին:

Տիկին տը Ռուվոր վերստին ազազակեց.

— Շանթելներո՛ւ համար: Կը խորհիմ որ պէտք չուներք անոնց ցուցնելու այս անձը, կեղծ Ալլաքսցի մը, որ կը շահագործէ ժողովրդապետները բարի քոյրերը, կրօնական միաբանութիւնները եւ ինքզինքին կը ներէ ասդին անդին ըսելու որ, քեզի սիրահարուած է, իբր թէ Օր. տը Ռուվորը, Ֆրանքֆորթցի վաշխառուի մը յարմար ըլլար, և որ աւելին ամուսնացա՛ծ ալ է:

Տիկին տը Շանթել, առաջին անգամ ըլլալով երբ հոս կուգայ, լաւագոյնները պիտի գտնէ, ինչպէս ամէն երեքշաբթիներ:

Մոտ կը թողուր խօսիլ իր մայրը, կէս տխուր եւ կէս հեգնական ժպտով մը:

— Այո՛, լաւագոյններ, մրմռաց նէ, միայն քիչ մը շատ նախարարութեան մարդիկ, կանոնաւոր ընդունելութեանց համար: Մասնաւոր զիւանի կցորդներ, ինչպէս Ալեսթրանի երեսփոխանի քարտուղարներ, ինչպէս Ժիւլիէն, հայրիկին շրջանակի մնացորդը եւ օգաղնացութեան ժամանակ ներկայացուած ծանօթներ: Ասոնք չե՛ն որ ազդեցութիւն պիտի գործեն Մաքսիմի եւ իր մօր վրայ:

— Եւ տիկին Իւսէ՛լլի:

— Օհ: ան ալ:

— Ինչպէ՞ս: Սփէցիա դքսուհիին բարեկամուհի՞ն:

— Ստուգիւ, ընդհատեց երիտասարդ աղջիկը: Ատիկա քիչ մը շատ կը խօսուի: Եթէ հոս հանդիպի Շանթէյներու, պէտք չէ խօսիլ Սփէցիա դքսուհիին վրայ:

— Կը կարծե՞ս, որ պիտի ունենանք երկու լը Թէ-սիէները, հարցուց մայրը, լուսթենէ մը վերջ:

— Փոյի մասին ապահով չեմ, այսօր ծերակոյտին մէջ կարեւոր վիճարանութիւն մը կայ ֆրանսական պանքային մենաշնորհին վրայ. պիտի խօսի: Բայց Հեքստր պիտի գայ անշուշտ, ինչպէս ամէն երեքշաբթի:

— Լա՛ւ ուրիմն, կ'ենթադրեմ որ Մաքսիմ եւ մայրը հոս հանդիպին ծերակուտականի մը, ապագայ նախարարի մը, ինչպէս Փոյ, եւ տեսակ մը իշխանուհիի, ինչպէս տիկին Իւսէլլի:

— Կաթոլիկ ելեւմտական մեծ ընկերութեան մը տնօրէնը, ինչպէս է Ահարոն, ընդմիջեց Մոտ հեղնութեամբ:

— Եւ կատարեալ ազնուազարմ մը, աչքի զարնուած սքորդ մը, ինչպէս Հեքստր:

— Գո՞հ պիտի մնան, աւելցուց մանկամարդ աղջիկը: Աստուած տայ:

— Կը կարծե՞ս թէ ամէն օր ասանկ մարդիկ կը տեսնեն: Կ'ուզէի ներկայ ըլլալ անգամ մը, իրենց մէկ ընդուօնելութեան, վէզէրիի մէջ, ի Փուլթու:

— Չեմ գիտեր թէ, յարեց, Շանթէյները գո՞վ կ'ընդունին վէզէրիի մէջ: Թերեւս, շատ ծիծաղելի եւ շատ ոչինչ մարդիկ, բայց համոզուած եմ, որ այդ գաւա ին ամէնէն ազնիւ, ամէնէն յարգելի եւ բարեկեցիկներն են, որ հոն կը յաճախեն:

Տիկին տը Ռուվոը պատասխանեց.

— Պա՛հ... ոչ սք աւելի պարզ է, քան Տիկին տը Շանթէլ: Կը յիշե՞ս այն ամառ, որքա՞ն լաւ ժամանակ անցուցինք Սէնթ Ամանի հանքաջուրերուն մէջ: Կէսօրէ վերջ պէզիկ: Մեր պտոյտները քով քովի, բուս բուս կառքերով.

— Ընչա՞ն է, ըսաւ Մոտ մտածկոտ: Երկուքնիք շա՞տ ա-

ղէկ ժամանակ կ'անցնէիք:

Կը խորհէր թէ ինչ անտեսանելի կապ մը կրցած էր այսքան դիւրութեամբ իրարու մօտեցնել, Հիւսիսի պզտիկ կայարանի մը մենութեան մէջ, իր մայրը՝ պառաւ ծանծաղամիտ թոշուն մը, Մաքսիմի մօրը՝ Տիկին տը Շանթէլի հետ խստակրօն գաւառացի կին մը:

«Երկուքն ալ, խորհեցաւ, չափազանց ջերմեռանդներ, անոնցմէ իւրաքանչիւրը ունի միեւնոյն հիւանդութիւնը՝ տարբեր պատահարներով, եւ մէկը ինքզինքը աւելի քիչ հիւանդ կը կարծէ միւսէն: Եւ յետոյ այս ամէնը խորհրդաւոր է: Ինչո՞ւ համար ես հաճելի եմ Մաքսիմի...»

Վառարանին ղէմը կանգնած, նա կը վերյուշէր այն չորս օրերը՝ զորս Մաքսիմ տը Շանթէլ եկած էր անցնել իր մօրը մօտ, ի Սէնթ Աման, եւ այդ միջոցին զղացած էր այդ երիտասարդին համակրանքը, իրեն կապուելը, առանց որ ինք տեղի տուած ըլլար: Յետոյ, յանկարծ մեկնած էր, փախած էր Վէզէրիի միայնութեան մէջ, ուր երկրագործական ընդարձակ ձեռնարկի մը վարիչն էր:

Երկա՛ր ամիսներ անկից լուր առած չուներ, բայց միայն տիկին տը Շանթէլի նամակներէն՝ ուղղեալ իր մօր: Մօտ կը խորհէր.—

«Ի՞նչ կարեւորութիւն ունի, զիս կը սիրէ, եւ չի կրնար մոռնալ զիս»: Եւ անա կը վերադառնար իր մօրը հետ՝ զոր կ'ուզէր բժիշկի մը ցոյց տալ.

— Օրիորդը բա՞ն մը կ'ուզէ.

Սենեկապանուհիին էր, գանգակով կանչուած Մոտի կողմէ:

— Ա՛յ, Պէթթի՛, ասիկա հեռագրատուն տար. կրնաք մեծ սրահին մէջ կրակը վառել, բայց նախ գոցեցէ՛ք քալօրիֆէրը: Մարդ կը խեղդուի հոս:

— Շատ աղէկ, օրիորդ:

— Ժամը չորսուկէսին, պիտի երթաք Օր. Ժազըլինը դպրոցէ՛ր բերելու: Պիտի խնդրէք իր մէն անմիջապէս հագուելու եւ պիտի գաք ինձի օգնելու սրահին մէջ, թէյի մեծարանքի պահուն:

— Այո՛, օրիորդ. ամէնը ա՛յո է :

— Այո՛, ա՛հ, սպասեցէք : ժամը երեքի միջոցին մանկամարդ աղջիկ մը պիտի գայ, զիս փնտոելու. ուղղակի հոս պիտի մտցնէք, առանց մեծ սրահէն անցնելու, եւ ինծի լուր պիտի տաք :

— Նոյն իսկ էթէ հի՞ւր ըլլայ :

— Նոյն իսկ եթէ հիւր ըլլայ : Բայց յայդ յամուռն ոչ

ո՛ք պիտի ըլլայ :

— Զո՞վ պիտի ընդունիս, հարցուց Տիկին տը Ռուվորը դժուարութեամբ չտկուելով իր աթոռին մէջ :

— Ձե՛ս ճանչնար : Վանքի բարեկամուհի մըն է. զոր Բէքրիւսէն ելլելէս ի վեր տեսած չունիմ :

— Ի՞նչ կ'ուզէ քեզմէ :

— Բայց չե՛մ գիտեր, վրայ բնրաւ Մոտ, քիչ մ'անհամբերութեամբ : Սա՛ գիտեմ, որ պէտք ունի զիս տեսնելու :

— Եւ կը կոչուի՞ :

— Տիւրուա... էթիէնէթ Տիւրուա :

Տիկին տը Ռուվորը պահիկ մը մտածեց :

— Էթիէնէթ Տիւրուա... Ո՛չ, չեմ յիշեր :

— Երբէ՛ք բա՛ն մը չեա յիշեր, յարեց Մոտ :

Խօսակցութիւնը կարճ կապելով՝ դնաց պատուհանին վարագոյրը վերցուց, դիտեց փողոցը, որ քչիկ մը ձիւնով ծածկուած էր, հակառակ որ ձմեռնային փայլուն արեւ մը կար. կառքերը կը թաւայէին գոց պատուհաններով. և անցորդները կը խուճապէին իրենց քայլերը :

Սենեկապանուհին, պզտիկ սրահին սեմին վրայ կեցած, հարցուց.

— Օրիորդը այլեւս պէտք չունի՞ լինի :

— Ո՛չ, պատասխանեց Մոտ :

— Աղջիկս, ըսաւ Տիկին տը Ռուվորը, ջանալով ոտքի ելլել, զիս առաջնորդեցէք սենեակս : Ըսէ՛ ուրեմն Մո՛տ.

— Մայրի՞կ.

— Կարելոր չէ որ աճապարեմ, անանկ չէ՞ :

— Ո՛չ, կեցի՛ր սենեակդ, մինչեւ որ տիկին տը Շանթէլ գայ. քեզ իմաց պիտի տամ :

— Լա՛ւ, երթանք, Պէթթի, թե՛ւրդ :

Մեծ սրահէն կ'անցնէր, կ'սթնած սենեկապանուհին, ձախ սրունքը ծանր եւ քաշքշելով : Դուրս ելլելէ առաջ՝ դարձաւ.

— Մո՛տ :

— Ի՞նչ, մա՛յր.

Մօտեցաւ մօրը, ջանալով զսպել իր ջղայնատութիւնը : Հիւանդը կը փնտռէր իր բառերը, բոլորովին շուարած, թէ ի՞նչ պիտի ըսէր.

— Այն գլխազարդ փունջը՝ սուտ քարերէ շինուած, զոր անցեալ օր տեսանք «Վիէօ Ժարոն»ի մէջ.

— Այո՛, լաւ ուրեմն :

— Մուցայ քեզի ըսելու, գնեցի : Այս իրիկուն պիտի բերեն :

Յանկարծ Մոտ վարդագոյն դարձաւ, իր ճակտին փոթը խոռոչացաւ եւ կապոյտ աչքերը սեւցան :

— Բայց, ապուշ բան է այդ : Ինքզինքին տէր դառնալով՝ ըսաւ, ի՞նչ պէտք ունէիր ատոր :

— Պէ՛տք, ո՛չ, անշուշտ. յարեց տիկին տը Ռուվորը : ատիկա ինծի հաճոյք կը պատճառէր, եւ ոեւէ զրօսանք չունիմ. չէ՞ : Միեւնոյն ժամանակ հաշուեցուցակն ալ պիտի բերեն : Երեք հարիւր ֆրանք աւելի կամ պակաս, բան մը չէ :

Մոտ ձայն չհանեց, մինչ մայրը կը հեռանար Պէթթիի բազուկին մտած : Գրասեղանին վրայէն բարակ գրչակալ մը առաւ մտացիք, բայց իր մատերը այնքան կը դողային, որ զայն կոտրեց. եւ վառարանը նետեց : Պէթթի վերստին երեւցաւ :

— Օրիորդ :

— Այդ կի՞նն է որ եկաւ :

— Ոչ, օրիորդ, Պ. Ժիւլիէնն է :

Մոտ ձեռքով դարկաւ վառարանի մարմարին :

— Պէթթի, փոխանակ Պ. տը Սիւպէրսօ կոչելու :

կարծ Պ. Ժիւլիէն մը կ'ըսէք: Մարդու առջեւ ծիծաղելի է այդ: Ինչս'ու ներս չի մտներ Պ. տը Սիւպէրսօ:

Ժօզէֆն է որ դուռը բացաւ: Չէր գիտեր թէ ո՞ւր էր օրիորդը: Այն ատեն պ. Ժիւլ... պ. տը Սիւպէրսօ, առանց հարցնելու դնաց օրիորդին սենեակը:

Պէթթի իր խօսքը լմնցուց ամենայն պարզմտութեամբ. Մոտ բնաւ չզարմացաւ:

— Լաւ, իմացուր որ իրեն կը սպասեմ հոս:

Առանձին մնացած, ինքզինքը դիտեց վառարանին հայելիին մէջ, առանց պչրասիրութեան, աշխարհիկ բնագրով, որ օրուան մէջ առաջին անգամ, պիտի տեսնուէ մարդու մը կողմանէ, ըլլայ եղբայր մը կամ հին բարեկամ մը:

Ժիւլիէն տը Սիւպէրսօ պզտիկ սրահին սեմին վրայ երեւցաւ. հաղիւ երեսուն տարեկան, վերջին ծայր ընտրանօք հագուած 1830ի վայելչասէրի մը նման: Մեծղի եւ դնդերաւոր, չոր եւ ամօյն գէմքով, ինչպէս բոլոր պառքերը-դրեթէ անպիս, բայց սքանչելի եւ քիչ մը երկայն թուխ մազերով: Մաքուր թերագծերով գէմքին արտայայտութեամբ, ուղիղ դունչով, բարակ շրթունքներով, կարծր քիթով, խիտ, գրեթէ սպառնալից պիտի երևէր, եթէ չունենար բաց կապոյտ եւ գեղեցիկ աչքերուն փայլը, վուշածաղկի կապոյտը, գորովի եւ անոր շութեան աչքեր, կնո՛ջ աչքեր:

Մոտ դարձաւ եւ մէկ ակնարկով դիտեց զայն. սիրահարի թովիչայն ակնարկը՝ որ միշտ հրապուրիչ, վայելչագեղ կը գտնէ իր սիրած մարդը:

Պարոնը առաւ իրեն երկարուած ձեռքը եւ գայն համբուրեց ձեքձեքելով:

— Բարի լոյս, օրիորդ, ինչպէ՞ս էք:

Մէկ ակնարկով դիտեց գտնուած տեղերնին եւ քովի ընդարձակ սրահը:

— Ո՛հ, մէկը չկայ, կիսաձայն յարեց Մոտ:

Այն ատեն գայն իրեն քաշեց, սեղմեց, գգուելով չըթունքները, կուրծքին ուռեցքը, անութին խորհրդաւոր ակօսը, յետոյ բարձրանալով մինչեւ պարանոցը, աչքերը,

այտերը, եւ ապա փոխանակելով երկարատեւ համբոյրներ, երբ բերանները այլեւս իրարու կը հպէին:

Բոլորովին գողգոջուն, իրարմէ բաժնուեցան: Մոտ, իրեն տծգոյն մորթին վրայ քիչ մը վարդագոյն, հայելիին դարձաւ, մատերովը շտկեց իր մազերը եւ հագուատին ծաքերը: Սիւպէրսօ, մահոկենիէ գրասեղանին քովիկը աթոռի մը վրայ ինկած, կը դիտէր գայն:

Ոտքի վրայ, նէ իր ձեռքերը կոթնցուց թիկնաթոռին եւ գէմ առ գէմ:

— Մո՛տ. սիրեցեա՛լ Մոտ, մրմնաց երիտասարդը:

Նէ նայեցաւ աչքերուն խօրը, ցած եւ որոշ ձայնով մը, հաղիւ երերցնելով շրթունքները, ըսաւ.

— Կը սիրե՛մ ղքեզ:

Իր դիմագիծերէն, իր աչքերէն, իր բոլոր գէմքէն եւ բոլոր մարմնէն, կուսութեան անորոշ ձաճանչը, որ զինք քիչ առաջ կը պատէր, երբ մօրը քով նստած կը գրէր, այժմ անհետացած էր: Նէ կին կ'երևէր, նայուածքին մէջ տաքուկ բոցով, պարտեալի չեմ գիտեր ինչ մը իր կացքին մէջ, որով ինքզինքնին կը մատնեն կոյսերը՝ երբ անգամ մը կը նուազին գգուանքներու ներքե:

Ժիւլիէն պատասխանեց.

— Պէտք ունէի գայն ձեզմէ լսելու: Գէշ պահեր անցուցի մեր վերջին հանդիպումէն ի վեր. Ռըվէրսիէներու տան մէջ:

Նէ նստաւ թիկնաթոռին վրայ, աչքերը պայծառացուց եւ հարցուց.

— Դարձեա՞լ խաղ:

— Ո՛հ, ոչ, ընդհակառակն: Առէք. անա իմ գիշերուան շահս:

Չեռքը գրաւ իր երկայն թիկնացին ներքին գրպանը եւ անկից դուրս հանեց կէս մը, ցոյց տալու համար Մոտի, պանքոտմսերու տրցակ մը:

— Բուայինչ փողո՞ց, հարցուց Մոտ:

— Ո՛հ. Տէօ-Մոնտի մէջ, Ահարոնի գէմ:

— Ահարոնի՞ գէմ. Աւելի աղէկ: Ինչ որ է, անիրաւ էք:

Ինձի խոստացած էիք. . .

Սիւպէրսօ անտարբեր ձեւ մ'ըրաւ :

— Պա՛հ, ի՛նչ կարեւորութիւն ունի : Երբեք աւելի տալիակ չպիտի ըլլամ քան հիմա, եւ պէտք է որ վայելեմ կեանքը, այնպէս չէ՞ : Յետոյ ասիկա զիս կ'արդելէ մտածելու :

Նէ բռնեց անոր ձեռքը, ժպտելով .

— Ի՛նչ, կ'ուզէք ուրեմն ժողովուրդ : Զի՞ս :

— Ա՛հ, ստուգիւ պիտի ուզէի այդ բանը, յարեց երիտասարդը, բրտօրէն քաշելով իր ձեռքը :

Բայց անմիջապէ՛ս .

— Ներեցէ՛ք, Տխուր եմ եւ ջղայնացած : Զիս շա՛տ կը վշտացնէք :

Մոտ աչքերով զայն հարցափորձեց : Երիտասարդը յարեց .

— Կը վշտացնէ՛ք զիս : Այլեւս իմս չէք. զձեզ այլեւս իմս չեմ համարեր :

Առանց խօսելու, նայուածքով անոր ցոյց տուաւ այն տեղը՝ ուր քիչ առաջ իրարու փաթթուած էին սիրահարներու պէս, եւ յիշատակը սարսռացնել տուաւ ժիւլիէնը :

— Մի՛շտ յանդիմանութիւններ, մի՛շտ : Կ'ընեմ ինչ որ կրնամ, սակայն կը վստահեցնեմ ձեզ :

Սիւպէրսօ քիչ քիչ զսպուած եւ հանդարտած, գլուխը կը ծօռէր :

— Ծա՛տ ժամանակ է, թոթովեց, շա՛տ, որ եկած չէք :

Այս վերջին խօսքերը խիստ կամաց ըսած էր. իբր թէ կը վախնար լսուելէ անկէ, որու կը խօսէր : Եւ իրօք, Մոտ, յանկարծ ոտքի ելաւ, աչքերը սեւցած, ճակատը փոթոթուած, գեղեցիկ դէմքը այլայլած :

Ժիւլիէն արդէն անոր մօտեցած էր եւ կ'աղաչէր :

— Օ՛, զիս չէք ուզեր, Մոտ : Այո՛, գիտեմ որ ասիկա ձեզ կը վիրաւորէ, երբոր կը խօսիմ . . . բայց չեմ կրնար չխօսիլ ձեզ, համակ-կեանքս է անիկա, այդ յիշատակը, այդ երկու անգամները : Կ'երգնում որ եթէ ինձի ըսուէր՝

«Նէ պիտի գայ տունդ, զինքը հոն պիտի պահես մէկ ժամ, առանձինն քեզի հետ, ինչպէս երկու անգամներ, եւ յետոյ քեզ պիտի սպաննեն, քեզ հրացանազարկ պիտի ընեն անմիջապէս», պիտի ընդունէի եւ պիտի օրհնէի զանոնք՝ որ զիս պիտի մահացնէին : Որովհետեւ կը սիրեմ քեզ :

Նէ կը դիտէր, արմուկները դրած վառարանին սեղանին վրայ, թողնով զայն որ խօսի : Ծարունակեց, ձայնը հատկութեալ :

— Վերջին անգամ մանաւանդ . . . : Վերջին անգամ որ եկաք — 3 Յունվար — . Ո՛հ, որքա՛ն զեղանիս ես, Մոտ, քեզի պէս մը չկա՛յ : Քու թեւերուդ, մազերուդ հօտը մնաց անկողնոյն մէջ, Զուգեցի որ այդ անկողինը բացուի . հոն չպատկեցայ մինչեւ այդ հոտերուն անհետանալը : Եւ դու այլեւս չես ուզեր :

Նէ կամաց մը անոր դարձաւ :

— Որքա՛ն անիրաւ ես : Հոս գրեզ չե՛մ ընդունիր, ու զածիդ չափ. Արդեօ՞ք մեր վրայ կը հսկեն : Արդեօ՞ք գրեզ կ'արդիլին, սենեակս մնայու : Մայրս վերջ ի վերջոյ բնական գտաւ այս բանը եւ սպասաւորներն ալ վարժուած են :

— Ո՛չ, յարեց Սիւպէրսօ : Ուրիշ բան է գրեզ իմ տանս մէջ ունենալը : Կ'ըսես որ սպասաւորները վարժուած են : Լաւ ուրեմն, ես որ վախկոտ չեմ, որ կը ծագրեմ գնդակ մը կամ սուրի հարուած մը, հոս եկած ատենս, Պէթթիի եւ Ժողէֆի ծածկամիտ դէմքերուն առջեւ կը չփոթիմ : Մայրդ աչք կը գոցէ, երբե՛ք բան մը չպիտի տեսնէ. և սակայն կը նեղուիմ իրեն բարի լոյս մը ըսելու : Աւելի ազատ ներս կը մտնեմ, երբ դիտեմ որ հոս չէ : Հապա ժազըլի՞նը :

— Ո՛հ, ժազըլինը, տղայ մը . . . :

— Տղայ մը՝ որ ամէն ինչ կը տեսնէ, և որ գիտէ հասկըցնել մեզի, տեսածը :

— Մոտ մօտեցաւ ժիւլիէնի դէմքին և իր բերանը ա, նոր երկարեց :

— Կը սիրե՛մ զքեզ : Ասով պէտք է բաւականանաս : Գիտե՞ս քաղքենի սէրերու վայելուչ ձեւերը, երբոր մահկամարդ ազդիկ մը կը սիրես : Նայէ ինձի. չե՞ս կրնար քի

մը տառապիլ, զիս ունենալու համար:

Ժիւլիէն մըմոաց տիրօրէն:

— Երբե՞ք զքեզ չունեցայ:

— Մի ըսեր այդ բանը: Ապերախտութի՛ւն է այդ եւզէշ սէր: Ինձմէ քեզի տուի այն ամէնը՝ զո՞ր կրնայի տալ:

Պաղատեցա՛ւ նա:

— Ըսէ՛ ինձի միայն թէ, վերստին պիտի գա՞ս:

— Ո՛ւր:

— Օ՞մ փողոց: Ի՞մ տունս:

Նէ անհամբերութեան ժեշտ մ՞ըբաւ:

— Դարձեա՛լ. քեզի ըսի որ հսկողութեան տակ եմ: Այդ թշուառական Իւսելլին՝ որ քեզի հետ սիրաբանեց եւ զուն չուզեցիր, այո՛, այդ կինը ետեւէս ինկած է, որովհետեւ գիտէ թէ զիս կը սիրես: Վստահ եմ, որ զիս կը հետապընդէ իր ժարգոցմով: Կը խնդա՞ս: Գիտես որ պզտիկ բանէ վախցող աղջիկ մը չեմ: Երկու անգամ, որ այդ փողոցը եկայ, նէ գիտցաւ, գոնէ կասկածեցաւ:

— Յարկաբաժինս պիտի փոխեմ:

— Ո՛չ, հաւատա՛ ինձի եւ անկարելին մի պահանջեր: Վստահէ ինձի, որպէսզի յաճախակի կարենանք տեսնուիլ եւ լաւադոյն ձեռով: Բայց մի՛ չարհարեր զիս: Այս միջոցիս աւելի քան երբեք, պէ՛տք է որ ինքզինքիս վրայ հսկեմ:

Ժիւլիէն, յանկարծակիի եկած, հարցուց.

— Աւելի քան երբե՞ք: Ինչո՞ւ համար: Բա՞ն մը կայ արդեօք:

— Կարելի է, յարեց Մոտ:

Տժգունեցաւ, եւ պահ մը լուռ մնաց: Յետոյ, ինքզինքը հանդարտած ձեւացնելով.

— Արդեօք կրնա՞ք ըսել ինձի, թէ ինչի՞ մէջ կը կայանայ խնդիրը:

— Այո՛, պատասխանեց Մոտ, ծանրօրէն աչքերը անոր աչքերուն մէջ: Ամէն բան պիտի պատմեմ, եթէ կ'ուզես ըլլալ... ինչ որ իրաւունք ունիմ պահանջելու, որպէսզի ըլլաք:

Ժիւլիէն նշան ըբաւ, որ մտիկ կ'ընէր: Երկուքն ալ առանց ճիգի, իրարու նկատմամբ, անտարբեր աշխարհիկներու զիրքը տոած էին:

— Է՛հ, ուրե՛մն, ըսաւ Մոտ, երկու բառով: Վերջին Յուլիս ամսոյ մէջ (կը տեսնէք, որ բաւական ժամանակ անցած է) Սէնթ Ամանի հանքային ջուրերը հանդիպեցանք զաւառացի կնոջ մը, տիկին տը Շանթէլի, ուր գացած էր դարմանուելու: Իր աղջկան՝ Ժաննի հետն էր, տասնըհինգ տարու, բաւական գեղանի, բայց կատարեալ ոչնչութիւն մը: Իր զաւակը՝ Մաքսիմ, վերջին օրերը, քրոջը հետ, հոն եկաւ քանի մը օր մնալու:

Նէ խօսքը ընդհատեց.

— Կարծեմ զանգակը զարնուեցաւ:

— Այո՛, ըսաւ Սիւպէրսօ, լսեցի: Ահաւասիկ դուռը կը բացուի, : Այցելուներ, արդէն:

— Ո՛չ, պզտիկ մըն է...: Բայց, կարծեմ կը ճանչնաք զայն, պզտիկ Տիւռուան... էթիէնէթ Տիւռուան է...:

== Մաթիլտ Տիւռուաի աղջի՞կը:

— Եւ Տիւռուա Սիւզաննի քոյրը, ձեր նախկին սիրուհին:

— Օ՛հ, սիրուհի՛:

— Ո՞չ: Կ'ըսուէր թէ իր նախածեռնարկուն զուք եղած էիք:

— Կարելի՞ է գիտնալ, այս տեսակ աղջիկներու մասին, յարեց Սիւպէրսօ: Կարծեմ, երբեք առաջինը չեմ եղած: Եթէ թոյլ կուտաք, կը նախընտրեմ չհանդիպիլ իր քրոջ: Ինչո՞ւ կ'ընդունիք զինքը:

— Փեքբիւսի մէջ միասին էինք, եւ կ'ըսուի թէ մօրը հետ կ'ապրի շատ պարկեշտօրէն: Մնաց որ չեմ գիտեր, թէ ի՞նչ կ'ուզէ: Բայց լաւ ընկերուհիներ էինք եւ զինքը տեսնելը հաճոյք պիտի պատճառէ ինձի:

Ժողէֆի նենգամիտ դէմքը երեւցաւ սրահին զբան մէջ:

— Օրիո՛րդ...: Այն աղջիկն է:

— Կը մեկնիմ, ըսաւ Սիւպէրսօ:



— Մեծ սրահէն անցէք: Այս իրիկուն, չէ՞: Ժամը հինգուկէսին եկէ՛ք: Մայրիկը իր սենեակը պիտի ըլլայ: Ուղղակի հոս մտցուցէ՛ք Օր. Տիւտուան, նրբանցքէն. Ժողէ՛ք:

Ու, մտածկոտ Սիւպէրսօն առաջնորդելով մինչեւ մեծ սրահին գուռը, Մոտ ըսաւ անոր.

— Եկէ՛ք, հո՛ս պիտի ըլլայ. . . կ'ուզեմ որ դաք, ներկայ ըլլաք:

Աւելի ցած, երբոր սեմէն անցաւ, նէ կիսարաց դռնէն, ըսաւ անոր.

— Կը սիրե՛մ դքեդ:

F,

Այցելուհին արդէն պզտիկ սրահը մտցուած էր. սիրունիկ մը, քիչ մը մտռաւ, գորշ աչքերով, նուրբ եւ կլոր դիմագծերով, զեղնագոյն մազերով, կձկուած՝ ինչպէս լորսամարզի մը՝ իր ձեռնալոտիկին, վիզի մուշտակին եւ գըլխարկին փետուրներուն մէջ:

Մոտին դէպի իրեն գալը տեսնելով, այնքա՛ն մեծ, այնքա՛ն փայլուն, այնքա՛ն «Տիկին», երկչոտութեամբ մը թոթովեց:

— Բարի՛ լոյս, օրիորդ. . . : Զձեղ. . . :

Բայց Մոտ զայն ուրախութեամբ համբուրեց:

— Օրե՛րդ. . . ձե՛ղ. . . : Կ'ուզե՞ս այդ ազեղ բառերը մէկզի թողուլ, Թիէնէ՛թ, եւ ինձի խօսիլ այնպէս, ինչպէս գիշերօթիկին մէջ:

Էթիէնէթ, գոհունակութեան հակազդեցութենէ մը ու գեւորուած՝ համբոյրները փոխադարձեց:

— Օ՛հ, շատ աղնիւ բան է, յարեց, վերջուշումը. . . : Ես՝ որ կը վարանէի՛ գալու: Կը վախնայի դէ՛յ կերպով ընդունուելէ, քերեակայէ՛:

— Եւ ինչո՞ւ համար, Աստուած իմ, պատասխանեց Մոտ, իր հին բարեկամուհին նստեցնելով եւ ինքն ալ նստակով:

— Որովհետեւ. . . Աստուա՛ծ իմ. . . վա՛նքք հին յիշատակ մըն է. . . : Զո՛րս տարին անցած է. այս ժամանակամիջոցը բաւական իսկ է մոռցուելու համար: Եւ յետոյ, յարեց ձայնը կամացցնելով, կ'ենթադրէի, որ ձանչն սլով այժմ իմ կացութիւնս. . .

Մոտ խնդաց.

— Կը կարծես, թէ չգիտէի՞ վա՛նք եղած ժամանակներս քու կացութիւնդ, ինչպէս որ կ'ըսես:

— Ինչպէ՞ս, գիտէի՞ր. քեզի ըսա՞ծ էին. . . : Ո՞վ:

— Բայց, Լը Թէսիէները. . . : Մեծը, Փօլ, այն որ ձերակուտական է տարիէ մ'ի վեր, Օտի երեսփոխանին հետ բարեկամութիւն ունէր, այն պարոնին, որուն անունը. . .

— Պ. Ասքէ՞ն, հարցուց էթիէնէթ:

Եւ, Մոտի հաստատական մէկ նշանին վրայ, ան աւելցուց, քիչ մը կարմրելով, բայց առանց շփոթութիւն ցոյց տալու.

— Հայրս էր: Զայն կորուսինք երկու տարիէ ի վեր:

— Ա՛հ, քու հայրդ էր ուրեմն: Զէի գիտեր ատիկա: Իմացած էի միայն թէ անիկա. . . կ'երթար ժայրիկիդ տունը, երկու Լը Թէսիէներու եւ Պ. Սիւպէրսօի հետ:

— Պ. տը Սիւպէրսօ հայրիկիս քարտուղարն էր. . . Անիկա՛. . .

Կարճ կապեց, քիչ առաջուան երկչոտութենէ բըռնուած Մոտ տը Ռուվաը անոր ձեռքը բռնեց.

— Օ՛ն ուրեմն, Թիէնէթ, վստահութիւն ունեցիր վերաս: Ըսի քեզի, որ ամէն ինչ գիտեմ, այո՛, ամէն բան: Գիտեմ նաեւ Ժիւլիէնի պատմութիւնը, քրոջդ՝ Սիւզաննի հետ:

— Ո՛հ, կը խորհիմ որ, յարեց էթիէնէթ, աչքերը սրբելով, այդ պատմութիւնը բոլոր Փարիզ գիտէ. . . : Քոյրս այնպիսի յիմա՛ր մըն է: Սիւպէրսօի հետ ալ խօսուեցաւ, ինչպէս նաեւ շա՛տ մը ուրիշներու հետ: Ինչ որ է, յարեց

քիչ մը վերջ, Սիւպերսո մեզի հետ աղէկ չվարուեցաւ: Հայրս զինքը շատ կը սիրէր. մայրիկս դայն կ'ընդունէր իբր մեր եղբայրը: Պէտք էր Սիւզանը հանդիստ ձգել: Ու անոր հետ խղուելէն ի վեր, պիտի հաւատամ, որ անգամ մ'իսկ չեկաւ մեր տունը: Գիտէ սակայն, որ մայրիկս հիւանդ է եւ իրեն նկատմամբ այնքա՞ն բարի էր: Վերջապէս, ես զինքը չեմ սիրեր:

Օրիորդ ար Ռուվոը լրջօրէն պատասխանեց.

— Անոր վրայ գէշ մի՛ խօսիր, Թիէնէթ, Ժիւլիէն մեր բարեկամներէն է:

Փողաքոտ եւ զուարթ ձեւով մը, որ զայն այնքա՞ն գրաւիչ կ'ընէին, էթիէնէթ փաթթուեցաւ իր բարեկամուհիին վիզը, եւ գրեթէ ծնրադիր.

— Ո՛հ, ներէ՛ ինծի, չէի գիտեր. բարեկամ՞դ է. վրշտացուցի քեզ, մեր առաջին տեսակցութեան մէջ իսկ: Այլեւս չե՞ս ուզեր զիս:

— Չեմ ուզե՛ր քեզ, յարեց Մոտ, անոր ճակատը համբուրելով: Այժմ ըսէ ինծի, թէ ինչո՞ւ եկար: Կը կարծեմ, թէ ինձմէ ծառայութիւն մը խնդրելու համար է:

էթիէնէթ կարծրեցաւ.

— Այո՛, ստուշիւ քեզի շատ պէտք ունիմ, համարձակելու համար. . . Արդէն շատ մը խաղքութիւններու ենթարկուեցայ, մայրիկիս եւ Սիւզանի պատճառաւ: Վերջապէս, բարի ես, շնորհակալ եմ քեզի: Անա ուրեմն, թէ ի՞նչ բան զիս կը բերէ քեզի: Պատաւ չեմ, բայց կեանքը բաւական մօտէն ճանչցայ. վստահ ըլլալու համար, մէկ բանի, թէ գծնդակ բան է մնոջ մը համար էրիկ մարդոցմէ կախում ունենալը: Սիրաբանեցին հետս, կը հասկնաս, այն շրջանակին մէջ՝ ուր ապրեցայ:

— Կը հաւտամ, ինչպէս որ գեղեցիկ ես: Գիտե՞ս որ սիրարփի մը եղած ես:

Ժպտտով մը շնորհակալ եղաւ, բայց, մեծարանքները ակներեւ կերպով զինք անտարբեր կը թողէին:

— Ի մէջ այլոց, յարեց, մէկը՝ զոր կը ճանչնաք (պէտք չէ որ ուրիշը իմանայ, քեզի է որ կ'ըսեմ. . .) Պ. Լ. Թէսիէ:

— Էթթո՞րը.

— Ոչ՛, իր եղբայրը, ծերակուտականը, ֆրանս. պան֊քայի փոխկառավարիչը: Շատ կուգար մեզի, հօրս կենդանութեանը եւ զիս կը սիրէր այն ատեն, ինչպէս կը սիրեն չարածըճի լակոտ մը: Յորմէ հետէ որ մեծցայ, հը՛մ, կը կարծեմ որ անոր հաճելի եմ. . . այլուպէս:

— Լա՛ւ ուրեմն, յարեց Մոտ, թո՛ղ հետդ ամուսնանայ: Էթիէնէթ տխրօրէն խնդաց.

— Օ՛հ, կարելի՛ բան չէ այդ:

— Իր հարստութեանը պատճառաւ:

— Ո՛չ, կը կարծեմ, թէ իմ գրամի պակասս զայն ետ չպիտի կեցնէր: Բայց կան. . . բանն՛ր մը: Չխօսինք անոր վրայ, որովհետեւ պիտի նեղանաս, կը հասկնա՞ս: Փոյ Լը Թէսիէ արգարե չկրնար ըլլալ Սիւզանն տիւ Ռուաի տագրը:

«Եւ Մաթիլտ տիւ Ռուաի փեսան, մտածեց Մոտ: Իրաւունք ունի:»

— Խեղճ սիրեցեալս, ըսաւ բարձրածայն:

— Ուրեմն ինծի կը մնայ, շարունակեց էթիէնէթ, միեւնոյն համակերպող չեղտով, ըլլալ իր սիրուհին. . . : Որովհետեւ ամէն անոնց մէջ՝ որ հետս կը սիրաբանեն, նա է որ կը սիրեմ ամէնէն աւելի, քանի որ բարի է: Քիչ մը ինքնահաւան՝ ինչպէս բոլոր այրերը: Բայց ինքը բարի է եւ կը տառապի, տեսնելով տառապիլը. ան անձանց՝ զոր սիրէ: Շատ իսկ է այդ: Միայն ապուշ բան ըմբ պիտի ըսեմ. չեմ կրնար այդ քայլը առնելու որոշումը տալ: Ծնած եմ արդեօք պզտիկ եւ խելօքիկ քաղքենուհիի մը բարեխառնութեամբ, կամ թէ շուրջըլորս տեսածնե՛րս են, որ տըւին ինծի կանոնաւորութեան ճաշակ մը, չեմ գիտեր: Ոչ ոք կը դատապարտեմ, ոչ ոք կը դատեմ. . . : Բոլորովին վստահ չեմ որ պարկեշտ պիտի մնամ, որովհետեւ զիւրին բան չէ: Օ՛ն ուրեմն, պիտի հետեւիմ ուղեգծին այն սկզբունքներուն՝ որոնց կը հնազանդիմ: Բայց վերջապէս պիտի փորձեմ անկախ ապրիլ, ունենալ իմ սենեակս եւ անկողինս, եւ ինքզինքովս բաւականանալ:

Վայրկեան մը կանգ առաւ, ակնարկով մը փնտռելով

Մոտի հաւանութիւնը:

— Շարունակէ՛, ըսաւ այս վերջինը: Շատ հետաքրքրական են ըսածներդ:

— Ահա ուրեմն, շարունակեց էթիէնէթ: Գիտես Փիւքքիւսէն վերջ, թոնտէրվաթուառ անցայ: Երգի՛ երկու, եւ դաշնակի ու երգեցողավարժութեան ալ մէկ մէկ մրցանակ շահեցայ: Դաշնակի դաս տալը շա՛տ քիչ կը շահեցնէ եւ նեղութեամբ: Ուստի կիթառ ալ սորվեցայ. կը նուագեմ Փարիզի սեւէ արուեստագէտի մը չափ: Չայնս պզտիկ է, սակայն ճիշդ եւ ախորժալուր: 1830ի երգերու ցուցակ մը շինած եմ: Կը կարծեմ որ, ասիկա հաճելի պիտի ըլլայ ամէնուն:

— Անշուշտ որ, յարեց Մոտ, հաճելի պիտի ըլլայ, հըրապուրուած ծրագրին արուեստագիտական կողմէն: Որքա՛ն ազուր ես... մազերուդ հետ: Պաշտելի հագագ մ'ունենալու ես: Պիտի հագուիս Թոնի Ժօհանօի մը պատկերին նմանեանդ: ձեռով վարսայարդարուժ, Բոլիցիլին շրջազգեստ ուսած թեւնոցներով: Պիտի երգես Լօիզա Փիւժէն, կիթառի վրայ... Ամէն մարդ զքեզ պիտի փնտռէ:

էթիէնէթ խնդաց ժպիտով մը:
— Ո՛հ, այնքա՛ն դիւրին բան ալ չէ այդ: Ծանօթներ եւ աշխարհիկ մարդեր պէտք են որ զձեզ յառաջ քշեն: Այո՛... կան ևր Թէսիէները... Փօլ Կատոր վրայ խորհած ըլլալու է: Դաշտային հանդէս մը Շանպլէի մէջ, հիւսիսի գծին վրայ, իրենց հրաշալի կալուածը: Բայց, ստուգիւ, ամուրիներու կողմէ ներկայացուած ըլլալուն, ատիկա պիտի ստանար շատ կիսաշխարհիկ ձեւ մը:

Աստուած իմ, մըմնջեց Օր. տը Ռուզուր խնդալով, յարգանք եւ պատիւ պահել տալու ի՛նչ տենջա՛նք:

— Ամէն ինչ կամ ոչինչ, սիրունիկս, այս տեսակ բաներու մէջ: Ինձի անանկ կը թուի: Մանկութենէս ի վեր, տանս մէջ միայն այրեր տեսայ կամ կիներ՝... որոնք ինձի քիչ յանձնարարելի պիտի ըլլային: Քու վրադ խորհեցայ: Հարուստ ես եւ շրջանակդ մե՛ծ է:

Մոտ զայն ընդմիջեց.

— Նախ որ հարուստ չեմ: Դալով մեր յարաբերութեանց, կը ճանչնանք շատ մարդիկ, բայց չէ տակաւին այն՝ զոր պիտի մաղթէի: Երբ Ֆրանսա եկանք, 84ին, հարուստ էինք: Հայրս՝ որ ազնուական ցեղէ էր, պիտի կրնար մեզ լաւագոյն ընկերութեանց մէջ մտցնել: Նախընտրեց իր զրամը կորսնցնել խաղի մէջ, եւ կամ ցանցընել օրիորդներու: Այդ անցեալով կը քաշքշուինք, նոյն խակ իր ամուսնալուծումէն եւ մահէն վերջ: Կր ճանչնանք խել մը օտարական կիներ, աղուժներու, հանքաջուրերու եւ ծովեղրներու (plages) մարդիկ: Այս ամէնը պիտի փոխուի, երբոր ամուսնանամ Քեզի պէս յոգնած եմ այն ընկերութենէն՝ որ կը յաճախէ մեզի. եւ պիտի ամուսնանամ պատուաւոր ընկերութենէ անձի մը հետ, ունենալով միակ ճշմարիտ շիքը, որ կը կայանայ հին անունի մը, հողային ահագին հարստութեան մը, անազարտ ընտանիքի մը եւ անբասիր յարաբերութիւններու մէջ: Ի չգոյէ ուրիշներու, ծանօթ շրջանակներս քու տրամադրութեանդ տակ կը դնեմ: Անոնք ընչեղ մարդիկ են՝ որոնք կը սիրեն հաճոյքը, քեզի օգտակար կրնան ըլլալ:

էթիէնէթի դէմքը ծիծաղեցաւ դպրոցականի մը զըւարթութեամբ:

— Օ՛հ, շնորհակալ եմ, յարեց. որքա՛ն բարի ես:

— Բան մը պիտի կարգադրենք, շարունակեց Մոտ: Հանդէս մը հոս...: Կարելի է շքեղագոյնը տալ, շարժական մեծ նալին մէջ, ինչպէս Քօնիինանդալի սրահներուն մէջ: Վստահէ՛ իմ վրաս, այդ բանին վրայ պիտի խորհիմ: Բեքբլուսի մէջ արդէն գեղեցիկ ձայն մը ունէիր. այժմ բոլորովին զարգացած ըլլալու է այն:

— Այո՛, պատասխանեց էթիէնէթ: Բաւական ախորժալուր է: Եթէ կ'ուզես, կրնանք փորձել: Հին վիպերդ մը ունի՞ս:

Դաշնակը ժօտիկն էր. փնտռեցին բոլոր քարտերուն մէջ:

— Ահաւասի՛կ, յարեց էթիէնէթ. ասիկա արդիական է բայց պիտի երգեմ:

Շամինատի մէկ վիպերգն էր, մակագրուած Արծաթեայ օղակը:

- Կրնա՞ս ինձի ընկերանալ:
- Այո՛, ըսաւ Մոռ:

Նստաւ դաշնակին առջեւ եւ սկսաւ. մինչ էթիէնէթ մէկ ձեռքով յենած դաշնակին, եւ ծռած նուագատետրին վրայ, կ'երգէր.

Արծաթեայ քանկազին օղակը՝ գոր ինձի տուիր.

Իր նեղ շրջանակին մեջ կը պահէ փակուած բու խոստումներդ:

Զայնը տկար ծաւալ մ'ունէր, բայց մաքուր բիւրեղի մը հանգոյն, որուն կը հպի կնտնտոց մը. արուեստազէտը խնայած էր անոր. դայն կ'առաջնորդէր փորձ երգչուհիի մը պէս:

Երկրորդ տունը լմնցնելուն պէս՝ ծափերը ձայն տըւին, մանկատի աղջիկներուն ետևի կողմէն. հնչուն, իր գազան ձայն մը աղաղակեց իտալերէն չեչառով մը.

- Պոսվա՛... պոսվա՛... կատարելապէս գերազանց:
- Ա՛հ, տիկին Իւսէլլին է, ըսաւ Մոռ:

Մտեղ անձը, որուն հոովմէական դէմքը, սեւ աչքերը բաւական գէշ կերպով կը ներդաշնակուէին, արուեստականօրէն դեղինցած մազերուն հետ, բացաւ իր թեւերը Օր. տը Ռուվոլըին եւ դայն ուժով մը համբուրեց պարանոցէն:

Տիկին Իւսէլլի մինակ չէր. կին մը երիտասարդ աղջիկ կամ երիտասարդ թուխ եւ նուրբ կին մը, այլանդակ տգեղութեամբ, անոր կ'ընկերանար:

— Օրիորդ Սէսիլ Անպուր. իմ եւ դքսուհիին լաւ բարեկամուհի... Այնպէս չէ՞. բարեկամօրէն շոյելով երիտասարդ աղջկան այտերը: Քանի մը շաբթուան համար հիւր է ինձի: Ինքզինքիս թոյլատրեցի դայն ձեզի բերելու: Կատարելապէս կ'երգէ դարավերջիկ երգեր: Սփեցիայի մէջ դքսուհիին եւ անոր ընկերութեան ուրախութիւնն է:

- Բարի՛ եկաք, օրիորդ:

— Բայց դո՛ւք, աղուորս, յարեց Տիկին Իւսէլլի, մեծ արուեստագիտուհի մը մէջտեղ հանեցիք: Այո՛, օրիորդ, ը-

սաւ, էթիէնէթի՛ որ իւր դէմքին վարի մասը կը ծածկէր փետուրէ թեւնոցին տակ: Յստակ սարաւո ձայն մը ունիք, մեր հին ժամանակի երգեցիկներու ձայնը: Այնպէս չէ՞, Սէսիլ: Սիէննի հրեշտակի մը կը նմանի:

Օր. Անպուր պարզօրէն ըսաւ.

- Այո՛, Տիկինը շատ գեղանի է եւ կ'երգէ շատ աղէկ: Մոռ ներկայացուց.

— Օր. էթիէնէթ Տիւռուա, գիշերօթիկի ընկերուհիներէս:

- Թատրո՞նն էք, օրիորդ:

- Ո՛չ, տիկին. տակաւին չէ:

— Զինքը ձանչցնել պիտի տանք, այնպէս չէ՞, տիկին, ըսաւ Մոռ: Հիանալիօրէն կիթառ կը զարնէ:

— Ո՛հ, կիթառը շատ կը սիրեմ. բայց անմիջապէս ընելու է այս բանը, նուագահանդէս մը, մե՛ծ նուագահանդէս մը: Պիտի երգեմ... և դո՞ւք ալ, Սէսիլ, այնպէս չէ՞: Ե՛րբ պիտի արուի, Մո՛տ:

— Ատոր վրայ կը խորհինք, յարեց Մոռ ժպտելով. յառաջիկայ Ապրիլին կամ Մարտին: Մեծ հալը պիտի բանանք, գիտէ՞ք, շարժուն հալը:

— Այո՛, սքանչելի հալ մը, Սէսիլս, Աքալաի կիտուն չափ: Վերելակով մը կը բարձրանայ: Յարկարածին մըն է դիւթական, սքանչելի: Նայէ՛ Սէսիլ, որքա՛ն յարմար է:

Ակսան իտալերէն խօսիլ: Տիկին Իւսէլլի հիացում կը յայտնէր իր բարեկամուհիին, կարասիներուն, պատի ծածկոցներուն, արդիական եւ եզակի ձաշակին նկատմամբ: Մոռ, կամացուկ մը, կ'ըսէր էթիէնէթի.

— Կը սոսկա՛մ. եւ ներքնապէս զիս կ'ատէ, Ժիւլիէնի պատճառաւ, որ օր մը դայն բնի դուրս նեռեց իր տունէն: Այո՛, օրիւլիս: Ա՛հ, գորաւոր խառնուածք մը ունի այս կինը. հոգի մը, երկու սեռերու հաւասարապէս տիրական: Սաստիկօրէն կ'ատէ զիս, կը կաշառէ իմ մարդիկս զիս լրտեսելու համար. մէկէ աւելի անգամներ զինքը բռնեցի հոս, Պէթթիին եւ Ժողէֆին հետ խորհրդակցելու ժամուն: Ինչ կարեւորութիւն ունի, եթէ կարենայ ստուղիւ երգել

երեկոյթին, մեծ բազմութիւն պիտի գայ: Իրեն հաճելի երեւցար, որովհետեւ զեղանի ես: Անոր հետ շատ մի՛ տեսնուիր. շուտով մը իրարու հետ պիտի աւրուիք:

— Հրեշտակ մըն ես, յարեց էթիէնէթ: Շնորհակալ եմ: Կը մեկնիմ բոլորովին երջանիկ: Շնորհակալի՛ք սրտիս խորէն: Կը ցաւիմ որ, սեւէ կերպով չեմ կարող քեզի ծառայութիւն մը մատուցանել:

Երկու այցելուհիները, մեծ սրահին մէջ՝ ապակիներու վարագոյրներուն թեթեւ մետաքսներուն հետ կը խաղալին:

— Յաճախ եկո՛ւր զիս տեսնելու, ըսաւ Մոտ, ինծի հաճելի ըլլալու լաւագոյն միջոցն է. մտերիմ չունիմ եւ շատ անգամ սիրտս ճնշուած է: Եւ յետոյ, աւելցուց Մոտ, վայրկեան մը խորհելէ վերջ, թերեւս ես ալ բան մը պիտի խնդրեմ քեզմէ: Պիտի կրնա՞ս զիս ընդունիլ տունդ կամ մօրդ տունը. յարկարածինին մէկ մասը ինծի տրամադրել երբեմն երբեմն:

— Բայց բոլոր յարկարածինը, եթէ կ'ուզես, սիրունիկս. մնաց որ մայրկիր հիւանդ ըլլալով՝ իր երկար աթոռին մէջ գամուած կը մնայ — սրտի յօդացաւերուն պատճառաւ, գիտես —, տան տիրուհին այժմ ես եմ. ես եմ որ ամէն ինչ կը վարեմ:

— Մոտ չարունակեց, զսպելով իր վարանուժը եւ զօրացնելով ձայնը. իմ կարգիս պէտք է պիտի ունենամ հոն ընդունելու մէկը... մէկը՝ զօր կը ճանչնաս:

— Ժիւլիէ՞նը:

— Անիկա կը նեղագնէ՞ զքեզ, կը վտանգեմ զքեզ:

— Օ՛հ, զիս վտանգել, յարեց տիրութեամբ էթիէնէթ: Ո՛վ կրնայ զիս վտանգել: Ըրէ՛ ինչ որ քեզի հաճելի պիտի թուի, տունը քեզի կը վերարկիր:

— Շնորհակալ եմ, վստահ եղիր իմ վրաս: Պատիկ դաշինք մըն է որ կը կնքենք իրարու հետ, չէ՞: Պիտի տեսնես որ գէշ բարեկամուհի մը չեմ:

Թեւ թեւի, գացին միացան տիկին Իւսէլլի եւ Օր. Անսլորի:

— Ներեցէք, սիրելի տիկին, յարեց Մոտ, Օր. Տիւնուա որ մեկնելու վրայ է, ինծի յանձնարարութիւն մը կուտար:

— Կը մեկնի՞ք, օրիորդ, ըսաւ տիկին Իւսէլլի, իմ բոլոր յարգանքներս: Ամենամեծ յաջողութիւնը պիտի ունենաք: Եկէ՛ք զիս տեսնելու Լիզպոն փողոց թիւ 21, հինգշաբթի երեկոները: Մտերմական շրջանակի մէջ՝ նուազ կ'ընենք:

էթիէնէթ շնորհակալ եղաւ եւ բարեկց:

— Ի գէ՛ւ, յարեց իտալուհին, վաղը ներկայ պիտի ըլլաք Ուալթիռի ներկայացման, չէ՞:

— Աստուած իմ, առաջին ներկայացման, ընա՛ւ տեղ չունիմ:

— Չպիտի երթայիք, չէ՞, վրայ բերաւ իտալուհին, անոր ձեռքերը բռնելով, իբր հին բարեկամուհի մը: Ասանկ արուեստագիտուհի մը... եւ այնքա՛ն գեղեցիկ: Եկէ՛ք իմ օթեակս, Պէնետուա թիւ 15: Հոն պիտի ըլլան նաեւ Օր, Անսլոր եւ կոծա Ռիւսթոլի. ուրիշ ո՞վ: Կարելի է Պ. Լիւք Լէսթրանժ, Տիկին տը Ռուվորներու մէկ բարեկամը:

Մեծ սրահին դուռը կը բացուէր, մղուած ձերմակ ձեռնոցներով սպասաւորին կողմանէ, որ մէկուն անունը չտուաւ: Հազիւ երեսուն եւ հինգ տարու մէկը, խարտեաչ, քիչ մը թոռմած ու մաշած գեղեցիկ զէմքով, շատ վայելչատիպ, կը յառաջանար ժպտելով:

— Անունս լտեցի. ի՞նչ կը խօսուէր իմ վրաս, ներկաներուն ձեռքերը համբուրեց. Տիկին Իւսէլլի ձայնեց.

— Ա՛հ, տիար Լիւքքա, հիմա ձեր վրայ կը խօսէինք: Եւ մէջտեղ կ'ելլէք ուրուականի մը պէս:

էթիէնէթ ներողութիւն խնդրելով կը մեկնէր, առաջնորդուած օր. Մոտի կողմէ: Երբ այս վերջինը վերադարձաւ, նստեցան ամէնքն ալ վառարանին շուրջը:

Վառարանը ձերմակ մարմարէ էր, նոր-յունական ոճով, զրեթէ մերկ, թանակրայի արձանիկով մը միայն զարդարուած որ էր վեասեան կոյս մը, խնկաման ի ձեռին, եւ

երկու նուրբ անօթներ՝ ուր երկու օղբիտէներ էին դըր-
ուած :

Կրակառնդին մէջ խոշոր փայտ մը կը ժխար առանց
բոցի բոլորովին սև, անթեղին մէջտեղը :

Գրեթէ անմիջապէս, վերստին զուռը բացուեցաւ, տա-
քէց կին մը ներս մտաւ, ընկերացած մանկա-
մարդ աղջիկներու յար եւ նման հագուած, բաւական զե-
ղեցիկ, գէմքերնին՝ անարիւն : Կը կոչուէին Մարթ եւ Մա-
տըլէն : Վերջինս՝ աւելի արթուն, աւելի զուարթ, Մար-
թա աւելի լոխ, յաճախ մտացիր, խուսափուկ աչքեր ե
չուտիկ կարծրութիւն մը : Եւ սակայն իրարու կը նմանէ-
ին : Մոտ ներկայացուց :

— Պ. Լիւք Լէսթրանտ, ներքին գործոց նախարարին
դիւանին պետը. Տիկին տը Ռըվէրսիէ եւ օրիորդներ տը
Ռըվէրսիէ : Բայց կարծեմ զիրար կը ճանչնա՞ք :

— Միթէ Պ. Լէսթրանտ՝ Փարիզի բոլոր մանկատի աղ-
ջիկները չ'ճանչնա՞ր. խնդարով ըսաւ Տիկին Իւսէլլի :

— Ո՛չ, անոր պատասխանեց Լէսթրանտ կիսաձայն :
Գիտեմ միայն քանի մը շատ ճանչցուածներ :

— Ինչպէ՞ս է սիրելի մայրերնիդ, հարցուց տիկին տը
Ռըվէրսիէ, նստելով :

— Քիչ մ'անհանգիստ է, ժամը հինգէն առաջ չպիտի
կրնանք տեսնել զինքը, կարծեմ :

— Եւ ժագըլի՞ն :

— Ժագըլին իր գրականութեան դասընթացքին զը-
նաց : Արդէն ժամը չորսուկէսն է, պէտք էր եկած ըլլար :
Պիտի տեսնէք զինքը : Տիկին Իւսէլլի որ կը խօսէր Պ. Լէս-
թրանտի հետ, ընդհատեց :

— Ի՞նչ է այդ դասընթացքը, Մո՛տ : Սէն—թ—Օնոտէ
փողոցինը, ուր երեսուն տարեկան երիտասարդ մը, աղջիկ-
ներուն կը սորվեցնէ բարոյականը :

— Օրիորդներու եւ պարոններու, սիրելի տիկին, ուղ-
ղեց Մոտ, երկու սեռերուն ալ :

— Խա՞ռն :

— Այո, դասընթացքը խառն է :

— Օ՛ն ուրեմն, պէտք է որ հոն երթամ բարոյականի
քանի մը ծանօթութիւններ ստանալու, յարեց Լէսթրանտ :

— Զքեզ ներս չպիտի աճուեն, չարածճի, ընտանիքի
մայրերու քով շատ գէշ անուն մ'ունիք, օրիորդները կը
վտանգէք :

— Բայց ո՛չ : Անոնք են որ զիս կը վտանգեն, կը հա-
ւաստեմ ձեզ :

Միտ խօսակցութիւնը փոխեց :

— Վաղը ո՞վ պիտի երթայ օրերա, վաղըիտի ներկա-
յաչման :

— Թիկնաթող մ'ունիմ, յարեց Լէսթրանտ :

Տիկին տը Ռըվէրսիէ ըսաւ :

— Մեզի, տեղեր նուիրեցին. վաղըիտին՝ աղջիկներու
համար պատշաճ ներկայացում մը չէ, կարծեմ :

Ամէնքն ալ գէմ խօսեցան Տիկին տը Ռըվէրսիէի, որ
երկրորդ արարուածը անուշիօրէն անյարմար կը դատէր :

Տիկին Իւսէլլի, յանուն արուեստի, բուն կերպով կը
բողոքէր : Մատըլէն եւ Մարթ մասնակցեցան վիճաբանու-
թեան եւ իրենց կարծիքը յայտնեցին :

— Սակայն, Լէսթրանտ հարցուց Մատըլէնի, քանի որ
կատարելապէս կը ճանչնաք գիրքը, ինչպէս կը տեսնեմ,
ի՞նչ անյարմարութիւն կայ ներկայացումը տեսնելուդ
մէջ :

— Այն ա՛յարմարութիւնը կայ, որ հասարակաց է սի-
րելիս, եւ ուրիշներ «կը տեսնեն որ մենք կը լսենք :» Պի-
տի համարձակէի՞ք ըսել բարձրաձայն այն ապուշութիւննե-
րը՝ զոր կրօնք առանձնակի, բրոջս, խնձի, ժագըլիինն ա-
մէնուս : Է՛հ. պատասխանեցէք : Ինչո՞ւ այդպէս կը նայիք
ինձի :

— Կը նայի՞մ ձեր չրթունքներուն, ըսաւ Լէսթրանտ,
եւ կը խորհիմ աւելի վատթար յիմարութիւններու վրայ,
քան բոլոր անոնց, զորս երբեք ձեզի ըսած եմ :

Օր. Մատըլէն տը Ռըվէրսիէ խնդաց :

— Լաւ ուրեմն, զանոնք ինձի ըսելէ առաջ՝ տակաւին
վայրկեան մը սպասեցէք : Բաւական բազմութիւն չի կայ :

Մայրիկը մտիկ կ'ընէ: Գիտէ՞ք, նա կը զգուշանայ ձեզմէ:
— Օ՛հ, ձեր մայրը շատ խելացի է: Մնաց որ, ահաւա-
սիկ բազմութիւն:

— Ո՛հ, թէյն է որ ներս կը բերեն:

Սպասաւորը ներս կը մտնէր, միասին սեղանը, սամա-
վարը, գաւաթները եւ կարկանդակները: Անոր ետեւէն ժա-
ղըրին տը Ռուվուր երեւցաւ. հրճուանքով ընդունեցին
զինք, կիները զայն համբուրեցին, նէ Լէսթրանժի ձեռքը
սեղմեց: Պզտիկ էակ մ'էր, շէկ եւ գիրուկ, Մոտի հակառա-
կը եւ իր մօր պատկերը, աւելի նուրբ, աւելի արձակ եւ
աւելի փարիզեան: — Մետաքսեայ մորթ մը, ծովագոյն աչ-
քեր, միշտ կէս մը ծածկուած կոպերէն, որ կը թուէին
ծանրացած հեշտութեան նուազումէ մը, արդէն հասուն-
ցած ձեւեր, ամուսինի կուրծքեր եւ աղբեր, մինինիկ
հասակով, պչրանքի, խօսքի, եւ ձեւերու փափաքուած
մանկունակութիւն մը, չարածճի կարճ զգեստներ, որոնք
ամէն վայրկեան վեր կը բարձրանային, թողլով տեսնել
կսկոր բումբեր, վերջապէս արտաքոյ կարգի չիտթեցնող
էակ մը, ծնած բոցավառելու մարդոց տեսնանքը եւ անոնց
արեան եւ աչքերուն մէջ ներարկելու համար յիմարու-
թիւն:

Երբոր նստեցաւ Լիւկ Լէսթրանժի եւ տիկին տը Ռը-
վէսսիէի միջեւ, վերջինս ըսաւ անոր ժպտելով.

— Զեր բարոյագիտութեան դասընթացքին վրայ խօս-
ուեցաւ, ժաղըրին: Երիտասարդ վարժապետը ի՞նչ նիւթի
վրայ ճանեց այսօր:

Ժաղըրին վար ծոնց արտեւանունքը եւ պատասխանեց
անմեղութեան ծաղրաշարժ շեշտով մը.

— Սէրը՝ ամուսնութեան մէջ տիկին:

— Ահաւասիկ գեղեցիկ նիւթ մը. ի՞նչ կ'ըսէր այդ
մասին:

— Օ՛, իր խօսքերը բառ առ բառ պիտի կրկնեմ հիմա:

Ոտքի ելաւ, ճնճողուկի մը շնորհալիութեամբ՝ ակոռի
մը ետեւը ցատկեց եւ սկսաւ, գէժքը յարմարցնելով եւ
ձայնը անականայնելով. «ամուսնական սէրը, օրիորդք եւ

պարոնայք, բաղկացած է երկու տարրերէ՝ այնքան սերտ-
րէն իրարու միացած, որքան եւ թթուածինը Է. ջրածինը՝
ջուրին մէջ: Այդ տարրերն են գորովը եւ զգայասիրութիւ-
նը: Ամէնքնիդ գիտէ՞ք թէ ի՞նչ է գորովը, զգուա՛նքը, հայ-
րական տունը, երբ ձեր մայրերը զձեզ կ'օրօրէին իրենց
ծունկերուն վրայ. (կ'անցնիմ), կը մնայ զգայասիրութիւնը:

— Ժաղըրին, ընդմիջեց Մոտ, անպատեհ խօսքեր պի-
տի ըսես:

— Ո՛հ բոլորովին: Զիս դասընթացքի կը զրկեն, կ'օգ-
տուիմ անկէ: Կը վերսկսիմ. «Զգայասիրութիւնը, օրիորդք
եւ պարոնայք, աւելի դժուար է սահմանելը, մանաւանդ ա-
սանկ ու կնդիրներու առջեւ: Գոհանանք անոր մէջ ճանչնա-
լու՝ մարդկային էակին վեհանձն կոչումը՝ ղէպի գեղեցկու-
թիւնը, եւ աչքերուն միտումը՝ ղէպի ձեւը»: Այդ պահուն,
մէկը զայն ընդմիջեց, «Եւ կոյրե՞րը». երիտասարդ վարժա-
պետը չլսել ձեւացուց: Ժիւլիէթ Ավաղաք՝ որ դրացուհիս է,
ականջիս փսփսաց. «Անոնք ունին շա՛տ զարգացած շօշա-
փելիք մը»:

Ամէնքն ալ կը խնդային, մէջն ըլլալով փոքրիկ Ռը-
վէսսիէները եւ իրենց մայրը՝ որ կ'երեւէր մոռցած ըլլալ
քիչ առաջ իր յայտարարած խիստ սկզբունքները՝ տիկին
Իւսէլլիի: Ասիկա չկրցաւ ինքզինքը բռնել, երթալ համ-
բուրելու համար գեղեցիկ ժաղըրինը:

— E un fiore... pero un fiore

Մոտ լրջութեամբ յարեց.

— Օ՛ն, ժաղըրին. բա՛ւ է յիմարութիւններդ: Աւելի
լաւ է, որ թէյը մեծարես. Մատըլէն եւ Մարթ քեղի պիտի
օգնեն:

Երեքը մէկանց գործի սկսան. երկու շագանակագոյն
զլուխները եւ մէկ ալ շէկը, սեղանին շուրջը, գեղեցիկ
յարգանօք ծոնելով իրենց ձկուն հասակները երբ գաւաթը
կը մատուցանէին: Թէյը մեծարելու նոր ձեւ մըն էր, Փա-
րիզի մէջ, բաժակով մը՝ որ իր վրայ կը կրէր պզտիկ պար-
զուտ մը յախճապակեայ: Ամէնքն ալ ճիւղացան:

— Դո՛ւք էք որ, Մոտ, հնարեցիք այս ձեւը:

— Ո՛հ, մեր բարեկամ՝ Անարոնն է, որ Լոնտոնէն բերաւ ինձի: Պարգեւներով կ'որոզէ մեզ:

— Բա՛խտ ունիք, ըսաւ պարզմտօրէն տիկին տը Սըւէսսիէ. իմ ազջիկներուս «քծինքները» մեզի բան մը չեն շահեցներ:

— Ա՛հ, ձայնեց ուրախութեամբ Մոտ, ահաւասի՛կ երկուքը միասին: Ի՛նչ աղէկ եղաւ:

Ներս մտնող այցելուները, այնքան լաւ ընդունուած էին երկու մարդ, մին՝ երիտասարդ, միւսը՝ աղբերկ:

Տիկին Իւսէլլի՛ ձեռքը անոնց երկնցներով՝ կրկնեց.

— Երկուքն ալ Ծերակոյտի օր մը: Ա՛հ, Պ. Փօլ Լըթէսիէ, իմ տանս մէջ չէ որ ձեզ այսքան հաւատարմօրէն պիտի տեսնէի: Մոտի թովչութիւնը պէ՛տք է:

— Կը յուսայինք ձեզ հոս գտնել, սիրելի Տիկին յարեց Փօլ Լըթէսիէ: Մնաց որ, ես, քիչ մը պատահմամբ է որ ազատ եմ: Մեր պաշտօնակից Պոիար մեռե՛ր է այս գիշեր եւ միւս կողմէ կառավարութեանը պատրաստ չըլլալով իմ հարցապնդումիս, նիստը փակուեցաւ:

Զօրեղ եւ հաւասար ձայնով մը կը խօսէր, հանդարտ ակնարկ մը նետելով՝ իր խօսակցուհիին վրայ: Իր կարչնեղ եւ քիչ մը թանձր մարմինը, թարմ երեսը, քառակուսի մօրուքը, ազ պղպեղ թելերով, իր բաց թխադոյն աչքերը, զոր քիչ մը կը շարժէր, իրեն կուտային վստահ եւ պայծառ կերպարունք մը:

Իր եղբայրը կը նմանէր իրեն, առանց մօրուքի, մազերը խիտ, աւելի նուրը, աւելի աչիւրձ, բայց ըմբիշի թիկունքով, սփօրնեղ եւ զործօն կեանքէ թեթեւացած: Եւ աչքերը, նոյնպէս թուխ, իրենց խորքին մէջ ունէին չեմ գիտեր ի՛նչ ցոլք մը աւելի ժպտուն, աւելի հեզնող, աւելի սկեպտիկ:

— Գալով Պ. Էթթօրի, ըսաւ տիկին տը Ռըվէսսիէ, տը Ռուվոըր երեքշաբթիներուն հաւատարիմ մըն է:

— Այո՛, ընդհատեց ժազըլին: Կը սիրէ մանկամարդ ազջիկները եւ գիտէ թէ հոս անոնցմէ կը գտնուին, ոչ այնքան ապուշե՛ր:

— Անոնցմէ կը գտնուի հատ մը՝ որ շատ մտացի է օրի՛որդ, յարեց Էթթօր, կամայ մը մօտենալով ժազըլինի:

Լէսթրանժ անկիւն մը քաշուած էր պզտիկ Ռըվէսսիէներուն հետ. կը խնդային, քիչ մը ջղայնօտ խնդուքով՝ այն բաներուն վրայ, զոր պարօնը իրենց կ'ըսէր գաղտնի: Տիկին Իւսէլլի ոտքի ելաւ:

— Կաքէն, սիրելիս, տիկին տը Ռուվոըր տեսնելը զանց կ'ընեմ:

— Օ՛հ, կեցէ՛ք սիրելի տիկին, ըսաւ Մօտ: Մայրս հիւժաւ պիտի իջնէ. պիտի ցաւի, եթէ...

Բայց իտայուհիին արշաւներու եւ այցելութիւններու պիտի երթար: Մօտ, բաւական դո՛հ, անոր մեկնելէն, Շանթէլներուն դալէն առաջ, այլեւս չ'ստիպեց:

— Ո՛վ է այդ գեղեցիկ լոակօցը՝ իրեն ընկերացող, հարցուց Փօլ Լըթէսիէ, երկու կիներուն դուրս ելլելէն յետոյ:

— Նիսէն է, յարեց Մոտ, Սըլցցիա գքսուհիին պատուոյ տիկիններէն:

— Գեղեցիկ յանձնարարութիւն:

Շրջանակը սեղմուած էր վստարանին շուրջը, ամէնքը այժմ ինքզինքնին զգալով աւելի նեղ մտերմութեան մը մէջ: Բայց առանձնախօսութիւնները շարունակուեցան. տիկին տը Ռըվէրսիէ կը յանձնարարէր Պ. Փօլի՝ բարենըպատակ գործ մը՝ որուն համար կ'ուզէր որ կառավարութիւնը շահագրգռուի: Ժազըլին նազանքներ կ'ընէր Լէսթրանժի, պզտիկ Ռըվէրսիէներէն հեռացնելու համար: Էթթօր կը խօսէր կամացուկ մը Մոտի հետ:

— Այսօրուան մասնաւոր հրաւերը ի՛նչ բանի համար է. հարցուց:

— Կը սպասենք առաջին այցելութեան մարդոց՝ սրոնց հետ կ'ուզեմ յարաբերութեան մտնել: Մեր սրահին փայտալու համար՝ ձեր ներկայութիւնը հա՛րկ էր: Ահաւասիկ ամէնը ա՛յս է:

— Աստուած իմ, որքա՛ն կը շողօթորթէք զիս, եւ որո՞ւ կը սպասենք:

Մոտ խնդաց. էքթոր մեղմիւ հասկցուց.

— Ամուսին մը:

Նէ չպատասխանեց հարցումին. միայն, քիչ մը վերջ ըսաւ.

— Բարեկամ մըն էք ինծի, էքթոր:

Երիտասարդը, հարցումին լուրջ շեշտէն յուզուեցաւ.

— Մնչուչա, ըսաւ, իմ սիրակա՛նս: Եղբայրս աւելի՛ ձեր հօրը բարեկամն էր, իսկ ես, քեզ ձանձրաց շա՛տ դեռաւի:

Եւ նշմարելով որ, անցեալին վրայ այս յետադարձ ակնարկութենէն կը յուզուէր, ինքզինքին տիրացաւ անսիրտ պէտէս եւ կատակաբանեց.

— Գիտէք որ ձեզի համար տկարութիւն մը ունեցած եմ, տասնընիւց տարի առաջ:

— Մի՛ շատախօսեր. սիրելիս, կը խնդրեմ, յարեց Մոտ: Ինծի համար երբեք տկարութիւն ունեցած չէք, գիտեմ, եւ չեմ ալ ուզեր: Բայց կը կարծեմ, որ անկարող էք սեւէ կերպով ինծի շարիք մը ընելու:

Բողոքեց ձեւերով.

— Բարի՛, գիտեմ: Ի մտի ունեցէք, որ թերեւս ձեզի պէտք պիտի ունենամ:

Քահարաներ զայն ընդմիջեցին: Մտիկ կ'ընէին ժպտելինի, որ կ'ըսէր.

— Ո՛չ, կ'ապահովեմ ձեզ, որ միեւնոյն կերպով չի վարուիր իր յաճախորդներուն հետ: Պառաւներուն որ զինքը կը կոչեն «Պ, Տօքթէօն Բրոս», կուտայ ջրացայտ մը մեկամաղձօրէն, ի պարտականութենէ, գլուխը դարձնելով. ջուրը կը ցայտէ, ուր որ կրնայ: Աղուորիկ, քիչ մը հասուն կիներուն հետ, կը կատակէ խենթ ու խելս ո կը խօսի, կը զուարճանայ, անոնցմէ պղտիկ ազաղակներ փրցընելու, իր ջրացայտով զանոնք խտցնելու, զանոնք վախցնելու: Բայց, երիտասարդ ազջիկներու համար, կուսական ջուր ունի զգուող, ամօթիւսած: Հազիւ թէ ձեզ կը շօշափէ, ոչ մէկ թեթեւ բառ, երբե՛ք խստութիւն: Ու ձեզ կը խօսի երաժշտութեան, գրականութեան, պարա-

հանդէսներու վրայ, երբ իր դիմացը կը կենաս բոլորովին սերկ. ոչ մի ծաղրաշարժ խօսք:

Նէ ընդհատեց.

— Եր՛թ. լու՛նք. զանգակը զարնուեցաւ. Զանձրացուցիչ մարդերն են:

Դուռը բացուելէ առաջ նէ արդէն թէյասեղանին շուրջը նստած էր, լուրջ եւ ուղիղ, ինչպէս դպրոցական մը՝ որ հսկողութեան տակ է:

Այս անգամ սպասաւորը ձայնեց.

— Տիկին դեր կոմսուհի տը Շանթէլ, Օր. տը Շանթէլ եւ Պ. Մաքսիմ տը Շանթէլ:

Քիչ մը պաշտօնական, լուսօրէն գրեթէ, բարի եկաքի քաղաքավարական ձեւեր փոխանակուեցան: Ժազըլին Մարթի ականջին փոփօաց.

— Ի՛նչպէ՛ս. բաւական գաւառիկ կ'երեւի՞ն. Տիկինը, իր որդին եւ աղջիկը. ո՞չ, բայց դիտէ՛ զանոնք:

Ատուզիւ, Շանթէլներու մուտքը՝ այս վերջին ծայր արդիական սրահը, նրբաձաշակ այս մարդոց մէջ, այս կիներուն մէջ հագուած շքուած՝ Տուչէ տան կողմէ, եւ գլխարկուած Ռըպուէն, հակապատկեր մը կը կազմէր բաւական զուարճալի: Երեք Շանթէլները հագուած էին սեւ, միայն անհամար սուգերէն՝ զարմիկներու մահուան հետեւանօք, եւ յատուկ՝ գաւառի բնակիչներուն: Եւ այդ սուգը կը նուազեցնէր, կը պղտիկցնէր երկու կիները, պէշ հագուած ըլլալուն համար, եւ աւելի տարիքոտ ցոյց կուտար Մաքսիմը, իր միադոյն թիկնոցին հնամեայ ձեւովը եւ սեւ փողկապին նեղ հանգոյցովը:

— Հող չէ, պատասխանեց Մարթ Ժազըլինի. երեքն ալ «մաքուր ցեղէ» են:

Իրաւունք ունէր այսպէս ըսելու: Թէեւ գաւառացիի պէս հագուած՝ սակայն ազնուականի հովեր ունէին. մաքուր ցեղէ, մեծ հողատէր, անարատ եւ տոհմիկ արիւնէ. Տիկին տը Շանթէլ նիհար, պղտտիկ եւ չոր, կրօնաւորուհի մը զէմքը ունէր, սպիտակ՝ նշխարքի մը պէս: Գլխարկին ձեւը, գրեթէ ամբողջովին կը ծածկէր աղերակ

մազերը. սակայն իր սեւ աչկուները կը ժպտէին յեղակարծ քաղցրութեամբ մը. անմեղ, միանգամայն կրքոտ, ինչպէս աչուկները իր աղջկան՝ ժաննի, որ սակայն իրեն կը նմանէր: Սա՛ ալ ունէր միեւնոյն առատ մազերը, սեւ և փայլուն, աւելի բարեհասակ քան մայրը, նուազ նիհար. իր տոգունութիւնը կը կարմրէր ունէ բոռէ մը, ամէկոտութենէն կը շփոթէր: Ու Մաքսիմ իր գաւառիկ թիկնոցով, իր հնածեւ տափառով, եւ շապիկով՝ որուն օձիքը կը ծածկէր X ձեւով կապուած փողկապ մը, Մաքսիմ, այո՛, նիհար, այլ զօրեղ. զէմքը՝ մտածկոտ, աչքերը՝ հրավառ, ինչպէս մօրը եւ քրոջիները, կը յիշեցնէր գաւառի, քաղքենի սպայ, այլ ազնուական սպայ:

— Վեր ել մամային իմացնելու, թէ եկան, ըսաւ Մոտ ժազըլինի ականջին: Սե կորնատին շրջագոստը թող հագնի, ո՛չ դեղին, ո՛չ կանաչ: Եւ թող սեղմերան մը դնէ:

— Ո՛չ, ես պիտի հագուեցնեմ զինքը, և թէ հարկ ըլլայ, յարեց պղտիկը. հեռանալով:

Շանթէլներու մուտքէն ի վեր՝ բաւական պազ լուծութիւն մը կը տիրէր սրահին մէջ: Մոտ՝ Տիկին տը Շանթէլի քովը նստած էր. քիչ մը նեղուած՝ զիրար կը մեծարէին յարգական կերպով. ժանն՝ իր մօրը քովը, տեղէն չէր շարժեր և աչքերը գետնէն չէր վերցնէր: Մոտին զիմացը, Տիկին տը Ռեզլերսիէի և էքթոր Լը Թէսիէի մէջտեղ նստած՝ Մաքսիմ պունատ սովորութեամբ, իր կարճ պիսին ձախ ծայրը կը կրծէր: Ինքզինքը կը մղէր դիտելու կարասիները, պատի ծածկոցները եւ տան կահաւորումը, բայց իր աչքերը կ'ուզողուէին դէպի Մոտ՝ որ մտացիր իր ձեռքը սեղմած էր և որ այլևս իրեն չէր նայեր, և ինք զնէ կը տեսնէր այնքան աղւոր, վերածաղկած գեղեցիկութեամբ մը, անոր կողմէ ընտրուած շրջանակի մը մէջ, այնքան որ գոգոյս այլևս չէր ճանչնար զնէ, և լերովի կը հարցնէր, թէ՛ ի՞նչպէս հո՛ն, անտառային ջրարբի պղտիկ քաղաքի մը մէջ՝ ինք համարձակած էր դէպ անոր երկարել ըսրբտին մտածումը և յօրէ անտի իր մէջ թաղել յիշատակի սերմ մը, որ մեծնայ, ուռճանայ և ընծիւղէ սիր յ ամէնէն վտանգաւոր ծաղիկները:

էքթոր Լը Թէսիէ կը դիտեր նորեկը և ակնարկով զայն կը խորհալիէր: Իբր խոհուն փարիզցի, իր յաճախած

այս ընկերութեան ներքին կողմերուն տեղեակ՝ գուշակեց այն էնթրիկը՝ որ այս սրահին մէջ, այս սամավարին և այս վառարանին շուրջը կը սարքուէր, և իբր գեղարուեստասէր հաշուեց ամէն հաւանականութիւնները՝ որոնք պիտի յանգէին կամ կատակերգութեան մը և կամ տրամի մը:

«Ռուզոըները՝ առանց գրամի, սակայն պերճանքի ետին կանգնած: Մոտ իր միջավայրէն ձանձրացած՝ որոշած էր հաստատուն ամուսնութեամբ մը, ընկերութեան մէջ մխուիլ: Գաւառացին՝ ներքնապէս իր մէջ պարուրուած՝ պատրաստ էր դուրս ցատքելու: Այո՛, Բայց Սիւպէրսօ՛: Սիրահարն է. նէ սիրուէի՛ն է: Սակայն զիրար սիրելու իրենց եղանակը զիրենք համակրելի կը դարձնէ, հակառակ իրենց արկածախնդիր բարեխառնութեան: Աղուո՛ր նիւթ թատերախաղի: Բարեբախտաբար, անտարբեր դիտող մըն էմ» Ուրախացաւ քիչ առաջ Մոտի չէզոքութիւն խոստացած ըլլալուն: «Անտարբեր դիտող և շատ գոհ եմ ասանկ մնալուս»:

Մաքսիմ այժմ ինքզինք կը մոռնար կատարելապէս և աչքերը չէր դատեր Մոտէն՝ որ բնաւ իրեն չէր նայեր:

— Տարօրինա՛կ բան, խորհեցաւ էքթոր: Այս զէմքը ինծի անձանօթ մը չէ:

Տիկին տը Ռուզոը ներս կը մտնէր: Հագած էր սեւ կարնատին շրջագոստ մը, որ զինքը կ'երիտասարդացնէր եւ կը գեղեցկացնէր: Երկու կուրծքերու միջեւ կը վառլէր կեղծ ազամանդեայ գնդասեղը:

— Ինչո՞ւ թողուցիր մամային՝ որ այդ կեղծ քարը զնէ. փսփսաց Մոտ ժազըլինին՝ որ կը հետեւէր մօրը:

— Ա՛հ, ըսաւ պղտիկը, փորձեցի, սակայն զիւրին բա՛ն է անոր խօսք հասկցնելը:

Ի տես տիկին տը Ռուզոըի, տիկին տը Շանթէլ ոտքի ելած էր, ստոյգ ուրախութեամբ մը պայծառացած՝ զէպի անոր կը մօտենար. զիւրար համբուրեցին եւ անմիջապէս խօսակցութեան սկսան, բնականաբար անցեալին կապուած հիւանդի իրենց շատախօսութեամբ:

— Օ՛հ, սիրելիս, ինչպէ՞ս էք. ձեր ծունկե՞րը:

— Աւա՛ղ, զարձակ բռնուած եմ, սիրելի բարեկամուհիս, օրս պառկած անցուցի: Բայց դուք, ձեր ո՞ւրը:

— Աղէկ, շատ աւելի աղէկ: Երեւակայեցէք որ Տօքթ-Լըվէոի գեղահատիկները գտայ:

Անկիւն մը նստեցան, իւրաքանչիւրը խօսելու աճապարանքէ մղուած, մտիկ չընելով դիմացինը:

Էքթոր մօտեցած էր Մոտի:

— Ինչպէ՞ս կը կոչուին ասոնք, հարցուց. անուննին աղէկ չիմացայ:

— Շանթէլ, դեր կոմսուհի Շանթէլ:

— Ուրեմն նոյն ի՛նքն է: Մաքսիմ տը Շանթէլը կը ճանչնամ:

Մոտ աշխուժօրէն հարցուց.

— Իրա՞ւ: Ուսկի՞ց:

— Գունդին մէջ, ութ տարի առաջ: Իմ դեր-տեղակալս եղած է ի Շալոն, երբ տրակոններու կամաւոր էի:

— Արդարեւ, Սէն-Սեռէն ելած է եւ երեք տարի սպայ եղած է: Հօրը մահուընէն վերջ՝ իր հրատարականը տուած է, Բուաթուի մէջ իրենց անհուն կալուածներով գրադելու: Չճանչցա՞ւ քեզ:

— Օ՛հ, շատ բնական է: Այնքան ծանօթ վիշապազինուոր մը չէի: Յետոյ, այդ ատեն, զիրար ճանչնալը զիւրինքան չէր: Պէ՞տք է որ ինքզինքս իրեն յիշել տամ:

Մոտ վայրկեան մը խորհեցաւ.

— Չմոռցա՞ք ձեր խոստումը:

— Ո՛չ. նոյն իսկ եթէ կարենամ օգտակար ըլլալ ձեզի՛ ոեւէ բանի մէջ:

— Այո՛, կրնաք: Յեշեցուցէք իրեն թէ ո՞ւր գինքը տեսած էք: Ընտանեցուցէք զ՛յն: Վայրենի մըն է, գիտէք:

— Առ այժմ, յարեց Էքթոր, կը կարծեմ թէ իր նախկին պինուորին տասնըհինգ օրուան բանտարկութիւն մը պիտի տար դիտմամբ: Նայեցէ՛ք:

Արդարեւ, Մաքսիմ, կերպարանքը աւրուած, դիմագիծերը՝ զալարուած, կը դիտէր խօսակցութիւնը Էքթորի եւ Մոտի, եւ անոնց մտերմական ընթացքը:

— Ձինքը պիտի հանդարտեցնեմ, յարեց Էքթոր:

Օգուտ քաղեց իրարանցումէն՝ յառաջ եկած նկարիչ Վալպէլի ներս մտնելէն — ըմբիշի երեւոյթով, մեծ մարդ մը, պէ՛տքը՝ զունաւօր, մազերը ալիսառն — ու մօտեցաւ Մաքսիմի:

— Պարո՛ն, կը ներէ՞ք ինծի հին յիշատակներ մէջ բերելու: Պատիւ ունեցած եմ ծառայելու ձեր հրամանին տակ՝ ի Շալոն: Պ. Էքթոր Լը Թէսիէ:

Այն թեթեւ հեգնութիւնը՝ որուն Էքթոր միացուց իր խօսքին, առ երեւոյթ յարգանքը վրիպեցաւ Մաքսիմէն: Դէ՛մքը հանգստացաւ. ինքզինքը կը լուսաբանէր: Էքթորի ձեռքը սեղմեց:

— Ա՛հ, պարոն, ուրախ եմ: Շատ աղէկ կը յիշե՛մ, Լը Թէսիէ... 84ին, չէ՞:

— 83ին, ուղղեց Էքթոր:

— 83: Տէօ-Սէվրըէն էք, այնպէս չէ՞:

— Այո՛, պարոն, Բարթընէէն: Ձեր յիշողութեան ճշգրտութենէն. կը մտաբերեմ այն պատուական սպան՝ որ դուք էիք:

— Շատ կը սիրէի իմ արուեստս, յայտնեց Մաքսիմ, ձայնը քիչ մը տխրութեամբ թրթռուն:

Փոլ Լը Թէսիէ կը մօտենար, յետոյ տիկին տը Շանթէլ, եւ տիկին տը Ռուվոը՝ յանկարծակիի եկած այս երկուքին այնքան արագ մօտիկութենէն: Չարմացան դիպուածին վրայ՝ որ զանոնք կը միացնէր տասը տարի վերջ:

— Ո՛չ վիպական դիպուածը, դիտել տուաւ Փոլ Լը Թէսիէ: Պ. տը Շանթէլ 3 տարի սպայ եղած էր, եւ երկու հազարի մօտ նորագիրներ ճանչցաւ: Անկից ի վեր, անոնցմէ մէկէ աւելիին հանդիպած ըլլալու է:

— Օ՛հ, չարածձի թուաբանը, յարեց տիկին տը Ռուվոը: Միշտ թիւեր. միշտ ապացոյցներ: Ինչ որ կը պատահի, պէ՛տք էր պատահիլ: Ես կ'ըսեմ, որ արտաքոյ կարգի

հանդիպում մըն է եւ այս կը հաստատէ, թէ այս պարոնները բարեկամներ են: Ահաւասիկ իմ գիտցածս:

— Կ'ընդունիմ ձեր գուշակութիւնը, տիկին, ըսաւ էքթորը եւ եթէ Պ. տը Շանթէլ քիչ մը ժամանակ Փարիզ մնայ, երկու հին բարիզցիներ, թէեւ ընիկ Բարթընէցի, ես եւ եղբայրս, որ տրամադրութեան տակ պիտի ըլլանք: Նախ շնորհ պիտի ընէ՞ք մեզ հետ ճաշելու վաղը կապելային մէջ:

Մաքսիմ ընդունեց. իրենց խօսակցութիւնը շարունակուեցաւ, անկեղծ ընկերներու շեշտով մը. երկուքն ալ խօսելով անցեալին վրայ, քիչ մը կը վերյուշէին իրենց առջի երիտասարդութիւնը, անդառնալիօրէն խուսափած, հիմակ որ երեսունի մօտ էին: Ուրիշ այցելուներ կուգային սակայն. տիկին Տիւքլէն, մատիտանկարիչի մը կինը, որ երբեք ամուսնոյն հետ չէր տեսներ, ինքզինքին տալով քարեծաղիկ գործաւորուհիի մը ձեւեր. խայթող կուսազեղ դիմագծերուն ազդեցութեամբ, ֆէմինիստ վիպագիր մը՝ Հանրի Էսքիէն, երկանաներ հարաւային մը, յամառ եւ շատխօսիկ. Տիկին Ավրըզաք եւ աղջիկը՝ Ժիւլիէթ, երկու թուխեր, նուրբ եւ գեղեցիկ, իբր երկու քոյրեր. վերջապէս Մոտի մէկ զարմուհին՝ Տօռա Բալվէլ, պզտիկ Բուպացի մը, բաց կիտրոնի գոյն այտերով, կէս կապոյտ մազերով, մրմնջող խօսուածքով եւ հրդեհ նայուածքով: Մինակ էր, իր ընկերակիւնը թողլով նախասենեակին մէջ:

Մոտ քիչ մը անդին տարաւ ժաղըլիւնը:

— Է՛հ, գէշ չերթար, չէ՞:

— Այո՛, բայց Շանթէլի եւ Լը Թէսիէներու միջեւ շատ սեղմ բարեկամութեան պէտք չկար: Գիտես մարդերը՞ իրարու մէջ. մեզի հակառակ դաշնակիցներ են.

— Օ՛հ, էքթորին վրայ վստահ եմ:

— Փոլի՞ն վրայ:

— Իրաւունք ունիս: Բայց Փոլ ձեռքիս մէջն է:

Մատով նշան մը ըրաւ Փոլին, իրեն մօտ գալու.

— Գեղեցի՛կ ձերակուտական, ըսաւ անոր խնդուն շեշտով մը. այսօր կորսնցուցիք իմ ամէնէն գեղեցիկ սպասուհիս:

Փոլ ժպտեցաւ.

— Գիտեմ. ես էի որ զինքը ձեզ ղրկեցի:

— Վա՛յ ծածկամիտ, Ինծի բան մը չըսաւ:

— Ձէր համարձակեր գալու: Զինքը վստահեցուցի որ քարի եւ աղնուասիրտ ընկերուհի մըն էիք. . . անոնց համար՝ որ ձեր ճամբան չեն դոցեր, աւելցուց ժպիտով մը:

— Եւ ես խոստացայ հոս ընել տալ իր նախափորձը եւ հրաւիրել ամբողջ Փարիզը: Գիտէ՞ք որ պաշտելի է եւ գուք երջանիկ ձերակուտական մըն էք:

— Ո՛հ, յարեց Փոլ Լը Թէսիէ, ինչպէս կ'ըսեն օփերէթի թաղաւորները, այս աղջկան համար՝ հայր մ'եմ.

— Ո՛յ պիտի ուզէր անոր յառաջացումը, յարեց Փազըլին իր ակնոցներուն մէջէն: Վերջապէս քոյրս ազնիւ է ձեր աղջկան նկատմամբ:

— Ի փոխարէն, շարունակեց Մոտ, ձայնը իջեցնելով, Կ'ուզեմ ձեզմէ ձեր դաշնակցութիւնը, հազիւ յղացուած ծրագիրներու, որոնց յաջողութիւնը սակայն միտքս կը զբաղեցնէ:

Փոլ նայուածքով մը չափեց Մաքսիմը:

— Ի՞նքը:

— Այո՛. էքթոր դաշնակիցս է: Եւ դո՞ւք:

— Հարկաւ, ես ալ: Բա՛ւ է որ արգահատելի չըլլայ այս երկրագործ զինուորը: Ահա, Ահարոնը Ժիւլիէնի հետ: Սիւպլէրսօ, անզգած եւ քօռէքթ, ներս կը մտնէր՝ իր ետեւէն ունենալով պզտիկ մարդ մը, կլոր եւ կարմրադէմ, փորը խոշոր եւ քրտինքոտ, Ծրանքփորթցի վաշխառուի կերպարանքով, հակառակ իր անգլիացիի հագուստին, փայլուն գլխարկին եւ կօշիկներուն, կարմիր կարտինիա մը՝ իր լամբակին վրայ: Շքեղօրէն զինքը ներկայացուցին:

— Պառոն Ահարոն, կաթոլիկ Բոնթուառի անօրէն:

Խոշոր մարդը կը բարեւէր աջէն ձախէն, ձեռք կը սեղմէր, կարծես գորգին վրայ գնդակի մը նման կը գլտորէր ասդին անդին:

— Օրի՛որդ, թոթովեց մօտենալով Մոտի եւ գրպանէն

պահարան մը հանելով, ահաւասիկ օթեակ մը վազուան ներկայացուցին համար:

— Ահ, շնորհակալ եմ, ըսաւ պարզօրէն Մոտ: Եւ պահարանը դրաւ շքակահին վրայ:

Բաղմուտիւնը երկու սրահներուն մէջ տարտղնուած էր, իրարու նկատմամբ ունեցած իրենց ընտրանքին համաձայն: Էսփիէն՝ Մոտի զարգախուցը մտցուցած էր տիկին Ավրըզաքը. չէին տեսնուեր այլեւս: Երբեմն երբեմն կը լըսուէին խղզուկ խնդուքներ, որոնց կը յաջորդէր անմիջապէս դաշնակի մատներուն Գրթնացումը:

Ժիւլիէթ Ավրըզաք, Սիւպէրսօի քովիկը քաշուած՝ ցած ձայնով կը խօսէր անոր, ջղածիգ շարժուածներով, յանդիմանութիւններ արտայայտող, ու նա անտարբեր կերպով մտիկ կ'ընէր, աչքերը յառած Թուռնէի մէկ նկատուած: Թէյասեղանին շուրջը Վալպէլ եւ Լէսթրանժ կը կատակէին Տոռա Քալվէլի հետ, ի մեծ ուրախութիւն ժազըլինի, Մարթի եւ Մատըլէնի. եւ պզտիկ խառնածինը՝ կիտրոնագոյն այտերը արիւնէն թխացած, կը մնջէր հաւփալի մը նման՝ այս խինդ ու խանդին մէջ, զուարթօրէն պատասխան տալով երկու մարդոց:

— Վայրենուհի՛ մը, պարոն Վալպէլ: Կ'ուզէք զիս նկարել ինչպէս պզտիկ վայրենուհի մը: Ո՛հ, ոչ, շնորհակալ եմ: Քաղաքավար էք:

— Բայց ո՛չ, հասկցէք ուրեմն, կ'ըսէր Վալպէլ. ասիկա ուրիշներու նմանող վայրենուհի մը չէ. Պատահիւն է, բանաստեղծութիւնը, սէ՛րը, վերջապէս, կատարելապէս ձեր տիպարը:

— Եւ հագուստը ձեզ պիտի վայելէ աստուածօրէն, զիտել տուաւ Լէսթրանժ:

— Ինչպէ՛ս է այդ հագուստը: Օ՛հ, կը ծաղրէք զիս, որովհետեւ գիտէք թէ ապուշ եմ, եւ վստահ եմ թէ, հագուստ գոյութիւն չունի երբե՛ք:

Բայց այո՛, տերեւներ կան, արմաւենիի շատ մը տերեւներ. շատ յարմար է. մարդ ուղածին չափ կրնայ դնել:

— Վստահարար, ըսաւ ժազըլին, ես պիտի նկարուէի անմիջապէս Պ. Վալպէլէն, եթէ յարմար տիպար մ'ըլլայի: Մարթի ականջին փսփսաց. «Պիտի տեսնես: Տոռան այո՛ պիտի ըսէ: Պաշտելի է նէ»:

Տոռա մտածելէ վերջ՝ առարկեց.

— Մայրս երբեք չպիտի ուզէ:

— Օ՛հ, ըսաւ Լէսթրանժ, իրեն ըսելու հարկ չկայ: Արուեստանոց սա բարի Օր. Սօֆիին հետ:

Տոռաի հետեւորդ կիսն էր նէ, նշանաւոր՝ փարիզեան զուարճացող ընկերութեան մը մէջ, իր լուծեամբ եւ հանգարտութեամբը: Նախասենեակին մէջ, աթոռի մը վրայ կը նստեցնէին զայն. անմիջապէս կը քնանար եւ այն տեսն միայն՝ կը շարժէր, երբ զինքը արթնցնէին:

Փոքրիկն Քալվէլ կը մտածէր. վերջապէս բերնէն փախցուց սա պատասխանը՝ որ բոլոր իր բարեկամուհիները խօշ ծիծաղի մը մէջ ձգեց:

— Այո, կ'ուզեմ, պայմանաւ, որ խոստանաք ինծի թէ մէկը չտեսնէ դէմքս:

Մաքսիմ՝ զոր էքթոր առանձինն թողած էր, անոր քրոջ՝ Ժաննի ներկայացուելէն վերջ, կը նայէր, մտեկ կ'ընէր եւ իւրովի կը հարցնէր. «Կ'երագե՞մ արդեօք: Ծնած եմ մեկուսի աշխարհի մը մէջ. արդիակաւն ընկերութեան բարքերը եւ լեզուն ասո՞նք են: Դարեջրանոցներու խօսակցութիւնները աւելի արժէք ունին քան այս փսփոտքները: Դստըրտութիւններու այս շարժուածները՝ զոր քնաւ չեն քաշուիր ծածկելու: Ու այն գարշելի բողը՝ որ անդադար կը հնչէ, իբր անառակութեան կոչ մը, «իմ քծնաբանութիւնս (flirt). նէ քծնաբանեց. քծնաբանեցինք: Աղջկանս քծնաբանութիւնը»: Ասոնք են այն անձերը՝ որոնցմով չըջապատուած է Մոտ: Ահա թէ ի՛նչ կը տեսնէ նէ, եւ ի՛նչ կը լսէ: Այն տեսն»:

Մոտ տակաւին իրեն խօսք ուղղած չէր: Այդ վայրկեանին անոր նայեցաւ նէ, որ շատ մօտիկն էր, Լէսթրանժը եւ Վալպէլը չըջապատող անառակ շղակրատներուն. նէ զուշակեց անոր զսպուած գարմանքը, եւ շիտակ ուղղուե-

ցաւ դէպի անոր:

— Ի՞նչ բանի վրայ կը խորհիք Պ. տը Շանթէլ, ըսաւ, նայուածքը ուղղելով դէպի անոր:

Եւ քաշուեցաւ սրահին անկիւնը, ստիպելով երիտասարդը հետեւելու իրեն:

— Կը խորհիմ, պատասխանեց Մաքսիմ լըՇօրէն, թէ Վէզէրի մէջ, իմ միայնութիւնս այն ապաստարանն է, զոր երբեք թողելու չէ ինծի պէս գիւղացի մը կամ գաւառացի մը:

Հակառակ իրեն, իր խօսքերուն մէջ դրած էր, զգացած բոլոր դառնութիւնը, ինքզինք բաղդատելով, սիրած կնոջ աչքերուն տակ՝ այդ վայելչագեղ, փայլուն, դիւրախօսիկ մարդոց հետ, ինչպէս էին Լէսթրանտ, Լը Թէսիէ Սիւպէնսո:

— Ուրեմն, հարցուց ծանրութեամբ Մոտ. Վէզէրի՞ պիտի դառնա՞ք:

— Այո՛, Փարիզի միջ ընկերացայ մօրս՝ որ մինակը չի կրնար ճամբորդել: Քիչ կամ շատ ժամանակ հոս պիտի մնայ, իր բժիշկին տալիք խորհուրդներուն համաձայն: Ես հոս գործ մը չունիմ. պիտի մեկնիմ Վէզէրի եւ պիտի վերադառնամ մայրս աննկու համար միայն: Փարիզ շատ մեծ է ինծի համար, նոյնիսկ երբ հոս եմ, ինչպէս այսօր. անկից բացակայ ըլլալու տպաւորութիւնը ունիմ: Իմ հայրենի երկիրս, իր փոքրիկ բլուրներով, դաշտերով՝ եզրուած խորհրդաւոր հորիզոններով, աւելի մօտիկ է սրտիս:

— Ա՛հ, ըրաւ Մոտ, ծանրօրէն փակելով իր արտեւանունքը:

Մաքսիմ վերստին շարունակեց, իր իսկ ձայնին թրթրոսացումէն ինքզինքէն ելած.

— Այդ միայնութիւնները զիս ըրած են այնպէս, ինչպէս որ եմ, կը տեսնէք արդէն: Միեւնոյն սիրտը ունիմ, ինչպէս իմ հովիւներս, անշարժ հորիզոնին դիմաց, արշալոյսէ վերջալոյս. իմ զգայնութիւններս ծանր եւ խորունկ են, այնքան խորունկ որ, անգամ մը երբ անոնք փորձուին իրենց մէկ վերջնութիւնը կը բաւէ լեցնելու իմ մտածութիւններս երկար ամիսներ: Հոս՝ խօսքը կարճ եւ արագ է, զգայնութեան պէս, ես, խօսելու մէջ ծանր եմ, որովհետեւ անկարելի է արագօրէն արտայայտուիլ, այնքան հեռաւոր զգայնութիւններու մասին: Ներեցէք ինծի. չեմ գիտեր թէ ինչո՞ւ կ'ըսեմ ձեզի այս բաները:

— Ընդհակառակը, խօսեցէ՛ք ինծի, յարեց Մոտ: Հո՛ն (մատովը ցոյց տալով ժաղրլինի, Սիւպէնսօի եւ Լը Թէսիէի խումբը) խօսուածները զիս այնքան չեն շահագրգռուեր:

— Բարի էք զայդ ինծի ըսելու, գոնէ...: Տեսէք, նոյն իսկ բաւականաչափ իմ տէրս չեմ, յուզումս ձեզմէ պահելու: Ինչ որ ինծի կը յիշեցնէ անցեալ բան մը... երջանիկ բան մը, զիս այսպէս՝ տակնուվրայ կ'ընէ, ու հոս իմ ներկայութիւնս, ամիսներէ վերջ՝ ինծի կը յիշեցնէ այնքան ազդուութեամբ Սէնթ Ամանի սեր չորս օրերը:

Մոտ զայն ընդմիջեց:

— Զանոնք ե՛ս ալ մոռցած չեմ:

Լոեցի՛ն: Աչքերը բարձրացնելով Պ. տը Շանթէլի վերայ, մանկամարդ աղջիկը սարսափեցաւ անոնց բոցէն:

«Այս աւուր համար, այսքան վկայ բաւական է», խորհեցաւ ինքնիրեն Մոտ: Ու, Մաքսիմի չրթներուն վրայ ճնշող բառերուն՝ որոնք պիտի պոսթկային, առջեւը առնելու համար կարճ կապեց, ու ամէնէն լսուելու աստիճան, բարձրաձայն ըսաւ.

— Վաղը պէտք է որ օրերս գաք, մեր օթեակը կ'ընդունի՞ք. ժամն ալ պիտի գայ, չէ՞: Ո՛ւր է մեր ժամնէ՞թը. ինչպէ՞ս. կը խօսի՞, կ'ընտանենայ՞:

Ժամն տը Շանթէլ երկչոտ ձեւով մը կը խօսակցէր էքթոր Լը Թէսիէի հետ: Մոտի խօսքը զայրեցուց խօսակցութիւնը եւ աղջնակը, կաս կարմիր, եկաւ ապաստանիլ եղբօրը քով: Քիչ մը խնդացին.

— Ինչպէ՞ս ընտանեցաք անոր հետ, հարցուց Մաքսիմ, չ յէլով իր քրոջ թուխ խոպոպները:

— Զեր մասին խօսեցայ իրեն, պարոն:

Անմիջապէս այս նոր հոգին էքթորի հետաքրքրութիւնը չարժած էր: Զնէ կը գուշակէր այնքան տարբեր, կուսութեան քօղին տակ մաշած պղտիկ հողիներէն՝ զորոնք կը լրտեսէր փարիզեան սրահներու մէջ, ոչ թէ իբր վաւաչօտի մը պէս, ինչպէս էին Լէսթրանտ եւ Սիւպէնսօ, այլ մասնաւոր գեղարուեստասէրի մը ճաշակով: Քաղցրու-

Թեամբ, գրեթէ հայրարար հարցափորձած էր այդ աղջնակը, խօսելով անոր իր եղբորը նկատմամբ, զոր ճանչցած էր Բուաթուրի մէջ, երկուքին ալ ծննդավայրը. եւ պզտիկը՝ անգամ մը վստահացած, երկչոտութիւնը մէկդի նետելով՝ մտերմացած էր անոր հետ: Խաղաղիկ եւ նուազուն ձայնով մը կը պատմէր իր ժանկութիւնը, իր երիտասարդութիւնը, հոն, ծննդավայրին մէջ, առանց տօներու, առանց ընկերներու, — մեծցուած իր մօրմէն եւ դաստիարակուած իր եղբորմէն:

— Օհ, անուշիկս, ըսաւ Մաքսիմ, ճակատէն համբուրելով:

— Օհ, յարեց Մոտ, քիչ մ'անհամբեր. ի՞նչ կ'որոշենք վաղն իրիկուան համար: Պ. Ահարոն եւ Պ. տը Սիւպէնսօ իրենց տեղերը ունին, ինչպէս եւ դուք պարոնայք Լը Թէսիէներ: Տիկին տը Շանթէլ եւ ժանն մեր օթեակը զան. Պ. տը Շանթէլ պիտի առաջնորդէ զանոնք:

— Պիտի ճաշեմ ձեր բարեկամներուն հետ, օրիորդ, պատասխանեց Մաքսիմ, դժգոհ որ, Մոտ քիչ առաջուան խօսակցութիւնը ընդհատած էր:

— Լա՛ւ, ճաշէ վերջ՝ անոնց հետ պիտի դաք մեզի միանալ: Լինցա՛ւ, չէ՞:

Նէ անոր վրայ կ'ուզէր քաղցր ակնարկ մը: Նա գլուխը խոնարհեցուց: Սիւպէնսօ զանոնք չտեսնել կը ձեւացնէր, եւ իբր թէ ամենայն ուշադրութեամբ Փոլ Լը Թէսիէի հետ կը խօսակցէր:

Տիկին տը Շանթէլ սոքի ելաւ: Ահարոն Մոտի ձեռքերը համբուրեց: Գրեթէ ժամը եօթն էր. ամէնքն ալ մեկնելու վրայ էին:

Սիւպէնսօ մօտեցաւ Մոտի, որ իրեն ըսաւ.

— Աղէկ. բարենիչ մը քեզի: Շատ չնորհքով կեցաք: Երբեմնի ձեր գէշ արամադրութիւններուն ներել տուիք ինձի:

— Ի՞նչն է: հարցուց երիտասարդը արհամարհանօք, ակնարկով ցոյց տալով Մաքսիմի կոնակը:

— Այո՛:

— Գաւառացիի մը երեւոյթը ունի: Մոտ չոր կերպով ըսաւ.

— Շատ ազնիւ մարդ մըն է, սիրելիս, եւ աւելի կ'արժէ...

— Քան զի՞ս: Մոտ յարեց.

— Քան զմեզ: Այժմ, աւելցուց, հեռացէք: Միւսներէն յետոյ՝ հոս մնալու երեւոյթը մի ունենաք ձեզի: Առ վաղիւ:

Գ.

— Ո՛չ, յատարարեց էքթոր Լը Թէսիէ (ժողէֆ ճաշարանին մէջ, Մաքսիմի եւ իր եղբոր հետ ճաշը լմնցնելու վրայ էր), ընկերութիւնը՝ ուր երէկ իրարու հանդիպեցանք, սիրելի Շանթէլս, բացարձակապէս բացառիկ ընկերութիւնն էր չէ. ձեր տեսած այն մանկամարդ աղջիկները՝ որոնք էրիկ մարդոց գլուխ կը բռնէին, որոնք չիլ կատակներով կը խնդային եւ միեւնոյն ձեռով կը պատասխանէին իրարու, այնքան բացառիկ աղջիկներ չեն: Ժամանակակից անգործ ընկերութիւնն է, եւ այդ ընկերութեան ժամանակակից աղջիկն է այն: Եթէ Տոռա Գալվէլ արդարեւ քիչ մը... գաղթային է, միւսները, ճիշդ համեմատութեամբ, նմոյշներն են հեշտամոլիկ Բարիզի երիտասարդ անձնաւորութեան, այն՝ որ ունի դիւրակեցիկ եւ ոչ ինքնահաւան ծնողքներ, որ կ'երթայ անտառ, թատրոն, պարահանդէս, Թուփիլ, էքս, որ ջրաբուժութեան կը հետեւի, թէնիս կը խաղայ, խմբակցութիւններ կը կազմէ. հոն պիտի տեսնէք ներկայացուած ընկերային սանդուխին բոլոր աստի-

ճանները, պչրուհիէն մինչեւ պատմական բարձր ընտանիքներու ժառանգորդուհին: Տիկին տը Ռըվէրսիէ քաջասիրտ Պէտիշոնի մը կիսն է, քիչ մը ազնուական, բարոյական կարգին հին մեծաւոր, ներքինը՝ ուղիղ, պատուական հարստութիւն: Պ. Ալփրաք, իր կենդանութեան, մեծաքանակ քիմիական նիւթեր կ'արտադրէր ի Վէզինէ. իր այրին հարուստ է: Անշուշտ կը ճանչնաք Ռուվըր ընտանիքին տոհմիկ ծագումը: Ժագրիին շատ զօրեղ կերպով կրթուած է: Ո՛չ, երբեք կիսաշխարհիկ եւ խառնուրդ ընկերութենէ մը չէ:

Անոնք ընկերային դիրքէ ինկածներ չեն: Այդ սրահը յաճախ ոչ-մանկամարդ աղջիկներուն մէջ կասկածելիներ չեմ տեսներ, բացի պղտիկ Տոռաէն, թէեւ լաւ ընտանիքէ սերած, եւ Մէսիլ Անպոլէն՝ որուն զիմակը երազել պիտի տար Պոտլէոք, եւ սակայն կ'ընդունուի ամէն տեղ, իբր պատուոյ կին խալացի իշխանուհի մը: Ամէնքը եւ դեռ ուրիշներ, զոր պիտի ճանչնաք, բնականաբար են նաեւ աշտակ եւ հեշտամուլ Բարիլի արտադրութիւնը, ինչպէս որ նուրբ շամբանիան արտադրոյթն է Շառանթի ձերմակ գի նիներու: Ո՛չ մին, ոչ միւսը անհաճոյ չեն ինծի, աւելցուց, կլլելով ինչ որ կար պղտիկ գաւաթին մէջ:

Փօլ Լը Թէօիէ սիկար մը կ'ընտրէր, երկար զգուշութեամբ:

— Ահաւասիկ էքթորը՝ ձի նստած, ըսաւ: Երիտասարդ աղջիկներու դիրքին մէջ, անսպասելի է:

Մաքսիմ, որ կերակուրի սլահուն քիչ խօսած էր եւ բնաւ չէր ծխեր, պատասխանեց

— Բայց շատ շահագրգռական կը դտնեմ ձեր խօսքերը:

Էքթոր Լը Թէօիէի խօսքելը այնքան ճիշդ կերպով նշան կ'առնէին իր յուզեալ սրտին զաղտնիքներուն: Երէկուան այցելութենէն, գուրս ելած էր զիւթուած եւ խոզված: Մոտ այնքան գեղանի, որ շատ թավանցող բառեր ունեցած էր իր մասին, յիշեցնելով անցեալի յիշատակները, եւ անշուշտ որ, զնէ դտած էր անպիւտ, ինչպէս որ ինքն ալ այդպէս կը փափաքէր: Բայց միւսնե՞րը, եւ այդ

զգաստ հպանցիկ աղջիկները, որոնց տիտղոսը եւ կուսական հագուստը աւելի կը չփոթեցնէին խօսքերը եւ դարձուածքները: Անոնք էին Մոտի քոյրերը, ընկերուհիները, միայն քիչ մ'աւելի երիտասարդ քան ինքը. Մոտ զանոնք կը լսէր, անոնց կը պատասխանէր, անոնց մտածումներուն համաձայն կը մտածէր... գուցէ:

Չայս երեւակայելով՝ նախկին վիշապաղինուորը կը դգար իր մէջ ընծիւղիլը բարկութեան խմորի մը՝ այդ անձերուն դէմ, այդ նկարիչի դէմ, որոնք թերեւս աղտոտած էին, իրմէ ընտրուած կնոջ ձերմակ հողին, եւ այնօրէն ի վեր զնէ կը սիրէ՛ր խտացած եռանդովը զօրեղ հոգիներու, ուր միայնութիւնը, տարակայութիւնը հեռու զանոնք ջնջել է, կը տաքցնեն կիրքերը:

Բայց թերեւս Մոտ, այդ աղտոտութիւններուն մէջ կը մնար մաքուր, անգիտակ չարիքին, մխրճուած ընկերութեան մը մէջ, առանց զայն հասկնալու, ինչպէս իր քոյրը ժանն, որ նախորդ օրուան այցելութեան միջոցին բանէ մը չէր ազդուած: Օ՛հ, անգութ գաղտնիք: Ինչպէ՞ս, ինչպէ՞ս ըլլալ վստահ: Մտիկ կընէր էքթորի տեսակ մը պայմանաւորուած ուշադրութեամբ. հասկնալու փափաքը եւ գիտնալու երկի՛ղը:

Բայց էքթոր կը զգուշանար խօսելէ Մոտի վրայ. տաւրնեհինդ տարիներէ ի վեր, Փարիզի մէջ երկու դէպքեր անցած են — երկու ծանր դէպքեր, երկու քրախներ, պիտի ըսէր եղբայրս — որոնց թեթեւ հակահարուածն իսկ չըզգացինք ձեր Վէզէրիի հողերուն մէջ, սիրելիս, ձեր յովատակներուն, շուներուն եւ փասեաններուն մէջ:

— Եւ որոնք են, հարցուց Մաքսիմ:

— Առաջին, ամօթխածութեան քրախտը, սնանկութիւնը: Մեր թուականը կը բաղդատուի լատինական անկուծի չըջանին կամ Վերածնունդին, սիրոյ տեսակէտով: Մեր երիտասարդ աղջիկները (կը հասկնամ միշտ անդործ, հեշտամուլ ընկերութեան աղջիկները) այլեւս չեն ծառայեր ըտլորովին մերկ Մէտիզիներու սեղանին, չեն զարդարեր իրենց վիզը ծնուցիչ խորհրդանկարներով, բայց անոնք սի-

րոյ բաներու մէջ, Ֆլուսանթիններու եւ հոովմուհիներու չափ, գիտուն են: Ո՞վ կը նեղուի անոնց առջեւ խօսելու համար երէկի մէկ գայթակղութեան վրայ: Ո՞ր ներկայացուցիչն էր թար: Ո՞ր վէպը չեն կարգար: Եւ դեռ խօսակցութիւնը, թատրոնը, գիրքը: Բարիզ ընկերութեան մէջ կան, արհեստով կուսապիղծներ, անմեղութեան դէմ դարանակալ մարդեր, ինչպէս երէկ ձեր տեսած սա Լէսթրանժը: Մանկամարդ աղջիկներուն առաջին դասը կը տըրուի առաջին պարահանդէսին իրիկունը, այդ եղանակին մէջ դասընթացը կը շարունակուի, կուգայ ամառը. հանքաջրային քաղաքներու եւ ծովափներու խառնակեցութիւնները պիտի թոյլատրեն արհեստով կուսապիղծներուն իրենց գործին տալու վերջին հարուածը կամ ձեռքը:

— Աջ ձեռքը, դիտել տուաւ Փօլ. որովհետեւ կ'ենթագրեմ, թէ սկսաւ ձախէն: Ուրեմն ամէն ինչ լաւ է որ լաւ կը վերջանայ:

— Ո՞չ, յարեց էքթոր, կուսապիղծը չ'ամուսնանար բընաւ, եւ ինչ որ զարմանալի է, այն է որ երիտասարդ աղջիկները զայն գիտեն, եւ հետամուտ չ'են ըլլար որ ամուսնանայ այն, որովհետեւ ընդհանրապէս, նա առանց մեծ հարստութեան արկածախնդիր մըն է, ինչպէս Լէսթրանժ կամ Սիւպետո, եւ արդիական աղջիկը՝ ամուսնութեամբ դրամ կ'ուզէ:

Ապաստօրը ներս կը մտնէր, կանչուած Բօլի կողմանէ որ հաշիւը ուզեց: Էքթոր սպասեց, որ դուրս ելլէ, շարունակելու համար:

Երկրորդ քրախը, որ քիչ առաջ ձեռք կ'ըսէի օտիտի մասին է, այնքան վնասակար որքան ամօթխածութեան անանկութիւնը: Այլեւս անմեղ երիտասարդ աղջիկ գոյութիւն չունի, բայց նոյնքան մըն ալ, հարուստ երիտասարդ աղջիկ գոյութիւն չունի: Միլիօնատէրը իր աղջկան կուտայ իբր օտիտ երկու հարիւր հազար Ֆրանք, տարեկան վեց հազար Ֆրանք եկամուտ. այսինքն ոչինչ, անանկ որ այդ եկամուտով չ'կրնար վճարել նոյն իսկ կառքի մը ամսով արը: Ուրեմն մատաղատի աղջիկը երբէ՛ք կախեալ չէ

այրէն այս կէտին մէջ, եւ անոր տիրանալու համար միայն մէկ զէնք ունի — սէրը — մայրերը կը թողուն զանոնք սորվելու սէրը, կարելի եղածին չափ շուտով, մայրական դորովէն զրգեալ:

Այս գորով բառին դէմ Մաքսիմ բողոքի շարժում մ'ըրաւ: Էքթոր պնդեց:

Բայց այո, մայրական անձնուիրութեամբ: Եւ սոյն գորովին միակ արդիւնքը չ'է այն: Ըստ իս, առաջուան «երիտասարդ աղջիկ» տիպարին տիեզերական փոփոխումը վերադրելի է, ամէնէն առաջ, ներկայ սերնդեան մայրերուն: Ժամանակաւ կոյսը կը կրթուէր վանքի մը, ընդհանրապէս կատարեալ անմեղութեան մէջ. որովհետեւ իբր լուրջ բան մը չ'է՞ք նկատեր, ինչ որ կը պատմեն սեղանի փիլիսոփաները, վանքերու անմահութեան վրայ:

Նէ այնտեղէն դուրս կ'ելլէր ամուսնանալու համար, հազիւ իմն ճանչցած մարդու մը հետ, բայց որ ընտրուած էր ծնողաց կողմէ. ուրեմն շահու կագ ու կուրները (գրեթէ ամուսնական բոլոր անհամաձայնութիւնները) խոյս կուտային: Ու ամուսինը ստուգիւ պիտուելու մեծ բախտը կ'ունենար: Միւս կողմանէ նշանուած աղջիկը, ամէնէն համեստ յարկին մէջ, կը գտնէր աւելի հանգստաւէտութիւն, վայելչութիւն: Ու այսպէսով երկու նշանաւոր քրախներէն հետու կը մնային: Ի՞նչ պատահեցաւ: Այս երջանիկ սերունդէն քանի մը իսթէրիկներ. ինչպէս ժանն տը Սիմըրոզ, վայրագ եւ անախորժ գտան անկողնի անակնկալը. մատնութիւն եւ լլկո՛ւմ, պոռացին կանչեցին: Այնքան զօրաւոր պոռացին, որ միւսներն ալ համոզեցին: Հանդարտ քաղքենուհի չ'մնաց որ չ'հառաչէր ի խորոց սրտի «Մանուկ աղջիկ մը կրթել ընտանիքէ դուրս: Ամուսնացնել տգէտ աղջիկ մը: Ի՞նչ ոճիր»: Ու իրարու խոստացան այդ ոճիրները չգործել իրենց աղջիկներուն անձին վրայ: Երիտասարդ աղջիկը այլեւս չի շարչարուիր մեկուսացումէ, վանքի անյարմարութենէ, բայց կը վարժուի, տասնեւհինգ տարու ըլլալուն պէս՝ լայնօրէն դիւրակեցութեան, զոր իրենց ծնողները հազիւ կրցան քառասուն տարուան մէջ

ձեռք ձգել: Այլեւս տգէտ չպիտի ամուսնանայ նէ, ո՛հ, ո՛հ, բայց ընդհանրապէս չի գոհանար նաեւ սորվելով սիրոյ տեսականը, աւելի ապահովութեան համար՝ դայն կը զօրացնէ նախապատրաստական փորձերով: Ու հիմա ամուսինն է, որ ամուսնական անկողնին մէջ չի սպասեր անակնկալներու:

Երեք հրաւիրեալները պահ մը լուռ մնացին: Սպասաւորը ներս կը մտնէր հաշուեցուցակով: Փոլ վճարեց եւ ըսաւ:

— Կը մեկնի՞նք. ժամը տասնուկէս է. սրբագրելիք տեղեկագիր մ'ունիմ եւ առտուն ալ ձի պիտի հեծնեմ: Օրերա՞ կ'երթաք կարծեմ, պարոն տը Շանթէլ:

— Պիտի երթամ, ըսաւ Մաքսիմ, եթէ ձեր եղբայրը ինծի ընկերանայ, թէ ոչ, պիտի սպասեմ մայրիկիս դուրս ելլելուն:

Բայց, ձեզի կ'ընկերանամ, յարեց Էքթոր: Եւ նոյն իսկ եթէ կ'ուզէք, մեկնինք: Ժամանակն է: Պիտի հասնինք ներկայացման:

Իրենց թիկնոցները հագան եւ իջան: Ճաշարանին դըրան առջեւ ձերակուտականին կառքը կը սպասէր: Հին Օբերա-Քոմիքի հրապարակին վրայ, գիշերը ցոյց կուտար մաքուր եւ սառուցիկ երկինք մը, թանձր ձիւնի բարակ խաւ մը գետինը կը փայլեցնէր. կազի լոյսերը, եւ լեքտրական լամպարներու շողերը կը փալիւլէին որոշորէն խտացած օդին մէջ: Բաղքին վրայ կը տարածուէր ձմրան գեղեցիկ գիշեր մը, պայծառ, փայլուն, յստա՛կ:

— Կառքս կուզա՞ք, հարցուց Փոլ Լը Թէսիէ: Եթէ կ'ուզէք ձեզ օքերա կ'առաջնորդեմ:

— Ո՛չ, յարեց Էքթոր: Երկու վայրկեան քալելը աղէկ պիտի ըլլայ մեզ համար: Գացէ՛ք ձեր գործին, ձերակուտակա՛ն:

Մինչդեռ կառքը կը հեռանար, Էքթոր եւ Մաքսիմ ծառուղին ելան: Էքթոր գլանիկ մը վառած էր. Մաքսիմ թարթափուն քայլերով կը յառաջանար, մտածումը՝ շա՛տ հեռու թառորնի տեսարանէն, որ սակայն փայլուն էր եւ

իր աչքերուն համար հազուագիւտ:
— Կ'երազէ՛ք, տեղակալս, հարցուց Էքթոր:

Մաքսիմ կեցաւ իսկոյն, ինչպէս ձի մը չրուչակի մը հարուածին տակ: Իր վտիտ գիմագիծերը՝ սովորականէն աւելի ձգտուած, իր բոցավառ աչքերը եւ իր կարճ պեխերուն խածատումը, իր ջիղերուն յուզումը ցոյց կուտային:

— Մտիկ ըրէ՛ք, Լը Թէսիէ, ըսաւ: Քիչ առաջ Օր. տը Ռուվորի տունը յաճախող մանկամարդ աղջիկներու մասին խօսեցաք եւ նոյն իսկ իր քրոջ նկատմամբ այնպիսի եղանակաւ մը, որ զիս վշտացուց: Անոր նկատմամբ ունիմ, թէեւ զայն կը ճանչնամ քիչ ժամանակէ ի վեր, բացարձակ յարգանք մը. եւ ասիկա ձեզի կ'ըսեմ:

— Բայց, սիրելիս, յարեց Էքթոր, կարծեմ թէ, նոյն իսկ Օր. տը Ռուվորի անունն իսկ չարտասանեցի:

Արդէն Մաքսիմ իր խստութիւնը կը դատապարտէր.

= Ներեցէ՛ք ինձի: Այս կերպով ձեզի խօսելուս անիրաւ եմ: Ձեր վրայ վստահութիւն ունիմ. մե՛ծ վստահութիւն, աւելցուց, ձեռքը դնելով անոր թեւին վրայ եւ սկսելով քայլել: Խորհեցէ՛ք որքա՛ն երեսի վրայ մնացած եմ հոս, չճանչնալով Բարիզը: Գիւղացի եմ, բայց գիւղացի մը՝ որ կը խորհի եւ կը վստահի կամաւ մարդոց կերպարանքին, հոգիները դատելու համար, ինչպէս կը նային երկնքին՝ օղը նախատեսելու համար: Ձեզ գիտեմ բոլորովին իմ հակառակս, եւ սակայն վստահ եմ որ, կ'արժէք իմ բարեկամս ըլլալու: Եւ պիտի ըլլաք, չէ՞:

= Բայց անշուշտ ո՛ր, սիրելի Մաքսիմ, յարեց Էքթոր սրտայոյզ:

Կը մտածէր. «Ահաւասիկ այնպիսի խօսքեր՝ որոնք յաճախ չեն լսուիր Վոտրվիլ եւ Յավառ փողոցներուն միջեւ: Վէղէրի մէջ ի՛նչ Դանուբ կ'անցնի:

— Օր. տը Ռուվոր, յարեց կամացուկ մը, երբ դէպի օքերա կ'ուղղուէին Մէյերպէր փողոցէն եւ Անթէն շօտէն, Օր. տը Ռուվոր շատ գեղանի է եւ փառաշուք՝ չյարուցած ըլլալու համար նախանձ եւ զրպարտութիւն: Այժմէն կ'իմացնեմ ձեզ թէ, իր նկատմամբ պիտի իմանաք բամբասանքներ. համբերութեամբ կնքզինքնիդ թեթեւ բռնեցէք եւ ձեր սիրտը պողպատեցէք: Մշուշտ պէտք չունիք, որ

ձեզի տամ վստահութեան ապացոյցներ կնոջ մը մասին՝ որ ձեզ շատ հրապուրած է, չէ՞: Ահա, սակայն երկու մեծ զիտողութիւններ, զոր ձեզ կը հաղորդեմ. զանոնք պարզմտօրէն մի՛ դատէք, առանց նախապէս մտածած ըլլալու անոնց վրայ: Առաջինը այն է, որ չկայ ոչ մի զեղանի եւ աշխարհիկ աղջիկ. Բարիզի անգործ ընկերութեան մէջ, որուն չյարմարցնեն եթէ ոչ սիրահարներ՝ գոնէ տղեզ խաղերու ընկերներ: Ի՞նչ կ'ուզէք. իրողութիւնը այնքան յաճախ ստոյգ է, որ պէտք է չքմեղել բամբասանքը: Ճերմակ, կապոյտ, վարդ, մուշակագոյն հագուստները, զոր այժմ օթեակներու մէջ պիտի տեսնէք, շատ քիչ անգամ իրենց մէջ կը կրեն բարբոսի անվթար, անարատ մարմիններ: Այդ կոյսերուն մէջ՝ բազմաթիւ են կէս-կոյսեր: Պարկեշտները կը տառապին ուրիշներու անպարկեշտութիւններէն: Երկրորդ դիտողութիւնս այն է, որ եթէ աշխարհիկ Բարիզի մէջ գրեթէ անկարելի է գիտնալու, որ երիտասարդ աղջիկ մը պարկեշտ է, նուազ դժուար չէ նաեւ գիտնալ թէ աղջիկ մը ծանր կերպով սայթաքած է: Ընդհանրապէս, արկածը տեղի կ'ունենայ առանց վկայի, մանաւանդ երբ խնդիրը կը կայանայ մանկամարդ աղջկան մը շուրջը: Ասիկա գայն մէկու մը չի յայտներ, չէ՞. ուրեմն խաղընկերն է որ կը մատնէ, սիրահարը կամ... կէս սիրահարը. եւ անոնք արժանի՞ են վստահութեան: Ի մի բան, մարդ ոչինչ գիտէ, անմեղ կամ վստօթար, խոհական կամ գրգռիչ ըլլալու մասին. մանկամարդ աղջիկը, սիրողին համար, սիինքս մըն է:

Օրերային բակը հասած էին, Հայէվի եւ Կլիւք փողոցներուն վրայ նայող մասին մէջ. յամբարար կը չափչփէին այդ մեկուսի անկիւնը, որուն ամայի եւ կէս-մութ լուծիւնը հակապատկերն էր, դուրսը մայթերուն վրայ սուրացող կարքերու թռուռոնին:

«Եթէ Մոտ զիս լսած ըլլար, կը խորհէր էքթոր, կ'ենթադրեմ որ գո՛ւ պիտի մնար: Մնաց որ, խզճիս հակառակ բան մը չըսի»:

Մաքսիմ մըմուս, կարծես ինքն իրեն համար.

— Բայց ի՞նչ ամուսին պիտի գտնեն անոնք՝ զոր կը ոչէք կէս-կոյսեր:

— Կէս կոյսերը: Պիտի ամուսնանան ուեւէ պառոններու, անանկութեան մօտ կարեւոր ճարտարարուեստի տէրերու, մահացու ախտերով ծիւրած շքեղ մարդերու հետ եկամ սանկ հարեանցի ամուսիններու հետ՝ որոնք հարսանիքէն ամիս մը կամ տարի մը վերջ կը կործանին, որովհետեւ այդ պլտիկ խաբեբաներու տարօրինակ մէկ պատիժն է, գրեթէ անսըխայօրէն, ամուսնութեամբ հրապուրուելու: Եւ յետոյ որովհետեւ նախախնամութիւնը ամէնէն զուարթ քմայագէտներէն է, յոմանք ալ պիտի ամուսնանան պարկեշտ մարդու մը հետ եւ պիտի ըլլան տիպար ամուսիններ, կրկնուած (ամուսնոյն համար) փորձ հոմանուհիներով: Ի՞նչ կարեւորութիւն ունի. վտանգը շատ մեծ է, երբեք Բարիզի մէջ կին չպիտի առնեմ: Յիմարութիւն է հո՛ն փնտոելը ձերմակ սարեակը. շատ սեւ սարեակներ ճերմակի կը ներկուին: Պիտի գոհանայի նուազ հազուագիւտ թուշիկով մը, որուն դոյնը աւելի՛ հատատուն է:

— Ո՞րը:
— Ճերմակ պղտտիկ սագ մը, ծնած եւ սնած գաւառի մէկ անկիւնը:

Եւ նշմարելով, որ Մաքսիմի դէմքը վերստին կը կրծկուէր, աւելցուց.

— Ի բաց առեալ երբ մարդ դանէ Օր. Մոտ տը Ռուվուռի պէս գերազանց աղջիկ մը, հաստատուն նկարագրով եւ ամէն տեսակ զրպարտութիւններէ հեռու, բարձր:

էքթոր այս խօսքին վարձատրութիւնը ունեցաւ, տեսնելով անմիջապէս Մաքսիմի դէմքին պայծառանալը, որ զսպուած շարժուածեովը բռնեց յանկարծօրէն անոր ձեռքը եւ սեղմեց:

«Յանցաւո՞ր եմ այս տղուն հետ վարուելու այնպէս, ինչպէս բժիշկ մը՝ իր հիւանդին հետ: Եթէ իրեն ըսէի ճըշմարտութիւնը, կամ ինքզինքը պիտի սպաննէր եւ կամ որիչ մէկը: Եւ ճշմարտութի՞ւնը. ես ինքս գիտեմ՝ արդեօք. ոչինչ կարելի է գիտնալ: Մնաց որ, կրնայ երջանիկ ըլլալ անոր հետ, թէեւ խաբուած, եւ ինչպէս վէրթէր կ'ըսէ, «երջանկութիւնը խաբէութի՞ւն մըն է արդեօք»:

Բակը կը լեցուէր միջնարարին պատճառաւ :

— Ներս մանե՞նք, հարցուց Էքթոր :

— Եթէ կը հաճիք :

Մաքսիմ հետեւեցաւ իր ընկերոջ՝ որ կ'ուզուէր գէպի տանդուխները եւ նրբանցքները, վարժուածի վստահութեամբ: Այդ մեծակառոյց շրջանակը, մարմարներու վրայ լուսափայլ այդ վէտովէտուժը, այդ պճնող եւ շաչւն բազմութիւնը տեսնելով՝ չփոթութեամբ զգաց այն ամէնքը իրեն թշնամի. զգաց թէ կը մտնէր վտանգին մէջ, հաւանակորդին մօտ :

«Հետապնդուած կին մը չէ երբե՛ք այն՝ որուն պէտք ունիմ» :

Իր մէջ կը խմորուէր նաև մենակեացի ոխը՝ քաղաքին թեթեւ եւ հանդստաւէտ ընկերութեան դէմ, գաւառի ոխը՝ Բարիզի դէմ :

«Կերթա՞մ ուրեմն կեանքս կապելու այժմ, կեղծ զըւարթութեան այս միջավայրին մէջ, այնքա՞ն հեռու երազած ինքնամփոփումէս :

Բայց Մոտը վերստին տեսնելու անոր խօսելու եւ իր անխախտ հաւատքը անոր յայտնելու պէտքը զինք յառա՛ջ կը մղէր, հակառակ ամէն բանի, հակառակ ամէնուն : Ու զայն նշմարելով զիմացի օթեակներէն միուն մէջ, ժազըլիւնի եւ ժաննի միջեւ, ինքնիրեն ըսաւ, առաջին անգամ, գերազգրուութեամբ մը՝ որ կը կենդանացնէր իր բոլոր ուրոշումները : «Կ'ուզեմ գնէ» :

Փանի մը վայրկեան յետոյ երկուքն ալ օթեակ կը մտնէին : Ահարոն բազմազբաղ, նոյն պահուն զուրս ելաւ. հոն գտան երկու մայրերը եւ իրենց աղջիկները, Մոտ իր տեղը Էքթորին թողուց եւ գնաց միացաւ Մաքսիմ տը Ծանթէլի քովի սրահին մէջ :

«Ամէն յիմարութիւն արդարանալի է ասանկ կնոջ մը համար, խորհեցաւ Էքթոր, որ աչքերով անոր կը հետեւէր : Երանի՛ անոնց՝ որոնք քաջարտութիւնը ունին յիմարներ ըլլալու» :

Ստուգիւ, այդ իրիկուն Մոտ կը շողար. կը փայլէր. քիչ մը զեղինի զարնող սեւ մագերը կ'երկաբէին մինչեւ ոտքերը՝ որոնք՝ կօշիկներուն մէջ, մէջտեղ կը հանէին ա-

նոնց կորածեութիւնը. թագուհի կ'երեւէր նէ, բարձրէն շնչելու համար, բազմուցեանց միաձայն եւ անանուն մեծարանքները : Անոր մօտիկը, կարմիր բաղձոցին վրայ նստած՝ Մաքսիմ զայն կը դիտէր, զինքը գողտողացնելու աստիճան նախանձոտ յափշտակութեամբ մը : Նէ կը կրէր լոյսին դիմաց զրեթէ մոլոշագոյն երեւցող վարդ քորսած մը, ոսկեղոյն տանթէլներով, հագած միեւնոյն գոյն մուսըլինէ շրջադեցտ մը : Ոչինչ աւելի պարկեշտ՝ քան օձիքին աղեղնաձեւ փորուածքը՝ ուրկէ հազիւ կը նշմարուէր ծնունդը իր ծիծերուն, բայց աջ ուսը ցոյց կուտար զրեթէ մերկ իր կլորութիւնը. նեղ ուսանոցը՝ բարակ ասեղով մը բռնուած : Հրաչէկ լամբարներու շինձու լոյսերուն մէջ՝ մագերը կը կարմրէին, աչքերուն ժութ կապոյտը սաթի փայլը կ'առնէր, գոյնը կը շողար աւելի աղօտ սպիտակութեամբ. Մաքսիմ հոգեպիշ կը դիտէր զայն, չարչուած, նախանձո՞տ... ու երջանիկ : Եւ ինքզինքին կը խոստովանէր թէ՛ «կարելի չէ չսիրել այս կինը» :

Նէ անոր կը խօսէր, այդ անմերձեանալի թագուհին. նէ անոր կը խօսէր բարեացակամութեամբ, շնորհակալ կ'ըլլար անոր, հոն ըլլալուն համար, ինք՝ որ զայն կը պաշտէր, իրեն միանալու արտօնուած ըլլալուն համար : Ա՛հ, ըսել անոր թէ ինչե՛ր կը զգար, իր ոտքերուն փարիլ եւ փոշիին մէջ պոռալ. «Կը սիրե՛մ ձեզ, կը սիրե՛մ ձեզ. քուկինդ եմ. կը հաւտամ քեզի» :

Ու քիչ առաջ կասկածած էր անոր վրայ, այդ անշուշտփելի զեղեցկութեան վրայ. կը նողկա՛ր այժմ այդ կասկածէն, իբր սրբապղծութիւն մը :

Մոտ, բոլորովին իրենց մտածումէն հեռու բաներու վրայ կը խօսէր, ինչպէս ներկայացումին, ներկաներուն եւ ձմրան խստութեան վրայ, եւ սակայն կը զգար շատ մօտիկ, տենչանքի եւ հիացման այդ զօրեղ վառարանին ջերմութիւնը. կը հպարտանար իր անսպասելի, յանկարծական յաղթութեանէն, երբե՛ք չնմանող ուրիշներու :

Նէ քանի մը բառով պատմած էր իր օրը, լինցուց, պատմութիւնը, ըսելով.

— Եւ դուք ի՞նչ ըրիք այս մե՛ծ Բարիզի մէջ:

Անոր չխոստովանեցաւ թէ, առտուն անցուցած էր պատահաններուն տակը, ձիով, իր պտոյտէն առաջ դէպի Անտան՝ յար կը փորձէր իր ջերմը կտրելու, իր անհանգրստութիւնը թոթուելու, կատաղի ձիավազքով մը: Միայն ըսաւ:

— Նախաճաշէ առաջ ձի հեծայ. Միսիոնարներու պանդոկը ճաշեցի, Սէն Սիւլբիսի մօտ, ուր իջած եմ ժաննի եւ մամային հետ: Յետոյ քանի մը արշաւներ ըրի, եւ այցելութիւն մը, զօրագունդի մէկ հին ընկերոջս, եւ...:

Ընդհատեց.

— Բայց ինչո՞ւ ձեզ պատմել այս ամէնը: Կեանքս ձեզ շահագրգռող բան մը չունի. թոյլ տուէք միայն ինձի ըսելու ձեզ, թէ ամբողջ օրը, եւ առջի գիշերը միայն մէկ մտածում ունեցայ:

Մոտ ոտքի ելաւ ժպտելով:

— Ահաւասիկ նուագողները: Մեզի հետ կեցիր. մեկնելու ժամանակ կը խօսակցինք: Դուք ալ մնացէք, էքթոր ըսաւ Լը Թէսիէ՝ որ իր տեղը կուտար անոր:

Բոլոր կեանքին մէջ Մաքսիմ տը Շանթէլ պիտի յիշէր այն ժամը՝ յորում, ջահերու նուագուն փայլին տակ, նուագին ամէնէն արտաքոյ մարդկային ձայներուն մէջ, դիւթական զարդանկարի մը պատրանքին ներքեւ, զգաց, որ իր ճակատագիրը խորհրդաւոր կերպով կը կապուէր, հմայքով մը, նման անոնց, որոնք տրամի մը մէջ կ'որոշեն գիւցաղներու բախտը: Սրահը այնքան աղօտ չէր, որ չճանչնար Թիկին տը Ռուվոլի տան մէջ առջի օր տեսած դէմքերը. խարտեաչ Իւսէլլի մերկապարանոց, կը ցուցադրէր կուրծքը Սէսիլ Անպոլի առեղծուածային աչքերուն տակ: Տիկին տը Ռեվէրսիէ եւ երկու ազջիկները. քովի օթեակին մէջ, սեւ հագուստներով ծածկուած. Լիւկ Լէսթրանսի իր սոփոյն մօրուքը քսելով Մատրլէնի ծոծրակին, անհամբերօրէն, ամէն վայրկեան դառնալով գէպի Ռուվոլի օթեակը: Ժիւլիէն տը Սիւպէնսօ զեղեցիկ, տարօրինակ վայելչազեղ, կանաթի քսան գիտակներու տակ չէր, Մաքսիմ,

անգամ մ'եւս հաշիւ ըրաւ որ, վտանգաւոր եւ չդիտցուած ճամբու մը մէջ կը մխրճուէր, բայց անգամ մըն ալ ժողվեց իր կամքը գաղանի մը նման յետոյ զայն խթանեց, անոր տալով ձեռքը դատարկութեան մէջ: Ի՞նչ կարեւորութիւն ունէին իրեն համար ծուղակները, անդունդները, քանի որ կը քալէր դէպի Մոտ, որուն աչքերը այս պահուս, վստահ էր որ իրեն վրայ կը խորհէին, կ'ուզէին զինք իրեն քաշել եւ պարել:

«Նէ պիտի ըլլայ կինս կամ կեանքս պիտի խորտակուի»:

Մոտի քովը, մինչդեռ ժազըլին, Ռեվէրսիէի օթեակին մէջ գտնուողներէն միոյն հետ կը փոխանակէր, խորհրդաւոր լեզուի մը գրեթէ աննշմարելի նշանները, ժանն տը Շանթէլ, անշարժ, գէմքը՝ ուրիշ կողմ, կը դիտէր բեմը: Երբեմն երբեմն ծիրանագոյն ալիքներ կ'ողողէին իր մատղաշ դէմքը, առանց յայտնի պատճառի, յուզուած ներքին հեղուկի մը մագնիսացումէն: Յանկարծակի, նոր ընկերութեան մը մէջ մտնելէն առաջ եկած յուզումն էր այն, իրենց ձեւերով, հագուստներով այնքան տարբեր մարդոց մերձաւորութիւնն էր, թերեւս գաղտնի գոհունակութիւնը անոնցմէ միոյն հետ, երէկ եւ այսօր, կրցած զբաղած ըլլալուն, որովհետեւ քիչ առաջ — երբ Մաքսիմ եւ Մոտ օթեակին սրահին մէջ կ'առանձնանային — ժազըլինէն առաջ՝ իրեն հետ խօսած էր էքթոր լը Թիսիէ: Իր եռանդուն եւ նոր սիրտը՝ անսովոր բարեխառնութեան մը տակ կը ճնշուէր. բայց, ինչպէս Մաքսիմ, Մաքսիմէն աւելի ծանր մեղամաղձոտութիւն մը իր մէջ կը թափանցէր, աքսորեալի տխրութիւն մը տեսնելով ինքզինքը՝ չըջապատուած մարդոցմէ՝ որք օտար էին իր բարոյական կեանքին, երկիւղածութեան. ինքնամոգիման եւ մանրակրկիտ պարկեշտութեան իր ճաշակներուն: Ինքզինքը վստահեցնելու համար ստիպուած էր կրկնելու. «քանի որ մամայիս եւ Մաքսիմի հետ եմ, ըսել է որ, հոս գտնուիլը գէշ չ'է»:

Եւ այս ջղաձիգ եւ պոռչտացող բազմութիւնէն, այս երկու պարզ արարածներն էին միայն՝ որ կը մտածէին,

Հեռացաւ անտարբեր չեւով մը, խածատուած սակայն նա-
խանձէն: Մոտ Սիւպէնսօի մօտեցած էր, այդ հանդիսակա-
մարին տակ, այդ ժխորածայն, շարժուն եւ պճնասէր
բազմամբօխին մէջ, երկուքին նայուածքները զիրար խա-
չածեւեցին:

— Յիմա՛ր էք, մրմուռաց նէ: Հանդարտ կեցէ՛ք, եթէ չէք
ուզեր զիս վտանգել:

— Մո՛տ... թոթովեց:

Նայուածքով զայն մազնիսացուց:

Վաղը, ըսաւ ցած ձայնով, ժամը չորսին, ձեր տունը
Պոմ փողոց: Սպասեցէք ինձ:

Եւ, այս կարճ բառերուն թովանքէն, տեսնելով որ
Սիւպէնսօ ալ ինքզինքին տէրն է, Մոտ վերստին Մաք-
սիմի թեր մտաւ:

— Խեղճ տղայ, ըսաւ անմիջապէս ընական ձայնով մը.
տոանց հարցումի սպասելու, սիրահարուած է Մատըլէն տը
Ռըվէրսիէի՝ որ սակայն զինք չ'սիրէր, եւ տեսնելով որ
Լէսթրանտ բոլոր ժամանակը Ֆլիթթէ կ'ընէ անոր հետ,
խենթ կտրած է:

Չայն հանդարտեցնելու համար երկու խօսք ըսի: Ման-
կութեան հին բարեկամ մըն է: Միասին խաղացած ենք
Թիւիլըռիի մէջ: Կը տեսնէք, որ այս անամիտ եւ սկեպտիկ
Բարիզի մէջ, տեղ կայ տակաւին ճշմարիտ սէրերու հա-
մար:

Մաքսիմ Մոտի ըսածներուն հաւատաց, վստահացած:
Իրեն նման, սէրէն տառապող սիրտ մ'ունեցած պիտի ըլ-
լար նա:

Սանդուխին վերջացած տեղը, կառքերը մէկիկ մէկիկ
արագօրէն կը դառնային, իրենց մէջ կրելով շքեղ սամոյր-
ներու, մուշտակներու մէջ փաթթուած վայելչագեղներ:
Տիկին տը Ռուվըրի փոռաւոր կառքը իր մէջ առաւ ժաննը
եւ իր մայրը, առաջնորդելու համար զանոնք Միսիօնէնե-
րու պանդոկը:

Մաքսիմ, մինակը, հետիոտն սեկնեցաւ: Բազմութեան
մէջ, էքթօրը կորսնցուցած էր եւ զայն գտնելու ճիգ մը

չէր ըներ: Իր դինովութեան մէջ, բոլորովին առանձին ժը-
նալ կ'ուզէր: Ըստ բախտի քալեց քաղքին մէջ՝ ուր թատ-
րոնէն ելլողներու ժխորը կը լսուէր տակաւին, որոնք չէ շատ
քիչ կը հեռանային դէպի ձախ եզերքի ամայի թայր Բարիզ
Շատ ուշ հասաւ իր պանդոկը եւ նոյնիսկ չգնաց քան դիւցա-
ձակատը քնացող ժաննի:

Ներկայ փոթորիկը աւլած էր բոլոր անցե ա-
նկեղեցական պանդոկին, վանականի իր սիրտը կը
կին մէջ, թիկնաթոռի մը վրայ իյնալով՝ խօսքերով.
Թարգմանէր, բարձր ձայնով արտասանած չպէս ես կը

— Ա՛հ, մարդ երբոր կը սիրէ կին մը տղայ, բոլորո-
սիրեմ զինքը, պէտք էր զայն գիտնէ աարի, քրոջ
Վին տղայ հասակէն, եւ զայն մեծցնէ.
մը պէս:



լս
մար
բազմա

Գ.

աձեւեցին

Յիմա՛

ման ծառուղի
բորդ ելք մ'ուշոտային եւ Քուռսէլ փողոցին միջեւ, Հոս-
մանուած՝ Պոմ Եւրայ գտնուող գրեթէ բոլոր տուները երկ-
յող յարկաբաժինն, ընդհանրապէս սպասարկութեան սահ-
կիւռ պանդոկին պաշտօնական փողոցին վրայ: Այս փողոցին նա-
նեքը, Քուռսէլ փողոցն պատուհանները կը բացուին Սէ-
նան: Իշխանական պարզին վրայ, որուն շքեղ դալարիք-
ձեռնարկուններու բերնին քանի մը քայլ անդին կը վերջա-
հոն, գեղջկական բառէի մը շնորք կը վազցնէ. գարնան,
ձմեռը, իր մեծ ծառերը՝ յաճախ սոխակները կը լեցուին.
Իրենց խառնափնթոր տերեւներու մառախուղով պատուած,
Լա Պոէթի փողոցին տուները, անհո կը ծածկեն տակաւին
բիզը՝ բազմազբաղ եւ ժխորաձայն, Սէնա կը հեռացնեն Բա-
ձանէն:

նթ-Օնոսէ արուար-

Ժիւլիէն տը Սիւպէնսօ չորս տարիէ
կարածիններէն մին կը բռնէր, այնքան լախ վեր, այդ յար-
զաւորուած: Պանդոկի մը միջնայարկին կէսն՝ և կերպով տե-
կին փոխուած մանչու ընկարանի, անչու: Եր, ժամանա-
քանի մը երիտասարդներու հանգստաւէտուի, յո ընտանիքի
իր սանդուխով, իր մասնաւոր ելքով՝ Պոմ փեցփեան համար,
եւ անկէ ի վեր, միշտ առանձինն վարձու տրուած փողոցին վրայ
դուր ինքնին բաւական ընդարձակ ըլլալով, այս կի՛ պան-
պէտք ունեցած չէր:

Երբոր Ժիւլիէն առաջին անգամ Բարիզ եկաւ 1888-իցին
իր հայրենի գաւառին խորէն - Օտի դիւզերէն մին - Իանձին,
քարտուղար կ'ընկերանար Պ. Ասքէնի, Լիմուի չըջականէնէր
րէն՝ հարուստ այգեդորձ մը, ընտրուելով երեսփոխան միա-
պետական ամբողջ ցանկին հետ: Ժիւլիէն, քսանմէկ տաւեան
դ մը

րու, իր գաւառին ամենահին ընտանիքներէն՝ Վէկուն շա-
ռաւիզը, ինքզինքը գեղեցիկ եւ խելայի կը նկատէր ու
ազբատութենէ կը նեղուէր: Ուրիշի գտտաստանին նկատ-
մամբ՝ դերագոյն հպարտութեամբ մը պողպատուած՝ եւ շատ
մը վտանգներու գեմադրելու սրոշում տուած, ոտքը Բարիզ
գրաւ, պայլաքեան այն սքանչելի եւ ցնորական դիւցա-
զուններուն նման՝ որ կ'ըսեն Քաղաքին. «Իմինս պիտի ըլ-
լաս»:

Բայց ժամանակը փոխուած է Սիւ Պանփուէն եւ տիւ-
թիւլիէնէն ի վեր. Բարիզ այլեւս աւատական որս մը չէ,
քանի մը յանդուզն արկածախնդիրներու միջեւ: Հազարա-
ւոր կտորներու բաժնուած դաշտ մըն է ուր իւրաքանչիւր
ռամկավար ախորժակ կը յագեցնէ իր քաղցը: Ռասթինեակ
լէգէտն եղած է, եւ երբոր բախտը կ'ընտրէ մին, կողոպ-
տուած միւսը աւելի արժանի չէր: Յետոյ ժիւլիէն, իրօք
գեղեցիկ եւ հրապուրիչ կէս մը ռասթինեակ էր. ինքն իսկ
չափազանց կը սիրէր կիները: Իր փափաքին անվերածելի
անկեղծութիւնը անդամալուծեց իր սիրային յաղթանակ-
ներու ծրագիրները: Մինչեւ այն օրը, երբ հանդիպեցաւ
Մոտ տը Ռուվորի, եղաւ միայն հարաւի երիտասարդ մը
չատ վայելչագեղ եւ շատ լաւ փնտուած: Բաւական լայ-
նօրէն կ'ապրէր՝ շնորհիւ իւր լաւ վաստակին եւ առատաձեւ-
ութեանը Պ. Ասքէնի որ կը վճարէր բարեհաճութեամբ, ու
րովհետեւ երեսփոխանը վաթսունը անցուկ, միշտ կնամօղ
էր, եւ բնականաբար կը ծածկէր իր քմայքները, Օտի
կաթուղիի ընտրողներէն:

Պոմ փողոցի յարկաբաժինը այսպէս վարձուեցաւ եւ
վճարուեցաւ Ասքէնի կողմանէ, յանուն իր քարտուղարին,
որ հոն բնակեցաւ, պայմանաւ որ զայն յանձնէ երբեմն
երբեմն երեսփոխանին, անոր ժամադրութիւններուն հա-
մար:

Ժիւլ տը Սիւպէնսօ Ռուվորներուն ներկայացուեցաւ
Փոլ էր Թէսիէի կողմանէ, այժմ ձերակուտական, այն ա-
տեն Նիոտի երեսփոխան: Կը ճանչնար Պ. տը Ռուվոր, տե-
սած ըլլալով այդ ճերմակ Գալուրիով աղնուականը, Բարի-
զի պաղարաի բոլոր սեղաններուն չուրջը եւ անոր հանդի-

պած ըլլալով՝ աղջիկներու կողմանէ տրուած բոլոր ընթրիքներուն: Հարուստի համբաւ ունէր, եւ մարդիկ կ'անգտանային այն խրամատը՝ զոր խաղը եւ կիները բացած էին էլլիրա էրնանտէղի դրամոթիտին վրայ, այն օրէն ի վեր. յորում բնտանիքը կը բնակէր Բարիզ: Երբոր ժիւլիէն ինքզինքին ըսու աչն ատեն, «պիտի ամուսնանամ Մոտի հետ», կրնար համոզուած ըլլալ տակաւին որ կը հետեւէր հարստութեան եւ յաղթանակի իր ծրագրին. ճշմարտութիւնը այն է որ, Մոտ առաջին հարուածով նուաճեց այդ ապիկար սիրտը՝ քողարկուած իբր արկածախնդիր: Նէ տիրացաւ անոր իր գեղեցկութեամբ եւ անշուշտ իր շնորհալիութեամբ. լայց նէ զայն իրեն ծառայեցուց մանաւանդ անոր համար որ, նա Մոտի մէջ ճանչցաւ այնպիսի հոգի մը զոր կը ցանկար ինքն ունենալ եւ որ կը պակսէր իրեն. — ընդվզողի հրավառ եւ անողոք հոգի մը՝ որ հաստատօրէն որոշած է, ունէ կերպիւ յաղթել բաղդին եւ ոտնակոխել խուժանը:

Տասնութ տարեկանին, Մոտ գիտէր փճացած ըլլալը, բացի պղտիկ ժառանգութենէ մը թողուած մօրեղբոր մը կողմանէ: Մանկութենէն ի վեր գրեթէ այրերու կողմէ փառքը լուս, փորձագէտ՝ անոնց տիրանալու, նեղութիւն կը քաշէր արդէն զանոնք իրեն պատելու եւ առաջնորդելու մրնչեւ ամուսնութիւն, այդ քան միջակ օժիտով. երկու անգամ, նէ ճանչցաւ «Ֆլորիթ»ներու աճելի դառնութիւնը, տարածախուած Բարիզի մէջ, յանդելով անյայտացմանը փեսացուին, այն օրը երբ իր բաղդը պիտի որոշուէր: Նէ կ'ատէր արդէն իր հայրը. զինք փճացուցած ըլլալուն համար. իր ատելութիւնը տարածեց բոլոր այն սկեպտիկ եւ ունայնամիտ արարածներուն վրայ՝ որոնք կ'ուղէին միայն իրմով զուարճանայ, իր գեղեցկութիւնը վայելել, իր նախապատուութիւններուն յարգ տալ: Ամուսնութիւնը անկից ի վեր եղաւ իր համար այն դետինը՝ որուն պէտք էր տիրանալ կամ բռնութեամբ եւ կամ խորամանկութեամբ. այսպէսով էր որ իրարու հանդիպեցան, ինք եւ ժիւլիէն, որպէս զինուած երկու հակառակորդներ:

Ու ընկերութիւնը, այդ հանդիպումին վերջ՝ անոնց

բոլորտիքը շրջանակ մը կազմեց, հետաքրքրութեամբ զանոնք պիտելով, այնքան ստոյգ կը թուէր թէ, պիտի սիրէին զիրար անոնք բարեկեան ամէնէն գեղեցիկ զոյգը, միեւնոյն ցեղէ եւ ազնուական դասակարգէ ձեւով եւ այնքան ակնյայտնի վայելչատիրութեամբ, որ նախանձն իսկ, հոն զէնքերկէց պիտի ըլլար: Գողցես ճակատագրականութեան մը, մարդկային կամեցողութենէ դուրս օրէնքի մը ապաւորութիւնը ունէր մարդ, եւ այդ ճակատագրին, այդ օրէնքին աղղեցութեան տակ ինքն իրենք իսկ, հակառակ իրենց ազատ կամքին: Ժիւլիէն, ամէնէն կոյրը եւ ամէնէն լաւ տիրացուածը, սակայն Մոտ այս յեղակարծ պարտութեան դէմ կատգած՝ ստիպուեցաւ խոչտովանիլ, թէ ինքն ալ պարտուած էր, եւ թէ իր տրամագրութիւնները անզօր էին հանդէպ մէկ համբոյրին այն մարդուն՝ որուն չէր ուղեր յանձնուել, հակառակ ամէն բանի:

Նէ անդթօրէն վարել տուաւ անոր իր տկարութիւնը, անոր յայտարարեց թէ փափաքած ժամանակը պիտի ամուսնանար, թէ իրեն կը յանձնէր ունէ ձեւով, իր կեանքին առժամեան, անոր հետ կիսկատար համաձայնեցաւ: Ժիւլիէն հնազանդեցաւ, կը սիրէր, յետոյ Մոտի աղղեցութիւնը կը զօրացնէր իր որոշումները, երէկ ծփուն: Թո՛ղ այդպէս ըլլայ: Այս հրաշալի աղջկան անկատար սիրահարը պիտի ըլլար մինչեւ այն օրը, երբ նէ ամուսնանար, սիրահարը պիտի ըլլար ամուսնութեան վաղորդայնին: Ընկալեալ օրէնքներու դէմ, բաւական խորխոռ ոտնձգութիւն մը չէ՛ր ատկեա՛: Իր ներկայի տարուեր կեանքին մէկ գեղեցիկ վրէժը:

Իրենց հանդիպումի յաջորդ տարիէն իսկ, հակառակ պարագաներ զանոնք թթուեցուցին այլ եւ հաստատապէս որոշեցին քալել, միացած եւ մեղսակից՝ ընկերութեան դէմ, ուսկից կը տառապէին: Մոտի խորհուրդներով, տիկին տը Ռուվոը ամուսնալուծում պահանջած եւ ստացած էր, զատավորութենէն քանի մ'ամիս վերջ՝ Պ. տը Ռուվոը մեռաւ: Հաշուեյարգարութենէ յետոյ, կը մնար այրիին՝ վաթսուն հազար ֆրանք, իսկ Մոտի ալ երկու հարիւր հազար ֆրանք, այսքան մըն ալ ժազըլինի: Միասին ապրելով՝ երեք կիները կրնային աշխարհիկ ընկերութեան մէջ

սպրիլ՝ առանց զպշխու իրենց գրամագլխ ն: Բայց Մոտ
չէր կրնար իր երէկի պերճանքէն բան մը զեղչել: Հարկ ե-
ղաւ ընդարձակ յարկաբաժին մը, երեք սպասուտը եւ ամի-
սը երկու հազար Քրանքով վարձու կառք մը: Իրենց եկա-
մուտէն պակասածը Մոտ եր յրացնէր առանց զե-
ղիելու՝ իր գրամագլխէն, որովհետեւ չ'էր ուզեր իր մայրը
զրկել, և Ժագրիին խոհական եւ սղահ էր իր ունեցածին
նկատածմբ: Ի նչ կ'արևորութիւն ունի: Մոտ ապագային
վրայ հաւատք ունէր, ինքզինքը կը վճայնէր վտան սղայ-
ձառածութեամբ մը: Գէպքերն ալ կարծես իրեն իրա-
ւունք տուին: Ռուսէն երիտասարդ ազնուական մը, չա-
փազանց հարուստ, Կոմս Քրիսթիանու սիրահարեցաւ իրեն
և ձեռքը խնդրեց իրենց տեսակցութենէն շարաթ մը վերջ:
Խնդրանքը ընդունուելով՝ իր հայրենիքը վերապարձաւ ծը-
նողաց հաւանութիւնը ստանալու: Ինչ պատճառաւ, ճամ-
բորդութեան միջոցին վէճի բռնուեցաւ, ակումբի իր մէկ
ընկերոջ հետ: Յայտնի չ'եղաւ, սուրով մենամարտեցաւ ու
սպաննուեցաւ: Մոտ անոր սուգը կրեց: Էթթոր լը Թիսիէ
այս աթիւ բսաւ. «Այս կիներ պիտի սիրուի միայն տրամ-
ներու միջև»:

Գրեթէ միևնոյն ժամանակ Ժիւլիէն անձկութեան օրեր
կ'անցնէր: 1889ի ընտրութեանց միջոցին՝ Պ. Ասքէն պար-
տուեցաւ իր հանրապետական մրցակիցէն: Երիտասարդ
քարտուղարը առանձին կը պոնուէր Բարիզ, ոչ և ունե-
նալով իր տրամագրութեամբ՝ տակ երեսփոխանին առատ քը-
սակը, որ սակայն իրեն թողուց Պսի փողոցի յարկաբաժի-
նը վարձուած շատ մը տարիներու համար: Թղթախաղի մէջ
ալ իր բազը աղէկ չէր երթար, Սիւպէսո կը տարուբե-
րէր դժուարին կացութեան մէջ, ուսկից երբեմն զինքը
գուրս կը հանէին Ասքէնի ճամբորդութիւնները ի Բարիզ,
երկու ամիսը անգամ մը, զաւտագի ծերուկը կուգար
տեսնել իր սիրուհին՝ Մաթիլտ Տիւրուան, աղջիկը՝ Էթիէ-
նէթ, եւ այս գիւրին միջավայրին մէջ՝ ուր Սիւպէսո իբր
իրեն սիրուհի ունէր Սիւզանն Տիւրուան, քանի մը շարաթ
կ'ապրէր իր հեշտալի կեանքը:

1890ի վերջերը յանկարձ մեռաւ. Սիւպէսո կտակի

մը կը յուսար, բայց թէ իրեն եւ թէ Էթիէնէթի համար
կտակը յամր մնաց: Միայն թէ Էթիէնէթ իր չափահասու-
թեան պիտի ստանար քսան հազար Քրանք ապահովագ-
րական ընկերութենէ մը, ապահովագրութիւն՝ որ իր ծը-
նընդեան օրէն կնքուած էր:

Այն ատեն որ Մոտ եւ Ժիւլիէն զգացին ծանրանալը ի-
րենց վրայ բախտին փականքներուն, այո՛, այն ատենն էր
որ զիրար սիրեցին մոլեգին կերպով, Ժիւլիէն ամէն օր
Ռուվորներուն կուգար, ժամերով կը մնար Մոտի սենեակը
որ պարտագրած էր իր ներկայութիւնը, վարժուեցաւ վր-
տանգաւոր դասնութեան այդ անկատար սիրոյն, թոյլատր-
ուած իրենց ընտրեալներուն, գիտակից կոչսերու կողմա-
նէ, սէր մը՝ հարիւր անգամ աւելի խոյթիչ քան հաւարակ
սէրերու գիւրին եւ կատարեալ երջանկութիւններէն:

Մեծ սիրահարի իր բարեխառնութեամբ, իր խիզախ
յարշութեամբ՝ Ժիւլիէնը բրաւ իր գերին, իր առարկան,
աւելին բրաւ. անոր հոգին վերակազմեց իրենին յար եւ
նմանը. անոր մէջ ներարկեց իրեն յստուկ զգացումները,
իւր կամքը կալվանեց. նէրա մօտ, Ժիւլիէն կեանքին նա-
յեցաւ իր այքերով. անագորոյն պայքար մը՝ իշխողութեան
եւ հարստութեան համար. ընդունեց այդ զարհուրելի ծրա-
գիրը. միայն կես սիրահարը ըլլալ՝ իր սիրուհիին, մինչեւ
իւր շամուսնանալը. իր սիրահարը ըլլալ՝ ամուսնութենէ՝
վերջ: Առանց ներքին պայքարներու, չընդունեց զադ:
Սկեպտիկ եւ յանդուգն իր սիրուհիին ներկայութեանը,
առանձնութիւնը զայն կը ձգէր անորոշութեան, տարտա-
մութեան մէջ. Մոտ՝ ուրիշի մը պիտի վերարեւէր. կիներ
պիտի ըլլայ ուրիշի մը. կրնա՞ր այս չարչարանքին տոկալ
առանց ըմբոստացման: Ինչպէս բոլոր տկար սիրտերը, կը
վտանէր ճակատագրին վրայ, ապագան կարգադրելու հա-
մար. ուսմանացիին նախաինամական զաշոյնի հարուածը:
Մաքսիմ տը Շանթլիի նկատմամբ Մոտի ծրագիրները ան-
միջապէս երկիւղ ազդեցին իրեն, նախազգացնել տուին ի-
րեն ճամբորդութեան մը: Գուշակեց Մոտի հաստատ օրոշու-
մը՝ ամուսնութեան, այս անգամ, ինչ որ ալ ըլլար: Կակա-
ռակ իր կամքին: Մինչեւ վերջին վայրկեանը. աւելի քան

վեց ամիս, պահած չէ՞ր իրմէն. Սէնթ. Ամանի մէջ անոր հանդիպումը, վեց ամիսէ ի վեր (հիմա կը հասկնար զայն) կանոնաւորած չէ՞ր իր կեանքը. իր ժէոթերը եւ բառերը հսկողութեան տակ առած չէ՞ր, այնպէս որ, ընկերութեան համար, որ շուտով կը փոխէ իր գատողութիւնները, նէ կրնար երեւիլ ամբասիրտ: «Խարուհցա՛յ, կը խորհէր Սիւ-պէոսօ. Մոտ թերսցաւ իր ուղղամտութեան մէջ: Եթէ ստուգիւ իր գահնակիցն եմ, նէ պարտէր գոնէ իր ծրագիր-ներուն տեղեակ կացուցանել զիս: Զայն, պիտի սիրէ՞ր, զիպուածա՞ւ:»

Այս մտածումները զինք կը տանջէին, Փետրվարի մը-թին կէսօրներէ վերջ, յորում տենդագիրն, յուզումնալից կը սպասէր Մոտին, իր տան մէջ: Գիշեր էր արդէն, վառ-ուած կազերու լոյսերը՝ ձիւնով ծածկուած փողոցին մէջ, ու ձիւնը տակաւին կ'իջնէր ծանր եւ հագուազիւտ բաթիլ-ներով ապակիներուն ետեւէն, մայթերուն եւ շօտէին վրայ, սեւ եւ ճերմակ սաղարթներէ զուրկ մեծ բառէին վրայ:

Ետտանի ժը վրայ գրուած ժամացոյցը չ'ինք կը զար-նէր:

«Զպիտի գայ», մտածեց: Ու կը բռնուէր վերտին նա-խօրուան իր կատաղութենէն, ամոքուած բոյրօր օրը, երէկի այն խօսքերէն՝ զոր Մոտ իրեն ըսած էր օրերայի նրբանց-քին մէջ, Ելեքտրական զանգակին ձայնը յանկարծ զինք սթափեցուց. վազեց դուռը բանալ, յաղթուած, պարտը-ւած, նուազկո՛տ:

Դուռը գոցուելուն պէս՝ անմիջապէս, յուսահատի կըր-քով մը, թեւերը փաթթեց այդ սարսուացող սեւ ձեւին շուրջը. բառ չէր գտներ, բայց միայն հարիւր անգամ կրկնուած սա՛ անունը, Մո՛տ, Մո՛տ, կրկնուած գգուանքի մը նման, համբոյ՛րի մը պէս, իր ականջին, մազերուն ու պարանոցին մէջ. պահիկ մը յետոյ՝ երբ զնէ առաջնորդեց սենեակ, նստած թիկնաթոփ մը մէջ. տակաւին կը հառա-չէր անոր անունը, հագուստին պարապութեան մէջ, մինչեւ տաքերուն ծայրը, որոնց կը մտեցնէր իր շրթունքները, այս՛, այդ անունը, այդ թրթռո՛ւն վանկերը՝ որ սիրա-

հարին համար կ'ամփոփեն իր պաշտեցեային շնորհը, հոգին, հոտը եւ ձեւը:

«Մո՛տ, սիրեցեալ Մո՛տ»:

Նէ՛ ձեռնոցները շուտով մը հանելով՝ ձեռքերը դրած էր ժիւլիէնի ուսին վրայ. իր կարգին, նէ իր բերանը վար կ'իջեցնէր, շօշափելու համար անոր աչքերը եւ ճակա-տը, եւ իր մասն ձեռքերը կը տաքցնէր անոր պարանոցին, այրո՛ղ այտերուն շուրջը: Այս պահը, այս տեղը, այս ներ-կայութիւնը, կը յուզէին զնէ:

— Կը սիրե՛մ քեզ, կը սիրե՛մ քեզ, ըսաւ նէ անոր, զամ եւ փոխուած ձայնով մը, զոր ինք միայն կը ձանչ-նար, կը սիրե՛մ քեզ:

Նէ անոր կը խօսէր այնքա՛ն մօտէն, որ շունչը եւ բառերուն շշուկը զայն կը զգուէին համբոյ՛րներու պէս, անհունապէ՛ս անօր:

— Ո՛հ, որքա՛ն տառապեցայ երէկ իրիկուն: Դիտմամբ կ'ընէիք, զիս տանջելու համար:

Յամբօրէն նէ ոտքի ելաւ, ստիպելով, որ նա ալ կանգ-նի. նէ զայն առաջնորդեց սենեկին կից սրահին մէջ:

— Նստի՛ր քովիկս, ըսաւ անոր, և խնօք կեցիք: Լուրջ բաներու վրայ պիտի խօսինք: Ասոր համար է որ եկայ:

— Ասոր համա՞ր միայն, մրմոաց թոյլօրէն և խոնար-համտութեամբ:

— Ասոր համար նախ: Ստուգիւ ծանր է, սիրակա՛նս, մտիկ ըրէ:

Հնազանդեցաւ, անոր մօտ նստեցաւ: Անոր խօսելով՝ նէ անոր վրայ կ'ուղղէր իր մթին կապոյտ բիբերը՝ որոնք լոյսին սև կ'երեւէին. նէ հո՛ն կը կեդրոնացնէր թելադ-րանքը: Եւ, ինքը, մագնիսացա՛ծ, կը թողուր իր մէջ թա-փանցել այդ գերազոյն կամքին իսկութիւնը:

— Մտի՛կ ըրէք ինձի: Գիտէք, որ միայն զձեզ կր՛տի-րեմ, և միայն զձեզ պիտի միտեմ: Յիմար ըլլալու է մարդ, հաւտալու թէ, Պ. Տը Շանթէլը ձեզի կը նախընտրեմ: Ա-հաւասիկ ինչ որ ստոյգ է, և ինչ որ պիտի տեսնէք պայ-ծառ լոյսի նման, եթէ ուզէք նայիլ եւ խորհիլ: Միայն

թէ (նէ աւելի՛ խորունկ կերպով՝ իր նայուածքը շեշտեց ժիւլիէնի աչքերուն մէջ) միայն թէ կ'ուզեմ կարգուիլ, և պիտի ամուսնանամ Պ. Տը Շանթէլի հետ:

Կարճ շուրջ մ'առաւ նէ. ժիւլիէն բան մը չ'ըսաւ. քիչ մ'առաջուան բռնեքը. «Միայն ձեզի կը սիրեմ, և միայն ձեզի պիտի սիրեմ», ժամանակի մը համար, իր սիրտը աւտօքած էին:

— Կ'ուզեմ ամուսնանալ, յարեց Մօտ, իր ձայնին տիրականութիւնը շեշտելով: Ներկայ կեանքս չըջապատուած է ականներով. եթէ ըսէի, թէ որքա՛ն ժամանակ կրնայ տեւել այն... երկար չէ՛ այն: Կը խորհիմ որ զիս բաւական կը սիրէք, չմայթելու համար զիս տեսնել քայքայման մէջ. ամէն պարագայի մէջ՝ ես, չեմ ուզեր քայքայուիմ, կ'իմանա՞ք: Ուրեմն պէտք է որ ամուսնանամ. իմ իրաւունքս է. միշտ ձեզի իմացուցած էի որ իմ կամքս էր այդ, համաձայն էինք. ամէն բանէ սուտջ՝ ազատ միմեանց հանդէպ: Ստո՞յգ է:

— Այո՛, ստոյգ է:

— Լա՛ւ ուրեմն, բռնե՛նք խօսքերնիս, սիրելի՛ս. ազատ ենք ողորմելի պայմանադրութիւններէն՝ դրուած ուրիշներու ինչպէս և մեզի համար. իմ մասին հպարտ եմ: Մենք ապստամբներ, արկածախնդիրներ ենք. թո՛ղ ատենկ ըլլայ: Բայց իրարու հանդէպ պահե՛նք մեր խօսքը, չէ՞, կամ թէ խորտակենք զայն և զիրար ձգենք:

Ժիւլիէն անոր ձեռքերը բռնեց:

— Ո՛հ, Մոտ, Զիրար ձգե՛լ: Մի՛ ըսէք այդ բառը: Պիտի կրնայի՞ք զիս լքել:

— Կ'երզնում ձեզի, յայտարարեց Մոտ օտքի ելլելով, թէ՛ եթէ հակառակ մեր պայմանագրութեանց և խօստումներուն հակառակ իմ կամքիս և իրաւունքիս, ուզէիք արգիլել իմ ամուսնութիւնս, կ'երզնում որ, բոլոր կեանքիս մէջ զիս չպիտի տեսնէք:

Ու անմիջապէս, ժիւլիէնի գլուխը իր ձեռքերուն մէջ առնելով՝ մօտեցուց իր բերնին:

— Բայց կը սիրեմ զքեզ, յարեց նէ: Ու զքեզ պիտի

պահեմ:

Ժիւլիէն՝ խորտակուած ու զինովցած, մըմոաց.

— Ու եթէ սիրէ՞ք ձեր ամուսինը: Ո՞վ գիտէ:

— Յիմա՛ր ես, յարեց նէ: Կ'երզնում միայն զքեզ սիրելի, բոլոր կեանքիս մէջ քուկդ ըլլալ: Զքե՛զ միայն կ'ուզեմ: Օ՛ն, արժանի եղիր զիս սիրելու: Բնաւ նուազում: Իմ ամուսնութիւնս զքեզ կ'ազատագրէ. որովհետեւ բան մը չի պիտի փորձես, գիտեմ, ցորչափ ժամանակ որ չամուսնանամ: Կ'ուզե՞ս ամբողջ կեանքիդ մէջ, միայն հնարքներու հետեւ վազել: Կ'ուզե՞ս որ դաշնակի դասատու ըլլամ: Որովհետեւ կը սիրեմ զքեզ և կը վախալքիմ, որ ազատ եւ հարուստ ըլլաս. պէտք է որ զիս թագու՛նի տեսնել ցանկաս, եթէ զիս կը սիրես: Մեծ ուժով փորձենք մեր բախտը. մեզմէ ստորին մարդոց վրայ, ստորին՝ ցեղով ալ, որոնք պէ՛տք է ծառայեցնենք մեզի առանց խղճահարութեան, ինչպէս առանց խղճահարութեան թամբ մը կամ սանձ մը կը դնեն ձիու մը: Եւ բարձր պահենք ինքզինքնիս այն ընկերութիւնէն, զոր կ'արհամարհենք և ոտնակոխ կ'ընենք: Քու երազդ էր այդ, երբ քեզի հանդիպեցայ: Եւ յօրէ անտի, ի՞նչ բան տկարացաւ մէջդ:

Ժիւլիէն պազաւ անոր ձեռքերը:

— Իրաւունք ունիս:

Մոտի խօսքերուն պատրանքը ապագայի խնդիր կը յաբուցանէր. երազի միջնաբերդը, որուն պէտք էր տիրել ամէն գնով: Այդ վայրկեանին, իսկապէս զգաց եռալը իր մէջ՝ կամքի մը, այնքան զօրեղ, որքան Մոտինը. ինքզինքը ազատ արձակեց պայմանազրական բարոյականութենէն, միեւնոյն վտան լրբութեամբ, և ուրիշներու իրաւունքին նկատմամբ միեւնոյն արհամարհանքով:

Մոտ զայն տեսաւ, զսպուած:

— Ո՛ւշ է, պէտք է որ մեկնիմ:

— Ո՛հ, աղաչեց ժիւլիէն, կեցիր քչիկ մը եւս:

Յոյց կուտար ակնարկով քովի սենեակը, մթաստուեր: Մանկամարդ աղջկան աչքերուն մէջ՝ կարգաց հաւանութիւնը: Զայն տարաւ հո՛ն, որսի մը պէս. նուազեցա՛ն միա-

սին այդ գոց անկողնոյն մէջ, ուր չորս տարուան մէջ, երկու անգամ, Մոտ իր հագուստները քակած էր. նա այնքան արագ անէացած էր այդ գրկախառնումէն, որ այս անգամ ալ Մոտ չկրցաւ սերժել...

— Պէ՛տն փողոց 22, Շո՛ւտ:

Պո՛մ փողոցին մէջ սպասող կառքը մտնելով, տուաւ այս հասցէն. ձիւնը միշտ կը տեղար, անձրեւով խառն եւ ձիւն դժուարաւ կը յառաջանար Հոսիան ծառուղիէն, ուր թրամները շատ կամաց կ'երթային եւ յետոյ Եւրոպա հրապարակէն, լուսաւոր՝ օրուան պէս:

Կէս ժամ պէտք եղաւ հասնելու համար էթիէնէթի տունը:

Այն վարձու տուններէն մէկն էր ան, զոր ընկերու թիւնները կը շինէին իննամսով թեմամբ, փայլատաւ վեց ամբողջան մէջ, նիւթեղէններու անբաւականութեան եւ պահպանումի անհողութեան երեսէն:

Մոտ խորչանքով բացաւ բաւական աղտոտ սենեակի մը գուռը:

— Օրիորդ էթիէնէթ Տիւտուա՞:

— Երրորդը, դուռը՝ դիմացը, լսաւ առանց դառնալու խոշոր կին մը. որ կերակուր կ'եփէր:

Մոտ երեք յարկերը ելաւ. կճակները՝ թափած, ցեղունները՝ ձեղքուած, բազրիքները՝ սեւցած, զանգակին պարանները կտրտուած, սանդուխին անկիւններուն վրայ՝ գորգերը մաշած. ամէն ինչ ցոյց կուտար կէս-աղքատութիւն եւ զարդարանքի չքաւորութիւն, ինչ որ ամէնէն տըգեղ բանն է: Մոտ, ապագային, իրեն մասին ալ, ընդերջմարեց ասանկ տուն մը եւ ասանկ կեանք մը: Իրեն պատահելիքն ալ այս էր, եթէ չամուսնանար Մաքսիմ տը Շանթէլի հետ:

— Ո՛հ, ասանկ, երբե՛ք, խորհեցաւ:

Ու իր որոշումը զօրացուց, իր ապագան հաստատուն հիմերու վրայ դնելու, հակառակ ամէն բանի:

Ձանդակի ձայնէն լսուեցաւ թեթեւ ոտքի շշուկ մը. գուռը բացուելով տեսաւ էթիէնէթը՝ հագուած կապոյտ

կերպասէ բարակ չրջաղպեստ մը, որուն վրան ալ պաթիւսթ գոգնոց մը՝ ասեղուած կուրծքերուն վրայ:

— Ոստուա՞ծ իմ, որքա՛ն սիրունիկ ես այդպէս, դո՛չեց Մոտ, զայն համարելով. կուգամ փոխադարձել այցելութիւնդ:

— Իրօ՞ք, յարեց զուարթօրէն մանկատի աղջիկը: Շատ ազնիւ էք: Պիտի ճաշե՞ս հետս, ո՛հ, այո՛, բոլորովին առանձին, ինծի հետ: Մամաս հիւանդկախ է, աւելցուց նէ, սրտին ցաւերը ունի. եւ պոռկած է:

— Ո՛չ, սիրունիկս, կարելի չէ. իրիկունը կը սպասեն ինծի. Շանթէլիներուն հետ պիտի ճաշենք առանձնակի: Բայց կէս ժամ կրնամ տրամադրել քեզ:

Հետեւեցաւ էթիէնէթի մինչեւ սրահը, ցած առաստաղով, պատի ծածկոցներով, լեցուն կարասիներով, որոնցմէ կարելի էր դուշակել աւելի ճոխ կահաւորումի մը խլեակները:

էթիէնէթ պարզմտօրէն բաւաւ:

— Կը տեսնես որ, լաւ տեղ: որուած չենք. չուզեցի՞ ըստ բախտի ծախել քիչ մ'արժէքաւոր քանները՝ երբ տեղափոխուեցանք: Պիտի ջանամ, իմ կիթառովս աւելի՛ լաւ բնակարան մը ձեռք բերել:

— Ստուգիւ, ըսաւ Մոտ, նստելով. կուգամ խօսիլ քեհի կիթառիչ եւ երգերուդ մասին. երէկ օքերային մէջ, զազիւ թէ կրցի քեզ տեսնել, ժամանակ չունեցայ, անաւախկ ինչ որ ծրագրած եմ. տե՛ս եթէ քեզի կը յարմարին: Մաքսիմ տը Շանթէլ քանի մը օրէն կը մեկնի Բարիզէն:

— Երիտասարդը՝ որուն տուած է իր թեղ, երէկ, օքերայէն ելլելու ժամանակ:

— Այո՛. կը սիրէ զիս. ինծի յարմար է. կ'ուզեմ հետը ամուսնանալ. ասիկա՛ մեր մէջ: Պ. տը Շանթէլ, ինչպէս կ'ըսէի քեզ, քանի մը օրէն կը մեկնի Փարիզէն դէպի իր Բուսթուի ազարակները: Կր հասկնաս, որ եթէ հանդէս մը տանք, կը փափաքէի որ հոն ներկայ ըլլայ:

— Անշուշտ որ:

— Պիտի վերադառնայ Մարտ ամսոյ մէջ: Մէկ ամիս

կայ հանդէսին պատրաստութեան, զոր կ'ուզեմ տալ, գրեթէ վաղայաջորդ օրը իր վերագարծին, անմիջապէս զայն ձեռք ձգելու. որովհետեւ տարօրինակ տղայ մըն է. քանի մը շաբթուան մենութիւնը, զայն վայրի կը դարձնէ: Պատրաստէ՛ ուրիմն քու երգացուցակդ եւ արգուզարդդ: ժամանակ ունիս ճշդիւ:

— Որքա՛ն բարի ես րօսաւ էթիէնէթ, վերստին համբուրելով իր բարեկամութիւն:

— Բայց ո՛չ. բարի չեմ. դուն ես որ հաճոյալի սիրուելի մըն ես, եւ մարդ ուրախութիւն կը զգայ քեզի ծառայելու: Եւ յետո՛յ, դաշնակիցներ չե՞նք. խեղճ սիրականս, աւելցուց Մօտ, կարճ շունչ մ'առնելէ վերջ. մեր կացութիւնները այնքա՛ն կը նմանին իրարու, որքան չես կըթնար երեւակայել: Օն ուրիմն: Երկուքնիս ալ տատապեցանք մարդերու շիլ ինքնահաւանութիւններէն. կ'ապրինք երկուքնիս ալ, ուր պիտի մազթէինք չապրիլ: Կը սպասենք մեր ապագայի փրկութեան: Օգնե՛նք մէկզմէկու. շատ պարզ է:

էթիէնէթ պատասխանեց ժպտելով.

— Ես, քու ազախինդ եմ, տրամադրութեանդ տակն եմ. Դեռ պէտք չունեցա՞ր մեր հիւրընկալութեան: Ե՛րբ պիտի գայ ժամանակը: Սենեակդ պատրաստեցի. կ'ուզե՞ս տեսնել:

— Այո՛, սիրով, յարեց Մօտ, գոհ ըլլալով, որ էթիէնէթ առաջին անգամ ինք խօսք բացաւ. իր այցելութեան ճշմարիտ նպատակին համար: Որովհետեւ, քիչ առաջ՝ ժլէնէնէն դատուելու առնն, ներկայ տագնապին մէջ, աւելի յաճախակի այցելութիւններով՝ զայն հեւասպաս վիճակի մը մէջ պահելու պէտքը զգալով, նէ զայն գիտովցուցած էր Թաթիլտ Տիւոռուայի տան մէջ ժամադրութիւններ տալու անակնկալ խոստումով:

էթիէնէթ, եռոտանի սեղանի մը վրայէն՝ նիքէլէ պըզտիկ լամբար մ'առնելով՝ Մօտին առջեւէն քալեց:

— Կը տեսնես, յարեց նէ, նոյն իսկ սրահէն անցնելու պէտք չկայ. նախասենեակէն կը մտնես ճաշասենեակը՝

ուր երբեք մէկուն չպիտի հանդիպիս: Ահաւասիկ սենեակը: Չափաւոր մեծութեամբ, քառանկիւն սենեակ խնամքով շտկուած թուալէթի խցիկով մը:

— Քու սենեակդ չէ, գոնէ, հարցուց Մօտ:

— Ո՛հ, ոչ: Իմինս, մամային սենեակին կիցն է:

Ու քիչ մը վարդադոյն, էթիէնէթ աւելցուց.

— Սիւզաննի սենեակն էր: Ինչեալ տարի եկաւ մեզ հետ բնակելու. կը տառապէր, կուրծքը շատ զօրաւոր չէր: Ընտանեօք ամիս մը միասին անցնելէ վերջ, աւելի լաւ կ'ընթանար: Իժրախտաբար ժիմնադի դերասաններէն միոյն բռնուեցաւ. անկարելի եղաւ այլեւս զայն մեր քով պահելու:

— Ո՛ւր է այժմ, հարցուց Մօտ, մտացիր, քննելով սենեակը եւ կարասիները:

— Ձենք գիտեր, կը կարծենք որ, այդ դերասանին հետ Լոնտօն է. խեղճ Սիւզանն:

էթիէնէթ սրբեց քանի մը կաթիլ արցունքները՝ սրոնք կը հօսէին մինչեւ իր արտեւանունքները:

— Եւ մա՞յրդ, հարցուց Մօտ, ո՛ւր կը պառկի:

— Սրահին եւ իմ սենեակիս անդիլի կողմը: Եւ որովհետեւ միշտ դատապարտեալ է ամբողջ օրը մնալու անկողնին կամ երկար աթոռի մը վրայ, կը տեսնես որ հօսամենայն ինչ հանդարտ է:

— Սպասաւորնե՞րը:

— Սպասաւորները, ըսաւ էթիէնէթ ժպտելով, են միայն սղտիկ աղջիկ մը, ամէն բան ընող, որուն ես ալ կ'օգնեմ, եւ որ գրեթէ միշտ մայրիկիս քով կը մնայ: Այն օրերը, երբ դուն պէտք պիտի ունենաս այս սենեակին, «կապոյտ»ով, նախապէս իմաց տուր ինծի: Յարկաբաժնին մէկ բանալին պիտի տամ քեզի, զանգակը քաշելու իսկ պէտք չպիտի ունենաս:

Նէ կ'ըսէր այս ամէնը միամտութեամբ եւ պարզօրէն երջանիկ իր բարեկամութիւն ծառայելուն, ստանց իր ծառայութեան տեսակին վրայ վիճելու: Այնքա՛ն անարատ

բարբոժ, այնքան մաքուր սեւէ էնթրիկներէ, իր մանկութեան անցքերը, զինք տնտարբեր եւ ներողամիտ ըրած էին ուրիշներու անտակութեանց նկատմամբ: Տխուր եւ սրտագրաւիչ արտադրոյթը այն Բարիզին, որ ուրիշ տեղեր կ'արտադրէր կէս-կուսութիւններ, Մոտի, Սէսիլ Անպոլի եւ պզտիկ Ռելվերսիներու նման:

Սրան վերադարձած էին, Մոտ արդէն կ'ուզէր մեկնիլ:

— Եօթնին քառորդ կայ, մտածէ՛, Այս ձիւնին, տուն դառնալու համար՝ քսանհինգ վայրկեան պէտք է: Եւ արդուզարդի՛ս համար, Հազիւ մէկ ժամ ունիմ: Մնաս բարով:

— Երթաս բարով, քանի որ այնպէս կ'ուզես: Երէկ իրիկուընէ ի վեր, Փոլը տեսա՞ր, հարցուց էթիէնէթ, նախասենեակին սեմին վրայ:

— Ո՛չ, գուցէ զինքը տեսա՞ր. պզտիկ ծածկասէր:

— Ո՛հ, հոս կուզայ գրեթէ ամէն օր, բայց եթէ զիտնայիր թէ, որքան պատշաճ են մեր տեսութիւնները: Այսօր զայն ընդունեցի նախաձաշէն վերջ, Բու վրայովդ խօսեցանք. Եզրայրը եւ ինք ծրագրած են ամէնքնիս հաւաքել Շամպլէ, Պ. Մաքսիմ տր Շանթէլի մեկնումէն առաջ: Մամագ ց որ պիտի ընդունի եւ զիս առաջնորդէ: Գիտէի՞ր ասիկա:

— Ո՛չ, բայց խելագի բան մըն է էքթորի կողմէն. Գաղափարը՝ էքթորը տուած ըլլալու է, չէ՞:

— Էքթորէն եւ Փոլէն. կը կարծեմ, Փոլ. յարմար միջավայրերու մէջ, կը հասկնաս, կը փափաքի ամէն կարելին ընել ինձի համար:

— Ուրե՞մն, ամուսնութի՞ւնը:

— Աստուած իմ. եր կարծեմ, որ Փոլ կը սկսի զիս բաւական մը սիրել. անոր վրայ մտածելու համար:

— Բարի՛ բախտ:

— Քեզի ալ աղուո՞ր բախտ, սիրելիս:

Երկու բարեկամուհիները զիրար համբուրեցին. Մոտ շուտով մը իջաւ երեք յարկերէն եւ մտաւ քուրէին մէջ, որ բաւական արագ մեկնեցաւ, որովհետեւ ձիւնը զապրած էր

իյնալէ, եւ մեղմացած օդին մէջ շուտով կը հալէր: Կառքին մէկ անկիւնը կծկտած՝ ձեռքերը՝ մանշօնին մէջ, եւ ոտքերը՝ տաք գուլպին վրայ: Մոտ կը զգար իր մէջ բորբոքած, մօտիկ յաջողութեան անուշիկ ջերմը, եւ այժմ վտան ապագային վրայ, կը թողուր որ իր միտքը սահի դէպի յիշատակներն իր այցելութեան ժիւլիէնի տան մէջ, եւ իր մտածումը վերանայ ապագայ տեսակցութեանց երազին, Սիւղանն Տիւուաի գաղտնապահ սենեակին մէջ:



Ե.

Մաքսիմ տը Շանթէր, իր գաւազանը վակոնին մէկ ան-
կիւնը դնելով, հոն իր տեղը նշանակելու համար՝ վար ի-
ջաւ հիւսիսային կայարանի քարափին վրայ: Եոզեկառքը՝
որ զինք պիտի առաջնորդէր դէպի Շանսպլէի կայարանը, կը
մեկնէր ժամը երեքը հինգ անցած, այսինքն հինգ վայր-
կեանէն:

Մաքսիմ սկսաւ քարափը չափսփել, զենուորական իր
քալուածքով, մի առ մի աչքէ անցնելով առաջին կարգի
վակոնները: Կը յուսար ճամբորդել տը Ռուվոլոններուն հետ,
որոնք եւս Շանսպլէի մէջ պիտի ճաշէին:

Ձանոնք չտեսաւ. առտուն կանուխ մեկնած էին. մնաց
որ, շագեկառքը զրեթէ պարապ էր, թէ եւ երկնքի պայծա-
ռութիւնը, զարնանային գաղջ օդը՝ որ յանկարծ կը յա-
ջորդէր ձիւնհալին, պէտք էր, որ բարիզցիները մզէին դէ-
պի արուարձանները, զբօսանքի համար:

Մաքսիմ նախընթաց օրուրնէ ի վեր՝ չէր տեսած Մոտը.
երէկը և այսօրը անցած էին իրեն համար, սրտի այնպիսի
անձկութեան մը մէջ, որ այլեւս չէր կրնար չճանչնալ այդ
կնոջ տիրական պէտքը: Իր մտահոգութիւնը զինք կը չար-
չարէր և չէր ուզեր մէկու մը բացուիլ: Մայրը՝ զոր կը
պաշտէր, քօրը՝ զոր նախանձով մեծցուցած էր, անոնցներ-
կայութիւնը դողցես կը ճնշէր իր վրայ. որովհետեւ կը
զգար իր վրայ յառիւր անոնց դորովոտ և անհանդիստ նայ-
ուածքներուն և որք չէին համարձակեր զինքը հարցուփոր-
ձել: Ո՛հ, մտածումը՝ որ զինք հանդիստ չձգեր, որ կը կաշ-
կանդէ, որ կը խոցէ՝ իր հոգւոյն անցքերը: Ատիկա զգայա-
րանքներու մէկ քմայք չէր և ոչ ալ ցանկութեան ծուխ մը՝

որ հովը կը քշէ կը տանի: Սէնթ-Ամանի մէջ, իրարու հան-
դիպելէն ի վեր՝ ատիկա եղած էր սրտի եւ գլխի դիւթանք
մը, տանջալի՛ աքսոր մը շրջասփիւռ կեանքին՝ ուր՝ մեծ
կիրքերը կը նետեն:

Կայարանին պաշտօնեաները կը գոցէին զո՛նակները եւ
կը հրաւիրէին ճամբորդները աճապարելու: Մաքսիմ ներս
մտնելով՝ վակոնը գտաւ մասամբ բռնուած խոշոր խարտեաշ
կնոջ մէջ մը, քիչ մը շատ աչքի զարնող արպուղարգով, որ ի-
տալերէնի եւ ֆրանսերէնի այլանդակ խոսուողով կը խօ-
սակցէր, իրեն պէս հագուած ուրիշ երկու մանկամարդ կի-
ներու հետ, տիկին Ավրըզաք եւ իր աղջիկը՝ Ժիւլիէթ:
Մաքսիմ զանոնք ճանչցաւ, Ռուվոլոններու տունը անոնց
հանդիպած ըլլալով իր առաջին այցելութեան ատեն: Բայց
դիտեց, որ անոնք զինքը չէին ճանչնար. «ի՞նչ կայ զար-
մանալու: Չներկայացուեցայ. յետոյ շատ զբաղած էին: Ա-
ւելի աղէկ. խօսակցութեան չպիտի բռնուիմ:»

Ժիւլիէթ, զո՛նակէն վար ծռած՝ գոչեց.

— Պարոն Ահարոն:

Սեղանաւորը, քրտնաթոր, շնչահեւ կը վազէր: Յատ-
կեց վակոնին մէջ, երբ արդէն շոգեկառքը կը մեկնէր:

«Աս ալ զիս չճանչցաւ», խորհեցաւ Մաքսիմ:

Արդարեւ, խոշոր մարդը իր կարճատեսի կլոր աչքերը
յառած էր իր վրայ, առանց սակայն բարեւելու:

— Եւ դո՛ւք ալ կ'երթաք մե՛ր կը Թէսիէի տունը, հար-
ցուց իտալուհին:

— Այո, Փոլ զիս հրաւիրեց, յարեց Ահարոն հեւքոտ
եւ շրթնալի ձայնով մը: Միասին գործ ունինք. իրենց
կալուածը հրաշալի է. դիտէք զայն, չէ՞, տիկին Իւսէլլի:

— Սիրե... լիս...: Շատ անգամներ գացած եմ հոն,
երբ Սփէցիայի դքսուհին Փարիզ էր: Բայց տիկին Ավրըզաք
եւ Ժիւլիէթ առաջին անգամ ըլլալով կուգան հոն, այնպէս
չէ՞:

Մաքսիմ, հակառակ իրեն, մտիկ կ'ընէր: Յաւալի նա-
խազգացում մը իրեն կ'ըսէր, թէ այս մարդիկը պիտի խօ-
տին իր սիրած կնոջ վրայ: Պիտի ուզէր նախապէս, արդի-

յիւ տնոնց, անոր անուներ բերան առնելու: Եւ արդարեւ, անմիջապէս այդ անուներ արտասանուեցաւ:

— Գիտէք, կ'ըսէք տիկին Ավրըզաք, որ տիկին տը Ռուվոըն է որ, Շանպլէի մէջ պիտի ընդունի:

— Իր երկար թիկնաթոռին վրայ երկնցած. այն ասե՞ն, դիտել տուաւ ժիւլիէթ:

— Օ՛հ, սիրելիս, Մոտն է որ, իրապէս կը վարէ ամէն ինչ այդ ընկերութեան մէջ, յարեց տիկին Իւսէլլի Մայրը ոչինչ է, զէրօ մըն է:

Նէ կ'արտասանէր «ու նա զէրօ» «ս» զիրը կճրտելով իր բերնին մէջ, եւ անուելի ոչնչութեան տակ խեղճ տիկին տը Ռուվոըն կը յիշուէր ջախջախուած եւ ոչնչացած:

— Փսլ Լը Թէսիէ, յարեց նէ, բարեկամն էր Ռուվոընի հօրը՝ որ մեռած է. երիտասարդութեան բարեկամ. նա ձանչցաւ Մոտը շատ պզտիկ. զայն շատ կը սիրէ:

Ահարոն երեք կիներուն մօտեցուց իր դէմքը կա-կար-միր, եւ ձայնը ցածցնելով, առանց սակայն չլսուելու Մաքսիսի կողմանէ:

— Եւ եղբայրը՝ Էքթոր, ըսաւ, միթէ շատ աղէկ չէ՞ Օր. տը Ռուվոընի հետ: Անշուշտ, հետը ամուսնանալու՞ համար, աւելցուց անմիջապէս, շլմորած՝ ինչ որ համարձակած էր բսելուն:

— Ալքո, գոչեց իտալուհին, մեր Էքթորը, ամուսնանալո՞յ Մոտի հետ: Շատ բարեկցի է... Ինչպէ՞ս կ'ըսէք այդ բանը, մանաւանդ այդ աղջկան հետ:

— Էքթոր չի սիրեր պզտիկ աղջիկները՝ որ Ֆլիոթէ կ'ընեն ուրիշներու ինչպէս եւ իրեն հետ, յայտարարեց ժիւլիէթ:

— Բայց յարեց տիկին Ավրըզաք, Մոտ այդքան ֆլիոթէ կ'ընէ: Ես կը տեսնեմ, որ ինքզինքը շատ լաւ կը բռնէ:

Մաքսիմ, այդքան սովորական պաշտպանողական խօսքի մը համար՝ պիտի փափաքէր պահնել այդ կնոջ ձեռքերը: Տիկին Իւսէլլի աւելցուց:

— Նէ շատ զօրեղ է: Եւ երիտասարդ Լիսթրա՞նժը: Եւ ուսմէն կո՞մսը, որ սպաննեյաւ առանց պատճառը

գիտցուելու: Եւ հիմա ալ գեղեցիկն ժիւլիէն տը Սիւպէրսօ: Ասիկա ալ չպիտի կրնաք ուրանալ:

— Պա՛հ, յարեց տիկին Ավրըզաք ներողամտութեամբ. բոլոր երիտասարդ աղջիկները այսօր ֆլիոթէ կ'ընեն: Նորածնութիւն է այժմ: Ժիւլիէթ կ'ըսէ ինձի որ մանկամարդ աղջիկները որ ֆլիոթէ չեն եղած, չեն ամուսնանար: Ես կը խորհիմ թէ անոնք որ ֆլիոթէ կ'ընեն, անոնք ալ չեն ամուսնանար:

— Իրաւունք ունիս, մամաս, յարեց ժիւլիէթ: Սեղ այլեւս չեն ուզեր բայց, գոնէ, եթէ չենք ամուսնանար, մի քիչ կը զբօսնուենք:

— Ֆլիոթ ալ կա՛յ, ֆլիոթ ալ, ըսաւ տիկին Իւսէլլի: Ուրիշներու մասին բան մը չեմ ըսեր, բայց Սիւպէրսօի՞ համար...:

Իր խօսքը լմեցուց իտալուհնով, երբ շոգեկառքը կանգ կ'առնէր կայարան մը: Մաքսիմ աղէկ լսած չէր. միայն նշմարած էր որ Մոտի անուներ կը խառնուէր Սիւպէրսօի, տը Լէսթրանժի, Էքթորի անուններուն եւ սպաննուած ուսմէն կոմսի յիշատակին: Անշուշտ որ, պիտի ուզէր անոնց կոկորդններէն ներս մղել այն բառերը՝ որ կ'աղտոտեն իր կուռքը: Բայց ամէն բանէ աւելի զօրաւորը, հասկնալու, գիտնալու փափաքն էր, որ զինքը անշարժ կը կեցնէր, անձկալից այն խօսքերէն՝ զոր կ'ատէր:

Շոգեկառքը, վերստին ձամբայ ելած, Ահարոն հարցու-փորձեց, միշտ կէս ձայնով:

— Այն ատեն, Սիւպէրսօ, ստուգիւ, կը կարծէ՞ք որ...:

— Ա՛հ, գոչեց իտալուհին, սպառնալով մատովը սեղանաւորին. նախանձո՞տ էք: Համբերող եղէ՛ք: Չեղ համար զրա՛ւ կը դնեմ, բոլոր սիրահարներուն մէջ:

Մաքսիմ, իմացած այս խօսքերուն վրայ՝ այնքան յանկարծական ոտուռ մ'ունեցաւ, որ հոն ներկայ եղող բոլոր խօսակիցները իր կողմը դարձան: Ստուգիւ, վայրկեան մը, կարմիր քօղը կը կանգնէր իր աչքերուն առջեւ, իր մկանունքները կը կծկուէին զարնելու համար այդ իժերու խումբը, ջախջախելու զանոնք բռունչքով կամ կրորնկով: Ինքզինքին տիրացաւ բռնի կերպով, հասկնալով որ զայ-թակղութիւն մը գէշ բան մը պիտի շըլար Մոտի համար:

եւ Լէսթրանժի վրա՞յ ալ խօսեցան :

— Այո՛, եւ ոռւմէն կոմսի մը վրայ ալ :

— Քրիսթիանու կոմսը օրինաւորապէս ամուսնու-
թեան ուղեց Մոտը. տասնըհինգ օր վերջը սպաննուեցաւ,
Պուքրէշի մէջ ահուճի վէճի մը համար : Մոտի համար
դէշ բան մը չեմ տեսներ ասոր մէջ :

— Ձեզ նկատեամք ալ խօսեցան :

— Ի՞մ վրաս : Մոտի՞ մասին :

— Ներա հետ շատ մտերիմ էք, ընդմիջեց բուռն կեր-
պով Մաքսիմ : Չայն կը կոչէք «Մոտ», այնքա՞ն կարճ :

Ճամբան զառիվեր էր : Չամբիկին քայլերը թեթեւցուց :

— Ա՛հ, սիրելի երկրագործս, օ՛հ, յիմարութիւն մի
ըներ : Ճանչցայ Մոտը, տասնըչորս տարեկան եղած ատե-
նին, կարճ շրջազգեստով, իր հայրը եւ եղբայրս բարեկամ-
ներ էին : Գիտէ՞ք, որ այս կերպով կասկածիլը՝ կը նշա-
նակէ թէ գէշ կերպով կը սիրէք կին մը : Կ'ուզէ՞ք որ, իբր
պատուոյ խօսք, ըսեմ ձեզ, թէ Օր. տը Ռուվորի հետ միշտ
եղած եմ ընկեր մը :

— Իրաւունք ունիք, պատասխանեց Մաքսիմ, ճակատը
խոնարհեցնելով : Վստահ եմ ներա նկատմամբ : Եւ սակայն,
եթէ ինձի տայիք ձեր պատուոյ խօսքը, ասիկա թերեւս
պիտի ջնջէր անուի տպաւորութիւնը այն խօսքերուն՝
զոր քիչ առաջ լսեցի :

— Լա՛ւ ուրեմն, կուտամ, չհաւատացո՛ղ մարդ : Գո՞հ
էք :

Մաքսիմ նայուածքով մը շնորհակալ եղաւ անոր : Այլեւ
բան մը չըսին իրարու, մինչեւ այն վայրկեանը, երբ ծա-
ռերու յուսափայլ սիլուէթներուն միջեւ երեւցան Արմիտի
զգեակին ճերմակ ճակատները : «Տարօրինակ տղայ, կը
խորհէր էքթոր, եւ ես իսկ աւելի այլանդակ չե՞մ քան
ինքը : Ահաւասիկ որ կը սկսիմ կրքոտ կերպով պաշտպանել
այդ աղջիկը. իբր թէ, ներա նկատմամբ վստահ ըլլայի :
Սակայն անոր հետ չպիտի ամուսնանամ : Շատ ստորին բան
է ամուսնանալէ արգիլել աղջիկ մը, անոր նկատմամբ աղ-
տոտ բաներ պատմելով» :

Գաւիթին առջեւը իջնելով, Մաքսիմ, առանց ուշա-
նալու, ի տես պարիկներու տան հաճոյալի զարդարանքնե-
րուն, աւելի ընդարձակ եւ աւելի շքեղ քան Թրիանան,
էքթորի ըսաւ :

— Որքա՞ն ժամանակ ունինք ճաշելու :

— Ժամուկէս, գրեթէ : Հագուտնիդ ձեր պայուսակին
մէ՞ջն է :

— Այո՛, քսան վայրկեանէն պատրաստ պիտի ըլլամ :
Թոյլ տուէք, որ տակաւին չերեւնամ : Շատ տակնով վրայ
եմ : Եթէ հանդիպէի սեղանաւորին կամ իտալուհիին, ա-
նանկ խօսքեր պիտի ըսէի, որոնք յետոյ զղջալ պիտի տա-
յին ինձի : Թող տուէք ինձի վայրկեան մը պատիլ : Բոլորո-
վին առանձին, պիտի հանգստանամ :

— Լա՛ւ ուրեմն, գացէ՛ք. Երբոր վերադառնաք, տան
չըջանը ըրէք, չպիտի տեսնուիք : Սպասաւոր մը ձեզ ցոյց
պիտի տայ սենեակ մը՝ ուր պիտի կրնաք ընել ձեր արդու-
զարդը :

— Այո, ըսաւ Մաքսիմ. լաւ է այդպէս, Այս կերպով,
Օր. տը Ռուվորն ճաշի ժամանակ միայն պիտի տեսնեմ :
Ցտեսութիւն :

Հանածոն զառիվերին բարձունքէն կ'երեւէր. երկու մար-
դիկը իրարու ձեռք սեղմեցին : Մաքսիմ շուտով հեռացաւ
բառէին ամէնէն թանձրախիտ մասերը, երկար նշտարինե-
րու պուրակ մը, որ կ'երկարէր ձախ կողմը : Հրաշալիօրէն
մաքուր երկինքով մը, օրը կը մթնշաղէր, ծանր՝ ինչպէս
ամբան վերջալոյս մը : Ու լուսնի լայն մա՛նիկ մը, արդէն,
իր արծաթափայլ փոքունութիւնը կը խառնէր, այդ վեր-
ջալոյսին շառագոյն տեղոյնին :

Մաքսիմ կը քայլեր ինքն իր առջեւէն, առանց տես-
նելու սիրտը՝ տրոփուն, ջանալով ինքզինքը պարփակել, եւ
ինքն իր մէջ յստակ տեսնել : Չայն մը իրեն մէջ կը խօսէր
եւ իրեն կ'ըսէր. «Չգուշացիր, տես թէ ինչպէս կը տառա-
պիս արդէն այդ կնոջ երեսն, եւ զեռ անոր չըսիր, թէ կը
սիրես զինքը. Չգո՞յն կաց. նէ քեզ հա՛մար չէ : Ժամանակ
կայ գեռ մեկնելու» :

Այո՛, ժամանակ կար եւ պահ մը խորհեցաւ ատոր վըրայ: Փախչի՛լ, վազել անտառէն մինչեւ կայարան, նետուիլ շոգեկառքը եւ ինքզինքը ազատել գողի մը նման, դէպի Բարիզ, Բարիզէն անդին, Վէզէրիի միայնութեանց մէջ ամբանալ, մինչեւ որ մոռացումը դար եւ սպիացնէր իր վէրքը: «Մտացո՛ւմ: Բայց երբեք չպիտի մոռնամ: Երբոր Սէնթ-Ամանը թողուցի, զայն չէի սիրեր, չէի կրնար զայն սիրել, հազիւ զնէ տեսած ըլլալով: Եւ սակայն չմոռցա՛յ:»

Իր յանգուզն քայլերը զինքը առաջնորդած էին անհուն լիճի մը ափունքը, զոր իրիկուան անստգութիւնը ալ աւելի կը մեծցնէր, կորսուելով իր սահմանները մշուշին մէջ. Լճափին վրայ, մեղձօրէն կ'օրօրուէր, կապուած մակոյկ մը, միակ գիակով մը:

Մաքսիմ ցատկեց նաւակին մէջ, քակեց չուանը եւ թիւաժարեց խտորէն, իր ջիղերը գործածելու համար: Բայց խորհրդաւոր եզերքներով, վերջալոյսէն կապտրի գոյն առած ջուրերով, այս լճին վրայ, ինքն իր դիմաց աւելի՛ եւս առանձին՝ ձայնը աւելի՛ տիրակալն դարձաւ:

«Զգո՛յ՛ կաց. այդ կինը անձանթն է. նէ իր հագուստին փեշերուն մէջ կը բերէ գաղտնիքը եւ տոամը:»

Այլեւս չէր թիւաժարէր. սակոյկը ինքնին կը սահէր շարժումով մը, որ յամբօրէն կը մեռնէր: Յանկարծ լիճէն անդին, անտառներէ՛ն անդին, գդետկին զանգակը հնչեց: Ընթրիքը իմացնող առաջին նշանն էր: Մաքսիմ Մոտի պատկերը վերակոչեց, իրիկուններու Մոտը, հերարձակ, մերկո՛ւս: Նէ հո՛ն էր, իրեն շատ ձօտիկ: Քանի մը պահ կու թեան եւ գորովի բուռն մակնթացութիւն մը ողողեց իր վարանումները: Շուտով մը եզերքը հասաւ, կապեց նաւակը ու վազեց դէպի գդեակ: Ժամը եօթն էր, քանի մը վայրկեան անցած: Աճադարանօք հագուեցաւ. սրահ իջած ատեն արգէն ընթրիքը կ'իմացնէին: Ընդնշարեց կրայն Օր. տը Ռուճոճըն, կանանչ թաւշեայ հագուստի մը աղօժ բիծերուն մէջ. սրահէն դուրս կ'ելլէր, էքթորի թեւը մտած. բայց սեղանին վրայ գտնուեցաւ ներա քովը: Նէ զգուշու-

թեամբ մը, անոր հարցուց իր ուշանալուն պատճառը. պատասխանեց միեւնոյն շեշտով: Մանկամարդ աղջկան միւս կողմը նստած էր նորերուկ վիպագիր՝ Հանրի Էսբիէն. նէ, բոլոր ժամանակը, այս վերջնոյն հետ խօսեցաւ, որ, սիրոյ եւ կիներու վրայ, այլ եւ այլ նախադասութիւններ, կակուղ եւ կլոր, կը յօրինէր, գոհունակ ծիծաղներու մէջ: Մոտ մտիկ կ'ընէր, կը ժպտէր, քիչ կը պատասխանէր:

Մաքսիմ, կը գիտէր այդ աշխարհիկ սեղանակիցները, եւ առանց անոնց թափանցելու, կէս թառով կամ կէս նայուածքով, ինչպէս Լը Թէսիէի եւ կամ Սիւպէրսօի մը, կը սկսէր հասկնալ այդ անգործները, ոչ լաւ եւ ոչ գէշ, քան Բարիզի մնացորդը, Աստուած իմ. բայց անոնք մտահոգ՝ իրենց հաճոյքներուն, ներողամիտ՝ մէկզմէկու մոլութեանց, իրարու փոխադարձ միջնորդներ, էնթրիկներու եւ երկու սեռերու աշատութեան՝ հետաքրքիրներ, երբեմն ալ կատարեալ շուայտներ:

Տիկին տը Ռուճոճըն եւ Փոլ Լը Թէսիէի կողմէ նշանակուած տեղերու կարգադրութիւնը, ամէն բանէ առաջ, կը նպաստէր հրաւիրեալներու հեշտասիրութեան՝ քողարկուած «Ֆլիրթ» իթեթեւ եւ անտարբեր անունին տակ: Լէսթրանժը գրած էին ժառըլիւնի եւ Մարթ տը Ռըվէրսիէի մէջտեղը, որպէսզի դիւրութեամբ ի գործ զնէ իր ջղաքըրգի ու արուեստը. Ահարսն իւզոտ պատմութիւններ կը ծամօծըմէր տիկին Իւսէլլիի թափթփած կուրծքերուն մէջ, եւ որ, միւս կողմանէ աչքերը կը սրէր, նայելու ժիւլիէթ Ավրըզաքի չաղանակագոյն խոսուպիքը: Էքթոր, իմաստունն էքթոր, ցած ձայնով կը խօսակցէր Մատըլէն տը Ռըվէրսիէի հետ, որ ժամանակ առ ժամանակ կը կեղծէր, անոր մատերուն զարնելով, իբր թէ լոնցնելու համար: Փոլ Լը Թէսիէ, իր քովիկին ունէր էթիէնէթը. չէր նեղուեր անոր նայելու գորովալից կերպով. ոչ ալ նէ անոր վրայ յռելու իր փաղարջանքի աշուկները, երբեմն քիչ մը տխուր, երբ կը յիշէր մայրը, Քիւանդ պատկած, օրէ օր աւելի ծանրանալով:

Բոլոր այս մարդիկը, մէկզմէկու ներկայութեան, իրենց հեշտասիրութիւնները կը յագեցնէին, մայրերու անտարբեր ակնարկին տակ, ինչպէս տիկին տը Ռուճոճըն, տի-

կին տը Ռըվէրսիէ, տիկին Ա.վրըզաք, եւ մէկ կամ երկու հայրերու, հոն ինկած, առանց նախատեսուած պաշտօնի Ու. զինքը, Մաքսիմն ալ չէին դրած Մոտի աջ կողմը, որպէսզի կարենայ ուրիշներու նման, յառաջ մղել իր սիրային արկածը, եւ կամ շահիլ կամահաճութիւն մը, իբր քովինէն:

«Բարեբախտաբար Սիւպէրսօ չէ հրաւիրուած, մտածեց դառնօրէն. անշուշտ որ զայն պիտի դնէին Մոտի միւս կողմը, այսինքն վիպագրին տեղը:»

Բոլոր այս սեղանակիցները, ճաշարսնի մը խորհիլի ազդեցութիւնը կուտային իրեն, աւելի խառնակ, աւելի խարդախ, անխոստովանելի շուայտութեամբ ժը, որ առաջ կուգար աղջիկներու ներկայութենէն:

«Բարեբաղդաբար նաեւ, մտածեց Մաքսիմ, փանն ու մայրիկս հոս՞չնէն:»

Էքթորի գաղտնի խրատին վրայ՝ տիկին տը Շանթէլ Բարիզ մնացած էր իր աղջկան հետ, եւ նաեւ Էքթորն էր, որ թելադրած էր Մաքսիմի, իր քոյրը տանելու Վէզէրի փոխանակ զայն ձգելու Բարիզ՝ իր մօր հետ:

Ահարոն, այդ վայրկեանին կը լմնցնէր աշխարհիկ դէպքի մը պատմութիւնը՝ որ շարթուան խօսակցութեան նիւթը կը կազմէր. օտարական զինուորականի մը կինը. Լաթը կը կազմէր. օտարական զինուորականի մը կինը. Լաթը կը կազմէր. օտարական զինուորականի մը կինը. Պօն Պրիւեէր փողոցին վարնայարկի մը մէջ բռնուած էր, Պօն Մարչէի ծախող աղջիկներու խումբի մը կողմէ: Ու վրան բաց մանրամասնութիւնները մասնաւոր խօսակցութիւնները զողորմեցած էին: Մաքսիմ Մոտի նայեցաւ. նէ բացակայ կ'երեւէր, մտածուած՝ այլուր. իրապէս մտիկ չէր ըներ. բայց միւս աղջիկները ականջ կտրած էին, Մաքսիմ բարեկուծեան ջղուտ ժէսթ մ'ունեցաւ, այնպէս որ ձեռքը սեղանին զարկաւ եւ Մոտի հովանարը գետին ձգեց: Անմիջապէս ծռեցաւ զայն առնելու եւ աւելի տեղոյն վեր ելաւ. ընդնշմարած էր Մարթ տը Ռըվէրսիէի սրունքները՝ Լէսթրանժի ծունկերուն վրայ:

— Ի՞նչ ունիք, հարցուց Մոտ, անհանգիստ իր լուծութենէն ու յուզումէն, թէեւ կնաջական անսխալական բը-

նազդ մը իրեն կ'ըսէր թէ, նա իրենն է այդ վայրկեանին, աւելի եւս կաշկանդուած իր նախանձէն:

— Բան մը չունիմ, յարեց Մաքսիմ: Միայն թէ հոս անտանելի տաք կ'ընէ

Արդարեւ այդ սրահին մէջ, տաքցուած ճաշին սկիզբէն, ջերմութիւնը անտանելի կը դառնար: Բոլոր բազմութիւնը լայն շունչ մ'առաւ, անցնելով քովի սենեակը՝ ուր սուրճը պիտի մեծարուէր, ընդարձակ արդիական հալ մը, ճարտարօրէն կցուած դղեակին աջ թեւին: Ապակիներէն կը նըշմարուէր բառքը՝ լոյսով ողողուած, եւ լուսինը ժահիկ՝ լուղալով երկինքի մէջ:

— Ո՛հ, դուրս ելլենք, գոչեց Էթիէնէթ, երթանք բառք. օդը շատ գեղեցիկ է: Շոգեկառքին տակաւին մէկ ժամ ունինք:

Բոլոր երիտասարդութեան կողմանէ գաղափարը ծափահարուեցաւ: Շուտով սուրճերնին աւին, մինչդեռ սպասուորները կը բերէին վերարկուները: Մաքսիմ օգնեց Մոտի, որպէսզի հագնի իրենը. մուշտակապատ մետաքսեայ պարեզօտ մը, սեղմուած մէջքէն, ներքին գօտիով մը: Մոտ թեւը մտաւ անոր:

— Դուրս ելլենք ըսաւ նէ ցած ձայնով. հեռու տարէք զիս այս մարդոցմէն:

Շնորհակալ եղաւ անոր, իր իսկ փափաքը հասկցած ըլլալուն համար հաւատարմօրէն: Դէպի անտառ հեռացան: Ուրիշ զոյգեր իրենց կը հետեւէին, բայց Մաքսիմ քիչ առաջ գտած ճամբայէն անցնելով, դէպի լիճ իջաւ, եւ երկուքն ալ անմիջապէս իրենք զիրենք զգացին չէզոքացած մնացորդ բոլոր աշխարհէն: Լիճը այլեւս սահման չունէր, նման Ափրիկէի այն խորրդաւոր լիճերուն՝ որոնց եզերքին կանգ կ'առնէ ուղեւորը, հարցնելով ինքզինքին. «արդեօք ծովէ է»:

Մերկ ժայռերը՝ իրենց կարծր եւ սեւ ուրուագիծերով կը զարդարէին լճափը, եւ լուսինը կը խարբալէր մեղմօրօր ջուրը, նման հալած արծաթի:

— Որքա՞ն գեղեցիկ է. մըմնջեց մանկամարդ աղջիկը: Իր սրածայր կօշիկով՝ նաւակը կ'երբրցնէր, աչքերը՝ լիճին անհունութեան վրայ, աչքեր՝ աւելի ճառագայթաբար-

ձակ. քան այս լիճը, քան երկինքը, քան աստղերը. —
կնոջական գեղեցկութիւն՝ յաղթական բնանկարներու գե-
ղեցկութեան, կանացի շնորհալիութիւն՝ գիշերոյ բանաս-
տեղծութիւնը խաւարեցնող:

— Եթէ կ'ուզէ՞ք, յարեց Մաքսիմ, ցոյց տալով մա-
կոյկը:

— Օ՛հ, այո՛, գոչեց նէ: Երթանք, օ՛ն, շատ հեռո՛ւ,
միտ մինակ:

Յատկեց նաւակին մէջ, իր զօրեղ թեւերուն մէջ ա-
ռաւ Մօտը, նստարանին վրայ դբաւ դիւրութեամբ՝ ինչպէս
տղեկ մը, ներս դէմը նստաւ, եւ ազատ նաւակը սահեցաւ
լիճին վրայ, անշշուկ թիակին միջոցաւ:

«Կը պաշտե՛մ գնէ, կը պաշտե՛մ, կը խորհէր Մաքսիմ
վերստին յաղթահարուած: Չեմուզեր, որ ինձմէ դատ ու-
րիչի մը ըլլայ նէ»:

Քիչ յետոյ, տեսողութենէ կորուսին տժգոյն մշուշին
մէջ խղճուող ծառախիտ անտառները. Մաքսիմ թիակը մէկ
կողմ նետեց, գոգցես կը կարծէին ըլլալ բաց ծովու մը
մէջտեղ: Յած ձայնով մ'ըսաւ.

— Պիտի ուզէի, որ այս ժամը վերջ չլուսննար, կամ
թէ այս լիճը իր մէջ խորասուզէր մեր լերկուքը, բայց թէ
երբեք ուսէ մէկը այլեւս մեզ չտեսներ:

Նէ պատասխանեց, անոր վրայ յառելով իր աչքերը՝
որոնց մագնիսական կարողութիւնը զիտէր:

— Ինչո՞ւ կը կասկածիք ինձմէ:

Եւ այս պարզ խօսքերը այնքան զինքը տակնուվրայ
ըրին, որ անոր ոտքերուն ինկաւ, պահնելով իր ձեռքը՝
զոր անոր թողած էր, եւ թոթովելով.

— Ներողութիւն, ներողութիւն:

— Կը կարծէ՞ք ուրեմն, յարեց Մոտ, թէ կ'ապրիմ այն
քնկերութեան մէջ՝ ուր պիտի փախաքէի ապրիլ: Ո՛հ, ան-
գամ մը որ կարենայի հեռանալ անկէ, այդ գարշելի Բա-
բիդէն:

Երթները անոր ձեռքին վրայ, Մաքսիմ համարձակե-
ցաւ կրկնել.

— Ներեցէ՛ք ինձի: Չեզի շա՛տ կը սիրեմ:
Նէ ձեռքը քաշեց եւ առանց ցասումի ըսաւ, յուզնալ
ձայնով.

— վերադարձուցէ՛ք զիս:

Մեղմուտեամբ թիակը առաւ. ափունքը հասան ա-
ռանց բան մը ըսելու, լուին թիավարութենէ մը յետոյ.
բայց քանի որ կը մօտենային գղեակին, Մաքսիմ, քաջու-
թիւն առաւ, մերկ ժայռերուն կամարին տակ.

— Մոտ, ըսաւ, գիտէք որ ձեզի կը վերաբերիմ, կի-
սով չափ զիս քեզի չեմ տար. քու գերիդ եմ, ընդ միշտ,
եթէ կ'ուզէք: Բայց կը պաղատի՛մ ձեզի, եթէ զիս պիտի
մերժէք, մի՛ խաղաք ինձի հետ, իբր մին այն թեթեւա-
միտ մարդոց՝ որ շուրջըտըրը են: Գիտէք, թէ ընդհուպ կը
մեկնիմ. կը խորհէի երեք շաբաթ մնալ ի՛վէզէրի, յետոյ
վերադառնայ: Պէ՛տք եմ վերադառնալ:

Իր աջ ձեռքով նէ սեղմեց երիտասարդ մարդուն բա-
զուկը:

— Հիմա հաւատք ունի՞ք իմ վրաս:

Պատասխանեց.

— Կը հաւտամ ձեզի:

— Ինչպէ՛ս չեք քրոջ:

— Ինչպէս քրոջս:

— Կը սիրէ՞ք զիս:

— Աւելի քան քոյրս, աւելի քան մայրս. աւելի քան
բոլորը:

— Լա՛ւ ուրեմն, յարեց Մոտ, վերադարձէ՛ք: Երեք
շաբաթ, մտածեցէք իմ վրաս, մտածեցէ՛ք ապագային վը-
քայ: Կ'ընդունիմ միայն կշտադատուած սէր մը: Ես կը
խոստանամ ձեզի. թէ մինչեւ ձեր վերադարձը, ոչ ոք պի-
տի տեսնէ զիս թատրոնը, կամ ընկերութեան մէջ. դուրս
չպիտի ելլեմ:

— Օ՛հ, ներողութիւն, դարձեալ ներողութիւն, բա-
ցազանչեց Մաքսիմ: Անարժան եմ ձեզի:

Կ'ուզէր զայն իրեն քաշել — իր կուրծքին վրայ եր-

ջանիկ, երբ անմիջապէս զգաց իրմէ քաշուիլը, եւ մերժելը նոյն իսկ նշանատուութեան ամէնէն մաքուր գիրկոնդխառնումը: Ու այս յեղակարծ նահանջին մէջ. անկեղծ վայրագ համեստութեան մը նահանջին նման, Մաքսիմ չի կրցաւ հասկնալ բնազդական ընդվզումը սիրահար կնոջ, սիրահար հոգևով ու մարմնով, ուրիշ մարդու մը, եւ տակաւին նոր՝ բաժանումի համար:



Մ Ա Ս Ն Ե Ր Կ Ր Ո Ր Դ

Ա.

Վեգերի. Մարտ 1893

Եւ անաւասիկ կը համարձակիմ ձեզ գրելու, առանց գիտնալու ինչպէ՛ս անուանել զձեզ որւէն անունը հազիւ իմն կը համարձակիմ արտասանել, երս կը մտածեմ ձեր վրայ, այսինքն ամէն ժամ: Ձեզ այնքա՛ն քիչ տեսայ, ձեզի այնքան քիչ խօսեցայ: Այժմ որ հեռաւորութիւնը զմեզ կը բաժնէ, ինծի կը թուի թէ, ոչ ես տեղ ունիմ ձեր յիշողութեան մէջ: Օ՛հ, որքա՛ն հեռու կը զգամ ինքզինքս ձեզմէ, ոչ միա՛յն փարսախներով եւ փարսախներով, այլև ուրիշ մեծ անջրպետով, որ մեզ կը զատէ ապրելու եւ լինելու մեր կերպերով: Կը պաղատիմ ձեզի, մի՛ կարծէք որ ըստ բախտի բառեր կ'ըսեմ ձեզի. թէ կը փորձեմ կաղապարել իմ ձախլիկութիւնս՝ ձեր փաղաքուններու շոռայագով հասցէին վրայ: Իմ սրտիս ներքինն է, որ ձեզ կը բանամ ստուգիւ, ինքզինքս կը զգամ ձեզմէ այնքա՛ն հեռու, որքան ինքս՝ ինձմէ, հովիւներու ամէնէն պարզն ու ամէնէն վայրենին:

«Վայրկեաններ կան, որ վշտահար կը մնամ, կը փա-

փառքիմ այն ատեն ըլլալ ձեր բարիգեան բարեկամներուն նման. ձեզի ըսելիք եւ գրելիք բաներս այն ատեն միտքս պիտի գային բնականաբար, պիտի խօսէի ձեր լեզուն, զիս աւելի՛ լաւ պիտի հասկնայիք: Բայց, խաղալ զեր մը՝ որ իմս չ'է, պիտի ըլլայի աւելի անճարակ, աւելի ծիծաղելի:

Այս տեսակէտով յաղթուած եմ նախապէս, ձեր շուրջ բոլորը ունիք քսան հիացողներ՝ աւելի հրապուրիչ, աւա՛ղ, քան Վէզէրիի համեստունակ մենակեացը: Եւ ձեր ոտքերուն տակ կը դնեմ իմ սիրավառ գուրգուրանքս, որ չի փայլիր, որ չքաշեր: Ի՞նչ ընելու է: Կը պաղատիմ որ թոյլատրէք ինծի սիրելու զձեզ: Զեզմէ կը խնդրեմ անստոյգ, անիրաւ շնորհ մը, կ'ըսեմ ձեզ. «Մարդոց նուազագոյնն եմ, սակայն զիս նախընտրեցէք»:

«Այնքա՛ն կը սիրեմ զձեզ, թողուցէ՛ք զիս ազադակել սա բառը՝ որ զիս շնչահեղձ կ'ընէ. հիմա որ հեռո՛ւ եմ: Այսպէս պաշտելու չէ զձեզ: Ոչ ոք աշխարհիս մէջ, վտան եմ ատոր, պիտի տայ ձեզի բոլոր իր ետը, ինչպէս ես կուտամ, առանց անհանգիստ ըլլալու ուէ բանէ, այլ միայն ձերը ըլլալ եւ զձեզ երջանիկ ընել: Ու եթէ կը ճանչնամ իմ անարժանութիւնս, սակայն կայ բան մը՝ որով կը հըպարտանամ, այն է, որ ձեզ կուտամ լաւագոյն հոգի մը, աւելի բարձր, աւելի արժանի ձեզի քան բարիզգիներունը, որոնց պարապը եւ մոլութիւնը զիս կը զարհուրեցնէին: Ծնո՛րհ, գթութի՛ւն. մի՛ սիրէք այդ մարդերէն ուէ մէկը, երբ կը մտածեմ որ, գուցէ, այս վայրկեանիս, անոնցմէ երբ կը մտածեմ որ, որ ձեզ կը խօսի, որ ձեզ հաճելի պիտի լին ձեր քովն է, որ ձեզ կը խօսի, որ ձեզ հաճելի պիտի լին, ինչ բան որ ներսս ընդզուժ առաջ կը բերէ եւ պիտի ուզէի որ անոնց կեղծ խօսքերը, ուժգնութեամբ վերջստին այդ ստախօս բերաններուն մէջ մտցնել, զձեզ զգուշացնել սաստկութեամբ ձեզի անարժան ուէ բանէ, եւ անոնց չ'ի մօտեցնել զձեզ: Ներեցէ՛ք այսպէս գրելուս, ապիկա զիս կը տանջէ, պէտք է որ ձեզ ըսեմ:

«Գիտէ՞ք, որ իմ մեկուսացմանս մէջ ի՞նչ երազներ կը շինեմ, և հազար անգամ վերստին կը շինեմ: Զձեզ կ'երեւակայեմ բոլորովին փոքրիկ, իմ մօտս, որ արդէն մարդ մ'եմ:

«Այդպէս գտայ, տասը տարի առաջ, քոյրս՝ Ժաննը, երբ Վէզէրէ եկայ, սիրտս խորտակուած, զօրագունդս ձրգած ըլլալուս համար: Այդ մանկունակ հոգին, տակաւին բոլորովին տգէտ, անմիջապէս պաշտեցի: Որոշեցի միայնակ անոր մէջ ներարկել զիտակցութիւնը եւ խորհողութիւնը, որպէսզի ինձմէ լաւագոյնը ըլլայ, ինքն իր մէջ փթթի. եւ խօսքս բռնեցի: Ժանն ուրիշ դատարարակ չուներեալ եւ ոչ ալ ուրիշ բարեկամ. զուտ կնոջական պէտքերը մայրս կերտած է. իր մտածումներուն իւրաքանչիւրին աղբիւրը իմ մէջս է: Օ՛հ, զձեզ աղայ ճանչցած ըլլալ, Մոտ, եւ զձեզ այսպէս կրթած ու մեծցուցած ըլլալ: Պիտի ըլլայիք թերեւ» եւ ապահովաբար նուազ պերճաշուք, նուազ «թագունի»: Բայց ամէն վայրկեան ձեր երազներուն բանալին ունենայի, չպիտի բռնադատուէի թափառելու կասկածոտ կերպով՝ ձեր գաղտնիքներուն շուրջը:

«Սակայն, ուշացած ըլլալուս՝ կը վարանիք: Ինչ բան որ պաշտեցի կուրօրէն ձեր մէջ, թերեւս հակառակն է անոր՝ զոր կը սիրեմ Ժաննի մէջ: Զիս սարսափեցող ձեր խորհրդաւոր իշխողութիւնը նուաճած է զիս: Ներեցէ՛ք ինծի. ինքզինքս կը խաբէի. ինքզինքիս կը ստէի: Զեր մէջ ուրիշ բան չեմ ուզեր քան ինչ որ էք: Ինծի ըսած ձեր վերջին խօսքերը զիս կը վստահեցնեն. մեր առանձնութեան ժամը, այն յաիշտակութեան վայրկեանները՝ զոր ձեր մօտ ապրեցայ, ճիշդ ձեզի մնաք բարով ըսելէ առաջ, իրենց յիշատակը ինծի քաջասրտութիւն կուտայ: Որքա՛ն ալ անարժան ըլլամ ձեզի, անշուշտ կը հաւատաք որ, միշտ պատրաստ եմ ձեզի ծառայելու: Ահաւասիկ ինչ որ կը խնդրեմ ներկայիս ձեզմէ եւ կը վախնամ երազելու երբ կը խորհիմ թէ, այդ բանը թոյլատրեցիք ինծի:

«Բարի՛ եղէք, գրեցէք ինծի: Եղածէն աւելի բա՛ն մը չեմ խնդրեր, բայց ձեզի կը պաղատիմ, ինծի ըսելու, «այդ բանը միշտ կայ»: Այդ կազգուրիչը պէտք է ինծի. շարունակելու համար ապրիլ միջին կէսին ժամը՝ երբ ձեզ պիտի տեսնեմ վերստին:

«Ես միայն ձեր վրայ կը խորհիմ, միայն ձեզի համար

զան տը Ռուս, գեղանի Եթիէնէթի քոյրը, միշտ բացակա
է, անձանօթ երկրի մը մէջ, թէ իր մայրը շատ հիւանդ է և
հոգին աւանդելու վրայ, ձեզի պատմած պիտի ըլլամ Բա-
րիզի բոլոր նորութիւնները:

«Աւա՛ղ, այս բոլորը ձեզի պատմելով՝ փափաք կը ըզ-
գամ լալու անոնց անմտութեան եւ ոչնչութեան վրայ. ե-
րեսուն տարու եմ. եւ մնացած երիտասարդութեանս ամբողջ
տեւո զուլթեան՝ պիտի նայիմ այդ անտարբեր խամաճիկնե-
րուն այլանդակութեանց, Սիւսկերսօսներ, Իւօէլլիններ, պղ-
տիկ Ռըվէրսիէներ, Լէսթրանժ, փողոցի աղջիկներ, սալոնի
աղջիկներ, կատակերգութիւններու մայերեր — և ե՛ս իսկ:
Արդէն բաւական տեսարաններ չաեսա՞յ, և առանց գիտնու-
լու ներկայ կը գտնուիմ անոնց: Ա՛հ, բարեկամս, զիս մի՛
դատէք իմ անգործութենէս և զբօսասիրութենէս, կ'աղա-
չեմ: Եթէ գիտնայիք թէ որքան անգամներ փափաքած եմ
թողուլ, ձգել բոլոր այդ կեղծ բարեկամները, բոլոր այդ
կեղծ ապրողները եւ ըլլալ ուրիշ մարդ մը: Բայց այն
միւս «ես»ը չթողուր զիս մինակ. իզական ձեռք մը պէտք
է իմ տարիքս ունեցող մարդու մը կեանքը մտխելու. ո՛ր
գտնել այդ ձեռքը, զօրաւոր եւ ազատ: Եւ եթէ կարելի ըլ-
լայ գտնել զայն, իրենը իմինիս երկնցներու նեղութիւնը
յանձն պիտի առնէ՞:

«Հոս բարեկամներ ունիմ, որոնք պիտի խնդային կար-
գալով այս գրածներս: Ինծի կը սպասեն այս վայրկենին
ձաշելու համար, աւելի ապուշ, աւելի կոկոզավիզուհիներու
հետ քան աշխարհիկները, յետոյ պիտի երթան թատրոն,
ապա վերստին պիտի ուտեն և պառկին: Օ՛հ, կեցցէ՛ կեան-
քը՛:

«Գթացէք ինծի, մտածեցէ՛ք վրաս, զրեցէ՛ք ինծի:
Եւ (ասիկա՝ ձեզմէ գաղտնիք մըն է ինծի) ըսէք ինծի թէ՛
ձեր միայնութեան փոքրիկ եւ անուշիկ ընկերը մոռցա՞ծ է
բոլորովին, Բարիզի իր բարեկամները:»

Փարիզ, Մարտ, 1893

«Ինչո՞ւ համար, սիրելի տիար եւ բարեկամ, ինծի
զրել նամակներ՝ որոնք զիս կը շփոթեցնեն, զոր ստիպուած

եմ գրեթէ զանոնք մոռնալու, կամ զանոնք կարգացած
չըլլալու երեւոյթը տալու, որպէսզի ձեզի պատասխանելու
էրաւունքիս մէջը ըլլամ: Ձեր ուղղամտութենէն կը պա-
հանջեմ այդ բանը. եթէ էքթոր Լը Թէսիէի, ձեր քրոջ՝
Փաննի ուղղած նամակը՝ գրուած ձեր ինծի զրկածին ու-
ձով, գրած ըլլար ու ձեր ձեռքը հասնէր, գոհ պիտի մնա-
յի՞ք: Ձէ՞ք դատեր որ, երիտասարդ աղջիկ մը կ'ուզէ խը-
նայուիլ, նոյնիսկ անկեղծ եւ յարգալի սիրոյ արտայայ-
տութեան մէջ: Լա՛ւ ուրեմն, իրաւունք ունիմ պահանջե-
լու, որ ես ալ պէտք է որ խնայուիմ, ինչպէս ձեր քոյրը՝
Փանն: Նոյն իսկ ընկերութեան մէջ՝ ուր կ'ապրիմ եւ որ
ինծի, ինչպէս ձեզի, չի յարմարիր, այո՛, այդ ընկերու-
թեան մէջ ոչ ոք զանոնք կը մերժէ ինծի: Զանոնք ձեզմէ
ընդունած չըլլալս, ինծի պիտի պատճառէր մասնաւոր
Վիշտ մը:

«Այժմ, իմ պզտիկ յանդիմանութիւնս լմնցաւ եւ կը
հաւանիմ ձեր նամակը կարգացած ըլլալուս. կը պատաս-
խանեմ: Կ'ըսէք թէ, ինքզինքնիդ կը զգաք այնքան հեռու
ինձմէ, որքան է ձեր հովիւներուն ամէնէն գեղջուկը:
Լա՛ւ ուրեմն, ես կը խոստովանիմ զգալ զիս շատ մօտիկ
ձեզի, սիրելի՛ բարեկամս: Անմիջապէս ձանչցայ ձեր մէջ,
ինչպէս մէկը կը ձանչնայ իր հայրենի երկրին բոլոր ան-
կիւնները, այն յատկութիւնները, որոնք են ուղղամտու-
թիւն, բարութիւն, եւ պարկեշտ մարդու յատուկ քիչ մը
խստութիւն: Ձեզմէ աւելի, յոգնած եմ ներողամիտ ըս-
կեպտիկներէ, համակերպողներէ, ջղայնացածներէ, որոնք
կը կազմեն ներկայիս արականներու ընկերութիւնը. ա-
նոնցմէ եւ ոչ միոյն վրայ կ'անդրաբառնայ մտածումս.
Ինքզինքս անոնցմէ հեռո՛ւ կը զգամ. մօտիկ եմ կտրուկ,
հաստատամիտ եւ պիտի ըսէի բուն մարդերու: Եւ ինչ որ
ձեր մէջ կը սիրեմ լաւագոյնը, ճշդիւ այն եռանդն է քիչ
մը մթին, որ կը տաքցնէ ձեր սէրերը: Եզէք ինծի համար՝
ինչ որ էք, բայց երբոր ձեր բարեկամուհիին՝ Մոտի վրայ
կը մտածէք, միայն եւ միայն անոր վրայ խորհեցէք: Մոռ-
ցէ՛ք զինք շրջապատողները՝ որոնք իրեն համար արժէք

չեն ներկայացնեն:

«Մօտ օրէն կը վերադառնաք հոս, սիրունակ եւ շա-
րածձի ժամնի հետ, ձեզ պիտի ընդունինք առօք-փառօք,
ձեզ Բարիզի հետ հաշտեցնելու, եւ առժամապէս Վէզէրին
մոռցնել տալու: Երեկոները երբեք դուրս ելած չունիմ. ոչ
պարասրահ, ոչ թատրոն, ձեր բացակայութենէն ի վեր:
Ընկերութեան մէջ «մուտքս պիտի գործեմ» ձեր աչքերուն
տակ, մեր տան մէջ: Ապրիլ 3ին մեծ ընդունելութիւն ու-
նինք. նուազ՝ մինչեւ կէս գիշեր, յետոյ պար եւ ընթրիք:
Մի՛ թերանաք ժամանակին հասնելու. չպիտի ներեմ ձեր
բացակայութեան. եւ սակայն կը գուշակեմ թէ, որքա՛ն
երկիւղալի են ձեր վերջին պահու քմայքները:

«Ուրեմն, մօտ օրէն, եւ մինչեւ այդ օր, խորհեցէք
վրաս ինչպէս որ կ'ուզեմ որ խորհէիք, յարգանօք եւ հա-
ւատքով: Բոլորով սրտիւ կը համբուրեմ զեղեցիկ ժամնս,
որուն մէջ կը սիրեմ, այնքան ուրախութեամբ, ինչ որ
ձեր մէջ կը հիանամ, այն՝ զոր իրեն տուած էք»:

Մ Ո Տ

«Որոշուած է, սիրելի մայրիկս, Վէզէրին կը ձգենք
վաղայաճորդ առաւօտ, Բարիզ գալու: Մաքսիմ ամէն ինչ
կարգի դրած է. պայուսակս պատրաստ է. այնքա՛ն աճա-
պարանք ունիմ մեկնելու, ժամ առաջ ձեզ համբուրելու
համար. ինձ կը թուի թէ յաւիտենականութիւն մը կայ,
որ ձեզ տեսած չունիմ: Երեւակայեցէք, ես որ անդադար
ձեր վրայ կը մտածեմ, այլեւս չեմ տեսներ ձեր դէմքը,
կամ գոնէ ձեր պատկերը անմիջապէս կ'անհետանայ, եւ
թէ չեմ կրնար զայն իմ մէջս պահել կամքի ուժովս: Ասի-
կա վիշտ կը պատճառէ ինձի եւ արտասուել կուտայ, սիրե-
լի մայրիկս:

«Ձեզմէ հետու, ո՛հ, հոս անցուցած զէջ շարաթնէրս:
Ձեզի չէի ըսեր, չվշտացնելու համար ձեզ, բայց այնքա՛ն
տխուր էի: Մաքսիմ շա՛տ փոխուած է: Ձիս քիչ սիրելու
ձեւեր ունի: Հազիւ հետս կը խօսի. երբ իրեն կը խօսիմ,
զիս մտիկ չընեն: Մերթ ընդ մերթ, զիս կ'առնէ ծուկե-
րուն վրայ, եւ զիս ցաւցնելու աստիճան կը համբուրէ:

բայց առաջուան իր բարի սէրը չէ այլեւս: Ամէնէն աւելի
զիս չի սիրեր: Աւելի եր սիրէ զեղանին Մոտ տը Ռուվոր:
Ինչո՞ւ մեզի չըսեր այդ բանը: Ոչինչ ունիմ ըսելիք այդ օ-
րիորդը սիրելուն համար, եթէ նէ ալ զի՛քը կը սիրէ եւ
երջանիկ կ'ընէ: Եւ սակայն, մամաս, քիչ մը կը վախնամ.
չատ գեղեցիկ է նէ եւ շատ աղուոր կը խօսի. ներս մօտ,
ինքզինքս շատ տկար կը դգամ. մնաց որ, միայն ձեզի եւ
Մաքսիմի հետ կրնամ համարձակօրէն խօսակցել: Եւ ահա-
ւասիկ Մաքսիմ ալ կը սկսի զի: վախցնել:

«Կը թուի թէ, Ապրիլ 3ին, Ռուվորներուն տան մէջ,
մեծ պարահանգէս օր տեղի պիտի ունենայ. որքա՛ն պիտի
ձանձրանամ: Պարելը կը սիրեմ, մամաս, բայց պէտք է
խօսիլ նաեւ պարողներուն հետ, Բարիզի մէջ, եւ այդ ին-
ձի անձանօթ երիտասաղփներուն՝ չեմ գիտեր, թէ ի՛նչ
կերպով պիտի պատասխանեմ:

«Հոս, եւ ոչ մէկ նորութիւն, վերջին նամակէս ի
վեր: Օդը պայծառ է, եւ ամառնային տաք մը կայ: Մա-
թիլա Սորպիէ, Քրուառէի աղախինը, որ ամուսնացած էր
ժօզէֆ Լը Բերուի հետ, գեղեցիկ մանչուկ մը ունեցաւ:
Այսքան կանուխ, զաւակ մ'ունենայուն համար՝ շատ գոհ է:
Երեքշաբթի օր, մկրտութիւնը տեղի ունեցաւ Ս. Կոյս
մատուռին մէջ:

«Ընդհուպ, սիրելի մամաս: Ձեր փոքրիկ ժամնը յար-
գանօք եւ գորովով կը հւ մըուրէ ձեզ եւ շատ երջանիկ է,
վերստին ձեզ տեսնելու համար:»



բ.

Լուսափայլ թուփերով զարդարուած հալին խորը, բեմին վրայ՝ նուագախումբը, Պորոտինի Սէնֆօնիին վերջին մասը կը հնչեցնէր. կէս գիշերէն առաջ՝ աշխարհիկ նուագահանդէսներու տխուր համակերպութիւնը կը նշմարուէր արիւնախոնուած դէմքերու եւ առաջին կարգը նստող կիներու յոգնած աչքերուն վրայ, բռնադատեալ հիացումի եւ ուշադրութեան ձեւերու տակ. նոյնպէս եւ դրան եզերքներուն կռթնող կամ նրբանցքներու մէջ լսին թափառող սեւազգեստներու վրայ: Սակայն կարգ մը հրաւիրեալներ, ծխողներու անկախ խումբեր եւ քննադատութեան մասին անհող ֆլիսթէ ընող զոյգեր, սրահները եւ սենեակները լեցուած էին, ուր կարելի էր գտնել, նուազ շողողուն լոյսին տակ, քիչ մը օդ եւ զովութիւն:

Մտաւ ար Ռուվաբի իբր զարդախուց ծառայող պղտիկ սրահին մէջ, ուր էին նաեւ իր դաշնակը, անձնական գըրադարանը, եւ անգլիական մահոկենիէ սեղանը, բազմոցի մը վրան Լիւկ Լէսթրանտ, առանձինն, կէս մը քուն, աջ ձեռքով միշտ տոգոյն մօրուքին ծայրը քաշելով, կը թուէր սպասել մէկու մը, արթննալով միշտ սուէ մօտեցող քայլի մը պղտիկ շուկէն:

— Վերջապէ՛ս, դո՛ւք էք, գոչեց՝ տեսնելով երեւիլը ժագըլին տ' Ռուվաբի. կը յուսահատէի: Այս իրիկուն, համբոյրներով ուտուելիք մըն էք, աւելցուց, աչքերը դարձնելով աղջկան վրայ, որ կէս-լուրջ, կէս-ժպտուն, մատներուն ծայրերով ձերմակ քիւլէ հագուստին կողմնակի մասերը վեր կ'առնէր պարուհիի մը նման, եւ անոր խոնարհութիւն մը կ'ընէր:

Ակնարկով վստահեցուց, որ մինակ էին. գրկելով ժագըլինը, փորձեց շօշափել շառագոյն խոպոպիքներու տակէն անոր ծոծրակը. բայց, նէ անմիջապէս խուսափեցաւ անոր թեւերէն, եւ շուտիկ ճնճողակի մը նման՝ պահուրտեցաւ դաշնակին ետին: Ոտքի վրայ, սկսաւ գգուել ստեղնաշարը, ծոած այնպիսի ձեւով մը, որով իր նրբահիւս չփակը գոգցես վար կ'իյնար, ցոյց տալու համար իր կուրծքերը:

— Ժագըլի՛ն, մրմաջ Լէսթրանտ:

— Ժագըլին չկայ, որ կարենաք բռնել, սիրելի տիար, յարեց, նստելով դաշնակին աթոռակին վրայ, պատրաստ՝ փախչելու երկրորդ յարձակումէ մը: Այլեւս կարելի չէ համբուրել ո՛չ այտերս, ոչ պարանոցս, ոչ թեւերս: Առաջին իրիկունս է երկար հագուստներով: Կին մըն եմ:

Եւ լաւագոյնս հաստատելու համար, թէ իր հագուստը երկար հագուստ մըն էր, սրունգները խաչածեւեց անանկ մը, որ ամբողջովին մէջտեղ հանեց իր աջ բուժբը. Լէսթրանտ ոտքի վրայ՝ անոր առջեւ, շրթունքները կը խածնէր:

— Այո՛, սակայն, յարեց, կարելի է ձեռքս պագնել: Չախ ձեռնոցը հանեց մէկ անգամէն. թեւը երեւցաւ յանկարծ, մերկ, ձեռքը երկնցուցած Լէսթրանտի շրթունքներուն. նախ մատներուն ծայրին վրայ դրաւ զանոնք, յետոյ, յամբօրէն, անյագաբար համբոյրներով ծածկեց ափը, դաստակը, յառաջանալով դէպի արմո՛ւկը: Ժագըլին, աչքերը կիսախուփ, բերանը կիսաբաց, չէր շարժեր երկընցուցած բազուկը՝ զոր յանկարծ քաշեց, երբ զգաց անոր շէկ պխերը իր ուսերուն մօտը:

— Բաւական է այս աւուր համար, յարեց. նստեց՛ք հող եւ խօսինք ազնուօրէն:

Ցոյց կուտար բազմոցը. Լէսթրանտ հնազանդեցաւ:

— Ի՛նչ չարածձի կերպարանք մ'ունիք այս իրիկուն: Ի՞նչ սուսիք: Աչքերնիդ անանկ մը կը յառէք ինձի, ինչպէս Շանթիլ՝ քրոջս:

Լէսթրանտ խնդալ ձեւացուց, բայց իր ձայնը չփոթէր:

— Ունի՞մ... թէ կը ծագրէք զիս, ինչպէս բոլորը: Ու

ձեզ կը վատահեցնեմ, որ կը տառնայիմ: Ձեզմէ՛ առ իս, ա- սիկա ձեզի կարելի է անհեթեթ կը թուի: Սակայն ըս- տոյգ է: Կը պատրաստուիմ դարձեալ անցնելու սոսկա՛լի գիշեր մը:

— Պա՛, յարեց ժագըլին, խողալով հովահարին հետ, անշուշտ որ կը ձանչնաք քանի մը սիրատրոսի բարեկամու- հիներ՝ որոնց մօտ պիտի կրնայիք անցնել անքուն գիշեր մը եւ զբօսեցուցիչ... աւելի զբօսալի քան մեր պզտիկ հանդէսը:

— Բողե՞ր:

— Բողեր, դերասանուհիներ, վերջապէս կիներ՝ միայն պարոններու համար: Գիտե՞մ ես: Չ՛պիտի՞ ուզէիք որ հասցէներ տամ սակայն:

— Եթէ կան դերասանուհիներ կամ աղջիկներ, զիս ձեզմէ բաժնելո՛ւ, յարեց Լէսթրանժ լրջօրէն:

— Լա՛ւ ուրեմն, բայց... ընկերութեան կիներ այն ատեն... պզտիկ Տիկին Տիւքլէրք, քիչ առաջ շնորհալիու- թեամբ մը ձեզի կը քսուըռտէր: Ես ինքն տեսայ: Կը տես- նեմ ամէն ինչ: Ծաղիկ մը խճողեցիք անկէ: Ահաւասիկ ձեր լամբակին վրայ:

— Իր ծաղիկը: Թ՛քել եմ անոր վրայ:

Հանեց ու գետին նետեց:

— Կին մը որ երեք զաւակ ունի, շնորհակալ եմ: Աս- նիկա չ՛կրնար զիս փորձութեան մէջ ձգել:

Ժագըլին վեր առաւ ծաղիկը ու փեթթոտեց:

— Ահաւասիկ, թէ ի՞նչ են գէշ սովորութիւնները, ը- սաւնէ: Համ կ'առնեն մանկամարդ աղջիկներէ, քիչ մը կանանչ պտուղներէ: Այլեւս չ'են կրնար համ առնուլ հա- սուն պտուղներէ:

Չոյգ մը կ'երեւէր սեմին վրայ, կուտական դէմքով կին մը՝ թեւը տուած շատ երիտասարդ մարդու մը, առատ մազերով, միջակ հասակով, երբ տեսան, որ սրահին մէջ մարդ կար, ետ քաշուեցան:

— Տե՛ս, յարեց ժագըլին, ահաւասիկ այդ խեղճ պըզ- տիկ Տիւքլէրքը. Հանրի էսքիէն զայն կը մխիթարէ, ձեր

արհամարհանքներուն համար:

— Վիպագի՛րը: Շատ ձանձրացուցիչ անձ մըն է. կըր- նայ զայն պահել, եթէ նէ կարենայ զինքը տանիլ:

Լոեցին: Նուագախումբը, հեռուէն, քանի մը վայր- կեան լուսթեկէ վերջ, Սէմֆոնիին վերջաւորութիւնը կը հնչեցնէր:

— Սրդարեւ, եթէ այդ ըլլաւի, ըսաւ ժագըլին, ձեր ձաշակը պիտի ունենայի: Բազմաթիւ ընտանիքներու մայ- րերը, ոչ, որոշապէս ստիկա զիս ուրախութեամբ չպիտի լեցնէր:— Անոնցմէ ոմանք կը տեսնեմ Տօքթ. Քրոսի ջրա- բուժարանը, անոնցմէ՛ որ այս իրիկուն հոս են հագուած, շքուած, եւ կ'երեւակայեմ հրապուրիչին զուլսը, երբ այդ գանձերը քօզամերկ ըլլան: Պը՛ռ, Կինը չէ որ պէտք է ըն- դունի տուը: Մինչդեռ տասնրեօթ տարու երիտասարդ անձ մը, բոլորովին նոր, ինչպէս Օր. Մատրէն տը Թըռէրսիէ, օրինակի համար:

— Ուրիշներու մասին մի խօսիք ինձի, ընդմիջեց Լէսթրանժ: Միայն ձեզ է որ կ'ուզեմ, գիտէք:

— Կը կարծեմ թէ, «զիս կ'ուզէք», արդարեւ: Բայց հաւասարապէս կ'ուզէք այն կիները՝ որոնց կրնաք ձեռք երկարել, այսինքն բոլոր աղջիկները: Մինչեւ անգամ սա՛ խեղճ Փանն տը Շանթէլի, այնքան տափակ եւ գէշ հազ- ուող, որուն կը նայէիք Վիպըն աչքերով: Ոչ մի՛ ըսէք, Պզտիկ հիւանդութիւն մըն է այդ, ինչպէս կ'ըսէ Տօքթ. Քրոս: Ատոր համար ձեզ չեմ յանգիմաներ եւ չեմ ալ նա- խանձիր:

Նէ կը զուարճանար. ասանկ խօսքերու մըջեւ, համ- բուրելով կէս մը փեթթոտուած ծաղիկը, զոր իր մատնե- րուն մէջ կը դարձնէր:

Լէսթրանժ մրմնջեց.

— Ճիշդ է: Բայց ձեզ կ'ուզեմ... ամէնէն վե՛ր:

Ժագըլինի հեղինական նայուածքին տակ, չհամարձա- կեցաւ, այս անգամ ալ, ըսելու. «կը սիրեմ ձեզ»: Նէ, միշտ ծաղիկը չրթներուն մօտիկը բռնած՝ հարցուց.

— Լո՞ւրջ է ատիկա, ուրեմն:

— Բոլորովին լուրջ:

— Լա՛ւ ուրեմն. եթէ լուրջ է, յարեց հանդարտօրէն, ամուսնացէք հետս: Ա՛հ, կը տեսնէ՞ք, կը սկսիք գլուխ ցցել:

— Բայց...

— Բայց այո՛, կը վստահեցնեմ ձեզ, գլուխ կը ցցէք: Ի՞նչ կը յուսայիք ուրեմն, իմ խեղճ Լիւքս: Կը կարծէիք որ, Ժիւլիէթի, Մատըլէնի եւ ուրիշներո՞ւ պէս պիտի ըլլայի: սենեկապանուհիներու վճարել լուծելն պահելու, մանչարանները վազել, պարկեշտ ամուսինի մը պէս: Ո՛չ, ո՛չ, սիրելիս. տակաւին նորհաս եմ, եւ չեմ ուզեր, առաջին թափով, ինքզինքս ենթարկել արկածներու եւ կարգ մը ձանձրոյթներու: Կ'ուզեմ որ հետս ամուսնանան: Այնքան գէշ կտո՞ր մ'եմ: Լաւ ընտանիքէ եմ, երկու հարիւր հազար ֆրանք օժիտ ունիմ: Մեծ հարստութիւն մը չէ, բայց սա ժամանակներուս համար բան մըն է: Քիչ մը թեթեւ եմ, տարիքիս պատճառաւ. անգամ մը որ պիտի ամուսնանամ. պիտի կրնամ ինքզինքս բռնել: Գալով անաղարտ ըլլալուս, պիտի կրնաք փնտռել հա՛տ մը միայն Փարիզի մէջ, նոյն իսկ Օրլէանի մէջ: Աւելի չպիտի գտնէք: Ժանն տ'Արք եւ ձեր աղախինը: Նոյն իսկ փոքրիկ Շանթէլն ալ ունի... բաներ մը:

Ոտքի ելաւ նէ, եւ դաշնակին վրայ սկսաւ խաղալ: Հեռուն, նուազախումբին սէմֆօնին կը լմնար: սկսան ծափահարել. բազմութեան հոսանք մը գէպի սրահները կը խուժէր: Լիւկ Լէսթրանտ կը նայէր Ժագըլինի, առանց պատասխանելու:

— Ահաւասիկ, գեղեցիկ բարեկամս, եզրակացուց նէ: Մտածեցէ՛ք, որոշեցէք: Ամուսնութիւն, ասկէ զատ՝ ինձմէ ուրիշ բան մի սպասէք:

Եւ անոր երեսին նետելով ձերմակ վաւրին դիակը, շուտով մը հեռացաւ:

Լէսթրանտ, որ կ'ուզէր անոր հետեւիլ, իր ճամբան գոցուած գտաւ բազմութենէն՝ որ ճալէն ներս կը խուժէր: Տեսաւ հեռուէն զնէ, ասքթ. Քրոսի թեւին կառչած, քառասուն տարեկան ճաղատ մը, ձարի կերպարանքով, ակ-

նոցներուն տակէն իր հանդարտիկ նայուածքը պտտցնելով այդ խանդարուածներու բազմութեան վրայ՝ որ զինքը կ'ապրեցնէին:

Հալին մուտքին վրայ՝ Լէսթրանտ հանդիպեցաւ Փոլ Լը Թէսիէի՝ որ կը խօսէր Էթիէնէթ Տիւռուաի հետ ոտքի վրայ երկուքն ալ. ծերակուտականը, աւելի քան հայրական նայուածքով մը, երիտասարդ աղջկան պաշտելի կուրծքը դիտելով: Իրարու ձեռք սեղմեցին. Լէսթրանտ հարցուց.

— Կարգը ձերինն է, օրիորդ: Չպիտի՞ կեցնէք ներդաշնակութեան այս հեղեղները, մեզի երգելով պարզ բան մը:

Ժագըլինի հետ ունեցած իր խօսակցութենէն տակաւին դողդոջուն, նայուածքը կը սրէր դէպի Էթիէնէթի ծովագոյն յիւրերուն:

— Ո՛չ, ըսաւ ժպտելով: Կարգը իմս չէ դեռ. տիկին Իւսէլլի պիտի երգէ եւ ատոր համար ուրախ եմ:

— Մեծ յաջողութիւն պիտի ունենայ, յարեց Փոլ:

— Օ՛հ, դուք, դիտեց նկարիչ Վանպէլ՝ որ անոնց մօտեցած էր. սիրելի ծերակուտական, դուք ալ անոր չափ շփոթած էք: Այս իրիկուն, սկսնակին ամուսինը կ'երեւի:

Էթիէնէթ կարմրեցաւ: Լը Թէսիէ, դժգոհ, ձայն չհանեց. իր թեւը տուաւ երիտասարդ աղջկան եւ միասին հեռացան:

— Չանոնք վիրաւորեցիք, ըսաւ Լէսթրանտ նկարչին: Ինչո՞ւ համար այդ խօսքը ըսիք: Շատ լուրջ են նէ և ինքը: Ամուսնութեան մը մասին կը խօսուի:

— Ահաւասիկ ինչ որ զիս կը զրգոէ, պատասխանեց Վալպէլ: Ի՞նչ իրաւունքով այդ քաղաքական հաստ մարդը կը վտանգէ այդ գեղանի աղջիկը: Նէ մեզի համար էր, ընթրիքներու եւ անկողնի համար, ինչպէս իր բարի մայրը՝ Մաթիլտ եւ գեղանին Սիւզանն՝ իր քոյրը: Կ'ուզուի զնէ ընել պարկեշտ քաղքենուհի մը, հաւատարիմ իր ի՛ստ-շոր ծերակուտականին: Գէ՛շ բան:

— Իրողութիւնը այն է որ, ըսաւ երազուն Լէսթ-
րանտ, այս իրիկուն հրաշալի է նէ, իր հնդկական հա-
զուստովը: Նէ պէտք է ունենայ ամէնէն քաղցրահամ մար-
մինը:

Սկսան աղջկան մարմնոյն մանրամասնութեանց մէջ
մտնել, զնէ հանուեցնել ժաղէլի խօսքերով եւ անոր հրա-
պուրիչ կուռութեան անձանօթին վրայ՝ գուշակութիւններ
ընել: Նոյն իսկ իրենց ձայնը չէին ցածցնէր. եւ հալէն
անցնող մարդերը իրենց խօսակցութիւնները կ'իմանային:
Յետոյ խօսեցան ուրիշ բաներու՝ հանդէսին եւ նուագին
վրայ:

Աշխարհիկ զուարճութեանց մէջ՝ տհա ի՛նչ բաներու
վրայ կը խօսուի: Տասնհինգ օրէ է վեր՝ լրագիրները մե-
զի կը խօսին նշանաւոր հալին, ճշմարիտ թատրոնին, շը-
նորհալի տանտիրուհիին վրայ: Ասիկա կը նմանի Քօնթի-
նանթալի մէկ երեւոյթին: Եւ գու՛ք:

— Պա՛, յարեց Լէսթրանտ, Այլեւս գեղեցիկ հանդէս-
ներ չկան: Ետտ տգեղ ենք, եւ ամէնքն ալ՝ շատ տես-
նուած: Միայն, շնորհալի տանտիրուհիին է, որուն արժէքը
չտիագանցուած չէ: Նայեցէք իրեն:

Մոտ, Մաքսիմ տը Եանթէլի թեւին, կը խօսակցէր
Սէսիլ Անպուրի եւ տիկին Իւսէլլի անբաժան զոյգին հետ:
Մէսիլ տափակ հագուստով, բարձր կուրծքերով եւ Լուի
Փ. 2-րդ կեղծումի նմանող մազերով, անորոշ եւ անհան-
գարտ պատանեկուհի մը. իտալուհին կայսերական ձեւով
հագուած, ուսերը եւ կէսպիւսթը՝ բոլորովին մերկ: Մաք-
սիմ, նոր հագուստով, գաւառիկ ձեւերով, տփօցն, իր մե-
նակեցութեան հիւժուժով աւելի բարակցած, չէր տեսներ,
չէր լսեր, բայց միայն իր պաշտելին՝ որուն ձեռքը՝ իր ու-
սին վրայ եւ յաղթականի իր ուրախութիւնը կը ճառագայ-
թէր այդ անյաջող դէմքին վրայ: աննոգ՝ ծածկելու համար
իւր հողւոյն զգացումները: Մոտ, միտքը ուրիշ տեղ, մտա-
ցիր, կապոյտ աչքերը սեւցած, զօրեղ հոգւոյն ծանր չար-
ասանքի մը հետեւանօք, կը խօսէր, մտիկ կ'ընէր եւ այն-
ասանց անտարբեր, այսօր, իր գեղեցկութեան մտածումնե-

րուն պաշարմամբ, կ'երեւէր, հակառակ այս ամէնուն, այդ
բազմութեան թաղուհին, ուրիշ ցեղէ մը, աւելի բարձր,
աւելի ազնուական, ծնած՝ տիրապետելու եւ սանձելու:

Ոտքին ծայրէն մինչեւ գագաթը ճակատին՝ շառագոյ-
նով խառն մութ շագանակագոյն մաղերով զարդարուն, իր
գեմաստուերագիծը կ'ուրուագծուէր սուրացող շնորհալիու-
թեամբ մը, իգական կատարեալ ձեւի այդ փառքը՝ որուն
համար հագուստներու ստոյգ վայելչութիւնը պէտք է հե-
տեւի անոր շատ մօտէն: Նէ դիտէր այդ բանը, իր կատա-
րելութեան գիտակից, իր շրջագետտին ծովագոյն շղարշը
իւր մարմինը կը պարփակէր, ինչպէս սիրահար լոռ մը, ա-
լիքներու մէջ մխրճուած ճերմակ սիրէնախի մը շուրջը: Ու
պարանոցին եւ թեւերուն բացարձակ մերկութիւնը, ա-
ռանց գոհարի, առանց զարդարանքի, սրբափայլ էր:

— Այո՛, մրմնջեց Լէսթրանտ, շատ գեղեցիկ է:

Լուեց: Նա կ'ոգեկոչէր իր չիոթ անցեալին ամէնէն
խշխշալից մէկ յիշատակը, յիմարութեան մէկ վայրկեանը՝
գաղտնի մնացած իր եւ Մոտի միջև, յորում ուզած էր իր
չրթներով ճաշակել՝ զայրացկոտ Տիանայի շրթունքները:
Զգայարանքներու խորհրդաւոր յիշողութիւնը սարսուռաց
դինքը, իբր թէ իր դաստակէն տակաւին արիւն կը հոսէր,
զայրացկոտ խառնուածքի մը ազդեցութենէն:

— Տիկին Իւսէլլի պիտի երգէ, ըսաւ նկարիչը: Մօտե-
նանք. կ'արժէ մտիկ ընել:

Արդէն կիները իրենց տեղերը կը բռնէին: Իտալուհին
գաշնակին ջով՝ ոտքի կեցած, դէմքը հրաւիրեալներուն,
կը նմանէր բեմի խոշոր արձանի մը, անպարկեշտ՝ իր հրէ-
շային եւ կակուղ սպիտակութեամբ:

Երգեց Հոլմէսի մոլեղին մէկ քերթուածը, վերակոչուժ
մը՝ առ էրոս, տէրն աշխարհի, ու յանկարծ այդ մտեղէն
ղանգուածը վերակենդանացաւ. արուեստի բոցը զայն կեր-
պարանափոխեց: Ուրիշ աչքեր եղան, ուրիշ շրթունքներ,
ուրիշ շարժումներ, սիրոյ քրմուհին եղաւ. անուշահոտե-
րով այրուած խնկաման, համբոյրներու ծարաւի իր չոր շր-
թունքները ուղղելով դէպի տիրալի հեշտանքներու աստ-

ուածին, իր թեւերը դաւարուած գիրկընդխառնումներու անձկութեամբ: Իր աղիողորմ և մաքուր ձայնը՝ նման հին ջութակի ձայներուն, հողի մ'ուռնէր, կիրք եւ ստընգանքի հողի մը: Եւ աղաղակներն էին համբոյրներ, զըզուանքներ և հառաչանքներ ցանկութեան ու յագուրդի: Հոլմէսի այս քերթուածները, ինչպէս ունկնդիրները շատ անգամ լսած էին, եւ ահաւաստիկ որ անոնք կուգային բաղխիլ ականջներու, նոր նուազի մը նման անհանգիստ ընելով սրտերու խորը ժողւըրուած զգայասիրական անասնային կիրքը, կարմրեցնելով մանկամարդ աղջիկները, մարեցնելով կիները, հրդեհելով մարդոց աչքերը:

Գերագոյն կոչումը դուրս արձակեց: «Էրոս, բայց ինձի երկինքները» այնքան աղեխարշ, այնքան հեծկլտացող, այնքան զարհուրելի կըքով. որ բոլոր ունկնդիրները սարսըռացին ու անգիտակից ձայներ պատասխանեցին ջնջուած կոկորդներու խորերէն: Յետոյ նէ ինկաւ, խորտակուած ինքն իրմով, Սէսիլ Անպոլի գրկին մէջ. նուազածուք վազեցին զայն բռնելու:

— Այս կինը, Լէսթրանտի ետեւը նստող մը ըսաւ, կ'երգէ իր սեռին հետ:

Էքթոր լը Թէսիէն էր:

— Դիտեցի՞ք, յարեց Վալպէլ, երգած միջոցին միայն մէկ անձի կը նայէր:

Լէսթրանտ և Լը Թէսիէ ետեւին դարձան և տեսան որ ստուգիւ երգչուհիին աչքերը գամուած էին: Հալին խորը, ոտքի վրայ, պատին կոթնած՝ ժիւլիէն տը Սիւպէրսօ, գեղեցիկ Պալզաքի դիւցազուններուն նման անոնց պէս անըզգած, յամր և տխուր: Իր մօտիկը նստող գեղանին ժիւլիէթ Ավրըզաք անոր վրայ կը յռէր ամուսինի նայուածքներ, հեռու մօրմէն և ուրիշ կիներէ, անոր նուիրելով իր գորովագին բիբերը, սիրահարի մելամաղձիկ ժպիտը, իր թեւերուն եւ ուսերուն փափկասուն մերկութիւնը:

— Այսքան գեղեցիկ ըլլալը ուժ մըն է, մըմնջեց Էքթոր: Եթէ այդ գեղեցկութեան տակ մարդու հողի մը գոյութիւն ունենար, աշխարհը իրեն պիտի քայէր:

Այդ վայրկեանին ժազըլին տը Ռուվոը Ծօքթ. Քրոսին թեւը մտած, երեք մարդոց խմբակին քսուելով կ'անցնէր: Լէսթրանտի հեգնական նայուածք մը նետելով՝ նշան ըրաւ Էքթորի՝ իրեն մօտենալու:

— Ծոնեցէ՞ք, պարոն, շատ բարձրահասակ էք, իմ մըտերմիկ խօսքերուս համար:

Եւ շրթունքները՝ երիտասարդին ականջին.

— Էրոս վերջնականապէս զգետնելով տիկին Թլսէլլին, ձեր պղտիկ հարսն է, որ պիտի երգէ: Սաստիկ կը վախնայ. մի՛ ձգէք այդ անկիւնը, անոր խանդը տաքցնելու համար: Մաքսիմ տը Շանթէլ, ձխակողմը կը պաշտպանէ, Մոտի հրամանին տակ. պատրաստ է սատկեցնելու զայն՝ որ չպիտի ծափահարէ:

— Վստահ եղէք իմ վրաս, պատասխանեց Էքթոր:

Ձեռքի շարժուածելով մը. նա, օդին մէջ գծեց, երիտասարդ աղջկան ուսամերկութեան շրջագիծը:

— Շատ աղէկ, պատասխանեց ժպտելով, շատ ձեւաւոր:

— Անշնորհք, յարեց ժազըլին. ամէնէն քնիհար մասս է, սիրելիս: Հարցուցէք Թօքթօրին:

— Օրիորդ ժազըլին տը Ռուվոը, իմ այն յաճախորդուհիներէս է, որ զիս... կը յուզէ ամէնէն աւելի, յարեց ամերիկացին, իր մոխրագոյն մօրուքին տակէն:

— Հէ՞. կը տեսնէ՞ք, Թօքթօրին սէրը: Թէեւ ամէնուն ալ ասանկ կ'ըսէ:

Նէ, չարածձիի մը ոստուժով հեռացաւ, ձգելով Քրոսը: Ծօքթօրը, վարժ ասանկ բաներու, կեցած տեղը մնաց, և Էքթորի ձեռքը սեղմելով առանց այլեւայլի նախարարական հաւանական տագնապի մը մասին տեղեկութիւններ ուղեց: Բայց, դարեւանդակին վրայ կը յառաջանար Էթիէնէթ Տիւռուա, նշանաւոր դաշնակահար՝ Սփիցէրի թեւը մտած: Տակաւին երգելու չսկսած, զինքը ծափահարեցին, այնքան գեղանի երեւցաւ իր քրինոլին հագուստին տակ, իր սիրունիկ դէմքով, եւ զանգուրներով: Յուզումէն վարագոյն՝ իր կիթառը լարեց Սփիցէրի դաշնակին հետ. յե-

— Ո՛հ, Մոտը, յարնց Լէսթրանժ: Ձեզ պէս բարեկեցիկ եւ խոշոր պարոն մը պէտք է, որ զնէ առնէ իր երկու պահակներու ձեռքէն: Ձանոնք դիտեցի՞ք: Հետաքրքրական է զանոնք տեսնելը:

— Այո՛, ըսաւ Էթթոր լրջօրէն: Տեսնելու հետաքրքրելիք: Բայց կը վախնամ տրամէ մը:

Դրամատէրը ազազակեց.

— Տրամ մը: Այսօր կա՞յ ատանկ բան մը՝ ընկերութեան մէջ: Այլեւս կիրք չկայ, միայն ախորժակ կայ. նախանձութիւն չկայ, այլ միայն դժկամակութիւն:

— Ատիկա ձեր մտածո՛ւմն է, պարոն, հարցուց էթթոր շատ լրջօրէն:

— Բայց... այո՛, ըսաւ դրամատէրը հեզնելով:

Խմբակներու մէջէն, տիկին Իւսէլի կ'անցնէր, խմաններու ծուլութիւնը թօթուելով:

— Օ՛ն, ի սրահ, շուտով, շուտով: Որ. Անպոը պիտի գեղգեղէ դարավերջիկ երգեր, զորոնք կ'երգէր դքսուհիին տունը: Շո՛ւտ. Հրաշալի է: Կը սկսի: Շուտով եկէ՛ք:

Արդարեւ, դաշնակը կը սկսէր հնչել վերստին հալին մէջ: Իւրաքանչիւրը իր տեղը գրաւեց: Տիկին Իւսէլի ընկերացած մանկամարդ երգչուհին սկսաւ գեղգեղել այն երգերէն՝ որոնք հինգ տարի, Բարիդի նուագային զբօսանքը եղած էին: Դքսուհիին բարեկամուհին կ'երգէր, հետեւելով սովորութեան, ուղիղ կեցած եւ անողոք, առանց շարժուածելի, անանկ որ եւ ոչ մէկ մկանունքը կը շարժէր իր դէմքին վրայ, հազիւ երերցնելով շրթները:

Ինչպէս որ պատշաճ էր, ծափահարեցին: Տիկին Իւսէլի նշանը տուաւ: Օր. Անպոը խոնարհութիւն չըրած, հանդարտութեամբ նստեցաւ:

Միջնարարի դադարն էր: Մոտ եւ ժազըլին օգուտ քաղեցին անցնելու համար գդուշութեամբ աթոռներու շարքերէն, կանչելով երիտասարդ աղջիկները՝ որ ելան եւ անոնց հետեւեցան:

— Ի՞նչ է այս, հարցուց ասթթ. Քրոս, տիկին տը Ռըվէրսիէի, քովիկը նստած:

— Աղջիկները դուրս կը հանեն: Ընկերութեան մէջ, հիմա սովորութիւնը այսպէս է, երբոր Պոլուանի եւ Յէլիա Մալէի մէջ երգել կուտան զօրեղ կտորներ: Աւելի յարմար է:

— Ստուգի՛ւ, մրմնջեց Քրոս:

Խնդաց, տեսնելով անոնց դուրս ելլելը, պզտիկ սիրելի խանգարուածները, բոլորն ալ իրեն յաճախորդուհիները եւ մտերմուհիները: Իրենց բազմագոյն տեսականութիւնը կ'առաջնորդուէր տան երկու աղջիկներուն ընթացքէն. քանի մը մարդիկ, երիտասարդ կամ հասուն, կուսական Փլիոթներով զբաղողներ, կ'ընկերանային անոնց. Լէսթրանժ, էթթոր, նկարիչ Վալաէլ՝ որ Տոռա Քայլէլի սեւ սարսուռներուն մէջ կը սահեցնէր լպիրշութիւններ:

Եւքը ողջունուեցաւ խնդալներով եւ ծափահարութեամբ: Հեռանալէ առաջ, բեմին վրայ՝ ժազըլին ազազակեց.

— Եւ հիմա իրարու մէջ պատմեցէ՛ք ձեր սոսկումները: Մեր անմեղութիւնը ապահով է:

Մոտէն առաջնորդուած, մուսըլին շրջազգեստներու խնդամուրիկներու խումբը, ընկերացած քանի մը սեւ հագուստներով մարդոց, մտաւ այն պզտիկ սրահը, ուր քիչ առաջ. Պորոտինի սէմֆօնիին ատեն, Լէսթրանժ եւ ժազըլին իրարու միացած էին: Տասնըհինգի չափ էին. տասը՝ գեղանի, միւսները, մէկ երկուքէն զատ, բաւական վայելչագեղ, բաւական սիրագրգիռներ, որսալու համար փաղաքուհները: Եւ ըլլալ հոն, փակուած այնպիսի մարդոց հետ՝ որ շատ իրիկուհիներ, իրենց թեթեւ առաջարկներ ըրած էին, այո՛, կը դերագրգուէր իրենց ուղեզը, փափաք կ'արթընցնէր իրենց մէջ, անձնատուր ըլլալու այս մարդոց, իրենց հաւատարիմները, եւ հպարտ էին յափշտակած ըլլալուն համար զանոնք, ամուսնացեալ կիներու ձեռքերէն:

Մոտ, թեւը առած էր ժամն տը Շանթէլը, որ լոյսերու, նուագի եւ քիչ մըն ալ շամբանիայի ազգեցութենէն զինովցած, հակառակ իր գաւառիկ արդուզարդին, աչքի կը զարնուէր իր գեղեցիկ հասակով, թուխ մազերուն բե-

նով, սպիտակ մորթովը եւ սուրբի մեծ աչքերովը, ժանն պարզօրէն հարցուց.

— Ինչո՞ւ հաժար չեն ուզեր, որ սրահին մէջ մնանք ի՞նչ պիտի ընենք հոս:

Վայպէլ, անմիջապէս ձայնեց.

— Ելեք տրական լոյսերը պիտի մարին. պարոնները իրենց ծունկերուն վրայ պիտի առնեն կիները, եւ ըստ հաճոյս զանոնք պիտի ընդգրկեն: Փարիզ, ընկերութեանց մէջ, ասիկա սովորական բան մըն է, բայց պէտք է ամուսնացած ըլլալ, օրիորդ:

— Կր կատակէ, սիրունիկս, ըսաւ Մոտ, համբուրելով աղջկան յանկարծօրէն կարմրած ճակատը, ձշմարտութիւնը այն է որ, նուագախառն երեկոյթներ չեն տրուիր առանց արկօթերէն երգերու եւ ստուգիւ, աղջիկներու համար, ն ը աւազ նեղացուցիչ է. անկից բացակայ ըլլալը.

— Բայց բոլորովին արկօթային չէ որ պիտի երգուի, դիտել տուաւ ժիւլիէթ Ավրըզաք, որ ժիւլիէնէն բաժնուելուն՝ դժգոհ էր: Սէսիլ ինծի ըսաւ ծրագիրը. էլօիզ, Ապէլար եւ Ռոնսարի քերթուածները, Ասոնք բոլորը գոց գիտեմ:

— Ես ալ, ըսաւ Մարթ տը Ռեվէրսիէ, եւ միւսներն ալ խնդալով յայտնեցին.

— Ես ալ, Ես ալ:

— Ես, ըսաւ շատ մանկատի աղջիկ մը, տիկին Տիւքլէրքի քոյրը, ես գիտեմ Ռոնսարի երգերը, բայց եղբայրս չէ թոյլատրած ինծի երգելու. էլօիզը եւ Ապէլարը: Շատ արտառոց բան մը ըլլալու է:

— Կ'ուզէ՞ք որ, ձեզ երգեմ զայն, ես, հարցուց ժազըլին:

— Այո՛, այո՛:

— Լա՛ւ ուրեմն, մտիկ ըրէք:

Նէ ցատկեց զաշնակին աթոռակին վրայ եւ սկսաւ անմիջապէս, անանկ որ, Մոտ, դժգոհ, չկրցաւ արգիլել զայն:

Պատմողի յեղակարծ տաղանդով մը՝ բոլոր հատուածները մանրամասնեց, մարդերը զայն կը ծափահարէին ա-

ւելի քան շիտթած. ցանկութեան թեթեւ փրփուրը՝ բարձաբացած զանոնք պատմող անարատ շրթունքներու եւ զանոնք ընդունող երիտասարդ աղջիկներու ականջներուն հակադրութենէն:

Անոնք եւս, կէս-կոյսերը, մեծագոյ խնդուքներէն ցընցուած, լարչութեան այդ փրփուրէն գինովցած, կ'իյնային այրերուն վրայ:

Լիւկ Լէսթրանտ, աչքերը մաշած եւ փայլուն, մօտեցած էր ժանն տը Շանթէլի. իւրաքանչիւր ակնարկութեան արդիւնքը գաղտագողի կը դիտէր այդ մտածկոտ եւ անարատ դէմքին վրայ. բայց ըմբռնումի եւ հաճոյակատարութեան միեւնոյն ժպիտը կ'փթթէր այդ մանկան շրթներուն վրայ:

— Աղտո՛տ մարդը, մտածեց էքթոր, որ զայն կը դիտէր կը նշմարէր առաջին անգամ, ինքք, իր ընկերութեան եւ իր ժամանակի մոլութեանց ներողամիտ սկեպսիկը, արուեստով, կուսապիղծ, որովհետեւ պատիժի՛ն ըսպառնալիքին տակ եղող առողջութիւնը, էր օրողութիւնը հոգիի մը՝ որ խորհրդաւոր կերպով, անզգալապէս, իր համար սիրելի եղած էր:

Ժազըլին վերջին տունը լմնցուց ծափահարութիւններու մէջ. Լէսթրանտ հարցուց Օր. տը Շանթէլի, իր ակնարկով անոր աչքերը զգուելով.

— Ի՞նչ կը խորհիք, օրիորդ, այս վիպերգին վրայ:

— Բայց, յարեց ժանն, միեւնոյն պարզմտութեամբ, հրապուրիչ է. ժազըլին շա՛տ աղէկ կ'երգէ:

— Կարելի չէ ըսել, աւելի սրամտութեամբ, բաներ ասկից աւելի... անպատշաճ, անանկ չէ՞:

Ժանն բոլորովին վարդագոյն դարձաւ, առանց հասկընալու թէ իրմէ ի՞նչ կ'ուզուէր. գուշակեց անոր գէշ վրտադրութիւնը եւ նպատակը՝ որ էր իր մտածումը տանիլ զէպի արգիլեալ ճամբաները: Եւ ասիկա իրեն զգացուց թէ ճշմարիտ երիտասարդ աղջիկ մը, սիրային առաջարկութիւններու հանդէպ պէտք է ունենայ վախը: Միեւնոյն ժամանակ, իր թեւերուն եւ պարանոցին մերկութիւնը ա-

մօթ մը համարեց իրեն համար, այդ մարդոց աչքերուն զի-
մաց. այդ ամօթխած մերկութիւնը գէշ ազդեց իր վրայ:
Բնազդօրէն, օգնութիւն, ապաստարան փնտոեց, բայց իը
չուրջը նաչելով, առաջին անգամ գիտցաւ, թէ ո՞ւր էր:
Կուսական արդուզարդերով եւ սեւ հագուստներով պճնուած
այդ խումբերուն ի՛նչ ըլլալը հասկցաւ, ըմբռնեց հազիւ
ծածկուած շօշափուփները: Յայտնութիւնը յանկարծական,
չանթահարիչ եղաւ. քրիստոնեայ կուսին զարթնումը:

Լէսթրանժ, այդ յուզումի ազգեցութենէն արհամար-
հուած, կը շարունակէր խօսիլ, երգուած լարչութեան նիւ-
թը կը փոխէր, որովհետեւ ժաննի տգիտութեանը պատ-
ճառաւ վտանգաւոր կը համարէր կրկնելը: Եւ սակայն,
քանի մը յարգալից փոխանցումներէ յետոյ, վերստին
կ'անդրադառնար այդ կտորին վրայ, զոր գոց գիտէր, եւ
իւրովի անսխալ կը դատէր, բարեկամութեան եւ հիացումի
ձեւերուն տակ՝ հարուածել մանկամարդ աղջկան ֆիզիքա-
կան զգայասիրութիւնը եւ ջիղերը:

— Տեսէ՛ք, կ'ըսէր, փարիզեան ընկերութեանց յարա-
բերութիւններու անգթութիւնը: Այս իրիկուն իրարու պի-
տի հանդիպինք եղեր. դիպուածաւ կը խօսինք բարեկա-
մաբար. վայրկեան մը կ'երեւակայեմ որ միայն ինձի կը
վերաբերիք, դուք այնքա՛ն գեղանի եւ նուրբ. կը գուշա-
կեմ գորովի քաղցրահամ էակը՝ որ պիտի ըլլաք օր մը...
եւ զիրար կը ձգենք, դուցէ անգամ մըն ալ զիրար չտես-
նելու համար: Եւ ուրիշ մը պիտի ըլլայ որ պիտի ունենայ
այդ գանձը, այդ գեղեցիկ աչքերը ուրիշի մը համար պի-
տի քօղարկուին, պիտի ունենայ ձեր ճակատը, ձեր շըր-
թունքները եւ ամէն ինչ որ կը գուշակեմ ձեր մէջ, որով-
հետեւ կը տեսնեմ:

— Պարո՛ն, մըմնջեց ժանն:

Նէ կը զգար Լէսթրանժի նայուածքները՝ որ զինքը կը
հանուեցնէին, իր շըջադեատը եւ չփակը կը բռնաբարէին:
Քիչ մնաց պիտի մարէր. եւ նա կը շարունակէր, ինքն ալ
գիտովցած եւ գերի՝ իր ծուղակին:

— Այդ մարդը ես չպիտի ըլլամ... բայց ոչ ինչ կրնայ

արգիլել զիս, որ չխորհիմ ձեր վրայ: Չեզի կը նայիմ եւ
չձեզ իմ մէջս կը պահեմ եւ վստահ եմ իմ երազիս վրայ,
որ ձեզ պիտի կրնայ երեւցնել իմ մօտս, երբոր ուղեմ: Չեր
մէջ եղած բոլոր պատուական բաները իմս պիտի ըլլան այն
ատեն, եւ ձեզ չպիտի ըլլայ եւ ոչ մէկ բան խորհրդաւոր՝
զոր չհոտուըտամ:

Այդ խօսքը, որքա՛ն աղջիկներու չէր ըսած. վստահ՝
զանոնք զգուանքի մը նման սարսուելու: Բայց այս անգամ
ժամանակ չունեցաւ լմնցնելու, էքթոր Լը Թէսիէ, յա՛ւ-
կարծ անոնց մօտենալով՝ խօսքը կտրեց:

— Կ'ուզէ՞ք որ, օրիորդ, ձեզ տանիմ տիկին տը Շան-
թէլի մօտ:

— Ո՛հ, այո՛, պարոն, գոչեց, շնորհակալիքով մը՝
նայուածքին մէջ:

— Բայց, սիրելիս Լը Թէսիէ, զիտել տուաւ Լէսթ-
րանժ: էքթոր անոր նայեցաւ ճակատ առ ճակատ:

— Քիչ մը յետոյ. ձեր տրամադրութեան տակ եմ, սի-
րելի՛ս:

Այս տեսարանը կորսուեցաւ երիտասարդ աղջիկներու
աղմկարար եւ զուարթ մեկնումի ֆրու-ֆրուին մէջ: Նուա-
գահանդէսը լմնցած էր. աթոռները կը շտկուէին պատերու
երկայնութեանը, պարի համար. բազմութիւնը պիւֆէ կը
վազէր: Ժանն, շատ յուզուած՝ խօսելու համար, մտաւ էք-
թոր Լը Թէսիէի թեւը. երկու օրահներէն անցան. հալը
հասան: Մաքսիմ անոնց քով եկաւ:

— Գիտե՞ս թէ ո՛ւր է մաման, հարցուց աղջիկը:

— Տիկին տը Ռուվոբի սենեակն է: Քիչ մը հանգստա-
նայ: Կ'ուզե՞ս որ հոն տանիմ քեզ:

— Պ. Լ. Թէսիէ զիս պիտի առաջնորդէ:

Նրբանցքին մէջ՝ վայրկեան մը առանձին գտնուեցան:

— Շնորհապարտ եմ ձեզ, պարոն, ըսաւ ժանն. իր
մեծկակ աչքերը բարձրացնելով ընկերովը վրայ: Չեզ ազատ
կը թողում, սրտանց շնորհակալ եմ ձեզ:

Չեքքը երկնցուց, մեղմօրէն. էքթոր թեթեւ համբոյր
մը դրաւ թիազոյն ձեռնոցին ծայրին վրայ: Երիտասարդ

չառագոյն ծոծրակին որ, մարդ չէր կրնար զանազանել, թէ արդեօք իր շարժուձեւը խօսք մը թէ համբոյր մը կը ժածկէր: Եւ առջեւնէն անցնելու ժամանակ՝ կը լսուէր կողորդալի խնդալը աղջկան. Տատրակի մը նման: Վալպէլ, անհաւատարիմ Տորա Բալվէլի, կը փաթթուէր Մարթ տը Ռըվէրսիէին, տժգոյն՝ մնորամոմէ կոյսի մը պէս: Երկայն ձերմակ շրջազգեստը գոգցես տախտակամածը միայն կը շօշափէր. շուշանի այնքան իր շնորհալիութիւնը, նուրբ թռիչք մը ունէր: Փոքրիկն տիկին Տիւքլէրք, Հանրի էսբիէնի հետ, շատ քիչ հոգեբանական, մարմին առ մարմին դիրքի մը մէջ կը պարփակուէր, էքթոր, քովտի կեցած չպարողներու հետ, դրան սեմին կրթնած եւ քիչ առաջուան ցասուժը մոռցած, կամահաճօրէն կը դիտէր այդ սուրացող զոյգերը, կիներէն անջատուած, հետաքրքիր մանաւանդ կուսական կրծամերկութեան եւ շրջազգեստներու թարմ գոյներուն: Կը դիտէր անոնց թրթռացումը իրենց քսանամեայ շնորհալիութեան մէջ: Ընկերութեան այդ պղզտիկ բարեկամօհիններուն կրծելի թարմութիւնը զինքը կը զուարճացնէին. աշխարհիկ մեր ցանկութեանց ամէնէն ներգործող պղպեղը: «Ահաւասիկ անոնք են», կը խորհէր գօհունակօրէն:

«Երկու ժամէ ի վեր՝ նուազը չփեց, չփչփեց իրենց ջիւղերը. Իւսէլլիի սիրաբորը պողտուքները, էթիէնէթի ըզգայնական ըրմանոնները, ուրիշի մը համարձակախօսութիւնները՝ ժագըլինի կողմէ արձագանդուած, եւ մանաւանդ կիսաձայն առաջարկները, այրերու յայրատ նայուածքները գանոնք ի քարձ վարեցին: Ամէնքն ալ պատրաստ են, կողորդը՝ չոր, աչքերը՝ տամուկ, ափը՝ ջերմին. վալսը կը հասնի ժամանակին, տալու համար իրենց սիրելի փոքրիկ զգայարանքներու՝ արժանաւոր գոհացում մը: Դո՛հ մնացէք իմ սիրունիկներս»:

— Ինչպէ՞ս էք, սերելի բարեկամ: Այս բազմութեան մէջ, երկու ժամէ ի վեր ձեզ կը փնտռեմ, առանց կարենալ գտնելու:

Մաքսիմ տը Շանթէլն էր, էքթոր անոր ձեռքը սեղ-

մեց ժպտելով:

— Զիս փնտռած ըլլալնուդ վստա՞հ էք: Ես, ձեզի շատ անգամներ նշմարեցի, հաշիւ ըրի ձեզ անհանգիստ չընելու:

— Ա՛հ, բարեկամս, յարեց Մաքսիմ, առանց ինքզինքը արդարացնելու. որքա՞ն երջանիկ եմ: Եկէ՛ք:

Զայն քաշեց. իր ուրախութիւնը ըսելու պէտքը իր շրթունքներուն վրայ բառերը կը յորդեցնէին:

— Երէկ առտու եկայ Փարիզ, ըսաւ, եւ կէսօրէ յետոյ Ֆլէպէր պողոտան վաղեցի: Առանց գիտնալու թէ ինչո՞ւ, անուշիօրէն անհանգիստ էի, տխուր: Ինծի կը թուէր թէ ներս համար ոչի՛նչ էի, թէ զիս պիտի ընդունէր օտարականի մը պէս, կամ երբե՛ք չպիտի ընդունէր: Կը վստահեցնեմ ձեզ թէ, քիչ մնաց, որ ներս չպիտի մտնէի, եւ յանկարծ յետ ընդ կրունկս պիտի դառնայի:

— «Ներս չմտնել, ձամբէն ետ դառնալ», խորհեցաւ էքթոր՝ որ կը դիտէր Մաքսիմը քիչ մը նախանձուտ գըթութեամբ մը: Բայց կիրքը կը չքմեղէ ամէն բան:

— Այսուհանդերձ, զանգակը քաշեցի: Ներս մտայ. սիրելիս, գտայ նոր Մոտ մը, փոխուած իմ բացակայութենէս ի վեր՝ ինքզինքին պարտադրած առանձնակի կեանքէ մը: շատ պարզ եւ բարի: Ընդունեց զիս, եւ տիկին տը Ռուվոըն ալ, ու նոյն իսկ պզտիկ բզէղը, ժագըլին, տունին պզտիկը: Պարահանդէսի պատրաստութեամբ զբաղած էին. զիս ալ գործի լծեցին. սանդուխներուն վրայ մագլցեցայ, գամեր գամեցի, գորգելը շտկեցի: Ա՛հ, որքա՞ն երջանիկ էի: Երկար չէինք կրնար խօսիլ, երբե՞ք առանձին չըլլալով, բայց ամէն անգամ որ իր աչքերը կը փնտռէի, անոնց կը հանդիպէի այնպէս, ինչպէս որ կը սիրեմ. աչքեր՝ զոր կը զգամ ինձի համար, լուրջ, անուշ:

«Մոգուհի՛ն, մտածեց էքթոր, նէ փոխեր է Շանթէլը: Վիպային հերոսէն՝ կնամեծար վիժակագործ մը ինչ որ է. առաջ աւելի շատ կը սիրէի զինքը, իր կատաղի նախանձութեամբը:

Եւ բոլորովին բարձրաձայն.

— Բայց, յարեց, ծանր խնդիրներու վրայ խօսեցա՞ք :
Դո՞նչ պատասխանեց : Որովհետեւ, կը կարծեմ թէ ձեր կողմանէ որոշում տուած էք :

— Իմ կեանքս անոր կը վերաբերի, ինչ որ կ'ուզէ անանկ թող ընէ, աշխարհի մէջ, անկէ զատ եւ ոչ մէկը Էլիտի սիրեմ : Երէկ խուսափեցաւ :

— Վայրկեանը գէշ ընտրուած էր, յարեց էքթոր ժպտելով, Պէրլուտոի պաշտօնետներու միջեւ, սանդուխի մը վրայ մագրցած եւ մուրճը՝ ի ձեռին :

— Անշուշտ նէ մտածեց այդ բանին վրայ, այսօրուան, այս ժամուան թողուց մեր խօսակցութիւնը : Բայց երեկոյթին սկզբնաւորութենէն ի վեր, հետս այնպէ՛ս մը կը վարուի, որ ստուգիւ... :

Ընդհատեց : Նուագախումբին սղմուկին մէջ իսկ, տեսակ մը խորհրդաւոր դատարկ մ'առաջ եկած էր : Տախտազամածին քուրուտներու ձայնը քիչ քիչ կը լռէր : Էքթոր եւ իր բարեկամը կը դիտէին :

Մոտ տը Ռուվոր եւ Ժիւլիէն տը Սիւպէրսօ պարտաբրան կը մտնէին, վալսը կը գեղգեղէր վայրկեանի մը մէջ, հետաքրքրութիւնը, հիացումը, զոր անյաղթելիօրէն այս երկու էակները յառաջ կը բերէին, մանաւանդ երբ զանոնք միասին կը տեսնէին, յայնպեցած էր միջոցը. անոնց շուրջը, կարծես բազմութիւնը աւլած էին, եւ այժմ, գրեթէ առանձինն, նուագախումբին մօտիկ, հալին մէկ անկիւնը, կը դիտէին անոնց վալսեր :

Էքթոր դիտեց Մաքսիմը, ասիկա բան մը չէր ըսեր, բայց իր այտերը յանկարծօրէն մոխրագոյն կը դառնային :

«Ճշմարիտ Շանթէլ» չէ մեռած դեռ, խորհեցաւ Լըթիտիէ : Ի՞նչի այսպէս աւելի հաճելի կը թուի. կատաղութիւն եւ նախանձ :

Մաքսիմի կատաղութիւնը ինքնիրմով կը բացատրուէր. երկու վալսողները կարծես ծնած էին մէկգմէկու համար, կը զգացուէր թէ պէտք էին զիրար սիրել : Իրենց վալսը սակայն ֆոնէք էր, կասկածելի գիրկընդխառնումներ չուէին. հազիւ իրար շօշափող վալսեր, ինչպէս քիչ առաջ կը

պարէին Ժազըլին Տօրա, Ժիւլիէթ Ավրորաք, եւ Ռըվեր-սիէները : Սիւպէրսօ եւ Մոտ կը պարէին քիչ մը իրարմէ հեռու, իրարմէ բաց. իր թեւը անոր տուած՝ Մոտի մէջքը միայն կը շօշափէր : Սակայն իրենց մէսթերուն համաչափութիւնը, ներդաշնակութիւնը այնքան կատարեալ էին, որ կ'երևուէին իրարու պլլուած, պզտիկ հպումներով, նման այն թեւաւոր զոյգերուն որոնց աշնանամուտին թռչիլը կը տեսնուի իրարու միացած, հազիւ իրարու զպչելով, եւ միասին օրօրուելով օդին մէջ : Իրենց շրթունքները չէին երերար, եւ սակայն իրարու հետ կը խօսակցէին :

— Գո՞ն էք ինձմէ : կը հարցնէր Սիւպէրսօ, հեզնական հանդարտութեամբ մը :

— Ո՛հ, կէս մը միայն գո՞ն եմ :

— Կը դիտէի ձեզ, սակայն անհանգիստ ընել չուզեցի :

— Կախերես տղայ մըն էք, կը կեղծէք մեկուսացում. կը կարծէ՞ք թէ չեն նշմարեր զայն :

— Ինչպէս : Պզտիկ Ավրորաքը երբեք չձգեցի :

— Նէ քու օձիքդ չձգեց. աչքերով քեզ կ'ուտէր, խեղճը, նէ եւ միւս կիներն ալ : Իւսելլին կը շուտազէր բեմին վրայ, որովհետեւ այս իրիկուն շատ գեղեցիկ էք :

Նէ զայն զգուեց սիրահարի ակնարկով մը, այնպէ՛ս որ արիւնի թեթեւ քօղ մը դրաւ Ժիւլիէնի տոգոյն դէմքին վրայ : Զնէ սեղմեց աննշմարելիօրէն իր վրայ :

— Կը պաշտ մ քեզ, մրմոսց. իմ օկեանքս ձերն է, քրէք զայն ինչ որ ձեզի հաճելի է :

— Ու ես, կը սիրեմ քեզ, քե՛զ կ'ուզեմ, յարեց նէ. թո՛ղ ինձ գործել. նախանձոտ մի՛ ըլլար : Ամէն անյամ, որ պիտի փորձուիս, խորհէ՛ Պէրն փողոցի մեր սենեակին վրայ : Բայց գգո՛յ՛ կաց : Միշտ կը տեսնեն :

Իրենց ամէնէն խայթող գգուանքներու վերակոչումէն — նոյն իսկ այդ բերանէն՝ որ իրեն կը հեզուը ջղայնութիւն եւ մոռացում — վայրկեան մը կորուսած էր ինքզինքը. իր թեւը սեղմած էր Մոտի մէջքը, իր սիրահար : Երկու վայրկեան մը միայն տեսեց, անմիջապէս կեցաւ : Վալսը կը լմնար :

— Տեղս տա՛ր զիս, ըսաւ Մոտ: Վաղը զիրար պիտի տեսնենք, եթէ էթիէնէթի մայրը աւելի չծանրանայ: Այստեղէն մինչեւ հոն, մտածէ իմ շրթունքներուս:

Կանգ առի՛, տեքեւազարդ սրահին մօտիկը՝ ուր մայրերը կը գահակալէին: Ժիւլիէն ողջունեց իր պարուհին՝ որ պզտիկ խոնարհութեամբ մը պատասխանեց: Ոչ ոք, նոյն իսկ խոհականն էքթոր, նոյն իսկ Մաքսիմ՝ որ նախանձէն միշտ արժուէ կը հսկէր, չկասկածեցաւ, թէ յաջորդ օրուան համար, այդ պաղ-զաւակ մարդը եւ այդ վայելչագեղ աշխարհիկ էդը, իրարու խօսք տուին:

Մոտ հագիւ քանի մը վայրկեան մնաց տիկին տըՌուվուրի քով. Բաքիլի սկզբնաւորութիւն մը կը հրաւիրէր զոյգերը. առանձին, անցաւ իւրէն եւ հասաւ Պ. տը Շանթէլի քով:

— Կը հաճի՞ք թեւերնիդ ինծի տալու, պարո՛ն, ըսաւ անոր, եւ զիս քանի մինչեւ յարակից սրահը: Պէտք ունիմ ձեզի:

Վարանեցաւ, բայց հնազանդեցաւ եւ առանց պատասխանելու, թեւը տուաւ: Հեռացան, խմբակները ձեռքեցին եւ սրահը հասան, Ժագըլինի սենեակին կիցը, պզտիկ տեղ մը: Բայց հո՛ն, Մոտ Մաքսիմի ըսաւ.

— Ո՛չ, աւելի հեռու երթանք. ձեզի խօսելիք ունիմ:

Ինք առջեւէն, նրբանցքէ մը անցաւ, մինչեւ որ իր սենեակը հասաւ: Երեք պատուհանով, ընդարձակ սրահ մը, կահաւորուած հաղուադիւտ եւ հրաշալի կանանչ լաքե կարասիներով, քանի մը ցնորական մեծ ծաղիկներով, նետուած հոս հոն, գեանին վրայ:

Մաքսիմ անոր հետեւեցաւ, սիրտը՝ յուզումէն ճընշուած: Տան այդ անկիւնը, պաշտելի կուռքին մատուռն էր. Մոտի անձնական անուշահոտը, այնքան թափանցիկ, հոտ մը յամպարի եւ պտերի, խոնուած իրեն սիայն ծանօթ իսկութեան մը, հոն կը խտանար եւ իր մօրթէն ու մազերէն դուրս կը բուրէր: Հո՛ն կը հագուէր, հո՛ն կը պառկէր, կը քնանար: Անմիջապէս գլխու տաքօրինակ պրտոյտով մը չարչարուեցաւ, ինչպէս գինիով արբած մը՝ երբ բաց օդին կ'ելլէ:

Քիչ առաջ իր մէջ արթնցած նախանձը տեղի տուած էր:

Մոտ պարզօրէն ըսաւ.

— Հոս հանդիստ պիտի ըլլանք. ոչ ոք պիտի գայ: Մօրս եւ Ժագըլինի նման, իմ առանձնայատուկ սենեակս, չեմ յանձներ օտարներու, նոյն իսկ պարահանդէսի գիշեր մը:

Այս բառերը, որ աղջկան մտածման մէջ, Մաքսիմի որոշ տեղ մը կուտային, սփոփեցին վերջնոյս սիրտը: Երբ տեցաւ օթոռի մը վրայ, բարձիկներով ծածկուած. Նէ ալ նստեցաւ ուրիշ օթոռի մը վրայ: Հաղարումէկ կնոջական արդուզարդի առարկաներով զարդարուած սեղան մը միայն կը գտէր զիրենք. արծաթեայ լուսամփոփով լամբար մը, անկողնոյ՝ մօտիկը դրուած փերթակալի մը վրան, կը լուսաւորէր նեղ շրջանակ մը, սենեակին մնացորդ մասը թողլով մթնշաղի մէջ.

— Կը տեսնէք որ, խօսքս կը բռնեմ, ըսաւ Մոտ: Ձեզ խոստացած էի գլուխ-գլխի տեսակցութիւն մը ունենալ. հոս հանգիստ ենք, եւ եթէ ցարդ ուշացանք, մի կարծէք թէ քմահաճօքիս համար էր: Ձէի ուղեր, ձեզի խօսիլ, մեզի վերաբերեալ ծանր բաներու վրայ, ընկերութեան մէջ իրարու հանդիպելէ առաջ:

— Բայց, ընդհատեց Մաքսիմ:

— Թոյլ տուէք ինքզինքս բացատրել, զիրար շատ տեսած չենք, բայց որովհետեւ ձեզ լաւ ուսումնասիրած եմ և շատ մտածած եմ ձեր վրայ, ինձ, կը թուի թէ, լա՛ւ կը ճանչնամ ձեզ: Կը կարծէք որ, զիս կը սիրէ՞ք:

— Ո՛հ, Մոտ:

— Նախադասութիւնս ձեզի չյարմարի՞ր: Կը վրոխեմ. զիս կը սիրէք ձեր ուզած կերպով, այսինքն քինախնդրութեան շիմքով մը ինծի դէմ, եւ հակառակ այն հակուածին՝ որ զձեզ կը բերէ գէպ ինծի: Մի՛ ըսէք ո՛չ: Կը կատարիք բարիգուհի մը, աշխարհիկ մը սիրելնուդ. բաւական է որ զիս տեսնէք խոսնուած ընկերութեան մէջ, որպէսզի արթննայ այդ ոխը: Քիչ առաջ, երբ մանկութեան բարեւ

կամի մը հետ կը պարէի, անգամ մը եւս կասկածեցաք ինձմէ:

Այս պղտիկ յանդիմանութիւնը Մաքսիմի գլուխը ծռել տուաւ, ներողութեան անարժան յանցաւորի մը պէս երևցաւ, եւ զղջումը որքա՛ն անուշ թուեցաւ իրեն:

— Կը կասկածիք ինձմէ, որովհետեւ կը վախեմ հրա-
ւիրեալներէն մէկուն հետ, պարահանդէսի իրիկուն մը, մեր տան մէջ: Ու տակաւին, իմ վրայ եւ ոչ մէկ իրաւունք ունիք: Եթէ այդ իրաւունքը ձեզի տամ, ինչպէ՞ս պիտի գործածէիք զայն: Կը հասկնաք, թէ ինչո՞ւ համար կը վա-
րանիմ ձեզ ընտրելու իբր տէրս:

Մաքսիմ ցած ձայնով պատասխանեց.

— Կը սիրեմ ձեզ, այնքան ուժով որ գաղափար չու-
նիք: Բայց կը սոսկամ ձեզ շրջապատող ընկերութենէն:

— Ընկերութիւնը՝ ուր կ'ապրի՞մ: Աղէկ գիտէք, որ զայն ի նկատ կ'առնեմ իր արժէքին չափ: Բայց հոս, Բու-
աթոսի աւատապետական երկրի մը մէջ չենք, Բարիզ ենք, ուր միայն Բարիզեան ընկերութիւնը կը տեսնեմ: Յան-
ցանքը ի՞մս է, կը հարցնեմ ձեզ, եթէ այդ ընկերութիւնը խառնուած է եւ խառնուրդը չփոթ, պզտոր է: Անշուշտ, անգամ մը որ ամուսնանամ, իմ ապրելու եղանակս կա-
խում պիտի ունենայ ամուսինէս, ինչպէս հիմա կախում ու-
նի ընտանիքէս: Բայց չեմ ուզեր որ այդ մարդը խորհի ինքզինքը վտանգելու մասին, ինծի հետ ամուսնանալով: Ի՞նչ կ'ուզէք: Ասիկա, թերեւս յիար հպարտութիւն մըն է. կ'ուզեմ կարգուիլ, աչքերը գոց: Ինծի կը թուի թէ՛ կ'արժեմ ատիկա:

Այս վերջին բառերուն վրայ կանգ առած էր. թէ իր վիրաւորումը արժանապատուութեան, այնքան անգամներ կրժուած հեղնական կասկածներով, անկեղծ էր: Մաքսիմ զայն տեսաւ այնքա՛ն մեծամիտ, որ զգաց նաեւ իր փոք-
րութիւնը. նշմարեց, որ թերեւս զայն պիտի մարուսէր եւ ա՞յս մտածումով՝ յուսահատութեան զարհուրելի կայծակը ձեղքեց իր սիրտը, եւ հասկցաւ թէ, որքա՛ն անհրաժեշտ էր նէ իրեն համար:

Իր կարգին ոտքի ելաւ և թոթովեց.

— Բայց երբե՛ք չ'ըսի եւ չ'խորհեցայ ատանկ բան մը. Կը յարգեմ զձեզ և կը հաւատամ ձեզի: Խոնարհաբար իը պա-
ղատիմ, որ զիս չ'մերժէք:

— Բառ մ'եւս, (նրմիջեց Մոտ, առանց մեղմելու իր նայուածքին տխուր լրջութիւնը. քիչ տաաջ ձեզի կ'ըսէի. կնոջական իմ կեանքս կախում պիտի ունենայ իմ ամուս-
նէս: Ուրեմն, եթէ ամուսինս պարտադրէ, որ ընկերութենէ հեռու ապրիմ, պիտի հնազանդիմ: Միայն չեմ գիտեր թէ, ընկերութենէ հեռու երջանիկ պիտի ըլլամ, Մտքի եւ ար-
ուեստի միջավայրի մը, նուրբ վայելագեղութեան մը ճա-
շակը ունիմ. Բարիզէն դուրս, ասիկա գոյութիւն չունի: Ե-
թէ զիս մշտակայ կերպով հեռացնեն Բարիզէն, թերեւս պիտի տարաշխարհիմ ինչպէս մեր գաղթավայրերու թոչուն-
ները՝ որ կը կոչուին հոս: Գուցէ բնաւ երջանիկ չպիտի ըլլամ. եւ գիտէք, եթէ մէկը տառապի, միայն ալ կը տա-
ռա՛պի: Աղէկ խորհեցէք այս ամէնուն վրայ, բարեկամս, յամբօրէն անուշցնելով իր ձայնը:

Ու թողուց որ Մաքսիմ իր ձեռքերը բռնէ: Ծանցաւ վրան, չհամարձակելով անոր նայիլ: Կրքոր ձայնով մը՝ որուն արձագանգներուն սարսուռը զգաց իր սրտին մէջ:

— Քուկի՛նդ եմ, մրմռաց, անպայման եւ ինչպէս որ պիտի ուզէիք: Ձեր գերին եմ, ձեր իրը: Եթէ կը մերժէք ըլլալ իմ կինս, ո՛չ ըսէք ինծի հիմա: Այլեւս ուժ չ'ունիմ անստգութեան մէջ երերալ: Եթէ զիս մերժէք, կը կարծեմ թէ պիտի մեռնիմ, պիտի մեռնիմ հարուածին տակ: Անս-
տուգութեան այս ծանր ժանր զարհուրելի է:

Անոր ոտքերուն փարած էր, մէկ ծունկը գորգին վրայ՝ նէ իր ձեռքերը թողած էր անոր որպէսզի իր գէսքին կա-
թընցնէ:

— Կ'աղաչե՛մ, կ'աղաչե՛մ:

Նէ պատասխանեց.

— Ձեզմէ կը պահանջեմ բացարձակ հաւատք մը իմ մասին, ինչպէս որ ունեցաք ձեր մօր եւ քրոջ՝ ւառին: Կրկնեց միևնոյն բառերը:

— Հաւատք ունիմ ձեր վրայ, ինչպէս մօրօ եւ քրոջն:

Այն ատեն Մոտ ծանրաբար վեր առաւ զայն:

Չէր համարձակեր նայիլ անոր, կարդալ վճիռը աչքերուն մէջ:

Հարցուց նէ.

— Ձեր մայրը եւ քոյրը, անոնց խօսեցա՞ք հաւանական ամուսնութեան մը մասին ինձի հետ: Ի՞նչ կը մտածեն:

— Մայրս եւ քոյրս պարզ անձեր են. թերեւս ինձի պէս գիւղացիի մը՝ Հեզի սիրահարած ըլլալէն կը սոսկան. այնպէս կ'ենթադրեմ, որովհետեւ զիս չ'հարցափորձեցին եւ ես իրենց բան մը ըսած չեմ այս նիւթին վրայ: Բայց երկուքն ալ կ'երդնուժ զձեզ կը յարգեն պէտք եղածին պէս ու իմ ընտրած կինս պիտի սիրեն:

— Այն ատեն, ըսաւ Մոտ պարզաբար, թող Տիկին տը Շանթէլ վազը զայ ձեր կողմէն եւ իմ ձեռքս խնդրէ՛ մամայէս: Ես կուտամ զայն ձեզի այժմէն:

Որովհետեւ Մաքսիմ յամբ եւ անշարժ կը մնար անոր առջեւ, այս յեղակարծ երջանկութեան բախլու մին տակ, նէ երկարեց ծանր ծանր իր ճակատը: Իր շրթունքներով անոր դպնալուն պէս՝ ուժ առաւ երիտասարդը աղջիկը սեղմելու իրեն զէմ, անոր թոթովելով գորովի խօսքեր: Այս անգամ, չը զգաց ներս խուսափելը իրմէ, իր գրկախառնումին մէջ, որովհետեւ Մոտ գերմարդկային ճիգով մը, կը տիրէր իր ջիղերուն կը դոպէր իր զգայարանքներուն, կատղած իրենց մտերմիկ ընդվզումէն, նշանախօսութեան այս միակ համբոյրին համար, զարհուրած ապագային մէջ տեսնուած բաժանումէն— սակայն որոշած հաստատապէս:

Հալը վերադարձան, ուր այժմ միայն ինն տան բոլոր մտերիմները, Տիկին Տը Շանթէլ նստած էր Տիկին Տը Ռուվորի քով, երկու լը թէսիէները կը խօսակցէին էթիէնէթի հետ, էքթոր, Մաքսիմի եւ Մոտի զէմ, հասկցաւ թէ՛ ի՞նչ անցած գարձած էր անոնց մէջ: Սիրեց Մոտը. իր տարած յաղթութեան նախանձեցաւ Մաքսիմին՝ իր պարտութեանը համար:

«Այս եղական կնոջ ամուսինը ըլլալ, մտածեց, չար-ե՞ր ասիկա նախանձի տարիներ, անձկութեան ամիսներ, եւ ատրճանակի վերջին հարուածը: Երջանիկ են կոյրերը եւ յիմարները»:

Մաքսիմ մտեցաւ ժաննի, այտէն պագաւ. այս չեղումէն նէ ալ հասկցաւ ամէն ինչ: Էքթոր տեսաւ անոր աչքերուն մէջ արցունքներու լեցուիլը. Փոլ ոչինչ տեսաւ. էթիէնէթի կը նայէր: Երկարօրէն կը վայելէր այն տեսակ մը դարունը, որուն վերածաղկումը մարդ կը զգայ իր մէջ, ոչ առանց անակնկալի. քառասունը անցնելէ վերջ, երբօր սէրը զինքը կը բռնէ յանկարծակի: Մեծ տխմա՛ր, մտածեց էքթոր, եղբայրութեան սիրայիբ հեզնութեան հետ, ինքն ալ, ահաւասիկ զարնուած այդ երկրագործ զինուորին նման, այս տարիքին մէջ: Ըստ ինքեան, անոր ալ կը նախանձէր: «Ստուգիւ, միայն ես կամ զիմադրելու համար», ըսաւ ինքն իրեն, որոշած իր չուրջքոյրը չատ մօտէն չնայելու, անտարբեր մնալու զգացական նուազումներու եւ գորովանքի չոգիին՝ որ գլուխը կը բարձրանար, խանդաղատանքի այս տեսարանին. այս հանդէսին մէջ:

Ժամը կը յառաջանար, պարը կեցած էր, քոթիլեօնը կանխող դադարի պահն էր: Ժագըլին եւ Սիւպէրսօ, պիտի վարէին քոթիլեօն, իրենք ընելով ամէն կարգադրութիւն:

— Նայեցէ՛ք, ըսաւ էքթոր Մաքսիմի, պատուական առիթ, չափելու համար մանկատի աղջիկներուն անմեղութիւնը: Ոմանք նստած են անմերձեանալի անկիւնները, իրենց պարողներուն հետ: Տօրա Քալվէլ, քոյրը տիկին Տիւքլէրքի, պղտիկ Ռըվէրսիէները: Ասոնց համար քոթիլեօնը պատուակ մըն էր չեզոքանալու եւ ֆիլոթէ ընելու: Անոնք որ քաջութեամբ առաջին կարգին մէջ կը շարուին եւ իրենց տեղը կը պահեն, բարի մանկամարդ աղջիկներն են, ծարաւի ջրթուով եւ ջարտաչնչութեան: Շուտով պէտք է զանոնք ամուսնացնել, տակաւին չսկսած փնտռելու պղտիկ անկիւնները, որովհետեւ ուշ կամ կանուխ հոն պիտի իյնան:

Շանթէլ կը ժպտէր, միտքը բացակայ: Այս վայրկեա

նին ժողէֆ, սպասաւորը, հալէն անցաւ եւ Մոտի մօտե-
նալով՝ ականջին քանի մը բռտեր փսփսաց: Երբոր լճացուց
Մոտ անոր հարցուց բարձրաձայն:

- Վարը կառքեր կը գտնուի՞ն:
- Այո՛, վտահարար, օրիորդ:
- Հաա մը բերէ՞ք:

Իր կարգին վաղեց խօսիլ էթիէնէթի ականջին, որ բո-
ւորովին ածգունեցաւ. գուրս ելան անմիջապէս. Փոլ կը
Թէսիէ երկուքին ետեւէն զնաց. այս բանը միւն հաւաս-
տացեալներէն աննշմարելի մնալով հանդերձ, տիկին տը
Ռուվաբի շուրջիններուն խօսակցութիւնը դադրեցուցած էր.

— Ի՞նչ է այս, հարցուց տիկինը ժանն տը Շանթէլի:
Հսեցի՞ք:

— Ո՛չ, տիկին, ինծի անանկ կուգայ որ խնդիրը այդ
երիտասարդ աղջկան մօրը վրայ կը գտնայ: Երբոր Սր.
Մոտ ցած ձայնով ւնոր խօսեցաւ, նէ ըսաւ. «Ա՛հ. Աւտ-
ուած իմ մամաս...»

— Գէլ լուրեր են ասոնք, ըսաւ Էթթոր. խեղճ կիներ
դատապարտուած է.

Մոտ ներս կը մտնէր. զինքը ծափահարեցին:
— Այո՛, իր մայրն է, շատ գէշ վիճակի մէջ. դրացու-
նի մը եկած էր տանելու Էթիէնէթը:

— Ո՛հ, գոչեց ժանն տը Շանթէլ, իր... մայրը:
բայց ահուելի բան է այս, պարահանդէսի միջոցին, եւ այդ
խեղճ աղջիկը առանձինն կ'երթայ: Եթէ անոր ընկերանա-
յինք:

— Էթիէնէթ իր մայրը ինամելու համար առանձին
չէ, պատասխանեց Մոտ: Ունի սպասաւոր մը. գթութեան
քոյր մը եւ այդ գրացուհին, որ եկած էր զայն տանելու.
մենք օգուտ մը չպիտի ունենանք. նոյն իսկ չուղեց Պ.
Փոլ կը Թէսիէն:

Ժիւլիէն տը Սիւպերսօ կ'երեւէր ժաղըլինի հետ, ժա-
պաւէններու ալիք մը լամփակին վրայ, ձեծելով մորթը,
մտրակելով թմբուկին բոժոժները: Նուագախումբը նորոյթ
վալս մը կը զարնէր: Ժիւլիէնի եւ ժաղըլինի ետեւէն սկսան

երեւիլ ընտրուած զոյգերը, Մոտ քովէն անցած ժամանակ
կեցուց ժիւլիէնը եւ Մաքսիմէն լուսելու աստիճան կէս
ձայնով մը ըսաւ.

- Ես եւ Պ. տը Շանթէլ չպիտի պարենք:
- Աւելի ցած, անյօդաւոր ձայնով, չրթունքները ան-
շարժ, — ընկերութեան առջեւ այս նաարը կը գործածէր —
աւելցուց.

— Էթիէնէթի մայրը կը մեռնի: Սնկարելի է անոր
սենեակը: Վաղը աւտու պիտի երթամ Պոմ փողոց. պէտք է
որ քեզ տեսնեմ:

Ժիւլիէնի աչքերը հաւանութիւն յայանեցին: Մոտ նըս-
տեցաւ Մաքսիմի քովը, որ իրեն շնորհակալիքի ակնարկ
մը նետեց, պարի հաճոյքը զոնելով իրեն համար:



Գ.

Խառնակարգ կանկարասներով զարդարուած սենեակը՝ ուր Մաթիլտ Տիւսուա իր վերջին շունչը տալու վրայ էր, ցոյց պիտի տար դիտողի մը աչքին, մահամերձին փորձանաւոր եւ տարուբեր կեանքը, որովհետեւ Մաթիլտ, նախապաշարեալ մը, չէր բաժնուեր կածովին իր անցեալի ընկերակից առարկաներէն, եւ տարիներու ընթացքին. իր ստաղած նուէրները, յիշատակները, իր իտէալին համաձայն զետեղուած էին ասդին անդին, հակառակ որ, էթիէնէթ, նուրբ եւ մտացի, կը զարչէր անոնցմէ:

Կապոյտ փլիւշով ծածկուած վառարանին վրայ, ձուածեւ, սեւ շրջանակի մը մէջ կախուած էր դեղնածօ կիսաներկ պատկեր մը, առաջին հարորդութիւնը առնող պոսիկ աղջկան մը սպիտակ, թարմ, ժպտուն սրափուշի ծաղկի մը նման: Մաթիլտ առտու եւ իրիկուն կ'ազօթէր այդ պատկերին առջեւ, իր իսկ պատկերը, անմեղունակ, պզտիկ գեղջկուհի մը: Աւելի նոր, երկու լուսանկարներ կը զարգարէին անկիւնները. մին էր իր մայրը՝ պոքրոն գտակով շինականուհի մը, միւսը իր ամուսինն էր, որովհետեւ Մաթիլտ բարիզցի վարպետի մը հետ ամուսնացած էր: Իր ամուսնութեան ժամանակէն մնացած էր միայն այս լուսանկարը եւ յիմար Աիւզաննը՝ զոր ունեցած էր ամուսինէն: Այս վերջինը երիտասարդ մեռած էր, եւ անմիջապէս յուզարկաւորներու շարքին մէջ՝ գեղանի այրին գտած էր զինքը միսթարելու:

Վարդենիէ շինուած գրադարան մը եւ երեք հատ Լուի ԺԳ. ոճով հիանալի թիկնաթոռներ, կարծր եւ քանդակեալ փայտով շինուած, եւ մետաքսապատ, նոյրուած իր բարեկամներէն: Քանի մը զբօսեցուցիչ ուրուագծեր, ներկայացնող երիտասարդ կին մը. պիւսթին վերի մասը մերկ.

Մաթիլտ Տիւսուաի թեւերը եւ ուսերը նշանաւոր եղած էին: Եւ այդ, ուրուագծերուն մէկ քանիին տակ սապէս ձօնուած: «Բարի Մաթիլտին, [ը բարեկամը]: Բարի, այս այս մականունը տրուած էր իրեն բոլոր կեանքին մէջ, դատարկ եւ զուր բարութիւն մը, քիչ մը անմիտ, շուայլութենէն ազահութեան տարուած, միշտ հետամուտ հարօտութիւն դիզելու, եւ յանկարծ, իր մէկ յիմար քմահաճոյքով իբր գթութեան ձեւին տակ այդ խնայողութիւններէն մերկացած: Ինչ պիտի ըլլար իր կեանքին քսան տարիներու մէջ, եթէ չըլլար առատաձեռն բարեկամութիւնը Ասքէնի, որուն համար բաւական էր Բարիզ եկած ժամանակ. մտնելու ընտանիքի մը մէջ, բաղկացած տակաւին գեղանի սիրուհիէ մը եւ Բիքբիւի վանքը մեծցած շնորհալի էթիէնէթէն՝ որ զինքը կը կոչէր հայրիկ: Օտարաքայական երեսփոխանին յանկարծական մահը, առանց կտակ մը թողելու. արթնցուց դառնօրէն հաճոյքի այս խեղճ կինը, քնացած մանկական վստահութեամբ մը: Հարուածէն ծանրացաւ սրտի հիւանդութիւնը, երբեք չզարմանուած, մինչեւ քառասուն տարեկան զբօսանքի ետեւէ վազած ըլլալով: Մաթիլտ հիւանդ ինկաւ. Սիւզանն, արդէն ինքզինքը զուրս նետած, տունը քիչ դրամ ձգեց. էթիէնէթի իմաստութեամբը քայքայուածի առաջը առնուեցաւ: Ասքէնի մահուընէ վերջ՝ էթիէնէթ վանքէն ելած էր. աասնրեօթ տարու էր. իր ծննդեան օրը, կանոնաւոր եւ գթասիրտ մարդ, կեանքի ապահովագրական ընկերութեան մը վճարած եօթն հազար ֆրանք, ի նպաստ էթիէնէթի, որ քսան տարի վերջ, քսան հազար ֆրանքի օժիտ մը պիտի կազմէր: Ապագան չտկուած էր ուրեմն, համեստ կեանքի մը պայմաններով: Քոնսէրվատուաի երկու տարին լմնցնելէ վերջ՝ էթիէնէթ կարգի դրաւ մօրը գործերը, որ չպիտի բռնաժըլկուէր, հաստատուեցաւ Պէրն փողոցի պզտիկ յարկաբաժինը, քանի մը արժէքաւոր գոնարներու վաճառման արջիւնքովը եւ քիչ մըն ալ փոխառութիւն ընելով իր ապահովագրինէն:

Հօրը կամքին համաձայն, հետու մեծցուելով, հեռ-

ուէն տառապած էր երիտասարդ աղջիկը իր մօրը եւ քրոջը վիճակին նկատմամբ: Մաթիլտի հիւանդութիւնը, Սիւզաննի փախուստը, զինքը պարտաւորեցին դպրոցը թողելու: Սակայն, քանի մը ամսուան մէջ, այս երկու կեանքերուն ներքինը տեսնելով, իր սիրտը ծերացաւ անմիջապէս, եւ տուաւ պարկեշտ մնայու որոշումը, որ զինքը պահպանեց քոնսէրվաթուստին մէջ, ուր սրիշներ կը ստանան իրենց առաջին աստիճանը՝ իբր տարփալի աղջիկներ:

«Այս բարի Մաթիլտին» բարեկամները, հիւանդութեան առաջին շրջանին, շարունակաբար այցելեցին իրեն, բայց հաճոյքի կին մը, հիւանդոտ, գոյութիւն ունենալու իրաւունքը չունի այլեւս: Քիչեր վեր ելան այլեւս Պէրն փողոցի սանդուխներէն. վերջին եօթն ամիսները, երբ այլեւս Մաթիլտ չկրցաւ անկողնէն ելլել, երկու Լը Թէ-սիէները միայն մնացին, իրեն այցելող. ի վերջոյ էքթոր ալ հազուադիւրս դարձաւ. Փոյ ամէնօրեայ յարատեւող բիւրը եղաւ. քաղցրահամ հաճոյք մըն էր այդ զբաղած մարդուն համար, զեզանի, մանկատի եւ բնաւ չհսկուած աղդուն համար, զեզանի, մանկատի եւ բնաւ չհսկուած աղջիկ մը ունենալ իբր բարեկամուհի: Այսպէս է բարիզեանին քննասիրութիւնը՝ հիւանդութեան առջեւ անոնց՝ որոնք այլեւս չեն ծառայեր իրենց հաճոյքին:

Սակայն, էթիէնէթ ինչպէս որ ըսած էս Մոտի, Փոյ ինքնասէր էր միայն մակերեւոյթային կերպով: Իր սիրածին տառապանքը, զինքը տակն ու վրայ ըրած էին: Տեսնելով մանկամարդ աղջիկը, այնքան քաջասիրտ աղքատութեան զէմ, կեանքի պայքարին մէջ, քսան անգամ փոխարէն անոր տրամագրութեան տակ դրած էր, զնէ դուրս հանելու այդ շփոթ կացութենէն, բողոքելով որ, ի փոխարէն բան մը չպիտի պահանջէր, եւ անկեղծ էր, իր սիրտը կը պարունակէր գորովագթութեան այն մրուրը, որ քառասունին, ապրողներու հոգիներուն մակերեւոյթին վերայ կը բարձրացնէ: Էթիէնէթ մերժեց, չէր ուզեր բան մը ստանալ, որովհետեւ զայն քիչ մը կը սիրէր: Իրաւ է որ, իր հանդարտ զգայարանքները երբեք սէր չէին գոչեր: Փոյ անոր յաղթած էր իր յարատեւող ներկայութեամբ, ամէն օր, քանի մը ժամ նուիրելով անոր: Նէ ունէր անոր

համար գորովանք մը՝ յատուկ անարատ կիներու՝ որոնք կ'ուզեն յանձնել իրենց մարմինը, իբր ապացոյց գերագոյն լքումի, բայց ասոր համար իսկ, դիտնալով որ սէրը կ'աղտոտի դրամէն, նէ կը մերժէր իր սիրած մարդուն նուիրած դրամը: Փոյ տեղի տուաւ այդ անշահախնդիր գրգանքի հրապոյրին. քիչ քիչ վարժուեցաւ. այդ տարիքին մէջ արդ չի կրնար խուսափիլ, Տակաւ առ տակաւ էթիէնէթը միւր կեանքէն դուրս չերեւակայեց. բայց ինչպէ՞ս պիտ համբերէր. եթէ անոր հետը չամուսնանար: Ծշմարիտը խուսելով կը չափազանցէր իր դիմագրութիւնը յամատու թեամբ. ապահով էր որ երիտասարդ աղջիկը՝ պիտակ արգէն իր ընտանիքի-մտաին խօսուածներուն՝ կը խոստանար պարկեշտ կիւն մը ըլլալ: Եթէ նէ իրեն խոստովանէր իր դաղտնի փափաքը. ստէր յաջողիլ իրրեւ արուեստագէտ, կարենալ ապրիլ եւ յետոյ անպայման ինքզինքը յանձնել. Փոյ Լը Թէ-սիէի անձնասիրութիւնը՝ աղպէսով գոհացած պիտի ըլլար: Նէ բան մը չըսաւ, ոչ թէ խորագրութեամբ, այլ ամօթխածութեամբ: Եւ Փոյ վարժուեցաւ այն գաղափարին, թէ աւելի վերջը, որ մը անոր հետ պիտի ամուսնանար, քաշուելով աշխարհիկ եւ պաշտօնական կեանքէն: Անդրիտակցաբար, այդ պայտանամամը մօտեցուց: «Ինչո՞ւ համար ոչ աւելի կանուխ»: Մայրը հազիւ տարի մը կրնայ ապրիլ. քոյրը աներեւոյթացած է: Ահաւասիկ ի՞նչ դատութեան վրայ կը հիմնուէր մեր մէջ գտնուած յաւագոյն քաղաքացիի դատողութիւնը:

Երբոր էթիէնէթ տուն հասաւ գրացուհիին հետ, տիկին կրտվիէ, առտուան ժամը հինգն էր գրեթէ, գիշերը մութ էր:

— Տիկինը քիչ մ'աւելի աղէկ է: Ըսաւ սղտիկ աղախինը, դուռը բանալով, կարծես կը քնանայ:

— Բժիշկը հո՞ս է է, հարցուց տիկին կրտվիէ:

— Այո՛:

Էթիէնէթ իր պարահանդէսի վերարկուն կարասիի մը վրայ նետելով՝ սենեակ վազեց: Դէմ առ դէմ եկաւ բժիշկին, որ հիւանդապահին հետ դուրս կ'ելլէր. երիտասարդ

մարդ մըն էր տակաւին, հուժկու եւ արիւնոտ, օծուն սեւ մազերով եւ սեւ պիտով: Ակնարկով զգուեց. որպէս արուեստասէր այդ գեղեցիկ աղջիկը, կրծաբաց, խարտեալ եւ սպիտակ:

= Տիկինը աղջիկն է... հարցուց հիւանդապահին, որ զլիտով հաստատական նշան մ'ըբաւ:

— Աստուած իմ, տիկին կամ... օրիորդ, յարեց աղջնիւ ժպիտով մը. տեսայ հիւանդը. այժմ միջոցիս մարած է: Գիտէ՞ք որ շատ ծանր կացութիւն մըն է այս: Սիրտը բռնուած է: Իբաւ որ չեմ կրնար ձեզ ըսել ճշգիւ:

— Վերջապէս, Տօքթօր, յարեց աղջիկը քիչ մը անհամբերութեամբ. ամէն յոյս կտրուած է: Ըսէք ինձի բացէ ի բաց. կ'ուզեմ ամէն ինչ գիտնալ:

Իժիշկը վարանեցաւ, յետոյ խօսք առնելով.

— Լաւ ուրեմն, օրիորդ, քանի որ քաջասիրտ էք այժմ... վախճանը մօտ է: Իմ հոս մնալս անօգուտ բան է: Այլևս անկողնէն մօտը նստելու եւ սպասելու է. ձեր մայրը բարեբախտաբար շատ չ'չարչարուիր, ամէնը պիտի անցնի առանց ցնցումի: Ահաւասիկ, օրիորդ:

Էթիէնէթ ոտքի կեցած՝ չ'պատասխանեց: Մեծ յուզում մը անոր սիրտը կ'ուռեցնէր, առանց աչքերէն արցունք վաղցնել տալու:

— Երթա՞մ, : օծումի համար. հարցուց տիկին կրօս վրէ:

— Այո՛, կը խնդրեմ:

— Օրիորդ, ըսաւ տօքթօրը:

Չայն բարեւեց, վերստին ակնարկը պտտցնելով անոր մերկ պարանոցին թարմ փայլին վրայ:

Ինչպէս ըսած էր բժիշկը, Մաթիլտ Տիւրուա անզգայ վիճակի մը մէջ էր: Էթիէնէթ մօտեցաւ անկողնոյն, որ կը լուսաւորուէր սեղանին վրայ դրուած լամբարով մը: Մաթիլտ կոնակի վրայ պառկած էր, գլուխը եւ թեւը՝ դուրս: Մարմինը, մինչեւ մէջքը, ծածկուած վերմակին տակ, զէմքը ձերմակ զիչերուան գտակով մը եզերուած. կ'երևէր գրեթէ նիհար, զուսթափ հին մեղրամոմի մը դալկութեամբ:

Ընդհատ ցնցումներ կը յուզէին իր դիմադծերը, մանաւանդ արտեւանունքը եւ բերանը, այնպէս որ ամբողջ կերպարանքը սրտաճմլիկ ու յոգնած արտայայտութիւն մը կ'զգենուր. կիսաբաց չրթունքներէն դուրս կը ցայտէին կապ հծծիւններ. որոնք կարծես խօսքեր կը քօղարկէին: Երիտաւարդ աղջիկը իր ձեռքերուն մէջ առաւ մօրկանը իւզոտ եւ կարճ ձեռքը եւ ձակատը կոթնցուց անոր վրայ:

«Մայրիկը պիտի մեռնի»:

Վատահարտը այս մտածումը տակաւին չէր հասած այն խորհրդաւոր սահմանին՝ յորում զազտփարը զգայնութեան կը միանայ: Ահռելիօրէն տխուր էր էթիէնէթ. բայց արցունքները չէին հոսեր: Իր մերկ ուսին վրայ դրուած մատ մը զայն ուշքի բերաւ. հիւանդապահը եւ տիկին կրավիէ իր ետեւն էին. անոնց զարձաւ:

— Կ'երթամ, բոաւ Տիկին կրավիէ, թիւրէն փողոցի մատուռը, ժամը վեցն է, մարդիկ ոտքի վրայ են արգէն: Համբուրեց էթիէնէթը եւ սեւեակէն դուրս ելաւ:

Հիւտնդապահը տարիքոտ, չոր ու թուխ կին մը, խոշոր անդամներով, ըսաւ.

— Չձեզ պիտի հանուեցնեմ. օրիորդ: Եթէ ժողովրդապետը ձեզի տեսնէր այս հագուստով:

Այն ատեն միայն յիշեց էթիէնէթ, թէ պարանոցէսի հագուստներով էր: Հանեց իր շրջազգեստը եւ չփակր եւ հագաւ մաթիլտ մը. նստեցաւ անկողնոյն մօտ, իր աչքերը յարեց փակ արտեւանունքին եւ սպասեց. Հիւանդապահը երկար աթոռի մը վրայ երկնցած էր, շոքօլայի կտոր մը կրծելով, եւ ապա քնացած: Էթիէնէթ դո՛ւ եղաւ մինակը մնացած ըլլալուն օրհասականի այս սենեակին մէջ:

Որովհետեւ հոգեվարքը կը սկսէր, շունչը կուրծքին եւ կոկորդին կը կառչէր դառնօրէն, չրթունքները հետզհետէ կ'երերային եւ կը փորձէին անորոյ եւ պատատուկ խօսքեր: Ի՞նչ կ'ըսէին: Էթիէնէթ սկսաւ մտիկ ընել: Քիչ քիչ իրեն անտնկ թուացաւ որ կը հակնար, այո՛, ապահովապէս կ'որոշէր բառերը «դրամ... մա՛ն» : յի գողողոյուն չրթունքները զանոնք կը կրկնէին չփոթ կերպով: Յետոյ յաջորդե-

ցին անուններու կէտեր, «Էթիէնն, Սիւզ. :» իր աղջիկնե-
րուն անունները, խառնուած երբեմնի սիրահարներու ա-
նուններուն : «Մօրիս, Ս. ք. . . Պէրլի. . .» : Ապա անիմաստ
խօսք մը : «Չուզեց ըսել ինչո՞ւ համար կը մեկնէր. . .» :
Վերստին ձայնը անհասկնալի բառերու թափթփուքներ
արձակեց երկա՛ր ժամանակ, երկար ժամանակ : Էթիէնէթ
կը տառապէր ինքզինքը աւելի ջղայնացած քան յուզեալ
զգալով :

«Չեմ լա՛ր, ինչո՞ւ արդեօք սակայն վշտակիր եմ» :
Լալու համար, ինքն իր մէջ ամիսփուեցաւ : «Կ'ուզեմ բո-
լորովին առանձին մնալ» : Անշուշտ, խեղճ Մաթիլտ, ամիս-
ներէ ի վեր իրենց տունը չէր ուրախացներ, սակայն ըն-
տանիքը կը կազմէր, հասարակաց միսը, մտածումը՝ որ
ձեզ ճանչցաւ պզտի՛կ : «Մինա՛կ : Ոչ ոք ունիմ աշխարհի
վրայ. . .» : Մարդկային ինքնասիրութեան այս կոչին վրայ
արցունքները անմիջապէս հոսեցան : «Ի՛նչ պիտի ըլլամ,
ոչ ոք ունիմ աշխարհի՛ վրայ» : Փոլ Լը Թէսիէի ձայնը :
դէժքը իր մտածման մէջէն անցան : «Պիտի ուզէի որ հոս
ըլլար : Կ'ուզէր զալ : Ինչո՞ւ մերժեցի» : Զգաց որ, մայրը
մեռնելուն պէս, պիտի ապաստանէր այդ բարեկամին թե-
ւերուն մէջ, որ զի՛նքը պիտի ընէր ինչ որ իրեն հաճելի ըլ-
լար, կը բաւէր որ զինքը պահէր եւ մինակ չձգէր :

— Ո՛հ, մարդե՛րը, զգուա՛ճ եմ անոնցմէ :

Այս խօսքը, մահամերձին շրթունքներէն յտակ կեր-
պով դուրս պոսթկացած, զարհուրեցուց Էթիէնէթը, իբր-
թէ մեռեալ մը կամ ուրուական մ'ըլլար խօսող իր մօտ :
Սակայն աղէկ կը ճանչնար խեղճ Մաթիլտի այն բացազան-
չութիւնը, իր պահճուի կեանքին դառնութեանց առջիւ :
Արհեստին գարշա՛նքն էր, սեռին ընտելացման սոսկումը,
կոչո՞ւմը բանթողի : «Ո՛հ, մարդերը, աղէ՛կ կը ճանչնամ» :
Օրհասականի անկապակից հծծիւններու մէջէն, այդ խօսքը
այժմ կուզար քայքայուա՛ճ, կաղ, անձեւ, բայց ճանաչելի
էթիէնէթի համար, որուն արձագանգէն կը զգար այրուցք
մը սրտին մէջ. «Բա՛ւ է որ, հիւանդապահը չիմանար» : Է-
թիէնէթ մտիկ ըրաւ. հիւանդապահը կը խոկար մեղմօրէն :

Այն ատեն, երիտասարդ աղջիկը ոտքի ելաւ եւ մրմնջեց .
«մամա՛», փորձելով բռնելով գալարած ձեռքը՝ որ կը գող-
զոջէր. թող տուաւ անմիջապէս, ազաղակ մ'արձակելով,
որովհետեւ ձեռքը սեղմած էր իր մատերը, եղունգները
մորթին մէջ մխելով : Եւ ահուրի խօսքը միշտ կը կրկնուէր
վանկերու փլածոյին մէջ. «Ո՛հ, մարդե՛րը, զգուա՛ճ եմ ա-
նոնցմէ» :

Մնրադիր անկողնոյն մօտ. խցելով ականջները ոչ եւս
լսելու համար, Էթիէնէթ սկսաւ աղօթել : Աղօթե՞լ : Նէ
ունեցած էր բարեպաշտութիւնը ամէնուն պէս, վանքերու
դիւրին բարեպաշտութիւնը այնքա՛ն սնտոի, որ ամէնէն
քիչ հաւատացեալ մարդը յաճախ աւելի կը մօտեցնէ հա-
ւատքին, քան ճանչցուած միաբանական մը : Նրկու տարիէ
ի վեր, իրականութեան անգութ շունչը ամէն բան տա-
րած էր, նոյն իսկ առտուան եւ երեկոյեան աղօթքները :
Ներկայ վիշտը, միայնակեցութեան սոսկումը երիտասարդ
աղջկան շրթունքներուն վրայ յարուցին բարեպաշտի խօս-
քեր . «Ողջո՛յն Քեզ, Մարիսս, լի շնորհօք. . .» եւ բարե-
պաշտիկ շարժումները սկսան այդ անհաւատարիմ ձեռքե-
րուն մէջ, կուրծք ձեծելը, եւ բթամատէն ու ցուցամատէն
յօրինուած խաչին վրայ համբոյրը : Սուրբ բարեպաշտու-
թիւն, այնքա՛ն թանկագին, որ իր ամէնէն պզտիկ ար-
ձագանգը կը մխիթարէ դեռ թշուառ մը՝ որ զայն կ'ոգեկո-
չէ :

Շշուկ սենեակին մէջ : Էթիէնէթ կանգնեցաւ. քա-
հանայ մը ներս կը մտնէր, ընկերացած տիկին կրավիէի
եւ մինչդեռ ասիկա, օգնութեամբ հիւանդապահին, կը
պատրաստէր իւզերը՝ օծումի համար, քահանան կը մօտե-
նար անկողնոյն. ձեռքը բռնելով կ'ըսէր. «Սիրելի աղջիկս,
կ'իմանա՛ս» : Էթիէնէթ մտիկ ըրաւ քահանային հետ. ըմ-
բռնեց իրեն միայն ծանօթ զարհուրանքի խօսքը. «Ո՛հ,
մարդե՛րը, զգուա՛ճ եմ անոնցմէ» :

— Շատ ուշ կը կանչէք զիս, ըսաւ խօտօրէն քահա-
նան,

Նիհար եւ պզտիկ էր, Թուխ եւ գուռզ մագերով եւ

նուրբ քաղմիրէ հազուստով:

— Հեռացէք, ըսաւ աչքերը արտասուածութիւնով արջկան:

Էթիէնէթ գնաց միանալ սենեակին ծայրը ծնրադիր հիւանդապահին եւ տիկին կրավիէի: Ինքն ալ ծունկ չոքեցաւ եւ փորձեց աղօթել: Քահանան կը մրմոար օծումի խօսքերը լատիններէն: Ու իր երգող աղօթքներուն կը միանային այժմ օրհասականին հօծիւնները՝ աւելի խաղաղ եւ անորոշ. եւ սակայն էթիէնէթ կը զանազանէր միեւնոյն յուսահատ բացազանչութիւնը՝ զոր մայրը այժմ իր բարու ետեւէ կը կմկմար. «Ո՛հ, մարդերը, զգուս՛ժ եմ անոնցմէ»:

Զարհուրելի՛ բառը՝ որուն գաղտնիքը միայն գիտէր էթիէնէթ. եւ ասիկա իր սիրտը կայրէ: Ա՛հ, այդ կեանքը՝ այս վախճանին հասցնող այդ գարշելի գերութիւնը, երբե՛ք, երբե՛ք իրեն համար: Այսուհետեւ մինակ մնալու երկիւղը քիչ առաջ իր սիրտին տուած էր նուազում մը՝ որ այժմ անհետացաւ: «Երբե՛ք մարդէ մը կախում չպիտի ունենամ, թող ըլլամ գործաւորունի, սենեկապանունի կամ մեռեալ»:

Օծումը վերջացնելով՝ քահանան կարճ աղօթք մը մրմնջեց օրհասականին սնարին վերեւ, յետոյ կանչեց էթիէնէթը եւ օրհն տարաւ: Լուրջ կերպով մը, կը խօսէր անոր հետ, իբր շայրացած՝ իր արցունքներուն մէջ, զայն շատ զեղանի դանելուն համար:

— Ձեր մայրը կրօնական սովորութիւններ ունէ՞ր, զաւակս:

— Բայց, պարօն արբայ, այո՛, կը կարծեմ: Աստու, իրիկուն կը կատարեն իր աղօթքները:

— Հաղորդ առնելու կ'երթա՞ր:

Էթիէնէթ վարանեցաւ:

— Չեմ կարծեր, ըսաւ:

— Պէտք է աղօթել անոր համար, զաւակս, Աստուած շատ զթած է. բայց չի տար անոր որ չի խնդրեր Լուսթենէ մը վերջ՝ աւելցուց:

— Ընտանիքի ուրիշ անդամներ ունի՞ք:

— Էթիէնէթ այնքան շատ կարմրեցաւ, որ քահանան հասկցաւ եւ ներեց անոր ստախօսութեանը: «Ո՛հ, պարօն» եւ կարծես քիչ մըն ալ կակուղցաւ:

— Խեղճ տղաս, մրմոաց, թող բարին Աստուած քեզ պահէ պահպանէ: Կեանքի մէջ, ահաւասիկ բոլորովին միանա՛կդ: Եթէ, այս օրերս, շատ նեղութիւն զգաք ձեր մէջ, եկէ՛ք Թիւրէն փողոց, պիտի հարցնէք հայր տը Ռիւնիէն:

Շնորհակալիքներ թոթովելով՝ երիտասարդ աղջիկը առաջնորդեց քահանան մինչեւ սանդուխը: Կը վերադառնար, սրահէն անցնելով, երբ լսեց մեծ աղաղակ մը. շտապեց դէպի սենեակ. տիկին կրավիէ եւ հիւանդապահը, արդէն ծնրադիր, կ'երգէին մեռելոց աղօթքը: Էթիէնէթ անոնց քովը ծնրադրեց եւ լացաւ, այս անգամ, ի խորո՛ց սրտի:

Մնաց այսպէս, մինչեւ որ տիկին կրավիէի ձայնը ըսաւ իր ականջին.

— Պէտք է քիչ մը հանգչիլ, պղտիկս, թէ ոչ պիտի հիւանդանաս:

Մեքենաբար հնազանդեցաւ ջանոր: Երբ որ ոտքի ելաւ, տեսաւ զարմանքով, որ պատուհաններու վարագոյրները բացուած էին: Սենեակին մէջ, գարնանային զուարթ եւ վարդագոյն պղտիկ լոյս մը կը ցոլանար: Մաթիւտ, աչքերը փակ, մահուան մէջ վերստացած էր առողջ լթեան օրերու իր սիրունիկ դէմքը:

Աստուան ժամը ութին միջոցները, էթիէնէթ իր դրացուհիին ստիպումներուն տեղի տալով՝ մտացիր կերպով, քիչ մը սուրճ կը խմէր. սեղանին վրայ, ճաշասրահին մէջ, երբ պղտիկ աղախինը, Իւրսիւլ, ներս մտաւ, մտերմօրէն իմացնելով.

— «Օրիորդն» է, Պ. Փոլին հետ:

«Օրիորդը» էր անունը այն վայելչագեղ եւ խորհրդաւոր այցելուհիին, որ երկու ամիսէ ի վեր յաճախակի ժամադրութիւններ կուտար Սիւզաննի հին սենեակին մէջ, վայելչագեղ եւ խորհրդաւոր այցելուհիի մը հետ, զոր Իւրսիւլ կը կոչէր «Պարօնը»: Այժմ կը նեղուէր տեսնելու Մոտը: Ո՛հ, այլեւս չպիտի թոյլատրէր անոր: Մօրը մահուան

վրայ՝ իրեն կը մնար քաջասրտորէն որոշում մը տալ. ապ-
րելու համար պարկեշտ եւ անկախ. երիտասարդի անբժու-
թեան նոր եւ գեղեցիկ վերադարձ մը հանդէպ այն բանե-
րուն, զոր մինչեւ հիմա անխուսափելի նկատած էր, եւ
այժմ իր սուգը լուրջար վերջ տալ ատենց:

— Ինչ պէտք է ըսել, օրիորդ, հարցուց աղախինը:

— Ըսէք մը կուգամ:

Գնաց Մոտի եւ լը թէսիէի քով: Երկուքն ալ զայն
համբուրեցին հոսող արցունքներուն վրայէն:

— Սիրեցեա՛լս:

— Խեղճ ազջիկս:

Նստեցան, զնէ սեղմելով իրենց կուրծքին վրայ: Է-
թիէնէթ, կարճ պատասխաններով՝ կը պատմէր գիշերուան
անցքերը:

— Եւ ի՞նչ պիտի ընես այժմ, հարցուց Մոտ:

Վհատութեան եւ վարանումի ժէսթ մ'ունեցաւ:

— Մտիկ ըրէ՛, սիրելիս, ըսաւ Փոլ. Մոտ եւ ես կը
խորհինք որ չէք կրնար բնակիլ հոս, այս դատարկ տան
մէջ. Ահաւասիկ թէ ի՞նչ կ'առաջարկեմ ձեզի, համախոր-
հուրդ տիկին եւ օրիորդ տը Ռուվոններու հետ. Ո՛հ, հան-
դարտեցէք, շարունակեց, պատասխանելով մերժումի ժէսթի
մը, զոր կը գուշակէր: Ձեզի սեւէ օգնութիւն չեմ առա-
ջարկեր թէեւ, ինչպէս գիտէք, իբր երէց եղբայր մը, ձեր
տրամադրութեան տակ ըլլամ: Տիկին տը Ռուվոնը, ամսոյ
մը չափ Շանպլէ պիտի երթայ մնալու Սր. Մոտի եւ Ժա-
գըլինի հետ:

Այո՛, ընդթիջեց Մոտ, կը գուշակես թէ ինչո՞ւ համար,
չէ՞: Ուրիշ միջոց չկայ, կարծեմ, մեղմելու համար նախան-
ձը անո՛ր... զոր կը ճանչնաս. եւ յետոյ, Բարիզէն կը
գարշիմ. կ'ուզե՞ս մեզի հետ գալ: Մաման եւ ես կը հրաւի-
րենք քեզ: Մերժումի սեւէ պատճառ չկայ:

Էթիէնէթ անմիջապէս չպատասխանեց, Խորհող եւ փոր-
ձառու ազջիկան գատողութիւնը իրեն կ'ըսէր. «Որոշապէս
Փոլ կը խորհի հետս ամուսնանալ... եւ Մոտ կը վախնայ
Սիւպլէրսօէն. եթէ նէ մնայ Բարիզ: Այս կարգադրութիւնը

ամէնէն աղէկն է: Ի՞նչ կարեւորութիւն ունի: Իրենց ծրա-
դիրներուն մէջ մաս մ'ունենալս աղէկ է:

Նէ գրկեց Մոտը:

— Կ'ընդունիմ, սիրելիս, եւ շնորհակալ եմ քեզի:

Ու, երբ Փոլ իր կարգին զայն կը համբուրէր, նէ յան-
կարծօրէն ինքզինքը զգաց այնքան ուժովցած այս փարու-
մէն, որ մտածեց, աւելի գորովագին քան երբեք. «Ձիս կը
սփրէ՛: Լա՛ւ է սիրուել՝ յո՛ւ Սիրեցեա՛լ բարեկամս:»



Դ.

Ժիւլիէն տը Սիւպէրսօ պարասրահը ձգած էր այն վայրկեանին՝ երբ, քօթիյեօնը լննցած՝ կը սկսէին ընթրիքի սձղանները շտկել: Մոտի հրամանն էր այս, որ իր ականջն ի վար սա՛ կարճ խօսքը փսփսացած էր. «Կարելի եղածին չափ շուտ տուն դացէք. չպիտի ուշանամ»: Ազէկ գիտէր, որ նմանօրինակ խոստումի մը պիտի հնազանդէր նա:

Հետիոտն տուն դնաց, առտուն այս ժամուն խաղաղ ծառուղիներէն անցնելով: Մոտէն այնքան հեռու, այնքան մօտ անցուցած այդ գիշերուան սեւ դառնութեան յիշատակին վրայ լուսապայծառ արշալոյսը յաղթական ցնծութեամբ կը ծածկէր: Ո՞ր երիտասարդ մարդը՝ սիրելով կին մը եւ գիտնալով անկից սիրուած ըլլալը՝ կրնայ տխուր մնալ դարնանային այդքա՛ն գեղեցիկ առաւօտի մը դիմաց: Յետոյ կը խորհէր:

«Նէ պիտի դայ...» Եւ այս մտածման վրայ, սաստիկ յուզում մը միշտ կը թրթռացնէր իր սիրտը, իր միտը, եւ ուրիշ բանի վրայ չէր կրնար երազել, եթէ ոչ անոր մօտալուտ գալուստը:

Պո՞մ փողոցը, նախանձութիւններու առջեւ փակ, գոց վարագոյրներով, հազիւ լուսաւորուած լւին սանդուխներով տան մը մէջ առանձնացած, գիշերը իրեն երեւցաւ հարուստներու առտուն քունով ծանրացած:

Իր յարկաբաժինն ալ մութ էր. սպասուորը արժընցուց, որ կը մրափէր նախասենեակին մէջ, քանափէի մը վրայ, ծածկոցի մը տակ:

— Քօնսթա՛ն, լոյսը վառեցէ՛ք զարդախուցիս մէջ. տաք ջուր դրէ՛ք եւ լուացման տաշտը պատրաստեցէ՛ք:

— Արդեօք պարոնը պիտի պառկի՞:

— Ո՛չ, չեմ գիտեր. ըրէ՛ք ինչ որ կը հրամայեմ:

Քօնսթան իր տիրոջ գաւազանը, գլխարկը եւ մաշկբակը ձեռքը բռնած առջեւէն կ'երթար սրահին մէջ՝ լուսաւորուած կրակին անթեղով եւ կը պատրաստուէր պատուհանները բանալու:

— Ի՞նչ կ'ընէք:

— Կը բանամ, պարոն:

— Ո՛չ, եւ ոչ մէկ պատուհան մի՛ բանաք: Հո՛ս ալ լոյսերը վառեցէ՛ք.

Իր այս միայնիկ հոմը գինքը փայփայած էր: Կ'ուզէր հոն մնալ մինչեւ իր սիրականին գալուստը: Քանի մը վայրկեան վերջ, իր զարդախուցին մէջ մինակ մնաց: Երբեք չէր ուզեր որ Քօնսթան իրեն օգնէ: Բնազդական սոսկում մը ունէր մարդերու հպումէն՝ իր մերկ մորթին վրայ: Անոնցմէ տեսնուելու եւ զանոնք տեսնելու այս արտառոց անբժութիւնը կը յատկանչէ այն մարդերը, որոնց համար կինը կեանքին ամէն ինչն է: Միակ արու մարմնով մը կը սիրէր գիտել ներդաշնակ գիծերը, յամպարային տփռունու նութիւնը, ճապուկ շարժումները, եւ այդ մարմինը, առնիկա էր որ այդ վայրկեանին կը ճառագայթէր գաղջ ոռոգումի մը անձրեւին տակ, պաղ ջուրի մեծ ցնցուղէ մը, զարդախուցին մէկ անկիւնը դրուած: Իր մարմինն էր այդ ուշադիր կերպով կը խնամէր այդ մարմինը, իր ֆիզիքական եսին նրբացած ծէսը, որուն տեսքը կամ պատմութիւնը կ'ըմբոստացնէ ուրիշ մարդերը, անոնց կ'երեւի առնական հիւանդութեան մը նշանը, ինչ որ ճիշդ չէ. գեղեցկութեան ճաշակը եւ ուժի մտահոգութիւնը իրարու կը միանան յաճախակի: Այդպէս ժիւլիէն մըն էր: Նրկու սեղաններու վրայ գիզուած մկրատներու, ունելիքներու, կարոցներու, այլ եւ այլ վրձիններու կէս-վիրաբուժական կազմած մը. վայելուչ ջրաբուժական բարդ գործիքներ, որոնց նիքէլը եւ պղինձը կը փայլէին կաղի լոյսին տակ:

բիւրեղեայ շիշերու անհամար թիւ մը, գունագեղ եւ բանուած նրբահիւս ճերմակեղէններ, եւ այս ամէնը, արական մարմնի մը խնամքին համար դրուած էին հոն, եւ շատ մարդերու բնի պիտի տային. «ի՛նչ կանացի արարած»: Եւ սակայն, ոչ ոք աւելի վարժ էր սքօսներու, քան ինքը, ոչ ոք աւելի քաջասիրտ՝ ատրճանակի մը կամ սուրի մը առջեւ: Ամբարտաւան եւ գրգռիչ մարդերու դիմաց, միայն կրնե՞րն էին որ զայն կը հանդարտեցնէին եւ ըստ կամս կ'առաջնորդէին:

Մետաքսեայ չապիկով, ննջասենեակէն կ'անցնէր, մտնելու համար սրահը ծոցեցաւ՝ առնելու անկողնոյն ոտքին քովը դրուած երկաթեայ գունդերը. վարպետի մը կանոնաւորութեամբ զանոնք գործածեց եւ մկանունքներուն ձկուն խաղէն գո՛՛՛ մտաւ սրահը, ժաժացոյցը նայեցաւ. ութն հինգ կ'անցնի: Չանգակիկը զարկաւ: Քոնսթան:

— Պարոն:

— Քոնսթան, սիկիւնը հիմա պիտի գայ: Ծաշարահին մէջ պատրաստեցէք սամավարը եւ կարկանդակներ. յետոյ անցէք ձեր սենեակը, մինչեւ որ կանչեմ քեզի:

Քոնսթան խոնարհեցաւ եւ դուրս ելաւ. ժիւլիէն առանձին մնացած՝ բարձիկներ դրաւ Բանալիէին զլխուն վերէ երկնցաւ ու երազեց:

«Պիտի գայ»: Կ'երեւակայէր որ քիչ յետոյ, նէ ներս պիտի մտնէր, դրան կանանչագոյն մեծ վարադոյրը վերցընելով...: Բայց ո՛չ, այդպէս չէր որ զնէ կը տեսնէր: Կասկածելի տան մը երեք յարկերը, Պոմ փողոց, էթիէնէթի յարկաբաժինին նախասենեակը, ճաշարահը, յետոյ իրենց բոյնը, Սիւզաննի նախկին սենեակը, Մոտի կողմէ փոխուած շտկուած:

Շանթէլի մեկնումի եւ վերադարձի միջոցին, զնէ հոն տեսած էր կանոնաւորապէս երկու օրը անգամ մը, երբեմն յաջորդաբար երկու օր: Մոտ հասկցած էր որ, այս կերպով զայն կը բռնէր կատարեալ գերութեան մէջ, ինքն ալ բռնուած, անզգալաբար գգուանքի պէտքէն: Իր սիրուհի՞ն: Ո՛չ, երբե՛ք: Ուղղամտութեան տեսակ մը ֆէթիչականու:

Թիւն, իրեն պահել կուտար նախանձօրէն գերագոյն համբոյրը այն մարդուն համար՝ որ իրեն պիտի տար իր անուշը եւ հարստութիւնը: Իր գերակշռութեան հպարտութեան մէջ՝ նէ կը խորհէր. «Տակաւին ինձի պարտական պիտի մնայ վերջէ՛ն ալ»: Իրենց եղական գգուանքները, երբե՛ք սակայն հազուադէպ զտամ ընկերութեան մէջ՝ ուր բարքերը եւ տեսականութիւնները՝ չիրար կը հակասեն, համաճայնութիւն կեղծելով հանգերձ, այո՛, այդ գգուանքները մարդկային սիրոյ ընթացքը վերիվայր շրջած էին, եւ այդ ուխտագնացութիւնը այնքա՛ն կրթու էր որ կը մոռնային անկեղծօրէն եւ չէին փափաքեր անոր զարուստ: Մոտի համար ի՛նչ կարեւորութիւն ունէր: Նէ կ'անգիտանար: Իր սիրահարին համար ի՛նչ կարեւորութիւն ունէր: Նա կը խորհէր ամէն անգամ ստանայ անկից կատարեալ պարզեւր եւ ամէն անգամ նէ կը թողուր անոր, որ ստացածէն գիտնօղեայ եւ գոհանայ. Այսպէս Փետրուար եւ Մարտ ամիսներուն մէջ, նա ապրած էր սիրային արքայութեան մէջ, այնպէս որ մինչեւ անգամ իրմէ կը բառնար վաղայնաճորդ օրուան մտահոգութիւնը:

Երկնցած, աչքերը փակ, ժիւլիէն կը շարունակէր օրօրուիլ այժմ այդ երազին մէջ, տակաւ առ տակաւ քունի մէջ ընկղմելով: Շուսայտ վերակոչումները իրարու կ'առանուէին՝ դէչ վերյուշումներու մէջ, նախանձի խայթուցքներ զինքը կ'աքցանէին, ծանրութիւն մը իր սիրտը կը ճնշէր, ծանրութիւն մը յիսակալութեան եւ մեկամաղձութեան: Ապրի՛լ առանց անոր. ո՛չ, երբե՛ք, երբեք...: Աւելի աղէկ ունէր այլեւս չապրի՛լ, ոչ եւս տեսնել արեւը, առտուներու պայծառութիւնները, ձիւն օրե՛րը եւ Փարիզի լուսագեղ երեկոնները: Ամէն ինչ կը շփոթէր, կը խառնակուէր իր մէջ, ուր յուսահատները կը փնտոնեն անտանելիին մոռացումը, եւ այդ դատարկ գիշերը, ափսո՛ս, տակաւին ծանր կը կշռէր իր ցաւոտ սիրտին վրայ: Յետոյ, իրը թէ, անդունդին յատակը ինկած ըլլար, ծանր ծանր վեր կը բարձրանար, գէպի կեանքին պայծառութեան: Իրտը քիչ քիչ թեթեւցաւ, նուազումի շոգի մը զինքը պատեց, իր

ուղեղը, ամբողջ մարմինը հաճելի բարեկեցութեամբ մը տը-
պաւորուեցան: Աչքերը բացաւ. երազը մարմին առած էր.
Մոտ ոտքի վրայ՝ իր մօտն էր, անոր մերկ մատերը զըր-
ուած իր ճակտին վրայ:

Ելաւ. կանգնեցաւ:

— Ո՛հ, դ՞ուք էք: ներեցէ՛ք ինձի: Քիչ մը երկնցայ
եւ կը կարծեմ թէ քնացայ, բայց ձեզ կը զգայի իմ քունիս
մէջ, եւ ասիկա որքա՛ն անուշ էր ինձի:

— Գուշակեցի, պատասխանեց նէ. գէշ երազներ ու-
նէիք, որովհետեւ ձեր դէմքը բոլորովին կծկուա՛ծ էր:
Մատս դրի ձեր ճակտին վրայ եւ առաջնորդեցի ձեր երազը
հոն՝ ուր փափաքեցա՛յ, դէպի ինձի՛...:

Այդ ճակտին վրայ դրաւ իր շրթունքներուն թարմու-
թիւնը, լետոյ փախուստ տուաւ գիրկընդխառնումէ մը, զոր
նա կ՛ուզէր:

— Բայց ինչո՞ւ ամէն ինչ փակ է: Գիտէ՞ք որ ժամը
ինն է: Բացէ՛ք շուտով այս պատուհանները:

— Ո՛հ, Մոտ, աւելցուց սիրահարը: Այնքա՛ն կը սիրեմ
այս գիշերը:

— Ո՛հ, ո՛չ, բացէ՛ք: Ձէ՞ք տեսներ որ, աւելցուց ժը-
պիտով, ցերեկուան հագուստով եմ:

Իր շէնշողութիւնը կը ծածկէր իրական նեղութիւն մը,
երեկոյեան այս զարդասրահին մէջ, հագուած ըլլալուն հա-
մար, առտունները դուրս ելլելու շրջադրեւորը: Թաւիշներվո
եզերուած կապոյտ շէվիթէ փէշ մը, սաթէն շապիկին վը-
րայ նոյն գոյն պոլէրօ մը եւ ձերմակ քոլով կապոյտ ասթ-
րաքան շարփուշ մը:

Ժիւլիէն ցաւելով հանդերձ հնազանդեցաւ: Բացաւ եր-
կու պատուհանները, մինչդեռ Մոտ լոյսերը կը մարէր:
Չուարթ եւ մաքուր լոյսը ներս թափանցեց, դուրս վանե-
լով գաղտնիքին շողին:

— Լա՛ւ, յարեց Մոտ, այժմ նստեցէ՛ք քովս. պատմե-
լիք շատ բան ունիմ ձեզի: Նախ ըսեմ որ Մաթիլտ մեռաւ:

— Ա՛հ. ըրաւ Սըւպէրսօ, ձանձրալի է: Սյլեւս չգիտի
կրնանք...:

— Մեռաւ այս առտու, ժամը եօթին. արդէն ինքզին-
զինքը կորսնցուցած էր, երբ եկան էթիէնէթը տանելու:
Փամը ութին հասանք ես եւ Փոլ Լը Թէսիէ: Աղնիւ Փոլ
այնքա՛ն շփթած էր որ, կարծես Մաթիլտ մահը զինք
այրի թողած ըլլար:

Ժիւլիէն, իր միակ մտահոգութեամբ զբաղած, հար-
ցուց.

— Այն ատեն, ղերար հո՞ս պիտի տեսնենք, կամ թէ
պէտք է որ, ուրիշ տե՞ղ մը փնտռեմ:

— Ի՛նչ տղայ, ընդմիջեց Մոտ, անոր երկնցներով
պագներու համար իր մերկ դաստակը: Կարելի չէ լրջօրէն
խօսիլ ձեզի հետ: զիս մտիկ չէք ըներ:

Ու, վարկեան մը լուռութենէ վերջ՝ յորում իր սիրահա-
րին չնայեցաւ, աւելցուց նէ, իրեն սչ-սովորական յոգնած
շեշտով մը:

— Բարի՛ եղէք ինձի համար: Եթէ գիտնայիք թէ որ-
քա՛ն ջղայնացած եմ այսօր:

Իր գլուխը դրաւ ժիւլիէնի կուրծքին վրայ եւ աւելի՛
կին դարձած, աւելի՛ գուրգուրալի՛ վիշտին մտածումովը,
քանի որ պիտի խօսէր այդ տարտամ բարեկամին՝ նէ բա-
ցաւ անոր մետաքսեայ շապիկը եւ շրթունքները հանգչե-
ցուց ճիշդ սիրտին վրայ. երկուքն ալ կը նուաղէին:

— Եկո՛ւր, աղերսեց նա.

— Ո՛հ, այս առտու, հոս եկած եմ խօսելու համար շատ
ծանր բաներ: Կը գուշակէք թէ ինչե՛ր են: Այսօր կէսօրէ
վերջ, Պ. տը Շանթէլ պիտի գայ ձեռքս խնդրելու:

— Ա՛հ, յարեց ժիւլիէն:

Չարմացաւ նա, չնեղանալուն համար, եւ Մոտ ալ
տալչեցաւ, զայն հանդարտ տեսնելով: Շարունակեց նէ:

— Մեզի կը թուի թէ, իրեն եւ ինձի, որ լաւ է մի-
անգամ ընդ միշտ լմնցնել որոշուած բանը, կարելի եղածին
չափ շուտ: Պիտի՞ք ամուսնանանք Ապրիլի Էվերջերը:

Յամբարար ժիւլիէն կը զգար յառաջ գալը անձկու-
թեան մը. տակաւին բան մը չէր ասիկա, բայց ատիկա
երթալով կը մեծնար, կը մեծնար: Չպատասխանեց. Մոտ

չարունակեց.

— Կը հասկնաք որ պէտք եմ զգոյշ կենալ բարեկամուհիներու հետաքրքրութենէն եւ բամբասանքներէն. այս ամուսնութիւնը կը կառողեցնէ նախանձորդուհիները: Մաքսիմ ոչ մէկուն կը ձանձնայ, եւ միայն ինձմով կը հետաքրքրուի. Բարիկ մնայէն սեւէ վտանգ չկայ: Սակայն, ես մամային եւ ժազըլին հետ, պիտի երթանք ամիսի մը չափ անցնել Շանպլէ: Ո՛հ, գրեթէ ամէն օր պիտի գամ, կը հասկնա՞ս, յարեց ժիւլիէնի ձեռքերը բռնելով. օ՜փա, արդուզարդ, կահաւորում: Միայն պաշտօնապէս պիտի բնակիմ Շանպլէ, ուր մեզի հետ պիտի մնայ էթիէնէթ, իր սուգի քանի մը շաբաթները: Հոն պիտի ըլլանք իբր մեր տան մէջ. Լը Թէսիէները երբեմն պիտի այցելեն: Լաւ կարգարութիւն մըն է այս, Բայց ի՞նչ ունիս:

Ժիւլիէն, վերջին բառերուն վրայ՝ ոտքի ելած էր, եւ միշտ լուռ, այժմ կը ձեմէր սենեակին մէջ անկանոն քայլերով: Անձկութիւնը կը բարձրանար մինչեւ իր կոկորդը շնչահեղձ ըլլալու աստիճան կը նեղուէր. եկաւ, կեցաւ Մոսի դիմաց.

— Այն ատեն, կարգադրուած է ամէն ինչ:

— Սկզբունքով, այո՛. չեմ կարծեր որ ասիկա քեզ կը զարմացնէ:

Յանդգնօրէն ըսաւ այս բանը անոր, աչքերը՝ աչքերուն մէջ, այնպիսի կեցուածքով մը, որ իր որոշումներուն մէջ սեւէ միջամտութիւն չէր ուզեր:

Բայց նա չէր դիմադրեր: Նստած էր անկիւն մը, ընկձուած, տրտում տխուր: Նէ պահ մը զայն դիտեց. պատրաստ ինքզինք պաշտպանելու: Յետոյ քսնի որ նա չէր խօսեր, չէր շարժեր, նէ ուզեց, ինչպէս շատ անգամներ, մղում տալ անոր քաջասրտութեան: Մօտենայով անոր, կամացուկ մը ըսաւ.

— Զօրաւոր եղիր: Միմիայն քե՛զ կը սիրեմ:

Զլսեց, անշուշտ, իր մտածումներուն մէջ ընկղձած: Թոթովեց.

— Կարելի չէ այդ բանը:

Անոնի անձկութիւն մը դաշունած էր իր սիրտը, եւ առաջին անգամ ըլլալով՝ այս կնոջ ամուսնութիւնը ուրիշ չի մը հետ, իրեն երեւցաւ բնականէ դուրս բան մը. հրէշային եւ ոչ ստոյգ:

— Ի՞նչ բեւեղ կ'ուզես, հարցուց Մոս:

Նա կրկնեց.

— Կարելի չէ այդ բանը. Չպիտի ընենք ասիկա:

Չեւքը ճակտին դրաւ, մղձաւանջի այդ քողը հեռացնենելով:

— Կարելի բան չէ, կրկնեց երրորդ անգամ ըլլալով, անշուշտ ձայնով մը՝ որ ոչ ազատանք էր եւ ոչ ալ շրաման. հաւանականութեան մը արտայայտութիւնը միայն: Օն ուրեմն Մոս, կը սիրեմ քեզ. աշխարհի մէջ միայն քեզ ունիմ, եւ դուն զիս կը սիրե՞ս: Վստահ եմ որ զիս կը սիրես: Եւ ես, քու իրդ եմ, բոլորովին քուկզ եմ, քո՛ւկզ եմ միայն: Առանց քեզի չեմ կրնար ապրիլ: Յիմարներ ենք: Զմեզ կը խաբենք:

Մոս, գրեթէ խտուրթեամբ, անոր պատասխանեց.

— Յիմար չեմ ես. դուն ես որ կը զստանցես:

— Բայց հանկցի՛ր ուրեմն, յարեց ժիւլիէն, թէ ինչ որ պիտի տաս ուրիշի մը, ամէնէն թանկագին բանն է այդ: Պիտի ըլլաս իր կիներ, հակառակ ամէն բանի: Փափաքած բանս է որ անոր կուտաս: Ու, քսնի որ զիս կը սիրես, պէտք է որ ինձի վերաբերիս: Կը տեսնեմ ասիկա յստակ, յստակ... ինչպէս յոյսը:

Ու մօտենայով անոր, աւելի ուժգնօրէն.

— Յիմարներ եղանք, այո՛, յիմարներ, դուն եւ ես: Չեմ ուզեր, չեմ ուզեր, որ ուրիշ մը քեզ ունենայ, դուն՝ զոր ես երբեք չունեցայ: Այդ բանը չպիտի ըլլայ: Թո՛ղ ինձի պահել զքեզ, կեանքս պիտի փոխեմ, պիտի աշխատեմ, քեզ թագուհի պիտի ընեմ, աւելի լաւ՝ քան այդ ասպուշը՝ որ չի հասկնար զքեզ: Կը խնդա՞ս ըսածներուս վերայ: Ա՛հ, պիտի դիտնամ աշխատիլ, քեզ ունենայու համար: Ինչ որ ալ ըլլայ, պիտի ընեմ, քեզ պահելու համար: Ո՛հ, կեցի՛ր, ինձի եղի՛ր: Չեմ կրնա՛ր... չեմ կրնա՛ր:

Երիտասարդ աղջկան առջեւ, գետին ինկաւ. պահնելով ոտքերը, անոր շրջագգեստին մէջ Կարձնելով իր ճակատը, գրկելով անոր կրոր սրունքները: Չէր լար, բայց առանց արցունքի, հեծկլտանքներ զայն կը ցնցէին: Չգաց Մոտի ձեռքը, որ զինքը մէկ կողմ կը հրէր հաստատապէս, իր կծկծուած ջիղերուն բոլոր ուժովը: Իր կարգին, վիրաւորուած իր հպարտութեան մէջ, գուշակելով, որ ազանսօք ամէն ինչ պիտի կորսուէր, ոտքի ելաւ:

— Լմնցա՞ւ հարցուց Մոտ, արհամարհական շեշտով մը:

— Չլմնցաւ, յարեց Ժիւլիէն, ինչ որ լմնցաւ, այդ ամուսնութեան կատակերգութիւնն է. չպիտի ըլլայ այդ բանը, կը հասկնա՞ս: Մարդու հետ չեն խաղար, ինչպէս կը խաղաս ինծի հետ: Չեմ ուզեր այդ դերը, շարունակեց, Մոտի հեղինական լուսթենէն զայրացած: Չեմ ուզեր (եղած զայրոյթէն կը հեւար եւ բռնորդ իր կոկորդին մէջ կը խեղդուէին) եղած ըլլալ. . . միայն կանթեղավառ մը:

— Ա՛հ, թշուառական:

Նէ շուտով մը իր ջձեռքը դրաւ անոր բերնին վրայ, իբր, թէ, ներս մտցնելու համար այդ նախատինքը: Բայց Ժիւլիէն բռնեց այդ ձեռքը, իր շրթունքներուն վրայ սեղմեց. միւս բազուկը երիտասարդ աղջկան մէջքին անցնելով՝ կը բռնէր այդպէս, այս ապստամբ եւ սարսուճն մարմինը. եւ կ'ըսէր-

— Ո՛չ... չպիտի ըլլայ այդ բանը: Պէ՛տք է որ իմինս ըլլաս. Իրա՞ւ հաւատացիր որ քեզ պիտի թողում երթալու: Երբե՞ք: Իմս ես. քեզ կ'ուզեմ. զքեզ պիտի ունենամ, նոյն իսկ բռնի կերպով:

— Վա՛տ, վա՛տ, յարեց Մոտ: Թո՛ղ զիս:

Չնէ սեղմեց աւելի՛ ուժով. նէ զգաց հրուիլը դէպի քաղմոց՝ ուր բարձիկնսրը պիտի ընդունէին իր անկումը: Հակառակ իր կամքին, բռնուելու, եւ ուժի զօրութեամբ իւրացուելու գաղափարը, խստորէն խթանեց իր հպարտութիւնը, այնպէս որ այդ վայրկեանին ատեն՝ Ժիւլիէնը: Բազուկներովը, ծունկերովը, եղունգներովը եւ ակունե-

րովը ինքզինքը կը պաշտպանէր, չգիտնալով այլեւս թէ ի՞նչ կը պաշտպանէր, ծրարուած կուսական բնազդային կոիւլին մէջ՝ ընդդէմ այն մարդուն, որ գրեթէ շատ անգամներ եղած էր իր սիրահարը: Ինքը, խելակորոյս եւ մոլեգնած, բոլոր ուժովը կը դիմադրէր անդալայորէն խածուածքներուն եւ պատուածքներուն: Յանկարծ Մոտ ճիւղ մը արձակեց: Իր ձեռքը՝ կոիւլին անկարգութեան մէջ, հանդիպած էր անոր գնդասեղին ծայրին. արիւնը հոսեցաւ պատուուած մորթէն. Ժիւլիէն, սթափելով անմիջապէս, ձգեց: Երկվայրկեան մ'անցաւ միայն, եւ երբ ուզեց վերիստին բռնել, արդէն նէ սրահին միւս ծայրն էր, ցիր ու ցան ընելով իր եւ անոր միջեւ իբր պատնէշ ծառայող կարասիները:

— Մո՛տ, ըսաւ Սիւսէրսօ, այս կոիւլէն աւելի՛ ընկձուած քան նէ. յիմարութիւնն է այս, ինչու, ինչո՞ւ ոչ:

Չեր համարձակեր անոր մօտենալու. իր նոսացած էր անոր կողմէն:

Մոտ, առանց զայն հեռացնելու իր նայուածքէն, բացաւ պատուհանը:

— Կ'երդնում քեզի որ, յարեց նէ, շնչատ կերպով, եթէ ինքզինքս սպաննեմ, շատ գէշ: Սակայն չպիտի ըսպաննուիմ, որովհետեւ բարձր չէ պատուհանը: Պիտի խուսափիմ քեզմէ, քեզ երբեք չտեսնելու համար. երբե՞ք, երբե՞ք. կ'երդնում քեզի:

Այսուհանդերձ քայլ մը եւս մօտեցաւ նա եւ անմիջապէս անձկութեան ազդակ մը արձակեց. նէ ցատկելու վրայ էր:

— Մո՛տ,

— Հիմա կը հաւտա՞ս, ըսաւ անոր, զատարկութեան եզրէն:

Ընկրկեցա՞ւ. ինկաւ ջրազմօցին վրայ, ճակատը ձեռքերուն մէջ: Յաղթուած էր որոշապէս. զնէ կը սիրէր չափազանց: Ահռելիօրէն, իր տիրուհին էր. պէտք էր հնազանդիլ: Վտանգէ մը ազատուող կնոջ մը նման, արցունքներ պոռթկացին իր աչքերէն առա՛տ, առա՛տ:

Երբ համարձակեցաւ զլուխը վեր կանգնել, Մոտ, ոտքի վրայ իր քովէ էր, հանդարտ: Այս անգամ եւս, նէ իր ձեռքը դրաւ անոր ձակտին, խաղաղութիւն պարգեւելու համար անոր, վիրաւորած պաշտելի ձեռքը:

— Մոտ, սիրակա՞ն Մոտ...:

Այլեւս ուժ չունէր կամք չունէր եւ ոչ իսկ փափաք: Միայն կ'ուզէր զայն իր քովը ունենալ:

Խելօ՞ք, չէ, Տրմնջեց նէ, Այդպէս, կը ներեմ քեզի: Մնրադիր տնոր քով, նէ համբուրեց երկարօրէն զայն շրթունքնորէն, ծծելով այնտեղէն իր ուժերուն մնացորդը:

— Հաւտա՛ ինծի, ըսաւ նէ: Ողջամիտ մնանք: Թո՛ղ ինծի փրկել քու եւ իմ կ'անքս: Քեզ միայն կը սիրեն:

Ոտքի կ'ելլէր. ձեռնոցները կը զնէր: Նա ուզեց անոր հետեւիլ:

— Ո՛չ, կեցիր, հրատայեց նէ: Մնաս բարով: Տուն մի՛ գար. քեզի պիտի գրեմ:

Հնազանդեցաւ:

Քոնսթան, կէս օրուան մօտ վար իջնելով՝ առանց կանչուելու, համարձակեցաւ սրահ մտնել: Ժիւլիէնը գտաւ միւլենոյն յոգնած դիրքին մէջ:

— Պարոնը կ' քնարա՞ր:

— Այո՛, Քոնսթան: Զգէ՛ զիս, երբ նախաճաշ ուզեմ պիտի կ'անչեմ զքեզ:

Քնացած չէր: Մոտի մեկնելէն յետոյ մնացած էր այդպէս, թաղուած իր մտածումներուն մէջ, միտքը տարտամ եւ արթուն: Կը տառապէ՛ր: Ի զուր կը փորձէր վերստին կեանք առնուլ, ի զո՛ւր վերյուշել կ'ուզէր այն հին խօսքերը՝ որոնցմով երիտասարդ աղջիկը իր կամքը ոչնչացուցած էր:

«Աշխարհը զօրաւորներուն է»: Տկար արարածները պէտք է ստանձնել անասուններու պէս: Ի զո՛ւր ինքնիրեն կ'ըսէր: «Այդ մարդէն տաջ՝ Մոտը իմ թւերուս մէջ ունեցայ: Գոռանքներ ունեցայ անոր կողմէ, զոր երբեք չը պիտի ունենայ այդ մարդուկը»:

Նախանձ ու ապստամբ ցնցումը իրեն կը պատասխանէր: «Այո՛, բայց նէ պիտի ըլլայ անոր կինը»: Եւ ուրիշ

մը կողմէ իւրացուած Մոտի անուի պատկերը իր մէջ կ'արթննա՛ր: «Ո՛հ, կը տառապի՛մ, կը տառապի՛մ»: Կը տառապէր ատոր դէմ, ոչինչ կար զինք պաշտպանող. Անշուշտ հակառակ իր տառապանքին, թերահաւատ կը մնար պայմանադրեալ օրէնքներու. ոչինչ իրեն կ'ապացուցանէր, թէ բարոյականութիւն մը կրնայ փակուած մնալ գոռանքներու մէջ, ոչինչ կ'ապացուցանէր իրեն թէ գոյութիւն ունի բարի մը եւ չար մը մարդկային սիրոյ մէջ:

Բայց ինչո՞ւ համար, իր չարչարանքէն իւր իր մէջ կը բարձրանար յուսանա՛տ, բուռն կոչ մը, այնքան անգամներ ուրացուած այդ օրէնքին դէմ, այդ չ'հաւնուած օրէնքին դէմ:



ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

Ա.

Արթուն ես՝ :

— Այո՛, մտիր սիրունիկս,

Էթիէնէթ, դուռը ետեւէն գոցուելուն պէս գնաց պագտուել Մոտի, տակաւին պառկած: Իրենց բերանները և ձեռքերը զիրար կը փայփայեն թեթև գգուանքով մը, փութկոտ եւ յարգալից, զոր գեղեցիկ կիները իրարու սիրով կը մեծարեն, երբ այրերու բացակայութիւնը անոնց մէջէն կը ջնջէ մրցակցութիւնը: Մնաց որ, Շանպլէի մէջ գտնուելնէն ի վեր, իրենց բարեկամութիւնը վանքի հին մտերմութեան աղբիւրներէն առնուած՝ աւելի տաքցած էր իրենց խոստովանութեանց մէջ: Երկուքն ալ, Մոտ իր ապետամբ ընթացքին մէջ հաստատուն, էթիէնէթ այնքան դառնօրէն կեանքը ուսումնասիրած, իրարու նկատմամբ կը մնային պարզ բարեկամուէի, աղջիկներ: Ասոնց խօսակցութիւնները մտիկ ընող մը, պիտի հիանար անոնց անմեղութեանը, պաշտելի տղայութեանը վրայ:

Առտուան իրենց գգուանքներէն եւ սովորական շատախօսութիւններէն վերջ՝ սկսան վիճիլ արդուզարդի եւ քուրջերու վրայ:

— Միշտ պէտք է որ դուն սև քեքօն հագուիս, ինչպէս հիմա: Քու մազերուդ և գոյնիդ շատ յարմար է: Ո՛հ, մազերու սէրը: Նոր ոսկի են այդ հիւսկները:

Ու այդ հիւսկէնը կը բաղդատէր, իր աւելի մութ մետաքսեայ մազերուն հետ.

— Նայէ՛. իմիներս գրեթէ թուխ կ'երեւին: Երբեք քու մօտդ մնալու չեմ: Կատարելապէս կը շիջանիմ:

— Կ'ուզե՞ս լռել, յարեց էթիէնէթ: Ատոր համար կը վիճի՞ն:

Իր մատերը անցուց թուխ գանգուրներու անուշ և նուրբ հիւսկէններուն մէջ, որոնք անմիջապէս շոտագոյն ցուքերով սկսան փայլիլ, բացաւ անոր վիզը, մէջտեղ հանեց կոկորդին ծայրը եւ շրթունքները հոն զետեղեց:

— Դուն ես որ շատ գեղանի ես սիրելիս: շատ թագուհի: Քու մօտդ կ'երեւիմ սենեկապանուհի կին մը: Սակայն ատիկա կարեւորութիւն չունի ինձի համար. կը սիրեմ ըզձեզ.

Ու գիրկընդխառնուեցան:

— Ի դէպ, ըսաւ Մոտ, որոշեցի մեծ պեպլոն (peplum)

մը ձգել շրջագետտիս վրայ:

— Այն որ Լաֆէրիէօին քով կը գտնուի:

— Այո՛, միայն քիչ մը պիտի շտկեմ: Պիտի տեսնես:

Բառատրեց էթիէնէթին, որ զինքը կ'ընդմիջէր, քանի որ ինքն ալ Պլուզէր շտկուել իրենը: Ու ճամարտապէս նկարիչի վրձին մը պէտք էր այս երկու կէս-լուրջ, կէս-ժպտուն աղջիկներուն համար, որ կը վիճէին զանազան զիրքեր առնելով. Արմիտի գղեակին ընդարձակ սենեակին մէջ՝ զարդարուն միւզէի մը՝ արժանի կարասիներով:

Իրարու հետ համաձայնած չէին, երբ սենեակին դուռը բացուեցաւ. Պէթթի առտուան սուրհանդակը կը բերէր:

— Իմ նամակ՞ս ալ բերիք Պէթթի, հարցուց էթիէնէթ:

— Այո՛, օրիորդ, տեսայ որ օրիորդը իր սենեակը չ'էր, այն ատեն ամէնքն ալ հոս բերի: Օրիորդը երկու նամակ ունի:

— Ա՛հ, ըրաւ երիտասարդ աղջիկը, գարմազած. ո՛վ կրնար ըլլալ...:

Կը սպասէր նամակ մը միայն Փոլ Լը Թէսիէէն. իրեն կը գրէր ամէն օր, նոյնիսկ երբ կուգար նախաճաշելու կամ ճաշելու ի Շանպլէ: Ամէն օր ինքն ալ անոր կը պատասխանէր, երջանիկ զգալով իր անձը, որ միանկը չ'էր՝ աշխարհի մէջ:

Այսօր կնքուած ճերմակ պահարանը՝ Սերակոյս. Առաջին անգամ չի բացաւ զայն. իր վարանոտ ձեռքերուն մէջ կը բռնէր երկար, կարմիր, օտար գրոշմով պահարանը:

կարելի ըլլար խելքը զուլսը բերել: սիրտը շատ լաւ է:

Այն առաջարկին մէջ՝ որ քիչ առաջ ծանր երեցած էր իրեն, կ'երեւնար խեղճ աղջկան բարեկամեցողութիւնը իր մասին: Բարքերու եւ գիրքի համեմատ, մարդ բարեացա- կամ է. . . խեղճ Սիւզան:

Մոտի հետ խորհրդակցեցաւ:

— Փոլին ըսելու է, որ նամակ ընդունեցայ:

— Ես չպիտի ըսէի եթէ քու տեղը ըլլայի: Ատիկա ի- րեն անախորժ պիտի երեւնայ: Եթէ Սիւզան վերադառնայ, պիտի իմանայ միշտ: Եւ յետոյ, ո՞վ գիտէ: Պիտի՞ գայ:

— Ճիշդ է, իրաւունք ունիս: Ինչպէս միշտ յստակ կը տեսնես: Բայց զքեզ կը նեղացնեմ իմ գործերովս: Դուն ալ լուրեր ունի՞ս:

— Ո՛չ, յարեց Մոտ, ծուղեցրուն եւ անկողնին սէջ ին- կած, բազ պահարանները եւ նամակները, մտնեցրուն ծայ- րով հոս հոն հետեւով: Հայթայթ իչներ, անխուսափելի: Ա- հարոն որ զմեզ կը հրաւիրէ ճաշի, ձոն Արթիւր, որ վար- ձատուն մը կ'առաջարկէ: Ամէնն այս է, աւելցուր նաև Մաքսիմը, բնականաբար:

Ե՛ւ . . .

— Ոչ իսկ բառ մը:

— Ո՞ր որ գրեցիր:

— Չորեքշաբթի:

— Գրեթէ շաբաթ մը առաջ: Բնական է: Նեղա- ցած է:

Մոտ կոնակի վրայ պակեցաւ, բարձիկներուն վրայ թե- ւերը երկնցուցած, դէմքը յոգնած:

— Ի՞նչ կ'ուզէս սիրելիս. պիտի նեղանայ: Չ'եմ կրնար ամուսնութենէս տասնէհինգ օր առաջ, իմ յետ կիսաւուր- ներս անցնել Պոմ փողոցի վարնայարկ սենեակի մը մէջ: Բռնութիւն չեմ ուզեր: Իրեն պարտադրած միջոցս շատ եր- կար չէ: Կրնայ համբերել. մնաց որ, ուղէ թէ ոչ, իրեն գը- րածիս պէս պիտի բնեմ. մինակս դուրս չպիտի ելլեմ Փա- րիզի մէջ: Իրեն տուած խրատս բանաւոր չէ՞: Մէկ երկու ամսոյ չափ թող ճամբորդութիւն մ'ընէ: Դրամ ունի, ա-

— Ի՞նչ ունիս, հարցուց Մոտ, երբ Պէթթի դուրս ելաւ. ուսկի՞ց է այդ նամակը:

Սիւզանէն է, պատասխանեց Էթիէնէթ. Հոլանտայէն կուգայ:

— Ա՛հ, իրաւ որ ձանձրացուցիչ է: Կրնար քիչ մ'եւս սպասել Սիւզանն իր նկատմամբ լուրեր տալու:

Կը հասկնար Էթիէնէթի մտածումը: Հիմակ որ մայրը մեռած էր, Փոլին հետ ամուսնանալու արգելքը այդ յիմար Սիւզանն էր, որ ամբողջ Փարիզի հետ կերած, խմած ու պառկած էր. Իր երկար բացակայութիւնը, երկար լը- ութիւնը, նոյնիսկ Մաթիլտի մահէն վերջ, սկսած էին զնէ մոռցնել տալ Փարիզի մէջ՝ որ շուտով կը մոռնայ: Վերջս- տին մէջտե՞ղ պիտի ելլէր:

«Ամսթէրտամէն կը գրեմ քեզի, ուր հասայ խումբին հետ: Բայց թատրոնը թողուցի: Շատ բարեկեցիկ, շատ չիք երիտասարդ վաճառական: մը հետ՝ եմ, զոր քիչ ժամանա- կէն պիտի բերեմ Փարիզ: Թերևս պիտի որոշենք իր եղ- քայրն ալ միասին բերելու. այն ալ հարուստ է, բան մը չ'ըներ եւ դուն իր փափաքած թիփն ես.

Կը յուսամ որ մաման աղէկ է: Եթէ բանի մը պէտք ունի, գրէ ինձի Միլ-Քոլոն Պանդոկ: Հանրին շատ շնորհ- քով է եւ ուզածս ունիմ:

Անկապակից, անդիտակից երկար շատախօսութիւն մը՝ որ Էթիէնէթը կը ջղայնացնէր եւ պզտիկ կը ձգէր: «Կը յուսամ որ Մաման աղէկ է. . . Հանրին եղբայր մ'ունի, որ բան մը չ'ըներ. իր փնտաածն ես. . .»: Ահա թէ ի՞նչ կեր- պով կ'ըմբռնէր ընտանիքը:

— Չեմ համարձակիր ասիկա քեզի կարդալու, ըսաւ Մո- տի: Աւելի աղէկ է չ'կարդալը:

Սակայն խորհեցաւ որ, զնէ մեռած կը կարծէր, այն ալ բռնուած հիւժախտէն: Այն ատեն ամօթ զգաց, առանց ցաւելու այդ կարծիքը ընդունած ըլլալուն: Չէ՞ որ այն կը մնար միայն հինէն, այն խենթուկ Սիւզանը, որուն հետ կը խաղար ժամանակին, երկուքն ալ չ'գիտնալով թէ ի՞նչ էր ատոյց կեանքը:

Բարձրաձայն ըսաւ:

— Խեղճ պզտիկս: Դո՛հ եմ դարձեալ, իրմէ լուռ առնե- լուս համար: Ա՛յնքան առողջութիւնը տկար է: Եթէ

կուժքին մէջ այս միջոցիս կը շահի ուզածին չափ: Երբոր վերադառնայ ամէն ինչ տեղաւորուած, շտկուած պիտի ըլլայ: Ու ես ալ պիտի ըլլամ դեր կոմսուհի տը Շանթէլ: Եւ Ժիւլիէնի ապագան ինծի կը վերաբերի:

Վայրկեան մը սպասեց Էթիէնէթի հաւանութեանը տեսաւ որ չ'էր խօսեր եւ Լը Թէնիէի նամակը աչքէ կ'անցընէր մտացիր կերպով, շտկուեցաւ, արմուկին վրայ կոթնեցաւ:

— Մտիկ չե՛ս ըներ ինծի:

— Այո՛, յարեց երիտասարդ աղջիկը, գիտես որ ասանկ բաներու համար քիչ մ'ապուշ եմ: Ձիս կը զարմացնես միշտ: Երբեք աղէկ չպիտի ըմբռնեմ զքեզ:

— Եւ սակայն շատ յստակ է:

— Օ՛հ, ներէ ինծի յարեց Էթիէնէթ, իր թեւը Մոտի ծալլուած թեւին մէջ սահեցնելով փայփայանօք:

Նախ քեզի կ'ըսեմ: Դուն իրաւունք ունիս. ես պզտիկ անմիտ մըն եմ: Իմ ամէնէն շատ փափաքած բանս է ըլլալ մէկուն քով՝ որ զիս կը սիրէ եւ ես ալ զինքը կը սիրեմ: Մընացածը ինծի համար արժէք չունի: Չես կրնար այդ բանը երեւակայել: Բաղքենուհի մըն կմ, տարեկան երեք հազար ֆրանքով պիտի ապրիմ գաւառի մէջ: Ուրեմն եթէ քու տեղըդ ըլլայի սիրելով Ժիւլիէնը, ինչպէս որ կը սիրես (Մի՛ ըսեր ոչ՛, զայն կը սիրես անխոհեմութիւններ ըրած ըլլալու աստիճան. ինչ որ արտակարգ բան մ'է քու կողմէդ) պարզապէս պիտի ամուսնանայի անոր հետ:

Քեզմէ կառավարուելով, Ժիւլիէն՝ որ ծոյլ է թէեւ, սակայն ոչ յիմար մը, պիտի կրնար իր ճամբան առնել: Նուազ հարուստ պիտի ըլլայիր, քան դեր-կոմսուհի տը Շանթէլը. եւ չպիտի իյնայիր այս երկընտրանքին մէջ. այլեւս չտեսնել սիրած մարդդ, կամ կեանքդ անցնել արամի միջոցորտի մը մէջ, որովհետեւ ոչ մին եւ ոչ միւսը յարմար են քու սիրահարներդ: Տրամի մէջ ապրիլ, իմ բնութեանէս վեր է այդ. լաւագոյն ունիմ ամէնէն չափաւոր հանդարտութիւնը:

Այս ամէնը ըսուած էր խաղաղիկ, ամոքիչ եւ գրեթէ

գորովի չեղտով մը, խառնուած համեստութեան եւ ապահովութեան, Մաթիլտի աղջկան եղական հրապոյրը. Մոտոր անոր մտիկ ըրած էր ԼըՊօրէն, պատասխանեց քիչ մը այլայլած ձայնով:

— Ինչ՞ որ ըսիր հիմա, ճշմարիտ է քեզի եւ ուրիշներու համար. ինծի համար, ոչ: Ո՛հ, ինքզինքս քեզմէ բարձր չեմ սեպեր եւ ոչ ալ ուրիշէ մը. բայց չպիտի կրնամ համակերպիլ երբեք Ժիւլիէնի պէս մարդու մը կիւնը ըլլալ, որովհետեւ չեմ ուզեր դասազուրկներու շարքին մէջ ըլլալ, կ'իմանա՞ս: Աւելի աղէկ է հասարակ բող ըլլալ (քիչ մնաց պիտի ըսէր՝ «ինչպէս քոյրդ»): Ինքզինքին եկաւ) ինչպէս շատ շատեր, որոնք վանքէն սկսելով, տարիածութեամբ վերջացուցած են իրենց կեանքը: Աւելի լաւ ունիմ Ահարոնի սիրուհին ըլլալ, որմէ կը խորշիմ: Գոնէ, այսպէսով բնկերութեան հետ կապս կը կտրեմ եւ ոչ եւս կը խորշիմ անոր վրայ. եւ յետոյ մեծ պերճանքի կը տիրանամ

— Ու սէ՛րը, ըսաւ Էթիէնէթ ժպտելով:

— Սէ՞րը: Ի՞նչ կը հասկնաս սէր ըսելով, այսինքն կըրակին անկիւնը: Ինչպէս Փոլ, որ քեզ կ'առնէ իր ծունկերուն վրայ եւ կը բռնառնէ քեզի գգուանքներ ցոյց տալով, եւ ի փոխարէն անոր կը պատրաստուի խաշած հաւկիթ եւ հողաթափներ: Այդ տեսակ սէրէն կը սոսկամ, կը հասկնա՞ս: Ձգուա՞նք, զգուա՞ք: Փափկազգաց չ'մ. գգուանքը ջիղերուս կ'ազդէ:

Մոտ, անկողնոյն ծայրին կոթնցուց երկու արմուկները եւ խուլ ու խորխտ ձայնով մը.

— Ժիւլիէն: Ա՛հ, հողաթափներու սէրը չէ մեր երկուքին մէջ եղածը: Կ'ըսէիր թէ զինքը կը սիրեմ: Ո՛չ. վստահ եմ որ զայն չեմ սիրեր: Չայն կը տեսնեմ ինչպէս որ է. ոչ բարձր իմացականութիւն մը, ունայնամիտ, եսասէր, ծոյլ: Ո՛հ, շատ լաւ կը ճանչնամ զինքը: Եւ սակայն, այս ամէնուն հակառակ, անոր մէջ կայ բան մը գերազանց ուրիշ մարդոց նկատմամբ: Այնքան գեղեցիկ էակ մըն է, այնքան ուժեղ, այնքան փափուկ, այնքան... ինչպէ՞ս ըսել: Չեմ գիտեր: Արտայայտելու համար բառը կը պակասի:

Բան մըն է . բայց ծայրայեղօրէն բան մըն է . . . Սիրահարն է . կը հասկնա՞ս :

Ընկճեցաւ վերտոին , կոնակը՝ անկողնոյն վրայ , աչքերը փակ , եւ աւելի մեղմ ձայնով .

— Բոյորոր մարդերը , նոյն իսկ այդ խեղճ Քրիսթիանուն , որուն ետեւէն կը վազէին թէ երիտասարդուհիներ եւ թէ պատաներ , քիչ մո խորշելի են ինձի : Մաքսիմը տղեղ չէ , չէ՞ : Փափաք ունիմ զայն խածնելու , իրեն երկնցուցած ճակատս պազնելէ վերջ : Միայն ժ՛ւլիէնն է : Կը սիրեմ իր ձեռքերը , բերանը , աչքերը : Անո՞ր կը դանկամ , ինչպէս այրերը մեզի կը ցանկան , նոյն իսկ մեզ ատելով : Չե՞ս հոսկնար այս բաները : Թերեւս երբեք չպիտի հասկնաս , ինչպէս որ ես չեմ հասկնար հողաթափի երազները : Ես , միակ մարդու մը սիրահարն եմ . բայց անոելիօրէն : Ուսկի՞ց կուզայ ինձի այս խառնուածքը : Մայրս մեղմ է մկնարձի մը պէս . ժազըլին խօսքով միայն լպտի է . հօրս կողմանէ թերեւս , որ շատ կնասէր էր եւ կամ մօրս կողմէն , կիսավայրենի խափշիկէ մը : Ամէն պարագայի մէջ՝ շա՛տ կը տառապիմ :

Վայրկեան մը լոնց . յետոյ աւելցուց .

— Կը յիշե՞ս իրիկուն մը , մեր տան մէջ , այն պելճիգացին՝ որ մեր գերերէն դուշակուլթիւններ ըրաւ ու իմ մասին ըսաւ շա՛տ զգացասէ՛ր : ու այդ ապուշ տ՛իւսրիէնը ատիկա կարգալով ուսերուս վրայէն ծիծաղելով կը հեզնէր . « Ո՞հ , շա՛տ զգացասէր » : Ակնարկով մը լոնցուցի զինքը եւ ըսի իրեն . « խնդալու բան մը չկայ եւ ոչ ալ ապուշ բան մօ կարծելու » . Կը տեսնե՞ս , այդ բոլոր պուպրիկները չեն գիտեր թէ ի՞նչ րոն է զգայուն ըլլալ : Վայրկեաններ կան , երբ կը փորձուիմ հաւատալու թէ Բարիզի մէջ երկու սիրողներ կան — Ժիւլիէ՞ն եւ ես :

Բաւական ժամանակ լոնց . Էթիէնէթ քիչ մը շքմորած , իր բարեկամուհիին հոգուոյն վրայ յեղակարծօրէն բացուած այս տեսարանէն , կը խորհէր . « Որքան յուզուած ըլլալու է այսպէս խօսելու համար , ինք որ շատ լաւ կը հսկէ իր վրայ » : Բայց Մոտ գէպի սնոր պառնալով՝ սովորակաւ

ձայնով եւ շեւով մը .

— Ի՞նչ կ'ըսէ սիրելի ծերակուտականը :

— Կ'ըսէ որ այս առտու պիտի գայ նախաձաշելու . հաւանաբար Էթթորն ալ միասին :

— Անշուշտ որ , յարեց Մոտ խնդալով , քանի որ տիկին տը Շանթէլ միասին կը բերէ ժամներ :

Էթիէնէթ , ժպիտը՝ շուրթներուն , ոտքի ելաւ եւ համբուրեց Մոտը :

— Օ՛ն , ըսաւ , կ'երթամ աղւորնալ , ընդունելու համար սիրականս :

— Արգահատելի մէկը չէ քու սիրահարդ : Միայն՝ խըրատ մը կ'ուզե՞ս : Մի՛ թողուր որ շատ երկարի Ֆլիրթը :

Երիտասարդ աղջիկը , դուռնէն , հաւանութեան նշան մ'ըրաւ :

— Եւ , ոչ մէկ խօսք Սիւզաննի մասին , եղրակացուց Մոտ :

Պէթթին կանչեց . ներս մտնելուն պէս՝ հողաթափները տալով՝ Մոտ անկողնէն վար ցատկեց , թողլով գար իննալը ուսերուն վրայէն՝ գորգին վրայ , նրբաթել շղարշը : Մինչպէս իր լուացման տաշտը պատրաստուելու վրայ էր , զարգախուցին մէջ , երիտասարդ աղջիկը , մերկ , հանդարտօրէն գնաց դարակէն հանելու գուլպաներ , շապիկը , շապկընկերը , եւ սկսաւ զուարճանալ լոյսի ցոլքերէն շառագոյն զարձած իր գանգուրներուն հետ : Եւ այդ սպիտակ ձեւը , թուխ ծոճրակով , պզտիկ ծիծերով , բարակ սրունքներով , խնամոտ եւ փափկասուն ոտքերով , այո՛ , Բիանայի այդ սպիտակ մարմնացուածը կատարեալ եւ անարատ էր գիցուհիին մարմարեայ արձանին նման : Յետոյ , Պէթթի , կնոջական մատերով շփեց , փայտայեց , անուշահոտեց իր մարմինը : « Քիչ մը աւել , զօրաւոր կերպով » , կ'ըսէր նե :

Կէս ժամուան մարձուծի ժիջոցին , նէ կ'երագէր եւ օրուան ընելիքը կը պատրաստէր լուծեամբ . « Մաքսիմ , Ժիւլիէն , այժմ իմ կեանքիս երկու բեւեռները . . . » Մինչեւ հիմա , Ժիւլիէնը՝ իբր գերի գործածած էր իր զգայասիրութեան յագուրդ տալու , բայց հիմա կ'ուզէր փոխել իր

գործելակերպը, որովհետեւ նախագգացումը ունէր թէ թշնամի աչքերէ կը լրտեսուի, Սիւպէրսօի տունը գացած ժամանակ: «Յիմարութիւնն է Մաքսիմի Բարիզ եղած միջոցին մանակ: Գուցէ անստորագիր նամակներ պատուար տունը երթալը»: Գուցէ անստորագիր նամակներ պատուար տունը երթալը: Ետտ թշնամի ունիմ. այն դարչելի իւսէլին եւ կատաղի Ահարոնը կարող են իմ սպասուորներս կաշառել, եւ Պէթթի ամէն բան գիտէ»:

Առաջին անգամ ըլլալով, ապագային նկատմամբ կը դողդղար. բախտի հարուածէն կը վախնար. «Եթէ այս անգամ ալ չյաջողիմ, ալ կեանքս խորտակուած է»: Զօրեղ թելադրութիւն մը իրեն կը վկայէր: Ամուսնութիւնը վրիպելուն ի՞նչ պիտի ըլլար իր կեանքը. անկո՛ւմը, գիպուածին մէջ. միջակութեան անուելի՛ ապագան: «Օ՛հ, ոչ... երբե՛ք, երբե՛ք»:

Նէ շատ աղէկ գիտէր Ահարոնի շիւ ծրագիրները. օր մը իր ականջին փոփսացած էր. «Ձեր բարեկամն եմ միշտ. չես գիտեր թէ ապագան ի՞նչ վերապահած է քեզի. սակայն ես պատրաստ եմ միշտ, միշտ, եւ գիտէք թէ ուզած բանիս մէջ միշտ յաջողած եմ»: Ո՛հ, այդ անա՛րգ արարածը: Այդ շնական յայտարարութիւնը վայրի անասունի մը՝ իր վրայ յարձակելու տպաւորութիւնը թողած էր: սակայն, ապագան, եթէ ամուսնութիւնը չյաջողէր, կամ Ահարոնի ճանկերուն մէջ պիտի իյնար, եւ կամ... չքաւորութիւնը: «Քայքայումի նախօրեակին մէջ ենք», մտածեց նէ, եւ դրամական հոգերը ահաւոր կերպով զինքը կը տանջէին, որքան առ երեւոյթս յայտնի չընէր:

Բայց շուտով մը, կէս հաղուած, ինքզինքին եկաւ: Ժիւլիէն, Մաքսիմ, երկուքն ալ իր գերիներն էին, որոնք չպիտի կրնային ազատիլ իր ձեռքերէն: «Ուրիշներ ազատեցան ինձմէ եւ զիս մոռցան, որովհետեւ ինքզինքս սիրցնելու նեղութիւնը յանձն չառի», կը խորհէր:

Պէթթի իր գործը լմնացուցած էր. եւ Մոտ կիտաբաց պատուհանէն դուրս կը նայէր. դիտելով ծաղկազարդ պարտէզը: Վաղահաս ամբան շունչը օդին մէջ կը ծածանէր, կանանչներուն մէջ կը ցանցնուէր: Ո՞ր երիտասարդ հոգին

կրնայ դիմագրել, դարնանային առտուան մը գաղջէն դուրս ցայտած երջանկութեան մը վերակոչումին: Մոտ կը ժպտէր հանդարտ, վստահ իր վրայ եւ ապագային վրայ:

— Ա՛, մրմնջեց. արդէն էքթոր հոս է. սանդուխներէն վար կ'իջնէր, ժազըլին անոր ետեւէն, հովանոցը բացած: Փոլ Լը Թէսիէ ալ հասաւ իր կարգին, էթիէնէթի հետ, որուն ծոծրակը ոսկեփա՛լէր, արեւուն ոսկիին տակ:

Ժազըլին եւ էքթոր բառէր մտան: Ծերակուտականը էթիէնէթի հետ նստաւ քարաշէն նստարանին վրայ. աւազանին մօտիկը:

— Գացէք նայելու թէ տը Շանթէլները եկա՞ծ են, ըսաւ Մոտ Պէթթիի: Զեղի պէտք չունիմ:

էթիէնէթի եւ Փոլ իրարու հետ կը խօսակցէին սիրելի բարեկամներու պէս, ձեռք ձեռքի մէջ: Նա կը պատմէր անոր մասին ըրած դիմումները, առջի օր, Բարիզի մէջ:

— Արդէն, սիրելի բարեկամուհիս, ամէն ինչ կարգադրուած է ապահովագրութեան համար: Պայման դրուեցաւ որ, ես պիտի առնեմ քսան հազար ֆրանքը, զոր իբր թէ ինծի կը պարտիք, վճարելու համար իմ կանխավճարներս: Եւ, թոյլատրեցէք ինծի, ամէնն ալ ձեզ դարձնելու: Ժառանգութեան դժուարութիւնները հարթուեցան: Մօրգ մահուան ժամանակ, քոյրդ մէջտեղ չգտնուելով՝ կը կարծեմ որ ոչինչ պիտի պահանջէ իր ժառանգական բաժինէն:

էթիէնէթի ուզեց զայն ընդմիջել, Սիւզաննի նամակը ցոյց տալու համար. չհամարձակեցաւ եւ խոստովանութիւնը անկարելի եղաւ:

— Յարկաբաժինը ձեր անուան կը Ֆոսայ մինչեւ պայմանագրութեան լրացումը, այսինքն մինչեւ տասնըութ ամիս: Մինչեւ այն ատեն պիտի ամուսնանանք, կը յուսամ, եւ այն ատեն պիտի որոշէք, ինչ որ ձեզ հաճելի է: Իմ մասիս, բոլոր գործերս կարգադրած եմ. Տօքթ. Քրոս, հիւանդութեան վկայագիր մը պիտի տայ, որպէսզի երեք ամիսուան համար արձակուրդ ստանամ, երեք ամիս ալ իմ արձակուրդս, որով կ'ըլլայ վեց ամիս. Լոնտօնի մէջ պիտի ամուսնանանք, յետոյ քիչ մը ժամանակ ալ Վէզէրի կ'անցը-

նենք, Շանթէլ զոյգին մօտ եւ ապա կը դառնանք Փարիզ աւելցոց ժպտելով:

Կատակի ձեւին տակ, կը ծածկէր երկարօրէն խորհուած ծրագիր մը: Շանթէլներու եւ Ռուվոններու պաշտպանութեան տակ կ'ուզէր ամուսնանալ էթիէնէթի հետ որոնց փայլուն անուները ստուեր կ'ածէին Օր. Տիւրուայի ծագումին վրայ:

«Շատ Տիւրուաներ կան աշխարհի մէջ: Եւ յետոյ ի՞նչ կարեւորութիւն ունի կնոջ մը անունը, իր ամուսնութեան վաղայաջորդ օրը»:

— Որքան բարի էք, մրմնջեց գեղանի աղջիկը, փառաբանութեամբ զայն գգուելով:

— Շատ կը սիրեմ ձեզ, Գոնէ, դուք ալ քիչ մը պիտի սիրէ՞ք զիս:

— Գիտէ՞ք որ ձեզ կը սիրեմ:

«Այո՛, նէ զիս կը սիրէ», կը խորհէր նա, ըմպելով այն կապոյտ, յստակ աչքերուն քաղցրութիւնը. այդ երկտասարդ գարունին հոտը, զոր նէ դուրս կուտար: «Նէ զիս կը սիրէ, բայց ինչպէ՞ս կը սիրէ զիս: Որդիական զըգուանք մը այսօր բաւակա՛ն է անոր: Բայց երբոր ամուսնունը պիտի ըլլամ: Ո՛հ, պիտի սիրէ՞ զիս բոլորով սրտիւ, ինչպէս սիրահար մը»:

Տոկուն առաջադրութիւնը, իրենց տարիքին համար՝ շատ երիտասարդ սիրտերու կրծողը, զինքը կ'աքցանէին աւելի ուժգնօրէն, ցորչալի կը մօտենար ներս տիրանալու ժամը: Կը ցանկար այդ մատաղ մարմնոյն տրոփումը զըգուանքներու մէջ. միտի տէրը՝ միտին համար: Բոլոր սիրահարներուն ուխտը չէ՞ այդ:

Էթթոր՝ ժազըլինի հետ, լիճին եզերքէն կը վերադառնար. Փոլ, զայն նշմարելով՝ նախանձեցաւ անոր աւելի նուրբ, աննիթի թեթեւ սիլուէթին, անոր թուխ մազերուն, անոր երիտասարդ դէմքին եւ երեսուն տարիներուն վրայ:

«Անասունը, ըսաւ ինքն ինք, երիտասարդութիւն ունի, եւ ապուշ բաներով ժամանակ կ'անցնէ, այսինքն ֆլիթթով, փոխանակ սիրելու»:

Ու, այնքան տխուր իր քառասունհինգ տարիներուն վրայ, պահ մը մոռցաւ այն խորունկ սէրը՝ որ զինքը կը միացնէր եղբորը, ըսաւ էթիէնէթի լուռ եւ քիչ մը սնձկութեամբ:

— Եթթա՛նք, կ'ուզէ՞ք:

Էթթոր եւ ժազըլին, անտունն դարձած, կը բաժնէին սէրը ուրիշ ձեւով:

Ժազըլին, երբոր մարմարեայ սեղանի մը վրայ նստաւ, կ'եզրակացնէ, սկսուած խօսակցութիւնը:

— Եթէ բոլոր աղջիկները մտածէին ինծի պէս, սիրելիս, մեր պզտիկ ՏՁը պիտի ընէին եւ պիտի շահէինք մեր ազատութիւնները բուն կոիւներով:

— Ի՞նչ ազատութիւններ:

— Նախ, առանձին դուրս ելլելու եւ ճամբորդելու ազատութիւն: Մեր ուզած ժամերուն տուն դառնալու այսինքն առտուն. մեր քայքային համար դրամ վատնելու եւ սիրահարներ ունենալու ազատութիւն: Այո՛, սիրահարներ, ինչպէս որ դուք սիրուհիներ ունիք:

— Այդ կերպով ձեր երիտասարդ աղջիկները ամուսնացնելու դժուարութիւնները պիտի ունենաք:

— Ինչո՞ւ: Դուք կ'ամուսնանաք, տասը տարի բողբոջ հետ ժամանակ, նցնելէ վերջ: Ընկոյեայ սովորութիւն մը պիտի ըլլայ. ա՛նա ամէնքը: Պիտի ըսուի.— օրիորդ այսինչը փոթորկալից երիտասարդութիւն մ'ունեցաւ. բայց այս տեսակ աղջիկներն են որ լաւագոյն կիները կ'ըլլան: Աւելի լաւ է ամուսնութենէ առաջ, քան ետքը, սիրաբանել ինչ որ ձեզի համար ատանկ է:

— Պիտի տեսնե՞նք ատանկ բարքեր, յառեց էթթոր: Ես, իմ մասիս, գանգատելու բան մը չպիտի ունենամ:

— Օ՛հ, անկից օգտուելու համար, շատ ձեր պիտի ըլլաք: Ես ալ նմանապէս: Ատոր համար է որ ես կատարեալապէս խելօք աղջիկ մըն եմ, որ երբեք չպիտի թողում մէկուն, ինծի մօտենալ ամուսնութենէ առաջ:

Էթթոր, ժպտելով կը խորհրդածէր: Կը նայէր ժազըլինի. անհունօրէն զայն ցանկալի կը գտնէր եւ կը մտածէր:

Լէսթրանժի վրայ, առնական նախանձի գէշ զգացումով մը:
Հարցուց .

— Ուրեմն որոշուած է այդ ամուսնութիւնը խարտեաշ մարդուն հետ:

— Գաղտնապա՞հ էք:

— Շատ, իմ ժամանակակիցներու հաճոյքին համար:

— Լա՛ւ ուրեմն, այո՛ . սկզբունքով որոշուած է, առջի իրիկուընէ ի վեր: Հրաւիրած էի, մինակը, խարտեաշ մատղը, ինչպէս կ'ըսէք: «Պէտք է որ, ժամանակ առ ժամանակ իմ սիրահարս ունենամ, ես ալ ըսած էի մամայիս . ամէն մարդ իրենը ունի տունին մէջ»: Ինչ մը չափէն աւելի հոլանի էի, եւ անանկ գաղտնիք մ'ունիմ որ, մէկը երբ իմ քովս ըլլայ, պէտք է որ զիս միայն մտածէ, պէտք է միայն զիս շնչէ: Գուշակեցիք: Ծաշի ժամուն, բնականաբար, Լէսթրանժ բռնկեցա՛ւ, բռնկեցա՛ւ, այնպէս որ, ոչ եւս կ'ուտէր, եւ խօսուածները չէր ըմբռներ: Գիտէ՞ք, թէ ինչո՛ւ աւելի հակամիտութիւն ցոյց տուի անոր՝ որ գեղեցիկ ալ չէ: Որովհետեւ, զայն կրնամ գրգռել ծայրայեղօրէն: Պիտի ըսէք, որ բոլոր կիներն ալ այդպէս են: Ո՛չ, ես շատ աւելի: Ծաշէն վերջ, ծաղկանոցին մէջ, հրաշալի վայր մը ֆլորիթի, սիրելիս, ծաղկանոցը, արմաւենիներուն տակը: Գոյրս՝ դաշնակ կ'ածէր, մամաս՝ բասիանս կը բանար: Լիւկ եւ ես առանձին էինք, իբր թէ մասնակի խուցի մը մէջ ըլլայինք: Խօսուընտեցանք: Ինչ մը զայն գրգռեցի, յայտնելով որ արդէն ձանձրացած էի պաշտօնական կուսութենէն եւ գիրքս պիտի փոխէի. անոր ըսի որ անքուն գիշերներ կ'անցընէի, ջղային զարթունմե՛ր:

— Ըի՛շտ է, հարցուց էքթոր:

— Բայց այո՛ . ժիշդ է, բարեկամս: Ահա գործին տարօրինակ կողմը. կ'երեւի թէ դուք ալ քիչ մը կը յուզուիք պատմածներէս: Լէսթրանժ այլեւս ինքզինքը չէր կրնար բռնել, ձեռքերս բռնելով կը թոթովէր. «Ժագըլի՛ն, ժագըլի՛ն», տասնըհինգ տարուան սիրահարի մը պէս: Խօսքս լմնցուցի, անոր խոստովանելով թէ այդ քնատուութիւններուն մէջ, այդ ջղայնացումներուն մէջ, իրեն վրայ

էր որ կը մտածէի:

— Եւ այդ ալ ստո՞յգ էր:

— Տակաւին: Ասիկա ձեզ հանգարտեցնելու համար: Այն ատեն, սիրահարս, չկրնայով այլեւս դիմադրել, յեղակարծօրէն դոչեց. «Ժագըլի՛ն, կ'ուզեմ ունենալ ձեզ: Գիտէք որ ամուսնութենէ կը խորշիմ, սակայն պատրաստ եմ ձեզի հետ կարգուելու: Միայն, նախապէս կ'ըսեմ, կը վախնամ որ գէշ ամուսին մը պիտի ըլլամ: Կիներու բնկերութեան պէտք ունիմ, նոյն իսկ ամուսնացած ձեզ պէս կրքոտ կնոջ մը հետ: Թերեւս այս պէտքը պիտի տեսէ: Կը դարչիմ շղթայէն, որ խոչնդոտ մըն է ազատութեան: Նախանձոտ պիտի ըլլայի՞ք»: Խնդացի՛: «Նախանձոտ, ե՛ս: Մտիկ ըրէք Լիւկ, իրարու նկատմամբ վստահութիւն: Ամուսնութեան համար խենթ չեմ. ես չեմ զայն հնարողը. բայց չամուսնանալու պարագային, զիս պիտի գնեն արտակարգներուն մէջ. ուրեմն կ'ամուսնանամ: Ժամերու մէջ, իրարու նկատմամբ ախորժելի պիտի ըլլանք: Անկէ դուրս երկուքնիս ալ կատարելապէս ազատ: Այնքան պարզամիտ չեմ երեւակայելու համար որ ձեզ պէս ապրող մը յանկարծ խտտաբարոյ դառնայ կամ հաւատարիմ, հարսանիքէն վերջ: Պիտի շարունակէք ձեր կնասիրութիւնը, առանց դադրելու խորհելէ իմ վրաս: Ես ալ հաւատարմութեամբ ամրապիտ մը ըլլալ չեմ խոստանար: Ինչ որ ձեզ կը խուտանամ, սա՛ է թէ՛ ձեզ ծիծաղելի չպիտի բնեմ: Այս ձեռով ազատ էք: Ես ալ իմ կարգիս ձեզ կը հարցնեմ. նախանձոտ պիտի ըլլա՞ք»:

— Ու ի՞նչ պատասխանեց:

— Վայրկեան մը խորհեցաւ եւ ըսաւ. «Իրաւունք ունիք. Ձեր առաջարկած ձեռով ամուսնութիւնը երբեք մեզ չպիտի առաջնորդէ ամուսնայուծումի: Հազուադիւրս կիսմէք եւ շնորհակալ եմ ձեզի, որ ամուսնանալու ապացոյցը տուիք»: Ի վերջոյ, մեր նշանախօսութիւնը կնքելու համար անոր երկարեցի շրթոտնքներս, եւ առաջին անգամ էր որ այր մը անոնց կը մօտենար. կ'երդում ձեզի: Լմնցաւ. ձեզ կը ձգեմ: Ահա Շանթէլները կուգան. չեմ ուզեր որ գեղանին ժանն իմ աչքերս հանէ, որովհետեւ, նէ է, եւ

պիտի ըլլայ նախանձոտ:

Հեռացաւ: Միւս կողմէ Էքթոր տեսաւ պղտիկ կառք մը, ուր էին Շանթէլները: Կը տեսնէր ժաննի անշարժ իլուէթը, իր պայծառ ու սեւ աչքերը յառած իր վրայ, զոր կը սիրէր. կը զգար ինքն այ, քիչ մը տխուր, մտածելով որ, նէ զինքը պիտի առաջնորդէր ամուսնութեան, եւ որով ինքն ալ պիտի ողբար իր ազատութեան մահը: Դէպի կառքին կողմը գնաց: Կը մտածէր. «Այս երկու տըղաքները, ժագըլին եւ ժան, ժամանակակից ամուսնութեան երկու բանաւոր լուծումներն են: Եթէ մարդ կ'ուզէ պահել քրիստոնէական յատկութիւններ, որոնք կուտան ազնուականութիւն, անլուծութիւն, հաւատարմութիւն եւ արգասաւորութիւն, պէտք է փնտռել բացառիկ կիներ, հազուադիւր թոչուներ, ինչպէս է ժանն: Իսկ եթէ հարկ է փնտռել աշխարհիկ ամուսնութիւնը, լա՛ւ է Լէսթրանտի նման. նախապէս համաձայնութիւն գոյացնել իրարու հետ: Բարքերը բան մը չեն կորսնցներ. անկեղծութիւնն է որ կը շահի»:

Բայց, կառքը մօտենալուն պէս ժաննի անմեղ եւ զըւարթ ժպիտը զինքը յափշտակեց:

«Պղտիկ սիրունիկս, ըսաւ ինքնիրեն: Կը կարծեմ, թէ զայն կը սիրե՛մ»:

Կառքէն իջեցնելու համար, Էքթոր իր ձեռքը երկաթեց անոր, որ սակայն կարմրելով, ցատկեց:

Մաքսիմ, Էքթորի խորհուրդին վրայ, իր լուրջ եւ զինուորական ձեւը կը պահէր, այս անգամ հազուած բարիզեան նորաձեւութեամբ: Սակայն, Բարիզը ժաննը փոխած էր. մէկին հաճելի երեւնալու համար, այս անգամ հազուած էր բարիզուհիի մը նման:

— Հրաշալի էք այդ հագուստով, ըսաւ Էքթոր:

— Ա՛հ, կը ծաղրէք դեռ զիս, յարեց ժանն, վշտացած ձեւով մը: Աղուոր չէ:

— Կը վստահեցնեմ ձեզ, վրայ բերաւ երիտասարդը, թէ, բարիզեան լաւագոյն արդուզարդը կը կրէք:

— Ստուգի՛ւ: Գոհ եմ: Շատ կը վախնայի որ ձեզի հա-

ձեզի չպիտի երեւէի: Մաքսիմի դառնալով ըսաւ նէ.— Պ. Լը Թէսիէ, հազուատներս շատ լաւ կը գտնէ:

Մաքսիմ խնդաց, մտացիր: Ձեռնային պարտէզը մըտան, ուր սեղանը շտկուած էր: Ժագըլին, Էթիէնէթ, տիկին տը Ռուվոնը եւ Փոյ Լը Թէսիէ հոն կը սպասէին: Մոտ դեռ եկած չէր եւ նախկին սպային աչքերը զնէ կը փնտռէին:

Բարիեկաքի խօսակցութեան մէջ, միջոցը գտաւ Էքթորը մէկ կողմ քաշելով, ըսելու.

— Մոտ բացակա՞յ է:

— Ոչ, քիչ առաջ, զայն նշմարեցի իր սենեակին պատուհանը:

— Նախաճաշէն առաջ՝ լուրջ խօսելիքներ ունիմ անոր:

— Տակաւին նախա՞նձ: Անուղղելի էք, ըսաւ Էքթոր յանդիմանական սեղմ շեշտով:

— Ընդհակառակը, յարեց Մաքսիմ, անիրաւ գտնուեցայ օրիորդ տը Ռուվոնըի մասին, կ'ուզեմ ներողութիւն խնդրել:

— Լա՛ւ, սպասենք նրբանցքին մէջ, մեր առջեւէն պիտի անցնի Մոտ:

Անոր հանդիպեցան սեմին վրայ: Էքթոր կատակի ձեւով.

— Ահաւասիկ, պարոնը, սիրելի միս Մոտ, որ կ'ուզէ ձեզի հետ խօսիլ. պղտիկ սրահը պարապ է եւ ձեզի կրնայ ծառայել:

Մոտ, անհանգիստ. ուզեց ինքզինքը զուարթ ցոյց տալ:

— Ճի՞շտ է, Մաքսիմ. կ'ուզէք բա՛ն մը ըսել ինձի: Իր անձկութիւնը չմատնելու համար՝ իր կամքը կը ժողվէր: Յանկարծ մտածած էր. «Ժիւլիէ՛նը»:

Բայց Մաքսիմ, ծանրօրէն. ձեռքերը բռնելով՝ զրաւ իր ճակտին վրայ:

— Շնորհ կը խնդրեմ ձեզմէ, ըսաւ. ցած ձայնով: Գէշ բարեկամի մը պէս վարուեցայ. արժանի չեմ ձեզի:

— Ի՛նչ ըրիք, ուրեմն: Դարձեա՛լ կասկածեցաք ինձմէ:

— Ա՛հ, եթէ գիտնայիք որքա՛ն տառապեցայ կասկածելով: Բայց խորհեցէք որ ձեր Շանսլէ դտնուածէն ի վեր, ամէն օր նամակներ կ'ընդունիմ այնքան ճշգրիտ ձեզ եւ ձեր սովորութիւններուն նկատմամբ, եղելութիւններու այնպիսի խառնուրդ մը. զոր գիտեմ թէ ստուգիւ, ինչպէս ձեր առօրեայ արդուդարդերը, ձեր արշաւները, ողբ յաջորդ օրը ինձի կը պատմէք, եւ տակաւին զրպարտութիւններ:

— Զրպարտութիւններուն հաւտացիք չէ՞, յարեց Մոտ ձեռքերը քաշելով:

— Մո՛տ, աղաչեց Մաքսիմ, կրնայի բան մը չ'ըսել ձեզի: Մի՛ դատապարտէք զիս, քանի որ կը խոստովանիմ ձեզի: Թէ ի՛նչ ըրի, մտիկ ըրէք: Զորս անգամ մեքենայով գրուած նամակներ կ'ընդունէի, ուր [կ'ըսուէր. «Այս իրիկուն, ժամը հինգուկէսին միջոցները, Օր. աը Ռ. պիտի երթայ Պոմ փողոց անջէն երկրորդ դուռ...»: Ո՛չ, երբեք չ'պիտի կրնամ ըսել զրուած վատութիւնները:

— «Իր սիրահարին մօտ» լմնցուց Մոտ: Ինչո՞ւ չ'արտասանել այդ վատութիւնը, քանի որ հաւտացիք:

— Զ՛հաւտացի: Զորս անգամ պատուեցի այդ նամակը եւ ձեզի ալ բան մը չ'ըսի. երէկ, խենթ դարձա՛յ:

— Ետեւէս մա՞րդ գրիք:

— Ո՛չ: Պոմ փողոց գացի: Ժամը վեցին միջոցները, կառք մը զրան առջեւ կանգ առաւ. ձեր հասակաւ կին մը իջաւ: Ետեւէն վազեցի, բայց արդէն զուռը փոցուած էր: Ա՛հ, Մոտ, մեղանչեցի ձեզ դէմ: Ժամ մը մայթերուն վրայ անցուցի, պատին երկայնքի, որ կ'եզրէ մեծ պարտէզ մը. ասով քաւեցի յանցանքս:

Մոտ մտիկ կ'ընէր. այժմ վտահ, բայց յանկարծակիի եկած եւ խայթուած, պաղտնի նախանձէ մը: «Ա՛հ, Ժիւլիէն ինքզինք, կը մխիթարէ, այժմ կիներ կ'ընդունի»:

— Շարունակեցէ՛ք, ըսաւ նէ: Ժամը քանիի՞ն դուրս ելայ:

— Եօթը անցած: Երբ երկաթեայ դրան ըացուիլը տեսայ ինքզինքս կորուսի. այդ կնոջ մօտը վազեցի. թեւեւ

ընէն բռնելով կեցուցի, ստիպեցի դէմքը ցոյց տալու, կառքին յապտերին լրջօվը:

— Եւ ո՞վ է, հարցուց Մոտ, որուն այլայլած ձայնը աւելի ձորպիկի դիտողի մը կասկածը պիտի արթնցնէր:

Մաքսիմ վարանեցաւ:

— Իրաւունք չունիմ անունը տալու:

— Կր հրամայեմ ձեզի: Ես իրաւունք ունիմ քողազերծ ընելու այն թշուառականները՝ սրոնք չիս կը զրպարտեն:

— Կարծեցեալ ազջիկ սրն է, զոր տեսայ ձեր պարահանդէսին մէջ... եւ նշմարեցի, որ Ժիւլիէն աը Սիւսէրսօի հետ կը սիրաբանէր:

— Ժիւլիէթ Սվրրզա՞ք, ըսաւ Մոտ:

— Ս,յո՛:

Այլեւս չիտեսցաւ նէ. Մաքսիմ, որ զինքը կը գիտէր խոտոված, իր կծկուած բերնին, իր աչքերուն, իր ճակտին բարկութիւնը, կարծեց որ իրեն համար էն:

— Ո՛հ, ներնցէ՛ք ինձի, ըսաւ ծնրադիր, ճակատը անոր փէշին մէջ:

Նէ ինքզինքին եկաւ:

— Ոտքի ելէք, ըսաւ գրեթէ խոստութեամբ: Մարդու մը ծնրագրելը չեմ սիրեր: Զեր ուզածը թող ըլլա՛ւ: Կը մոռնամ: Եթէ ասիկա կրցաւ ձեզ բժշկել, ալ աւելի աղէկ: Որովհետեւ, ապագան զիս անհանդիստ կ'ընէ, ձերինին նման սիրտի մը հետ:

Նա խնդրեց իր ճակատը, մազերէն անուշահոտուած միսի այդ անկիւնը, միակ բանը՝ որուն կրցած էր դպիլ իրենց նշանտուութիւնէն ի վեր: Անոր երկնցուց իր պարանոցը եւ վայրկեան մը թողուց անոր շրթունքներուն տակը՝ որ դայն կ'այլուէին վրէժխնդութեան միջին փափաքով մը, իր կարգին, մատնելու փափաքը: Մաքսիմ երբեք այնքան մը չէր ընդունած անկից. երբեք Մաքսիմի հաճոյքը այնքան ցաւալիօրէն չէր գալարած իր ջիզերը:



Բ.

Յորմէ հետէ Մաթիլտ Տիւտուաի մահը եւ Մոսի՝ Շան-
 պլէ մեկնումը վերջ տուած էին իրենց տեսակցութիւննե-
 րուն, ժիւլիէն աը Սիւպերսօ այլեւս ակումբը չէր ձգեր,
 մերժելով աշխարհիկ հրաւերները. խուսափելով թատրոն-
 ներէն եւ այն ամէն տեղերէն՝ ուր ծանօթներ կրնային ի-
 րեն խօսիլ Մոսի կամ Մաքսիմի նկատմամբ: Շատ կը խա-
 զար: Եւ շատ կը շահէր, շնորհիւ երկու օտարական եղբայր-
 ներու՝ որոնք, ամէն գիշեր, բոլորնիական զինդ մը կը վը-
 տանգէին: Ժամը հինգին սկսուած, կը հանգչէին քիչ մը
 կերակուրի ժամուն. կէս գիշերէն առաջ դարձեալ վերսկ-
 սում: Ամէնէն առաջ եկողը եւ ամէնէն վերջը մեկնողը
 Սիւպերսօն էր: Զարհուրելի բաղդով մը կը խաղար, առանց
 կանգ առնելու, վեց օրուան մէջ երեք հարիւր հազար ֆրօ
 րանք զիգած էր: Փճանալու կամ հարստանալու սահման-
 ուած այդ թղթախաղերն էին, որ իրեն ժողովել կուտային
 այն անշարժ յուսահատութիւնը՝ ուր ընկղմած էր, յորմէ
 հետէ Մոս, երկտողով մը իրեն իմացուցած էր, ժամադրու-
 թիւնները դադրեցնելու պէտքը, մինչեւ ամուսնանալը:

Այսպէս գիշերը կ'անցնէր. առտուն ժամը վեցին, կիջօ
 նար անկողին քիչ մը քնանալու, բայց երեկոյեան ժամը
 իննին, ամէնէն գէշ պահն էր. կերակուրը ուտելէ վերջ՝
 ընկերները կ'երթային կամ թատրոն, կամ օբերա կամ ան-
 տառ: Ինք եւ ոչ մէկ տեղ կը փափաքէր. և վայրկեանները
 ծանր ծանր կը սահէին ակումբի լուսթեան մէջ: Կը մտա-
 ծէր. «Ի՞նչ կ'ընէ նէ. Մաքսիմ անոր քօ՞վն է, ի՞նչ կ'ը-
 նեն. . .» Եւ մտայնութիւնը իր վրայ կը ճնշէր:

Իրիկուն մը, ժամը իննին միջոցները հոն հանդիպեցաւ
 էքթորի՝ որ իր ձեռքը սեղմեց հաճոյքով: Գաղտնի համակ-

րութիւն մը զինքը կը քաշէր դէպի այդ աշխոյժ մարդկա-
 յին կենդանիին ինչպէս կ'երեւէր ժիւլիէն իր աչքին և կտ-
 մաւ տեղի կուտար այդ էակին. ինչպէս եւ Մոսի, ամէն դար-
 շելութիւններուն:

— Գի՞ր ունիք, հարցուց ժիւլիէն:

— Այո՛, հեռագիր մը. Հինգ վայրկեանէն ձեր տրա-
 մադը լթեան տակ եմ:

Գրելով հանդերձ, կը շարունակէր խօսակցութիւնը:

— Ի՞նչ կ'ընէք այժ, անսպասին մէջ, այս ժամուս,
 դուք հանդէսներու մարդը:

— Թղթախաղին կը սպասեմ:

— Աւելի լաւ կ'ընէիք Անտառ երթալով: Օդը շատ ա-
 նուշ է:

— Անտառը զիս կը ձանձրացնէ:

— Գացէք մտիկ ընելու Իվէթը:

— Իվէթը զիս կը ձանձրացնէ:

— Լա՛ւ ուրեմն, հապա. . . կիները, յարեց ժպտելով:

— Ո՛հ, կը սոսկա՛մ անոնցմէ այժմ, Եթէ վստահ ըլ-
 լայի անոնց չհանդիպելուս, թերևս դուրս կ'ելլէի:

— Պա՛, գոչեց էքթոր, ի՞նչ յոռեատեսութիւն:

Հեռագիրը տուփին մէջ նետելէ վերջ՝ սկսաւ խօսիլ
 կիները արցունքի այդ հովիտին մէջ՝ ամէնէն անվիճելի ըզ-
 րօսանքներն են:

— Ինձի համար, յարեց ժիւլիէն, դուրսը ծռած, դար-
 շելի՛ են անոնք, փոխեցնելու ատիճան:

Դէմքը կձկուեցաւ:

— Այո՛, կիներէն զանա՛ժ եմ: Աստուածարանական
 գիրքերու բոլոր խօսքերը՝ անոնց մասին եւ անոնց ստո-
 րին անասնականութեան վրայ, շատ մեղմ են տակաւին,
 արտայայտելու համար մտածումներս: Պիտի ուզէի անցեա-
 լէն ջնջել այն ժամանակը՝ զոր անոնց հետ անցուցած եմ:
 Ինձի համար, անո՛նք ապականած են ամէն ինչ իմ մէջս.
 աշխատութեան փափաքը, փառասիրութիւնը, կեանքի հա-
 ճոյքը եւ աշագայի իղձը:

էքթոր կը զգուշանար զինքը ընդհատել. ժիւլիէն կը
 շարունակէր:

— Ըսել թէ, մարդ կ'երազէ զանոնք ունենալու եւ անոնցմէ սիրուելու, սկսելով պատանակութենէ, երբ մարդ կը վարժուի անոնց եւ կը դուշակէ սէրը: Քոյէճին մէջ, ուրիշ բան չէի խորհեր, քահանաներու դպրոցը գտնուելով՝ շատ կրօնատէր էի, եւ ինչ բան էր որ զիս կը ջգայնոտէր: Թէ կարելի չ'պիտի ըլլա՞ր տիրանալ բոլոր կիներուն: Բալտրին: Բոլորին պէտք ունէի, որպէսզի կեանքը ինձի հաճելի թուեր: Ու ասով հանդերձ տակաւին մաքուր էի:

Հետաքրքրական է այդ, մրմնջեց էքթոր, սիրողի այդ մանկութիւնը: Նախասահմանաւ մըն էիք, սիրահար, ծընած մը: Ես, դպրոցական եղած միջոցիս, արդէն սիրուհի մը ունէի, բարիգեան գեղանի աղջիկ մը, հինգշաբթի երեկոները անոր հետ կը բաժնէի իմ պղտիկ եկամուտներս: Կեանքին մէջ ալ սիրահար մը չեղայ: Ծիշտ է որ անդիմադրելի չեմ:

— Ո՛հ, մի ծագրէք զիս, ինձի չափ դուք ալ կիներ ունեցաք. թերեւս աւելի: Բա՛ց քանի մը կիներ ինձմէ կը վախնան. եւ մէկէ աւելիներ ինձի ըսած են. «ոչ, իրապէս շատ գեղեցիկ էք»: Գեղեցիկ ըլլալ, ազգելու միջակ միջոց մըն է անոնց վրայ: Իրենց յատուկ սրտխաղն է այդ Ատոր մէջ աւելի դորաւոր են քան զմեզ, Մնաց որ ի՞նչ կ'ընէ այդ բանը: Միշտ շատ կին կ'այ: Իրարու աշխարհ նման, այնքան բղջխոնութեան պզտիկ անասնիկներ, ամէնքն ալ, նոյսիսկ ամէնէն համեստը, գիշերուան մը մէջ կրնամ զայն փոխել: Իրենց զգաստութիւնը, պարկեշտութիւնը ուրիշ բան չ'է եթէ ոչ մարդկային յարգանք, ունայնամըտութիւն կամ սովորութիւն: Իրենց հողին քուրջ մըն՝ որ ամէն ներկի կը յարմարի, իրենց մարմինն է միայն որ կը տարբերի: Ու ազատօրէն խօսելով, կեանքի ծրագիր մը՝ որ կը կայանայ իր սէրերը փայփայանքները պտտցնել շատ մեծ թիւով կարելի մարմիններու վրայ, ի վերջոյ կ'երեւնայ բոլորովին զգուելի եւ անմիտ բան մը:

Սպասաւոր մը ներս մտաւ, ցիբուցան լրագիրները եւ թուղթերը կարգի դնելու սկսաւ. լոց ժիւլիէն, մինչեւ որ դուրս ելաւ եւ ապա սկսաւ շարունակել:

— Ինձի համար ամէն ինչ լնցած է. կը կարծեմ թէ ալ բժշկուած եմ. Եւ ոչ մին իմ նախանձս պիտի շարժէ, զգաստութիւնը՝ շուայտութեան մէջ դտայ: Մտիկ ըրէ, այսօր իսկ հատ մը տունս եկաւ, սկսնակ մը, երիտասարդուհի մը, որ գեղեցիկ կը կարծէ զինքը եւ նորավարժ մը: Այո, տունս եկաւ. ժամ մը կեցաւ. դատարակուհին, կառքին մէջ, վարը, դրան առջեւ սպասեց: Եթէ գիտնայիր թէ ինչո՞ւ զնէ կ'ընդունէի. անգործութեամբ, կամ ձանձրալի ժամերս մոռնալու համար: Մէկ ժամէն աւելի մնաց, շատ հաճոյակատար, եւ այդ միջոցին ես կը խորհէի. «Եթէ գիտնայիր որքան զիս կը զգուեցնես, եւ որքան կը ձանձրացնես»: Այ կը բա է, ըսաւ ոտքի ելլելով եւ մօտենալով էքթորի. այլեւս չխօսինք այս բաներուն վերայ: Ես կը ջգայնանամ, դուք ալ կը նեղուիք: Տեղ մը պիտի երթա՞ք այս իրիկուն: Եթէ կ'ուզէք ձեզի ընկերանամ:

էքթոր ոտքի ելաւ.
— Մէկ ժամ Օքերս պիտի մնամ, ուր այս միջոցիս պրզտիկ բարեկամս հի մ'ունիմ, երթանք: Ներեցէք որ սիրտս կտարած կը տեսնէք քիչ մը, ձեր ըսանքէն յետոյ: Այդքան տառջ երթալու չէիք:

— Ո՛հ, սիրելիս, կ'երգնում:
— Տեսնենք ուրմն, գիղեցիկ ժիւլիէն, յարեց էքթոր, հետաքրքիր զայն մղելու մինչեւ ծայրը. ձեզ դիտեցի, ձեզ կը ճանչնամ: Ինձի չէր կրնար հաւտացնել տալ, թէ բոլոր կիներուն, բոլորին համար անտարբեր կը մնաք:
— Արո՞ւ նկատեմա՞ք կ'ուզէք խօսիլ, ըսաւ, ձայնը եւ նայուածքը յանկարծօրէն պաղած:

Այո՛, իրաւունք ունիք, շարունակեց ժիւլիէն. Օքտր Ռուվըր բացատրութիւն մը կը կազմէ միւսներէն: Բայց հեզութեան ճիգով մը աւելցուց. նէ այսօր այլեւս մեր հիացումին չի վերաբերիր: Ամուսնութեան թուականը որոշուած է:

Կը ջանար ինքզինքը զսպել, սակայն իր խորտակուած ձայնը յայտնի ընել կուտար:

— 18ին, այսինքն ինք օրէն:

— Ա՛հ, ըստե Սիւպերսօ:

Այլեւս բան մը չէր ըսեր. գամուած տեղւոյն վրայ աչքերը՝ կօշիկներուն ծայրին յառած: Եւ յանկարծ ձեռքերը երկնցուց էքթորի:

— Կը թողում ձեզ, սիրելի բարեկամս: Կը մոռնայի թէ երթալիք տեղ մը ունիմ այս իրիկուն: Մնաք բարեալ և նմիջապէս դուրս ելաւ: Էքթոր պատուհանէն տեսաւ անոր հեռանալը, նախ արագօրէն, յետոյ ծանր ծանր, մըտածումներու մէջ ինկած:

— Ահա մարդ մը, խորհեցաւ, որ ծայրը հասած է եւ տրամին իբրագարձութիւնները կը խորհի: Ի՞նչ կրնամ ըսել ես:

Նախախնամութեան դերը հակառակ կուգար իր ներդրում սկիզբիկութեան: «Նախախնամութիւն ըլլալ կը նշանակէ ոմանց երջանկութեան համար թեր ելլել, ուրիշներու երջանկութեան հակառակ: Ո՞վ ունի իրաւունք»:

Եւ սակայն իրեն կը թուէր, թէ Շանթէլի հետ Մոտի ամուսնութիւնը լաւագոյն լուծումն էր դեռ, այսինքն «Նուազագոյն գծրադրութեան» լուծումը:

«Եւ յետոյ Մոտի խոստացած եմ իմ դաշնակցութիւնս» Ե Որոշեց զրել եւ տուփը նետեց պզտիկ տոմս մը, որ յաջորդ առտու Մոտի ձեռքը պիտի հասնէր, Շանթէլի մէջ: Արթուն կեցէք, սիրելի բարեկամուհիս, ակումբին մէջ հանդիպեցայ, գերզրգուտ վիճակի մէջ, մեր բարեկամներէն միոյն, ամէնէն գեղեցիկին»: Յետոյ դուրս ելաւ, դոհուշակ կերպով, որ կրթած էր վայելել այնքան հազուադէպ ազդում մը, տեսնել մարդկային սիրտի մը խորքը՝ յուզումնալից վիճակի մէջ:

Ժիւլիէն սակայն, նկուն եւ յաղթուած քայլերով կը դառնար Ալէքս Օնորէ փողոցը եւ կ'ուզուէր դէպի իր տունը անդիտակցօրէն: Բայց դրան առջեւ ինքզինքին եկաւ: Ներս մտնել, օդին մէջ ցիր ու ցան տեսնել, ծածկօցներուն պլլումած, հայելիներու խորհրդաւորութեան մէջ անդրապլլումած, հայելիներու խորհրդաւորութեան մէջ անդրապլլումած այն փոշին, իր ջնջուած ետին ծուխը, ո՛հ, ո՛հ, դարձած այն փոշին, իր ջնջուած ետին ծուխը, ո՛հ, ո՛հ, աւելի ազէկ էր իրուսախիլ նոյն իսկ ներկայէն, մոռցուիլ եւ

մոռնա՛լ: Աճապարանօք ետ դարձաւ ճամբէն, կարծես վախնալով որ պզտիկ բաց դռնակէն իրեն նման ուրուականներ դուրս պիտի ելլէին:

Ուղիղ եւ ամայի փողոցէն սկսաւ յառաջանալ մտացիր, ասֆալթին վրայ իր ամէն մէկ քայլափոխէն առաջ եկած աղմուկէն եւ ամէն մէկ լապտերի առջեւ իր շուքին երեւումէն շփոթած, զարմացած զգայով որ կ'ապրի: Որովհետեւ կեանքի հարցը՝ անպատահար օրերու քաջջուքին մէջ մոռցուած, հրամայողական կերպով կը փնտռէ ծանր տագնապի մատնուած մարդկային էակը: Այն՝ որ կը քալէր աննըպամատնուած մարդկային էակը: Եւ մտորած մեքենայ մը, կը ճեմէր ապրիլը, մտածելը, տառապիլը ուրիշ հակի մը. եւ այդ էակը նոյն ինքն էր, եւ վայրկեան առ վայրկեան անսպասելի, ճնշող անկումի մը յուզումը կը զգար:

«Ինչ օրէ՛ն ամուսնացած»: Այս բառերը կ'արտասանէր կամացուկ մը, եւ ամէն անգամ իրեն անանկ կը թուէր թէ, իր իսկ կեանքին նկատմամբ հակասական բան մը կ'ըսէր: «Մեռած եմ» կամ թէ «երա՛գ է, սնտոի պատկերներ են այս տուները, այս փողոցը եւ նոյն իսկ իմ քայներու աղմուկը»: Ամէն անգամ, իր մտածման բաղխումէն յետոյ՝ «Մոտ կ'ամուսնանայ. ամէմ ինչ լմնացած է, լմնացած է»: Կը խելզուէր եւ առանց օդի՝ մթնոլորտին մէջ, յուսահատօրէն օ՛դ կը փնտռէր: Երազի մը պէս արագ, իր յիշողութեան առջեւէն կ'անցնէին եղելութիւններ, թուականներ, խօսքեր եւ անցեալին հիւսուածք, որ պէտք էր, կաններ, խօսքեր եւ անցեալին հիւսուածք, որ պէտք էր, իրեն այնպէս կը թուէր, ներկան կլայելիլ, եւ բռնադատել զայն որպէսզի բաժանու: մը, վախճանը տեղի չունենայ: Յոյսի եւ տիրացումի ոյժը, որուն ետալը զգացած էր իր մէջ, երբ վեց տարի առաջ Բարիկ կուգար պանծալի, փառամտ, ծարաւի, այդ ուժը կ'ապրէր տակաւին, կ'ուզէր ապրիլ, կ'ըմբոստանար պարտութեան դէմ: «Կարելի չէ այդ բանը: Չպիտի ըլլայ այդ բանը: Չեմ ուզեր»:

«Կնոջ մը իւրացումը պէտք է անտարբեր թողու բարոյական էակը, ինչպէս գաւաթ մը խմուած անուշահամ հեղուկ մը: Բարոյականը, զգացումը, բանաւտեղծի եւ վա-

նականի կրազանքներ են: Ուժով, բանականութեամբ առողջ մարդը պիտի գործածէ կիներ, երկրային բերքի մը նման, իր հաճոյքին, իր շահուն համար»:

Այո՛, դատողութիւնները կ'ապրէին միշտ այդ լքուած ուղեղին մէջ: Բայց ինչո՞ւ այս չարչարանքի մամուն, իր կարողին ինքն ալ զո՞հ մը՝ կնոջ մը կողմանէ, ինչո՞ւ համար, հուժկու անդիմադրելի մղում մը, բնական պարտեան մը պէս, զինքը կը հակեցնէր հակասական համազումներու, իր անցեալին եւ կրօնասէր ու մաքուր մանկութեան:

Քարոյական օրէնք մը կայ պարտադրուած մարդկային սիրոյն: Այդ խարուսիկ փարումը, հակահարուածով մը կը հասնի ամէն մարդկային էակի տառապանքի կարողութիւններուն: Ու կը տեսնես որ կը տառապիս այսօր բանէ մը՝ որ ջնջուած հաճո՛յքն է»:

Կը չարչարուէր ուրիշ բանէ մը: Ինչ որ զինքը կ'աքցանէր հագեցաններու տեսական նախանձը չէր. ո՛չ, իր նախանձը, ո՛րք այն էր, թէ Մոտ կ'ազատագրուէր իրմէ, ինքը, Սիրահարը՝ որ այլևս անհրաժեշտ չէր, մինչդեռ ինք չէր կրնար ազատագրուիլ: Այդ բանը այսօր իսկ ըզգացած էր, երբ իր գրկին մէջ կը սեղմէր ուրիշ կին մը՝ դժկամակութեամբ հրաւիրուած: Իր մարմինը, իր ջիղերը կը մերժէին յուզումը: Բացահայունին, անհաւատարիմը, հակառակ ամէն բանի, կը պահէր իր գերակայութիւնը. վերջին վայրկեանի սիրաբորը փափաքը տակաւին զինքը կը ստիպէր հեռուէն, հաւատարմութեան:

«Բայց նէ ալ անշուշտ կը տառապի՛»:

Իր նախանձի յոյսն էր, որ կանգնեցուց իր զողզութան:

Շնէ այսպէս յանկարծակի, զիս սիրելէ չզողրեցաւ. շահու տեսակէտով, նէ ալ կը չարչարուի՛»:

Կասկածը վրայ հասաւ եւ ասօր հետ մէկտեղ ուսմիկ նախանձը, ուրիշ մարդու մը կողմանէ ներա շրթունքներէն առնուած համբոյրներու ստակումը, եւ քինախնդրութեան հետեւանք՝ տեսակ մը յիմարացում: Եւ այդ ուսմիկ նախանձին հետ, նաեւ միսի փափաքը զինքը պարուրեց:

Յիշատակի մը զարթնումը — Մոտ, թեւերը, մերկ, կուրծքը՝ բաց, Սիւզաննի սենեակին մէջ — յանկարծօրէն զինքը իրականութեան մէջ նետեց: «Ո՛ւր եմ»: «Ի՞նչ, նոյն իսկ այդ տեղը»: Այսպէս բնազդը զինք կ'առաջնորդէր վերաւոր կենդանիի մը նման: Անցաւ Սէն Փեթրսպուրկ եւ յետոյ Պէրն փողոցներէն: Հաճոյքի խեղճ ազդիկներ չըջահաներու մէջ, սիրոյ որսորդութիւն ընելու վրայ էին արդէն: Գիշերը անուշ էր, փողոցը՝ փոշոտ, լայն եւ ուրախ:

Մաթիլտի տան առջեւ վարանեցաւ. դուռը դոց էր. ի՞նչ ըսել զոնտպանուհիին: Չպիտի թողուր մեռեալին յարկաբաժինը ելլելու:

Բայց խորհեցաւ որ միտք իրեն կը հնազանդէր, երբ իր ձայնին մէջ կամքի շեշտ մը զնէր:

Մտաւ ներս. կինը մինակ էր. տիրակա՛ն ձեւով՝ զրան բանալին ուղեց: Բարիգի ժողովուրդը, մահուան յարգանքը ունի. ուրիշ բանի յարգանք չունի:

— Վերը բան մը մտցած եմ, առնելու եկայ, ըսաւ Սիւզերսօ, այդ պարզունակ հոգին վստահեցնելու համար:

Դոնապանուհիին բանալին տուաւ. ժիւլիէն արագ արագ սանդուխներէն վեր ելաւ: Բանի մը կը ցանկա՛ր: Իր սրտին չփոթութեան մէջ, երջանիկ էր գտնելուն այդ դաւաճան սենեակը, գատա՛րկ, մեռեալ եւ պարապ յարկաբաժինին մէջ:

Մահը, հո՛ն այցելելով հանդերձ, բան մը փոխած չէր. լոյսը վառելուն պէս նշմարեց այդ բանը, բոլոր կարասիներն իրենց տեղն էին. անբնակելիութեան ծանր հոտ մը կար միայն:

Ժիւլիէն, յուզումնալից, իր սենեակը, «Սիւզաննի սենեակը» մտաւ. վառեց ճրագը. սկսաւ փնտռել այն՝ որուն կը ցանկար իր անգութ շուայտութիւնը: Նետեցաւ թիկնաթոռին մէջ, աչքերը փակ, մտիկ ընելով ի զուր անցնող կտրքերու ձայնի մը: Ու յուսահատ պատրանքի մը մէջ ընկղմեցաւ, առանց արցունքի:

Քիչ մը վերջ, ասքի ելաւ հեծկրտալով. բնազդաբար փնտռելով զէնքը, առարկան, իրը՝ որ կրնար մահ տալ ի-

րեն :

«Անհանգիստ եմ» :

Ապրելու սոսկումը թափանցեց իր մէջ : Անկողնոյն վրա-
տայ նետուեցաւ , ծածկոցները պատտեց , կերպամաները
խաճաւ : Անցեալը ոչնչացնելու , ջնջելու կատաղութիւն մը
գինքը կը յուզէր . անկողինը տակնուվրայ ըրաւ : Ու յան-
կարծ տակէն պաթիստի կտոր մը դլտորեցաւ , Մոտի շա-
պիկը , երիտասարդ աղջկան շապիկ մը , երկար , մաքուր ,
անթափանց , որքան ալ նուրբ , ինչպէս որ վայելուչ է հա-
գուստի մը՝ որ սիրոյ համար չէ շինուած . միւսին հոտը կը
բուրէր վարդի եւ յամսիկի անուշահոտութեան խառնուած :
Ռնգունքներուն տարաւ եւ յանկարծ պոսթիկացին իր մէջ
մարդկային յուզումը եւ ճշմարիտ սիրոյ արցունքները :

«Մո՛տ . սիրեցեալ Մո՛տ» :

Այս աղաղակը հեծկլտուքներով դուրս կը ցայտէր . իբր
միայնութեան մէջ ընկճուած , գէմքը՝ այդ անշարժ եւ կեն-
դանի իրին մէջ , ինչ որ կը մնար Մոտէն : Կը հեծեծէ՛ր :

Արդ , այնքան յուսահատ , մանկութեան հաւատալիքնե-
րը վերստին ծնունդ առին իր մէջ : Աղօթեց , աղաչեց . առ-
ուածային անուններուն խառնեղ անունը անոր՝ որուն
պաշտելի մարմինը պղծած էր ու այսպէսով եղաւ , ան-
կեղծօրէն , այն կրօնասէր էակը՝ որ ոտքերուն տակ կը
կսխկռտէ ամէն բանականութիւն , հաւատքի աղաղակով մը
շնորհ կը հայցէ : Սուրբ Կոյսին խոստումներ կ'ընէր , սուր-
բձրու բարեխօսութեան կը դիմէր՝ իր ապագան ցոյց տա-
լով : «Պիտի ամուսնանամ , պիտի աշխատի՛մ , ներա հետ
պիտի ապրիմ պարկեշտութեամբ . բայց տուէ՛ք ինձ ի
զայն» :

Երբոր վար իջաւ , ժամը տասնըմէկ էր . դոնապանու-
հին սեմին վրայ գինքը կը դիտէր . ոսկի մը եւ բանալին
ալ միասին տալով անցաւ : Դուրսը աւելի հաստատ քայլե-
րով ընթացաւ , իբր աւերակներու մէջ , նոր յարութեան մը
յոյսերը կը բողբոջէին : Որովհետեւ , սուրբ արցունքնե՞ր
հոսած էին իր վիշտին վրայ , որովհետեւ իր խղճին խորը
հասած էր եւ հոն գտած հաւատքի եւ բարոյականութեան

մնացորդի մը հետ , անսպաս յոյսը՝ որ կը քնանայ յունա-
հատ հոգիներու դատարկութիւններուն մէջ :

«Այս բանը չպիտի ըլլայ . չպիտի ամուսնանայ Շան-
թէլի հետ» : Զօրաւոր զգացում մը կ'ըսէր իրեն այդ բանը :
Դէպքը ինչպէ՞ս տեղի պիտի ունենար . իրմով , թէ առանց
իրեն : Զէր գիտեր , միայն թէ իր միջամտութեան իրաւուն-
քը կը յղանար :

Կը տատապէր միշտ այնպիսի ցաւով մը՝ որ չէր դատեր ,
չէր խորհեր , որ խղճին վրայ չէր անդրադառնար : Այդ
վայրկեանէն սկսեալ՝ իր սովորական կեանքը վերստացաւ :
Տուն գնաց հագուեցաւ սովորական վայելչութեամբ եւ կէս
գիշերը անցած՝ դուրս ելաւ :

Ակումբին մէջ թղթախաղը սկսած էր . ինքն ալ իր
կարգին նստեցաւ . յամբօրէն եւ միշտ կորսնցուց , կորսըն-
ցո՛ւց . ամէն ոք իր շուրջը կը շահէր եւ ինքը կը կորսըն-
ցընէր երեք հարիւ հազար ֆրանք , չաթթուան մը շահը :
Քոլորն ալ զարմացան . այդ հարստութիւնը թողած էր հո-
սիլ իր ձեռքերէն , բացարձակ անտարբերութեամբ մը . եւ
երբ դուրս ելաւ ակումբէն , կը չնչէր զարնան առաւօտի
մը քաղցր օդը , թոքերը ուրախ եւ լեցուն :

Հանդարտօրէն քնացու , Մոտի անուշահոտ շապիկը՝ իբր
անդունքներուն վրայ :

Կեանքի դնացքին մէջ , խաղացողի հոգի մըն էր շատ
բուռն ու տղայական , սնապաշտ եւ յանդուգն . խաղացող-
ներու հոգին , կիներու հոգին , ինչպէս նաև յաղթականնե-
րու հոգին , երբ դիպուածին հաճելի կ'երեւի :



Գ.

Աէն Սիւլբիս թաղը, հակառակ շատ մը տեղադրական փոփոխութիւններու՝ պահած է իր հնամենի քահանայապետական դիմագիծը: Հրէշային նրբասրինդներու նմանող աշտարակներու եւ մեծ կղերանոցի շէնքին հովանիին տակ կը ժողուըուին քահանաներու եւ հաւատացեալներու միջոցաւ ապրող աշխարհական ճարտարարուեստի տէրերը: Մութ եւ նեղ փողոցներու մէջ բացուող լռին խանութներ, արձանիկներու, սեղրամոմի վաճառորդներ, ժամագիրք, խորհրդատեար ծախող գրավաճառներ: Փողոցներն իսկ եկեղեցական անուններ կը կրեն: Մանաւոր պանդոկներ ալ կան, ուր կը յաճախեն ճամբորդ քահանաներ, կրօնաւորուհիներ եւ խել մը գաւառէ եկած ջերմեռանդ ընտանիքներ: Սենեակներու կահաւորումը եւ զարդարանքն ալ կը տարբերի. ամէն մէկ սեղանի վրայ կը տեսնուին կրօնական լրագիրներ, ինչպէս «Խաչը», «Կաթուղիկ Աշխարհի Պարբերաթերթը» եւ այլն: Կատարեալ մաքրութիւն եւ համեստ խոհանոց: Բարիզի պանդոկներուն լաւագոյնները պիտի ըլլային ասանք. եթէ տխրութեան եւ կծուութեան մթնոլորտով մը չըջապատուած չըլլային:

Այդ պանդոկներէն միոյն մէջ կը բնակէին տիկին տը Շանթէլ, աղջիկը եւ մանչը: Երկրորդ յարկին վրայ, վանքին պարտէզներուն նայող յարկարածինը բռնած էին, երեք սենեակով: Մաքսիմին սենեակը աւելի պղտիկ էր: Անխոտ վընացողներու յատուկ նեղ անկողին մը, փոքրիկ

սեղան մը, ընկուզենիէ քանի մը աթոռներ եւ գրադարան մը:

Այդ պղտիկ սենեակը, անշուշտ որ, մինչեւ ցարդ հիւրընկալած չէր հակընդդէմ յուզմունքներով շինուած այսպիսի ուխտաւոր մը: Օրերու համաձայն, կը տեսնէր Մաքսիմը ուրախութեամբ զեղուն, ժողովով ժամերը, նայելով Մոսի լուսանկարին եւ մտածելով ներս մօտ անցուցած վայրկեաններուն վրայ, — կամ ինքն իր վրայ ամփոփուած ցաւագին եւ սոսկալի երազի մէջ, արցանուած՝ դէպի վէշ գէրիի մենութեանց մէջ փախչելու, մեկնելու նախանձէն: Որովհետեւ հայրենի երկիրը, չարչարանքի նուպայի մը պահուն, իր մէջ կ'ողեկոչէր փափաքելի եւ անբռնարարելի ապաստան մը:

Ճմարիտ յուզումը կը ճանչցուի հողին շուրջ յառաջ բերած անբաղդատելի չէզոքացումէն: Ապրողը, ազդուած այդ խորհրդաւոր ուժէն, կրնայ շարունակել իր ցրուած կեանքը: Մաքսիմ, ի բաց առեալ Աէն Սեոի եւ բանակի մէջ գտնուած չորս տարիէն, ի վեղերի, ընտանիքին, գիւղացիներու եւ եկեղեցական աղետի վարժապետի մը քով ապրած էր. Դպրոցական կեանքին մէջ, առնութեան տաղանապը կրած էր. սակայն վեղերի վերադառնալէ առաջ՝ կրցած էր բժշկուիլ, հաճոյքի գործիք՝ վճարեալ կնոջ նըկատմամբ դարչանք զգալով: Սակայն, հիմա իր սիրած կնոջ մտածումը իրեն համար եղաւ մենամոլութիւն մը: Կը տանջուէր անոր թէ՛ ներկայութենէն եւ թէ՛ բացակայութենէն՝ զայրացած, որ նէ ամէն վայրկեան իր քովը չէր, նեղացած իր ձախլիկութենէն, որ ներս մօտ զինքը կ'անդամալուծէր, իրմէ կը խլէր քաջասրտութիւնը՝ մուրալու համար գգուանք մը, անոր տնաճելի երեւելու վախէն:

Ու, կը տառապէր, հակահարուածով մը, իր կամքին փլուզումէն եւ իր էնէրթիին ներկայ անկարգութենէն: Ուղիղ մտածողութիւն մը եւ հաստատուն գիտակցութիւն մը իրմէ կը պահանջէին որ պէտք էր ամուսնանալ, նախապէս զոհուելով անոր որ պիտի բլլար Ամուսինը: Շատ անգամներ իր միայնութեան մէջ երեւակայած էր իր ամուսնական ա-

պագան, իշխող կամքի եւ խելքի միութիւն մը՝ անուշ եւ համակերպող զգայնականութեան մը հետ, ինչպէս էր իբր քոյրը՝ Ժանն: Եւ ահա առաջին անգամ կը նշանուէր նախապէս պարտուած, զգալով որ իր սիրածը աւելի նուրբ, աւելի տիրապետող ցեղէ էր, քան ինքը: Մաքսիմ իր արժանապատուութեան գաղտնի յողորձէն զայրացած՝ ինքզինքին լուծութիւն պարտադրած էր. «Կ'ուզեմ այսպէս ըլլայ. կ'ուզեմ հնազանդիլ»:

Ի այն ինչ որ չէր կրնար լռել տալ, այն ներքին ձայնն էր որ խօսած էր Սէնթ-Ամանէն մեկնած օրը, այն ձայնը՝ որ խօսած էր իրեն Էքզիլի հետ, օրերա գացած իրիկունը եւ Շանպլէի ընթրիքին իրիկունը, եւ որ, անկից ի վեր իրեն կ'ըրկնէր. «Այս կիներ քեզի պէտք եղածը չէ. մեծարութիւն է քեզի համար փնտոել ընկերուհի մը, կեղծ ընկերութեան մէջ՝ որ քեզի համար չէ: Զայն սիրած օրէդ ի վեր ազէտը հրաւիրեցիր վրայ»: Այդ յամառ ձայնը կը խոռովէր գոհացումի իր ամէնէն լաւ վայրկեանները, ձեռքով մը կը դռնակէր եր սոտն մէջ արծարծուող ուրախութեան նուագները, Շանպլէ վերադարձին, ամէն անգամ երբ զգլխիչ կէսօր մը կ'անցնէր Մոտի քով: Եւ նոյն իսկ անոր ներկայութեան, երբ անհանգիստ կերպարանք մը կ'առնէր, նէ կը հարցնէր. «Ի՞նչ բանի վրայ կը խորհիք»:

Կ'ընդունէր իր ճակատագիրը՝ անյարմար իր ծրագրերներուն եւ ճաշակներուն: Թող կուտար քաշկոտուիլ նորանձեռութեանց, կարուհիներու խանութները, հողին՝ անհուն ծանր տխրութեամբ մը կարծրացած, բայց ամէն բանի կը համակնքպէր, աւելի երկար Մոտի անուշահոտին մէջ կենալու, անոր նայելու եւ հետը խօսելու համար: Նոյն իսկ գէշ օրերու մէջ, անձկութեամբ աւելի լուսկեաց դարձած, երբոր գնէ կը թողուր, սապէս կը խորհէր. «Մինչեւ վաղը գնէ չպիտի տեսնեմ». ինքզինքը կը զգար զարհուրելիօղջը գնէ չպիտի տեսնեմ». ինքզինքը կը զգար զարհուրելիօղջը գնէ չպիտի տեսնեմ, կեանքէն գանած, մեղաւորի մը պէս ըլլէն պարտասած, կեանքէն գանած, մեղաւորի մը պէս կուրծքը ձեռնելով, թէ գէշ կերպով կը սիրէր գնէ, թէ պէտք էր իր սիրուհիին քմայքներուն գերին ըլլալ, եւ մէկ բանի կը ցանկար. — միշտ ներա մօտը ըլլալ, իր սըր-

տին անձկութիւններուն, իր զգայնութեանց ջերմին մէջ, Մոտը ամբաստանող անանուն շամակներ կը հասնէին, լախտի մը նման հարուածելով զինքը: Երբում ըրած էր Մոտին թէ՛ իր վրայ վստահութիւն ունէր եւ չէր ուզեր կասկածիլ. բայց ինչպէ՞ս կարգալ, առանց տանջանքի այդ ճշգրիտ նամակները՝ որոնք իմաց կուտայի՞ իր արգուզարգերը, իր դուրս ելլելու ժամերը: Կը շարժուէր, կը մաքառէր ինքզինքին հետ, կը յիշէր Էքզիլի խօսքերը. «Օրտը Ռուվոը այնքան զեղեցիկ է, որ չի կրնար խօսափիլ զրպարտութենէ: Համբերութիւն ունեցէք. ձեր սիրտը պողպատեցէք»:

Հակառակ ամէն բանի, հակառակ իր կամքին եւ սիրոյն, առանց համարձակելու կարենալ ըսելու համար թէ՛ «կը կասկածիմ», կը կասկածէր սակայն միշտ եւ անգթօրէն:

Որքա՞ն ալ ստորին եւ վատ միջոց մ'ըլլար անանուն նամակը, այսուհանգերձ ամէնէն խելացի մարդն անգամ կը խօսովի՛, երբ իրեն սիրելի կնոջ մը մասին նմանօրինակ նամակ մը կը ստանայ: Անանուն նամակը սիրողին մտքին մէջ կ'արթնցնէ սա՛ զարհուրելի խնդիրը. «Իմ սիրուհիս ճակտին ետեւը ի՞նչ կայ»: Ո՞հ, որքան մտերմիկ, որքա՞ն ինքզինքը նուիրուած սեպէ նէ, դատող ժարդը լա՛ւ գիտէ, որ չի գիտեր ամէն բաները: Կասկածը եւ անվստահութիւնը են նոյն իսկ դատողութիւնը. որովհետեւ հողի մը զազտնիք մըն է, ուրիշ հողի մը համար: Վստահութիւնն է որ կամաւոր կուրութիւնը կը ջնջէ: Ահա առաջին թէ՛ ի՞նչ կը յիշեցնէ ամէնէն հաւատարմոր սիրահարին, անստորագիր թուղթը՝ որ իրեն կ'ըսէ. «Այն կիներ ձեզի սուտ կը խօսի»: Արդ, Մաքսիմ վստահացած էր միայն կամքի դործողութեամբ մը, նման քահանայի մը, որ կը ջանայ իրմէ փախուստ տուող հաւատքը բռնել եւ հաւատքին հետ՝ սրտին հանգիստը:

Մաքսիմ ճանչցաւ այն անուշիկ ներքին աշխատութիւնը՝ զոր մտածումը կը կատարէ լուծեան, անքնութեան մէջ, հակառակ քեզի. այն աշխատութիւնը՝ որ կ'երթայ

փնտոնել ցիր ու ցան յիշատակները, զանոնք կը միացնէ խուրճի մը կը վերածէ աչքիդ առջեւ կեցած: Իր յիշողութիւնը կ'աշխատէր ուժգնօրէն: Սէնթ. Աման... առաջին տեսակցութիւնը: «Մայրը դէշ տեսակ ցեղէ է, նմանապէս քոյրը: Նէ գեղանի է, բայց երիտասարդ աղջկան մը կերպարանէր չունի»: Եւ արդէն, աշնան առաջին օրերէն սկսելով պէտք ունէր ապահովուելու, հաւտալու Մոտի: Երջանիկ կ'երևէր իր մայրը՝ տիկին տը Շանթէլ, որ իրեն կ'ըսէր. «Ո՛հ, շատ լաւ եւ շատ հրապուրիչ անձեր են»: Փայնն բան մը չէր ըսեր. կը զգար որ, Ռուվոլըի օրիորդներուն ընկերութենէն չէր ախորժեր, սակայն ժամն շատ երկչոտ էր: Երկար ամիսներ կ'անցնէին, միայնութեան ամիսներ՝ ուր, բացակայութեան մէջ, կը լմնայ իր բոլոր գոյութեան նուաճումը, սակայն կասկածը երբեք չի հեռանար իր մտածումէն: Յետոյ Բարիզ վերադարձը, Քլէպէր փողոցի սրահէն մուտքը: Մտաւ այնքան թագուհի կ'երևէ իրեն, որ չիմանար ստորին խօսակցութիւնները, անպարկեշտ ընթացքները: «Ի՞նչ անարատ այս արատաւոր շրջանակին մէջ: Կարելի՞ է»: Ու կասկածը աւելի կը զօրանայ, աւելի սեղմօրէն խեղճելով իր մեծցող սէրը: Քայլ առ քայլ կը հետեւի այդ կասկածին, կը հաւտայ անոր հետ: Ահաւասիկ օրերային նրբանցքը Սիւպէրսօ, որ ակնարկով մը կը ըստիպէ Մոտը, թողուլ Մաքսիմի թեր, եւ կը փոխանակուին գաղտնի խօսքէլ, Մոտ բացատրութիւն կուտայ Մաքսիմի, որ գո՛հ կը մնայ, որովհետեւ ներա մօտն է, իր ճառագայթումին սէջ: Յետոյ կը յիշէ Շանթէլի ճաշը, անձուռնալի եւ վիպական պտոյտը մտգական լիճին վրայ, եօրաղներու պայծառութեան միջեւ, յուրին եւ մշուշ, ձմեռ ե գարուն, փափուկ գաղջով մը իրարու փարած, եւ առաջին համրոյրը որ կը փորձէ, եւ միւսն ալ կը խուսափի անկէ: Ինչո՞ւ համար: Անսկզբութեամբ, կամ կուսական ընդվզումով, կը մտածէ ասոր վրայ: Բայց գատողութիւնը զինքը կը հեղնէ. «Օ՛ն ուրեմն, այս պղտիկ վայելքներու եւ այս պաշտօնական շուռայտութիւններու մէջ՝ մանկատարդ աղջիկ մը, նոյն իսկ խելօք, չի խուսափիր ճակատէն համրոյրէ

մը»: Այն ատեն ի՞նչ է: Սուրբ հարուածն էր իր բախն մէջ. «Նէ կը սիրէ միւսը, կը սոսկայ հպումէ մը՝ որ իրենը չէ. պիտի կրնայի՛ ես շօշափել ուրիշ կին մը»: Կը զարթնուր, կ'ըմբոստանար, չէր ուզեր հաւատալ:

Շատ տխուր, զարհուրելի բան մըն էր երեւակայելը թէ, իր պաշտելին իրմէ կը գարչէ՛ր: Վերստին կ'ուզէր ինքզինքը ապահովցնել. «Ինչպէ՛ս անուշ կը վարուի հետս, որքա՛ն կը ջանայ ինձի անհաճոյ չերեւելու: Իմ բացակայութեանս միջոցին՝ չբաշտեցա՞ւ ընկերութիւններէ»:

Կը վերյիշէր Շանթէլի մէջ անցուցած երանելի օրերը, երբ երկիւյնին, Մոտ կուգար զինքը դիմաւորել բառէին զբրան առջեւ: Ո՛հ, անտառներու կանանչ վերջալոյսին մէջ, հետուէն նշմարուած այդ պայծա՛ռ սիլուէթը, այդ պաշտելի կերպարա՛նքը: Փով քովի, վերադարձ Արմիթի զղեակը: Այս երջանիկ ժամերէն վերջ՝ Մաքսիմ կ'երթար առանձնա՛նալ իր սենեակը, խենթի մը, զինովի մը պէս. չէր կրնար քնանալ, կ'ուզէր ապրիլ ցերեկի ժամերը: Այն ատեն այլեւս չէր կասկածէր, վստահ էր ներա վրայ, մինչեւ որ, նոր անստորագիր նամակ մը գար վերարձարծելու իր նախանձն ու կասկածը:

Իր ներքին տառապանքը կը կրկնուէր, անոր համար որ կը տառապէր մինակը: Ի՞նչ բարոյական օգնութիւն կրնար սպասել իր մօրմէն ու քրոջմէն, որոնք խելքով իրմէ աւելի վար էին: Անոնք կը զգային իր ներքին պայքարը. առանց համարձակելու բան մը հարցնել, որովհետեւ յարգանք ունէին իր նկատմամբ, իրր ընտանիքի պետը եւ տան պատիւի պաշտպանը: Եւ սակայն անոնք ալ լռիկ կը տառապէին: Իրենց խօսակցութեան նիւթ կը կազմէին Մաքսիմի սեւ մեկամաղձութիւնները եւ այն օրերը, երբ նա ընկճուած դէմքով, զարհուրանքի ներքին պայքարներ կը մղէր: Տիկին տը Շանթէլ, պարկեշտ, սակայն միջակ խելքով կին մը, չէր կրնար թափանցել այդ խորհրդու միտքին եւ ինքնիրեն կ'ըսէր. «Շատ կը սիրէ նշան, Ու անհամբեր է»: Ժամն՝ իր մօրը փորձառութիւնն ա՛րեւեա՛նալով՝ չէր կրնար բացատրել իր եղբօրը բարոյա՛ չէր տրա-

կութիւնը: Միայն կը զգար մէկ բան. նա կը տառապէ՛ր, կը տառապէ՛ր յորմէ հետէ որ կը ճանչնար Մոտը. ուրեմն անոր համար կը չարչարուէր: Բնազդօրէն սկսաւ ատել Մոտը:

Մայրը եւ քոյրը աղօթքի օգնութեան ալ դիմեցին: Որքա՛ն առտուներ, հետիոտն, Լըբէք փողոցի զառիվերներէն կը բարձրանային, դէպի պատկանելի սրբատունը, իր ձերմակ սիւներով: Որքա՛ն անդամներ, յետ կիսաւուր, նօթոր-Տամի առանձնակի ստուերներուն մէջ ազօթեցին, երջանկութիւն հայցելով ընտանիքին մեծին համար՝ որ իրենց պատուոյն պահպանեն էր հաւատարիմ: Եւ այդ աղօթքներու մրմունջին մէջ, ժանն իրեն համար ալ կը հայցէր սիրուելու երջանկութիւնը: Այդ բանը շատ հեռու, գրեթէ անկարելի կ'երեւէր իրեն. եւ սակայն քսան տարիներու զարմաւալի հաւատքը կ'ըսէր իրեն. «Պիտի ըլլայ այդ բանը»:

Մաքսիմ, ինքը չէր աղօթեր: Մինչ, Սիւպերսօ, տագնապի ժամերուն, իր մանկութեան ջերմեռանդ թոթովումները կը վերգտնէր: Մաքսիմ, այնքան մաքուր, ուղղամիտ եւ կրօնասէր մեծցուած, այլեւս չէր աղօթեր. որովհետեւ ոչ եւս հաւատք ունէր: Հազիւ մարդ եղած, հաւատքը իր մէն գացած էր: Անթափանցելի գաղտնիք, հաւատքի այն շունչը, որ ոմանց կենդանութիւն կուտայ, ուրիշները կը Լփէ: Մաքսիմ անհաւատ էր այնպիսի անկեղծութեամբ մը, որ աղօթքի գաղափարը չէր գար իր մէջ. ստոյգ անասունաձեւութեան նշանակ:

Մեքենայով գրուած վերջին նամակ մըն ալ եկաւ, որ իրեն իրաւունք պիտի տար վերջնական որոշման մը: «Չէք ուզեր փեսանել, հաստատապէս, եւ կ'երթաք ամուսնանալու ոչինչ կնոջ մը հետ: Այս նամակը վերջինն է, որ կը գրէ ձեզմով շահագրգռուող անձը. զգուշացէ՛ք, եթէ եսնիթ մը կամ տղայ մը չէք: Այսօր հինգշաբթի, ժամը Ինչ, գտնուեցէք Պոմ փողոց, երկաթեայ պղտիկ դրան մը մո՞վ, երկրորդը՝ Բէրսիէ փողոցին կողմէն: Ինչո՞ւ չերկը հեզնէ սնելու: Ոչ ոք պիտի գիտնայ. եթէ մեր ըսածը պաշտօնակա մը, նոյն իսկ

ճիշդ չէ, այդ պարագային, վերջնականապէս պիտի հանդատանաք»:

Սորհրդաւոր թղթակիցը, այդ թէ կին, որ ստորագրած էր նամակը խոհեմութիւն, անշուշտ որ էր բաւական զօրաւոր հոգեբան մը: Երկու պարբերութիւնները որոշում տալ տուին Մաքսիմի: Մին՝ «Ոչ ոք պիտի գիտնայ»: Միւսը՝ աղատուելու յոյսը կուտար: Մօրֆիսի սրուակն էր ցուցուած հիւանդի մը՝ որուն կ'ըսուէր. «Ներարկումէն յետոյ, այլեւս չպիտի չարչարուիք»:

Ժամը հինգին, Պոմ փողոցն էր. տեսաւ մտնելը անոր՝ որ կը կարծէր թէ Մոտն էր. հինգ քառորդ ժամ սպասեց դրան առջեւ, հաւատօք ըլլալով որ, Մոտը հերոսն էր, Սիւպերսօի թեւերուն մէջ: Հինգ դարե՞ր, Երբե՛ք: Ոչ երկար պէրսօի թեւերուն մէջ: Հինգ դարե՞ր, Երբե՛ք: Ոչ երկար եղաւ ոչ կարճ. ժամանակը գոյութիւն չունէր: Չարչարուեցա՛ւ ամէն երկվայրկեան, բովանդակ մարտիրոսունութիւնը երբ իր աչքերով իսկ հաստատեց թէ Սիւպերսօի տունը մտնող կ'ընէր ՄՈՏԸ ՉԻՐ:

Եւ կեղծ նամակագիրը Մոտի տեղ առած էր ուրիշ կին մը: Յորմէ հետէ Մոտ, Սիւպերսօի իմացուցած էր թէ այլեւս չպիտի կրնար գալ ժամագրութիւններուն, այս վերեւ չպիտի կրնար գալ ժամագրութիւններուն, այս վերջինը հեռագրած էր Ժիւլիէթ Ավուրզաքին կամ աւելի ճիշդը իրենց միջնորդ՝ տիկին Տիւրլէրքի. ու աղջիկը, հանդարտորէն եկած էր, շատ երջանիկ այս անսպասելի ժամագրութենէն:

Մաքսիմ վերադարձաւ իր պանդոկը, այդ իրիկուն, ծայր աստիճան ուրախ: Մայրը եւ քոյրը կերակուրի կը սպասէին հասարակաց սրահին մէջ:

Մաքսիմ, թեթեւ սրտով ու զոհունակ, համբուրեց քերկու կիները՝ որոնք վերակենդանացան եւ իրեն չափ ուժը րախացան: Կորուսեալ սիրտն եւ եղբայրն էր որ կը զըռնէին:

Հոն գտնուող բոլոր հիւրերը կը զարմանային, ոչէք-երեքներու սեղանին վրայ զուարթութիւն կը տիրէրելու զան մը՝ որ միշտ տխուր էր սովորութեամբ: Նոյն ուրեւ չէր տրա-

մը բացուեցաւ, որուն վրայ գրուած էր. «Աէն. Ժողէֆի ճըշ-
մարիտ շամբանիա» :

Բախտին ողորմութեամբը, Մաքսիմի ուրախութիւնը
չուտով չանհեծացաւ: Տեւական եղաւ: Կասկածը իր մէջ մե-
ռած էր: Սիրտը կը թելագրէր իրեն, երթալու Մոտի ոտ-
քերը իյնալու եւ իր մեղքը խոստովանելու. չուզեց այս
գաղտնիքը եւ սխալը պահել իր խղճին վրայ:

Երբոր յաջորդ օրը խոստովանեցաւ այդ սխալը եւ համ-
բոյրով մը Մոտէն ներողութիւն ձեռք բերաւ, իր ջերմը
հանդարտեցաւ:

Օրը կատարեալ երջանկութեան մը մէջ լինցաւ. գոգ-
ցես ամէն ինչ զայն գեղեցկացնելու կը ջանային. երկնքի
ժպիտը, դէմքերու պայծառութիւնը եւ մերձաւոր երանու-
թեան մը յոյսը՝ ուրկէ իւրաքանչիւրը իր բաժինը պիտի
ստանար:

Իրիկուան ժամը տասնըմէկին սենչակ վերադարձաւ եւ
չուզեց քնանալ: Գիշերուայ այդ լուսութեան մէջ կ'ուզէր
երկարել իր զեղուն սրտին ուրախութիւնը: Արշալոյսը պա-
տուհանները կը կապուտգեղէր, երբոր աչքերը փակեց:

Միեւնոյն ժամուն, Սիւպէրսօ տուն դառնալով, սրտա-
բեկ եւ խաղաղ, կը փակէր աչքերը ծանր քունի մը ճըն-
շումին տակ, ուր կ'ապրէր միայն սա հաւատքը. «Ամուս-
նութիւնը տեղի չպիտի ունենայ»:



որ
հենթ
ինչ
մո՞վ
կը հեզնէ
պաշտօնակ
մը, նոյն իսկ

Դ

«Ամուսնութիւնը չպիտի տեղի ունենայ, պէտք չէ որ
տեղի ունենայ», եղաւ միակ մտածումը Ժիւլիէնի ու եղին
մէջ, արթնցած միջոցին. մնազած ամէն ինչ անկապակ-
ցութիւն եւ խաւար էր: Մտային ասանկ վիճակ մը յա-
տուկ է մղիչ ուժի մը ազդեցութեան տակ գտնուող մենա-
մոլներու, որոնք առտու մը կ'արթննան, դուրս կ'ելլեն,
շիփշիտակ ընդառաջ կ'երթան... անձնասպանութեան,
գողութեան, մարդասպանութեան, խորհրդաւոր կերպով
հարկադրեալ, եւ ստուգիւ անպատասխանատու: Պայքարի,
հաճոյքի, բուռն յուզումներու այդ մարդոց բոլորն ալ ու-
նին մղիչ մենամոլութեան սերմը, որ յանկարծօրէն իրենց
մէջ կը պայթեցնէ սեւէ դէպք. օրինակի համար, ամէնէն
հաճոյակատար ամուսնոյն կողմանէ՝ սիրահարին վրայ
գործուած ռճիր մը. երեկոյթէ մը վերջ, կամ ակումբի մը
մէջ, ատրճանակի հարուած մը իր գլխուն զուարճացողի մը
կողմէ. երեսուն տարի գիրք բռնելէ վերջ՝ մեծ անձնաւո-
րութեան մը քայքայումը՝ աղտեղութեանց մէջ:

Ժիւլիէնի հաստատ որոշումը զինք մղեց երթալ գըտ-
նելու Մոտը կամ Մաքսիմը, կամ երկուքը միասին, աղէ-
տի մը գլխուստին տեղի տալու համար: Եւ լանկարծ էք-
թորի խօսքերը միտքը ինկան. «Մաքսիմ, նախաձաշելու
համար ամէն օր ժամը հինգին շոգեկառքով կուգայ»: Ու
Շանպլէի անունը եւ տեղը եղան իր ներքնամղումին բեւե-
ռը. չուտով մը հագուեցաւ, այլեւ չէր խորհեր, չէր տրա-

հարուածին տակ չենք ընկրկիր: Օր. տը Ռուվորի հետ ա-
մուսնանալէ առաջ՝ ձեզի հետ չպիտի մենամարտիմ. ահա-
ւասիկ ինչ որ շատ յստակ է. եւ դուք կը հասկնաք պատ-
ճառները: Օր. տը Ռուվոր կինս ըլլալէ վերջ՝ ձեր ուզածին
գօհացում պիտի տամ: հաւտացէ՛ք ինծի եւ թողէք զիս:

Այնքան որոշ: այնքան հաստատամիտ կերպով ըսած էր
որ ժիւլիէն հասկցաւ թէ յամառելու պէտք չկար: «Եթէ
մերժէ հրապարակաւ կսուել ինծի հետ, ինք չէ որ պիտի
անպատուընդի».

Ու մեծ յուսահատութիւնը, որ իրեն որոշել տուած էր
Մաքսիմի հետ կռուելու, վերստին ծանրացաւ իր վրայ,
որովհետեւ պարզ պատճառի մը համար մենամարտը իրմէն
կը խուսափէր:

Երկուքն ալ, առանց բառ փոխանակելու, քիչ մը քա-
լեցին: Հակառակ ամէն բանի, Մաքսիմ կ'ուզէր, որ Սիւ-
պէրսո, խելացնոր, տակաւին խօսի իր առջեւ. չանհետա-
ցած կ'ազակածները վերստին արթնցած էին իր մէջ: Երկու-
քըն ալ, համաձայնօրէն, կանգ առին եւ իրարու նայեցան.
Եւ փոխանակուած նայուածքներէն հասկցան որ, թէ՛ մին
եւ փոխանակուած նայուածքներէն հասկցան որ, թէ՛ մին
եւ հա՛րկ էր այս բացատրութիւնը: Աչքերով, դադարի մի-
ջոց մը տուին իրարու: Հակառակորդ, թշնամի: կնոջ մը
համար չարչարուող երկու մարդոց խիղճերուն վաղանցիկ
մէկ համաձայնութիւնն էր այս:

Անբարոյական հաճոյամոլը՝ Սիւպէրսո, եւ աշխարհա-
կան սուրբի մը նմանող՝ Մաքսիմ, վայրկեան մը իրարու
հետ դաշնակցեցան:

— Պարոն Շանթէլ, ըսաւ ցած ձայնով Սիւպէրսո,
հեզնական շեշտը վար դրած, մի երթաք Շանթէլ:
Անձկութեամբ եւ ոչ բարկութեամբ, հարցուց Մաք-
սիմ:

— Ինչո՞ւ համար:

— Զիս խօսեցնել մի՛ տաք. հարկ չկայ: Գիտեմ եւ
վստահ եմ որ այժմ ինծի կը հաւտաք: Զեր երկիրը, կամ
Բարիզ դարձէք: Զանացէք մոռնալ ինչ բան, որ տեսաք Է-

ինչ բանի որ չեռնարկեցիք.

Մաքսիմ ծանր ծանր կը յառաջանար. Սիւպէրսո ձեռ-
քը անոր ուսին վրայ դրաւ ձեւով մը, որ սպառնալիք չէր,
այլ խնդրանք մը:

— Զէք կրնար ամուսնանալ օրիորդ տը Ռուվորի հետ.
ձեզի կը խօսիմ առանց բարկութեան: Հաւտացէ՛ք ինծի.
դէպի աղէտ կ'երթաք: Վերադարձէ՛ք, աւելի առաջ մի՛ եր-
թաք:

— Ո՛հ, Աստուած իմ, մրմնջեց Մաքսիմ: Այնքան ան-
զըթօրէն կը չարչարուէր, որ ոչ եւս խորհեցաւ չհասկնալու
զարնել՝

— Վերադարձէք ձեր տունը, յարեց Սիւպէրսո, հեռա-
ցէ՛ք ասկից: առանձին թողէք զիս Մոտի դէմ: Իրաւունք
չունիք ամուսնանալու անոր հետ, եւ ոչ ալ նէ...

Անձկալից աղաղակ մը խեղդուեցաւ Մաքսիմի հոկոր-
դին մէջ:

— Ա՛հ, ստոյգ չէ՛. կը ստէ՛ք: Այժմ ձեզի հետ պիտի
կռուիմ, ձեզ պիտի սպաննեմ, թշուառակա՛ն:

Սիւպէրսո գլուխը երերցուց.

— Ի՞նչ օգուտ կայ մենամարտելէն: Ամէն ինչ լմնցած
է, այժմ որ գիտէք: Մոտ իմ սիր...:

Վարժ կռուողի մը յատուկ կերպով, դարձուց Մաքսի-
մի թեւը, որ իր վրայ յարձակիլ կ'ուզէր. եւ զայն կե-
ցուց, ըսելով.

— Լո՛ւռ. ահաւասիկ նէ՛ որ կուգայ:

Ճամբուն պատռուածքին՝ վրայ, սեւ բիծ մը կը ծա-
ծանէր, յառաջանալով: Սկսան քալել անոր ընդառաջ: Ու
յանկած Մոտ զանոնք չ'ըմարեց:

Սարսուեցա՛ւ, առանց գիտնալու թէ ինչպէս տեղի ու-
նեցած էր երկուքին հանդիպումը. գուշակած էր, որ այն-
քան անգամներ նախատեսուած ժամը հասած էր, ուր եր-
կուքը պիտի բացատրուէին իր ներկայութեան:

Իր էնէրժին ժողվեց. մարտնչողի իր պաղ արիւնը ամ-
փոփեց, շարունակելու իր ճամբան դէպի առաջ, փոսակո-
խելով բոլոր արգելքները: «Թերեւս Մաքսիմ բան մը չի

գիտեր. ուրեմն բան մը կորուսած չէ: Եթէ դիտէ: լմնցած է ամէն ինչ. ուրեմն, աւելի գէշ: Ամէն ինչ վերջացած պիտի ըլլայ: Սակայն պիտի մնամ «ես», ինչ գիտով որ ըլլայ: Ոչ մին եւ ոչ միւսը պիտի կրնան զիս ծոել», խորհեցաւ նէ, գիտելով երկու մարդերը:

Ու անթափանցելի անտարբերութեամբ մը քողարկուած՝ Մոտ կը սպասէր անոնց կռիւին, իրեն դէմ, իրեն համար: Աւելի շփոթողը եղաւ Սիւպէրսօ, որ յանկարծօրէն բացաւ անգունդը՝ ուր կ'երթային ջախջախուիլ իր յոյսերը:

Մաքսիմ ինքզինքին եկած էր:

— Մոտ, ըսաւ, ձայնը կտրուած. հոս եկած ժամուս

Պ. Սիւպէրսօն գտայ ձամբուս վրայ:

Սիւպէրսօ, յուզումնալից, ուզեց խօսիլ, սակայն բերնէն խօսք մը չկրցաւ հանել: Մոտ նայեցաւ անոր. նայուածքը զայն ընկրկեցուց:

— Ինչ ըսաւ ձեզի, հարցուց երիտասարդ աղջիկը, իր քաղցրահայեաց աչքերը ուղղելով Մաքսիմի:

— Ինձի ըսաւ, կամ պիտի ըսէր գոնէ, — որովհետեւ չթողուցի որ խօսքը լմնցնէ — այո՛, թէ եղած էք իր... (բառը չոր հեծկտանքի մը մէջ խորտակուեցաւ) իր... սիրուհի՛ն:

Դէպի Սիւպէրսօ յառաջացաւ եւ հարցուց.

— Ըսի՞ր այդ բանը:

Չուրացաւ. եւ իբր պատասխան թոթովեց.

— Մո՛տ:

Առանց նախատինքի բառ մը խօսելու, անոր նայեցաւ, երկա՛ր վայրկեան մը, աչքերով՝ որոնք կը փոխուէին, կը լեցուէին թշնամանքով եւ արհամարհանքով:

Յետոյ, մտրակի հարուածի մը շարժումով, զաւկաւ աճոր դեմքին հովանոցը, որ երկուքի բաժնուեցաւ, պատըռտելով մորթը, որ արիւնեցաւ:

— Կորսուէ՛, ըսաւ նէ, կտորները գետին նետելով:

Պատժուած տղու մը պէս կը դողդոջար նա. այդ հարուածին ցաւը սակայն անոր անուշ երեւցաւ. այդ վայրա-

գութեան մէջ փայփայանք փնտոնց, բայց Մոտի նայուածքը անկից կ'անհետացնէր բոլոր ուժը. մեքենական կերպով զլիարկը առաւ գետնէն:

— Կորսուէ՛, կրկնեց Մոտ:

Կամացուկ մը աղտոտած գիտարկը գլուխը դրաւ: Դըժընդակ էր մարդու մը արժանապատուութեան այդ վայրագ փլուզումը՝ կնոջ մը խրոխտ բռնութեան տակ, եւ Մաքսիմի սիրտը, այս տեսարանին առջեւ, լեցուեցաւ ցասումով: Սիւպէրսօ այլեւս չէր տեսներ Մաքսիմը, ոչ ալ գտնուած տեղը. միայն կը տեսներ Մոտը, եւ իրեն համար կարեւորութիւն չունէր խօնարհիլը: Միայն սա՛ բանը կը խորհէր. «Մոտը բարկացած... եւ մինակ բախտը՝ ներուելին էր ու հնազանդիլ, շուտով հնազանդիլ»:

— Կորսուէ՛:

Այլեւս բան մը չլսնդրեց. խոնարհաբար, ծեծուած անասունի մը նման՝ մեկնեցաւ, առանց ամապարանքի: Մոտ եւ Մաքսիմ անոր ծանրաքայլ հեռանալը տեսան. ետին չի դարձաւ: Այո՛, սրտածմլիկ եւ սոսկալի բան էր: Մաքսիմ ցաւ զգաց իր այր մարդու արժանապատուութեան մէջ, մարդու մը համար՝ որ կը մեկնէր այս գէս սմքած եւ ծեծուած կնոջ մը կողմանէ զարհուրելի անկումի մէջ, ուր կը փլին ուշ կամ կանուխ անոնք՝ որոնց սէր-շուայտութիւնը յամբարար մաշեցուցած է կամքը, լուծած՝ բարոյական զգացողութիւնը, լրբութեան եւ հեղնութեան դիմակին տակ:

Ծռած, երերուն, անձանաչելի, անոր աներեւոյթանալը տեսան Մոտ եւ Մաքսիմ, ձամբուն դարձուածքէն. առանձին էին: Բոլոր իր ուժը ամփոփելով՝ կանգնեցաւ ներա դիմացը եւ ըսաւ.

— Կարգը իմս է մեկնելու, չէ՞:

Իրարու նայեցան: Առանց բան մը գիտնալու, կ'ըզգային թէ՛ տակաւին իրարու ըսելիք բան մը ունէին եւ այս կերպով իրարմէ չպիտի զատուէին: Մոտ անշուշտ որ կը մտածէր. «Ինձմէ կախում ունի զայն ձեռքէ չհանելը. փորձե՛մ արդեօք»: Բայց այս դիւցազնական արկածախնդրին հողիին մէջ, փախտական եւ կործանած Սիւպէրսօի տես-

քը, միեւնոյն հակահարուածը ունեցած էր, ինչպէս Մաքսիմի վրայ: Յանկարծ գարշեցաւ ստախոսութենէն:

— Մտիկ ըրէք, Մաքսիմ, ըսաւ նէ: Մէկ բառ միայն պիտի ըսեմ ձեզ: Չ'խաբեցի զձեզ, ստախոս մարդ մըն է, երբեք իր սիրուէին չեղայ: Պիտի հաւտաք ինծի, որովհետեւ կ'աւելցնեմ նաև թէ նա զիս սիրեց, թէ զայն սիրեցի, եւ թերեւս մինչեւ երէկ զայն կը սիրէի: Ուրեմն, ամէն ինչ լմնցած է, չէ՞: Չեմ ուզեր զձեզ համոզել եւ ոչ ալ զձեզ պահել հակառակ ձեզի:

Չկայ բնաւ անկեղծ սիրող մը, որ այս խօսքերէն վերջ յուսոյ ճառագայթ մը չ'զգայ իր մէջ:

— Ուրեմն, յարեց Մաքսիմ:

Եւ իր աչկունքը, միշտ սիրողի աչքեր, կատարեալ եւ վստահեցուցիչ թիւն մը կը հայցէին:

Անկարելի էր ճշմարտութիւնը յայտնել Մաքսիմի, սըտել պէտք էր դեռ, ստե՛լ:

— Ինչ որ անցած է իմ եւ անոր մէջ, յարեց նէ, բոլորն անկեղծութեամբ մը, մի՛ հարցնէք ինծի. ո՛չ, չեմ կրնար զայն ձեզի ըսել: Չեզի համար լաւարոյն բանն է, որ հոս չմնայիք եւ ոչ եւս խորհէիք իմ վրաս:

Անմիջական բաժանումի մը սոսկումը դեփ-դեղին ըրաւ Մաքսիմը. անգամ մը եւս ուզեց յուսալ: Երկուքն ալ յամբարար սկսած էին քայլել դէպի դղեակ:

— Մոտ, քիչ ժամանակ է որ ձեզի հետ յարաբերութեան մէջ եմ. անցեալը ինծի չի վերաբերիր. իրաւունք չունիմ անոր վրայ, քանի որ... Բանի որ նա ստեց, ինչն է համար արգելել զիս քու վրադ մտածելէ:

Նէ նայեցաւ անոր վարանոտ: Բախտագուշակ վայրկեան մը եղաւ այս: Մաքսիմ շարունակեց.

— Եթէ ձեզ կը սիրէի՞ բաւականաչափ, ձեզի ներելու համար:

— Ներում չեմ ուզեր, յարեց նէ Հաւտացէք ինծի, Մաքսիմ. ձգե՛նք զիրար: Պիտի յիշէք, որ ես եմ որ ձեզի ըսի «մեկնեցէ՛ք», անանկ վայրկեանի մը մէջ, ուր թերեւս պիտի կրնայի ձեզ պահել: Պէտք չէ որ սխալալուծութեամբ մտածէք իմ վրաս. կը խոստանա՞ք ինծի:

Մաքսիմ հասկցաւ այս խօսքերուն. լրջութիւնը, թէ ստուգիւ մնաք բարովը պէտք էր ըսել ու մեկնիլ:

— Կը խոստանամ ձեզի, ըսաւ, ծանր եւ չփոթ ձայնով:

— Մնաք բարեա՛ւ:

Ու ամէնը այս եղաւ: Տեսաւ ներս հեռանալը եւ յետոյ աներեւոյթանալը: Այն ատեն, այն ատեն միայն հասկըցաւ որ իր երազը վերջացած էր, թէ Մոտ կորսուած էր:

Մօտիկը, արձան մը, մարմարեայ նեփի մը, իր կլորակ գաւաթին մէջ կը լեցնէր հեղուկ մը. արձանին ոտքին տակ նստարան մը կար. նստեցաւ, եւ ճակատը իր ձեռքերուն մէջ. խորասուզուեցաւ իր հաստատուն գաղափարի անդունդին մէջ. «Մոտ կորսուած է, Մոտ այլեւս գոյութիւն չունի»:

Մոտ այլեւս գոյութիւն չունէր. նստած տեղը, կը տեսնէր այժմ աղջիկ մը՝ նման այն գարշելի ընկերութեան աղջիկներուն, առանց ամօթխածութեան, առանց համոզումի, ուր նէ կ'ապրէր, եւ որը գատած էր, որովհետեւ կը սիրէր զնէ:

Էքթորի բառը, «կէս կո՛յս», յիշողութեան մէջէն անցաւ, ու դառնութեամբ ժպտեցաւ: Նէ եւս, պաշտելի կուռքը, ընտրեալ նշանածը, կէս-կո՛յս մը...:

Այժմ ամէն ինչ կը հասկնար: Սիրե՛լ այդպիսի հոգի մը, փափաքի՞լ այդպիսի պղծուած մարմինի մը. ո՛չ: Այդպիսի մաքուր եւ պարզ մարդու մը համար, անկարելի էր այլեւս վազել այն տունը, ուր կը գտնուէր նէ. միանալ անոր, վերստին տիրանալ անոր: Մտուգիւ, այլեւս չէր սիրեր զնէ. չէր ուզեր այլեւս. կրնար վերաբերիլ անոր՝ որ իրեն հաճելի պիտի երեւնար: Նախանձը եւ ցանկութիւնը այլեւս չէին չարչարեր զայն:

Իր ատուապանքը հոգեւա՛րք էր. մէկը անդառնալիս...

րէն կորուսած էր, մեռած էր. մէկը՝ որուհ հաւտացած էր, որը պաշտած էր: Մեռած էր նէ, նշանածը, սիրականը. կուլար անոր վրայ, ինչպէս մեռեալի մը...
Ու բոլոր կեանքին մէջ, պիտի արտասուէ՞ր ներա համար:

Նոյն իրիկունն իսկ. Մոտ վերահաստատուած էր Բարիզ. իր որոշումը, ինչպէս միշտ, արագ եւ վերջնական: Մաքսիմը ձգելէ վերջ՝ վերողորձած էր զզեակ. ժինակը փակուած էր իր սենեակը, եւ հոն, դէպքերը դիտած էր բանակի պետի մը պէս՝ որ կը քննէ պարտութենէ մը վերջ թէ որքան զինուոր մնացած է իրեն: Ի՞նչ օգուտ սնտոի կեղծիքներ փնտռել: Պարտութիւն մըն էր, թանկագին յոյսերու փճացումը: Վերոտին տիրանալ Մաքսիմի, ատոր յոյսերու փճացումը: Եթէ անոր քով գտնուած պահուէն, վրայ երբեք չմտածեց: Եթէ անոր քով գտնուած պահուէն, վայրկեան մը վարանած էր, այժմ միայնութեան մէջ ինքզինքը գտած էր: «Երբե՞ք զիս չպիտի մոռնայ, բայց երբե՞ք չպիտի գայ»: Երբե՞ք: Այս բառը այնպէս մը կը սարսափեցնէ մեր մարդկութիւնը, որ Մոտի յաւակալութիւնը տիրութեամբ պատուեցաւ:

Մաքսիմի անհետացումէն վերջ՝ ի՞նչ պիտի ընէր: Վերջը սկսիլ պայքարը՝ ամուսնութեան համար: Կարելի էր Ստեփան յաջողութեան հաւանականութիւնները շատ քիչ էին իր ներկայ անկումին հետեւանօք. «Գոհ մնացի՞ն զիս լրտեսողները. Ահարոն եւ Իւսէլի եւ իր տունը յաջողակարգ մը պղտիկ հաշաններ»: Պահ մը, սրտաբեկ յոգնութիւն մ'ունեցաւ, նախատեսելու նոր պայքար մը ամուսնանալու, այն հաւանականութեամբ թէ, շատ մը ճիգերէ վերջ զարձեալ անկում մը պիտի ունենար: «Ուրեմն անկարելի՞ այժմ ամուսնանալը»: Վերսկսի՞լ եւ ինչպէ՞ս. ո՞ւր գտնել զրամը, ծախսելու համար, ինչպէս երէկ: Արդէն իր անձնական բոլոր հարստութիւնը մոխուած էր: Բարիզ վերադարձը կը նշանակէր անանկութիւն, յարձակում հայթայթիչներու կողմէ, որոնք համբերած էին ցարդ հարուստ ամուսնութեան յոյսով մը, եւ ապա գրաւում:
«Ո՛հ, այդ բանը... երբե՞ք»:

Այն ատեն ի՞նչ ընել: Նոյն իսկ Սիւպերսօի հետ ամուսնանալու ենթագորութիւնը մտքէն չանցաւ: Ոխակալութիւնը շատ գրգռած էր իր հպարտութիւնը, ցանկութեան ձայնը լսել տալու համար իր մէջ: Ու հիմա ինքն էր եւ ոչ թէ Մաքսիմ, որ կը փափաքէր վրէժ լուծել: «Այո՛, անոր չարիք գործե՛լ»: Նէ կ'ուզէր խորտակել անոր սիրտը, որ այնքան չարիք հասցուցած էր իրեն մատնութեամբ: Արդ, — անմիջապէս ատոր վրայ մտածեց — կրնար անկից վրէժ լուծել այնպէս մը որ, միեւնոյն ժամանակ դրամական նեղութիւններէ ալ կ'ազատէր եւ իր ապագան ալ կը շտկէր: «Ահարոնի սիրուհին ըլլալ»: Թող այդպէս ըլլա՛յ: Իրեն տիրանալու համար, էրիկ մարդերու միջեւ յառաջ եկած կռիւին մէջ, պիտի վերաբերէր ամէնէն յամառին, ամէնէն ճկունին, անոր՝ որուն յամր եւ սակայն ապահով մեքենայութիւնները, միւս երկուքին ջանքերը չընչացուցած էին:

«Ահարոնի սիրուհին»: բարձրաձայն արտասանեց այդ զարհուրելի բառերը, երեւակայելով ժիւլիէնի յուսահատութիւնը:

Այ որոշումը տուած էր: Պէտք էր մեկնիլ Բարիզ, փութացնել Դազըլիի ամուսնութիւնը Լէսթրանտի հետ, յետոյ թողուլ Ֆրանսան, երկու ամսոյ չափ, մօրը հետ օտար երկիր մը երթալ: Ապագան ապահովելէ, նորէն իր կեանքը շտկելէ վերջ՝ վերստին Բարիզ վերադառնալ:

«Ինչի մը գէշ տարիներ պիտի անցնեմ, բայց պիտի կրնամ սանձել հրեան: Ամուսնացած է, սակայն ամուսնալուծումն ալ կարելի է: Ու օր մը ո՞վ գիտէ: Այ չեն կրնար խճրել զդրամատիրոջ կնոջ անցեալը, երբ նէ ութ հարիւր հազար ֆրանք եկամուտ:

Կանչեց Պէթթին.

— Պայուսակները պատրաստէ, այս իրիկունն Բարիզ պիտի ըլլանք:

Եւ որովհետեւ Տիկին տը Ռուզըր բան մը չէր հասկընար այս յեղակարծ որոշումէն, յուզումով պատճառը կը հարցնէր Մոտի՝ որ կտրուկ պատասխանեց:

— Կը մեկնինք, որովհետեւ պէտք է մեկնիլ, կը հաս-
չընա՞ս: Բեզի պիտի բացատրեմ Բարիզի մէջ- առ այժմ
փափաք չունիմ խօսելու. պատուոյ խօսքիս հաւատա-
պէաք է որ մեկնինք: Աճապարէ:

— Բայց մեր բարեկամնե՞րը, Լը Թէսիէնսերը, որոնք
կուզան ճաշելու:

Պիտի տեսնեն որ հոս չենք: Այսուհանդերձ պիտի հե-
ռագրեմ:

— Բայց Տիկին տը Շանթէլն եւ Ժա՞նն:

— Անոնք չպիտի գան:

Այս հարցումները զինք կը գրգռէին, չորչափ տան մէջ
մեկնումի լուրը բերնէ բերան կ'երթար. էթիէնէթ նշմա-
րեց. բայց լուռ մնաց. Միայն Ժագրլին ըսաւ.

— Ա՛հ զիս չչահագրգռեր, կսպասէի հարուածին: պա-
յուսակս պատրաստ է: Ի՞նչ պիտի ընես Բարիզի մէջ, հար-
ցուց Մոտի հեգնութեամբ:

— Պիտի ընեմ ինչ որ յարմար դատեմ. պատասխանեց
Մոտ:

— Բնականաբար միայն պիտի խնդրէի սպասելնիդ.
մինչեւ որ Լիւքի օրինաւոր ամուսինը ըլլամ: Յետոյ քու
գիտնալու բանդ է:



Ե.

»Մեծցուած մօր մը կողմէ՝ որ երբեք չէ դադրած ամե-
նէն անկեղծ բարեպաշտութեան օրինակը տալէ ձեզի, եր-
ջանկութիւնը ունենալով մեծնալու ընտանեկան բոյնին մէջ,
առանց ձեզի անկէց հեռացնելու, ձեր երէց քրոջմէն զատ,
առանց ուրիշ ընկերի, այժմ կը թողուք աղջիկս այս բոյնը
առաջին անգամ, ձեր ամուսնոյն թեւերուն մէջ, ու վստահ
եմ որ երբեք ձերմակ հագուստը, կուսական քօղը, ամու-
սինի հոտաւէտ պսակը չեղան աւելի հաւատարիմ խորհրդա-
նըշաններ այդ մանկական արարատ սրտին՝ զոր կը մատու-
ցանէք ձեր ամուսինին: Ո՛հ, որքան քաղցր է բարեկամի
մը զձեզ նուիրագործելու իբր ամուսին, ձեր ընտանիքի
մասին ունեցած սիրոյս պատճառաւ. ի՞նչ ուրախութիւն
հովիւին համար, զաւակս, օրհնելու պսակ մը, յիշեցնող
հարսին անմեղութիւնը եւ երիտասարդութիւնը: Ատուու-
ծաշունչի ամուսնութիւնը, ինչպէս Ռէբէկա եւ Ռիւթ»:

Այս խօսքերը դուրս կուգային Սֆաքսի եպիսկոպոս՝
գերաշնորհ Լըվէրտէի բերնէն. Պ. տը Ռուվոլըի հին բարե-
կամը: Գուցէ էթթոր Լը Թէսիէն էր մինակը այս հակաօ-
րինական խօսքերը ճաշակողը, բազմաթիւ հրաւիրեալնե-
րուն մէջ, լեցուած Սէնթ-Օնօրէ եկեղեցին: Ժագրլին տը
Ռուվոլը՝ հարսն էր, իսկ Լիւկ Լէսթրանժ՝ փեսան. պարա-
գային համեմատ դիրք առած էին: Նէ՛ գիժագծերու եւ ձե-
ւերու անչարժութեամբ մը կը ծածկէր չարածճի իր յաժա-
ռութիւնը: Փեսան՝ նուազ ջղային եւ քիչ մը տոգոյն, եր-
բեք չէր նեղուէր եկեղեցւոյ պատկառելիութեան մէջ՝ մտա-
ծելու համար թէ ընդհուպ պիտի տիրանար, թիւերով եւ
սաթէններով զարդարուած այդ ցանկասէր եւ չփոթեցնող
էակին:

Տեղւոյն հանդիսաւորութիւնը, եկեղեցական արարու-
թիւնը, եպիսկոպոսին քարոզը արգելք չէին, ցած ձայնով

փոփոխութեան բազմութեան մէջ :

Սակայն եպիսկոպոսը կը շարունակէր :

«Սուրբ Գրոց մէջ, Տէրը յայտնած է, որ չի դատապարտեր, ընդհակառակը կ'օրհնէ փոխադարձ սէրը իր արարածներուն, պայմանաւ որ ինք ըլլայ այդ սիրոյ գերագոյն նպատակը: Քրիստոնեայ կին ամուսինը պէտք է սիրէ իր ամուսինը, օրիորդ, իր Արարչին անմիջական ներկայացուցիչը»:

«Ահաւասիկ ամուսնութիւն մը, մտածեց էքթոր, ուր արարիչը շատ գէշ ներկայացուած է»:

Բայց այդ վայրկեանին, դիտելով Ժիւլիէն Ավրըզաքը՝ որ իր մօտիկն էր, տեսաւ զնէ կարմրած, եւ ապա ձեռքերովը ծածկեց զէմքը: Աղջկան նայուածքը դիտելէ վերջ, ետին դարձաւ եւ պարապ աթոռներուն մէջ նշմարեց Սիւսպէրսօն, միեւնոյն վայելչագեղ հագուստով, սակայն ճակատը դեփոքեղին եւ աւրուած, ջերմէն ծիւրած զէմքը սոսկում կուտային այն տխուր զէմքով մեռելներուն նման՝ որոնք երբեմն հիւանդանոցներու ապակեղարաններէն կը տեսնուին:

«Ի՞նչ կը փնտռէ հոս, խորհեցաւ էքթոր»:

Առանց հարցաքննած ըլլալու Մոտը, անցած դարձածին վրայ, էքթոր գիտէր թէ ի՞նչ պատահած էր: Խզումին իրիկունն իսկ, Մաքսիմ, առանց մանրամասնութեան, իմացուցած էր մեկնումը ի վէզէրի, մօրը եւ քրոջը հետ, ցաւ յայտնած էր իր բարեկամները այսպէս յանկարծօրէն ձգելուն համար եւ էքթորի խոստացած էր գալ զինքը տեսնել ամառը Բուստուի մէջ: Եւ ոչ մէկ ակնարկութիւն Մոտի մասին. անունն իսկ արտասանած չէր:

Այս յանկարծական մեկնումէն, էքթոր զգացած էր պարապ մը. Ժաննէն հեռու մնալու պարապը: Առջի օրերը իր հոգին չարչարանքին նկատմամբ խուլ մնալ ուղած էր, եւ ոսկայն...: «Անիմաստ բան է. շատ վստահ եմ որ այդ պզտիկը անտարբեր է իմ մասին, եւ թէ զայն պիտի մոռնամ»: Այսպէս ութ տարւոր օրեր անցան, ու միայնութեան գրգռիչ զգացողութիւնները չխուսափեցան իրմէն. «Պէտք է

որ մոռնամ»: Չէր մոռնար: Իրիկուն մը, ջղայնացած տուն գալով՝ անձանութ գիրով նամակ մը գտաւ. անմիջապէս կուսնեց: «Գիտեմ, որ շատ գէշ բան մը կ'ընեմ, բայց շատ վիշտ ունիմ արդարեւ: Կ'ուզեմ գիտնալ թէ, պէ՞տք է որ վանք մտնեմ»: Էքթոր մինակ էր. նամակին թուղթը եւ Ժաննի ձեռքերով գրուած գիրերը համարյոյնբով ծածկեց, յետոյ ինքզինքը հեգնեց. «Եպրոցականի մը պէս ապուշ եմ: Յիմար բան է այս իմ տարիքիս, եւ երիտասարդ աղջիկներու մասին ունեցած փորձառութեանս համար»:

Բայց իր խիղճը կը բողբէր: «Ո՛հ, այդ աղջիկը ուրիշներու չի նմանիր, գիտես դուն: Իր միակ մտածումը դո՛ւն ես. երբեք մէկը սիրած չէ նէ, ոչ սիրալը եւ ոչ մարմինը դիպուածով չէ ծախած. իր արտասանած վանք բառը՝ դատարկ խօսք մը չէ: Եթէ զինքը չուզես, արդարեւ իր կեանքին ապաստանարանը պիտի ըլլայ վանքը»:

Անոր նկատմամբ ծայրայեղ դուրդուրանք մը զգաց. յետոյ, այն մտածումը, թէ այդ սիրավառ փոքրիկ հոգին կը տառապէ՛ր այդ վայրկեանին իր իսկ սխալովը, իրեն անհանդուրժելի եղաւ:

Այդ իրիկունն իսկ նամակ մը գրեց Մաքսիմի, իմացնելով թէ, մօտ օրէն պիտի գար Վէզէրի. իր վերջնական մտադրութիւնը յայտնելու չէր համարձակեր: Գիտէր թէ պիտի ամուսնանար: Եւ ահա, ինչո՞ւ համար այսօր ներկայ գտնուելով ամուսնութեանը անոնցմէ մէկուն՝ զոր մկրտած էր «կէս կոյսեր», թերեւս հրաւիրեալներուն մէջ, մինակը ըլլալով, ազդուած էր այդ քիստոնեայ ամուսնութեան սկզբունքներու զարհուրելի հակասութիւններէն, եւ իր ապրած հեշտասէր ընկերութեան բարքերէն:

Մոխրագոյն մօրուքով եպիսկոպոսը, այս անգամ փեպային գովեստը սկսած էր:

«Դուք, պարո՛ն, ընտրանի երիտասարդներու դասակարգին կը պատկանիք եւ կառավարական ձեր պետերուն վստահութիւնը կը գրաւէք: Ժողովուրդները կառավարելու վարժ՝ գիտէք թէ անոնց երջանկութեան սկզբունքը՝ ընտանեկան կարգ ու սարքին եւ ամուսնութեան նուիրա-

կանութեան յարգանքին մէջ կը կայանայ» :

Այս արաաքոյ կարգի խօսքերը կ'իյնային անտարբեր բազմութեան մէջ, որ կը սկսէր քերկար գտնել ճառախօսութիւնը: Պատշաճութիւնները վերցուեցան. բռնուած խընդուքներ ձայն տալ սկսան անկիւնէ մը, ուր քանի մը բարեկամներ հաւաքուած էին Վալպէլի եւ Տօրայի շուրջը: Էքթօր կը մտածէր. «Ի՛նչ կատակերգութիւն, Լէսթրանտ կառավարի՛չ ժողովուրդներու: Միեւնոյն բանը ժազըլինի անմեղութիւնը եւ իրենց ամուսնական սրբութիւնը: Ինչո՞ւ պաշտօնական այս կեղծաւորութիւնը: Ինչո՞ւ: Ինչո՞ւ ստախօսութիւններու շարքը. Ինչո՞ւ այդ ծաղիկները՝ որ կը նշանակեն «ֆիզիքական ամբողջականութիւն», այդ հեշտամոլիկ չարածճիին ճակտին վրայ: Ինչո՞ւ համար հաւատարմութեան հրապարակային խոստումներ այդ մարդոց մէջ՝ որոնք դարձեալ պիտի վազեն հաճոյքին ետեւէն, ուր որ գտնեն: Ինչո՞ւ քրիստոնեայ ամուսնութեան պատկառելի երեւոյթը այս աշխարհական ընկերութեան շուրջ՝ որ այլևս քրիստոնեայ ամուսնութեան գեղեցկութեան յատկութիւններէն եւ ոչ մին պահած է:

Եպիսկոպոսը կը լմնցնէր ճառախօսութիւնը, երկու ամոններուն ժազմելով բազմութիւ սերունդ մը: Սակայն նէ, ճերմակ հագած այդ շիկագոյնը, եւ նա, արուեստագիտական կուսապիղծը, որոշած էին սահմանափակել իրենց սերունդը, քանի մը տարի ձգձգելով, միայն իրենց զգայասիրական քմայքներուն նուիրուելու եւ օրին մէկն ալ ամուսնալուծումով մեկնելու, երբ այլևս իրարու հաճելի չթուէին: Արգասաւորութիւն, հաւատարմութիւն, անբաժանելիութիւն.— ահա այն բաները՝ որ ամուսնութիւնը բարձր եւ ազնիւ կը բռնէին. այս երկու եսասէր արարածներու միութենէն ի՛նչ կը մնար. գիտուն, երիտասարդ աղջկէն՝ փտած միտք մը եւ զգայասիրութիւնը միշտ արթուն գէպի ամուսինը, արդէն իսկ արհամարհանքով լեցուած դէպի կիներ եւ դէպի էգը:

Վերջապէս եպիսկոպոսին ճառը կը լմնար բարեմաղթութիւններով. խորհրդանշանային այս եկեղեցական պաշ-

տամունքը բարեշրջեց այս անգամ հրաւիրեալներուն ուշադիր աչքերը, դիտուեցաւ մատանիներուն անցուիլը՝ մատերուն մէջ, լուծիւն պահուեցաւ՝ լսելու համար ամուսիններուն «այո»ն: Ու երբ արտասանուեցան այդ մեծ «այո»ները, այդ սկեպտիկ կամ անհաւատ բազմութիւնը զգաց որ այժմ նոր բան մը, հոգիներու խորհրդաւոր միացումը իրականացած էր, թէ Լէսթրանտ եւ ժազըլին «ամուսնացած» էին. — քրիստոնէութեան քսան դարերովը՝ հոգիներու մէջ հիւսուած խորհուրդին նկատմամբ՝ մթին հաւատալիք:

Ոսակցութիւնները, խնդալները վերսկսան մինչեւ արարողութեան վերջանալը: Ողորմութեան գանձանակը պատրուակ եղաւ խորհրդածութեան եւ ժպիտներու: Պատուակալ երկու տղաքները՝ Լէսթրանտի բարեկամներն էին. իսկ պատուակալ օրիորդներն էին Մարթ տը Ռեվէրսիէ եւ Մոտ: Մինչդեռ ասիկա, ձեռքը տուած իր ընկերուհիին, կ'անցնէր կարգէ կարգ. աչքերը կը յառէին իր վրայ բնականաբար: Բարիզ վերադարձէն ի վեր՝ մէկու մը բան մը ըսած չէր, իր ամուսնութեան խզումի մասին, եւ ոչ ոք կը համարձակէր զինքը հարցուփորձելու: «Ջարմանալի՛ կատակերգուհի՛ն, կը խորհէր Էքթօր, աչքերով հետեւելով անոր: Եթէ չգիտնայի պէտք եղածին չափ, պիտի կրնայի՞ գուշակել, թէ նէ լքուած, փճօ ցած, դատապարտուած է ամէնէն վատթար հնարքներով»: Նէ կ'անցնէր, միշտ թագուհի, միշտ գեղանի. այնքան որ նոյն իսկ իր վատ թշնամիներու հիացումը կը գրաւէր, այնքան սրտագրաւ, որ ժարդերը կը կարծէին, նետելով իրենց նուէրները, երկնցուած գանձանակին մէջ. Էքթօր կը դիտէր զայն: Հասաւ Միւպէրսօի առջեւը. նուէրը ձայն տուաւ գանձանակին մէջ. Մոտի դիմագիծերուն վրայ սեւ յուղումի նշաններ չէին երեւցած, բայց նա, վայրկեան մը վերջ, ծած, ծունկի եկած էր Աստուծոյ պատկերին առջև:

Չայն մը, Էքթօրի ետեւէն, ըսաւ.
— Եկեղեցիին շրջանը ըրի, Էթիէնէթը չգտայ: Տեսա՞ք զինքը:
Փոլ Լը Թէսիէն էր. նոր եկած էր եւ եղբօրը քով կեցած:

— Ո՛հ, յարեց Էքթոր. չտեսայ. Մոտին հարցուցէք:
 — Այո՛. հիմա, աւանդատունը: Կը կարծեմ, որ քիչ մը
 յետոյ վերջ պիտի գտնէ այս ընտանեկան հանդէսը:
 — Հի՛նդ վայրկեանէ, Սակայն աւանդատան մէջ, տ-
 րարողութիւնները երկար պիտի տեւեն:

Ստուգիւ շարքը անվերջանալի եղաւ: Աւանդատան
 մէջ, նորապսակները՝ ընկերացած իրենց ծնողաց, հրաւիր-
 եալներուն հետ քաղաքավարական խօսքեր փոխանակեցին,
 համբուրուեցան. իսկ բարեկամներ, զոյգեր, շուտով իրա-
 քու քով եկան, անկիւնները քաշուեցան, սկզբնաւորու-
 թիւնը ընելով ֆլիրթներու: Ոմանք ամէն ինչ մոռնալով՝
 ինքզինքնին պարասրահը կը կարծէին, կը զբօսնէին, կը
 քսուրոտուէին: Հրաւիրեալներէն Ռոթէնհաուզ կոմօը կի-
 ներու ներկայութեան կը պատմէր «դարավերջիկ» պարա-
 հանդէսի մը անցքերը, ուր աղջիկ մը՝ բոլորովին մերկ,
 շրջանը ըրած էր սրահին եւ յետոյ փորի պարը խաղացած
 էր:

— Բոլոր լրագիրները, այս ատու կը գրեն ատոր մա-
 սին. կ'երեւի թէ դատական իշխանութիւնը պիտի միջա-
 մըտէ:

Խօսողներուն մօտը, Էքթոր մէկ կողմ քառած՝ ցած
 ձայնով խօսելով Սիւպէրսօի եւ Վալպէլի՛ի ներկայութեան
 Տօքթ. Քրոսի եւ տիկին Ավրըզաքի ու Փոլ Լը Թէսիէի,
 չարածճիւղութեամբ կ'ուզէր խօսեցնել Տորան, թէ ի՞նչ էին
 իր կարծիքները ամուսնութեան նկատմամբ:

— Ո՛հ. ես, կը յարէր պզտիկը, ժպտազին ցոյց տալով
 իր մարգարտանման ակօսներուն շարքը, կը վստահեցնեմ
 ձեզ թէ չեմ աճապարեր ամուսնութեան համար: Անկողնին
 մէջ միամիտակ քնանալը աւելի լաւ է:

— Էհ ուրեմն, կ'ըսէր Վալպէլ. բայց, երկու հոգինոց
 անկողին ալ կայ: Կարգացած էք Պալլաքի «Բնախօսու-
 թիւն»ը.

— Պալլաք. ի՞նչ է այդ: Վստահ եմ որ գիրք մըն է
 պատկերազարդ, անցեալ օր գործատեղիիդ մէջ ցոյց տուա-
 ծիդ նման: Այլևս չեմ ուզեր ատանկ բաներ տեսնել:

Տորայի տղիտութիւնը կը զուարճացնէր իր բարեկամ-
 ները. Վալպէլ բացատրութիւն տուաւ «ամուսնութեան բը-
 նախօսութեան» վրայ, որուն ակնարկած էր: Քրոս, խնդա-
 լով մօրուքին տակէն՝ առաջարկեց աւելի արդիական գիւ-
 տեր. ամերիկեան շեշտով կը բացատրէր.

— Բոլորովին նոր ձեւ մըն է. անկողինը՝ որ կը բաց-
 ուի եւ կը մօտենայ ըստ կամս: Չէ՞ք ճանչնար. Ամերիկա-
 յի մէջ շատ կայ:

— Օ՛Ֆ, աղէկ, պահեցէք զանոնք ձեզի, յարեց Տորա:
 Դիշերուան շապիկի կը նմանի:

Կանգ առաւ յանկարծ եւ այս անգամ կարմրեցաւ:
 — Յառաջանանք, ըսաւ նկարիչը, իր թիւը մտցնելով
 Տորայի կլորիկ թեւին մէջ, որ քիչ մը չփոթած, անոր
 յանդիմանութիւններ կ'ընէր:

— Միշտ կը ծաղրէք զիս: Կը զբօսնուք, ինծի ըսել
 տալով խենթ ու խելառ խօսքեր, բազմութեան առջեւ:

— Աւելի շատ կը սիրեմ քեզ, երբ որ կ'ըսես յիմար
 բաներ. ըսաւ Վալպէլ:

— Իրա՞ւ:
 Ու սեւ աչքերը կը նուաղէին սիրալի գգուանքներով:

— Իրաւ որ այս վայրկեանիս ձեզի կը պաշտեմ:

Եւ որովհետեւ աւանդատան սեւ կամարին տակէն
 կ'անցնէին, համրոյր մը դրաւ անոր թուխ ծոճրակին վը-
 րայ, անանկ որ պզտիկ խառնածինը հեծեց թեթեւ մը:

Մոտ, քիչ մը նեղացած բազմութենէն, շուտով մը
 ձգած էր քոյրը, մայրը եւ Լէսթրանժը ու ապաստանած էր
 կողմնակի պահարանի մը մէջ՝ ուր եկաւ իրեն միացաւ Ա.
 հարոն: Յուրտ քաղաքավարութեամբ մը զայն ընդունեց:
 Ինքը, ինչպէս միշտ, մեծամեծար, տափակ, կը փորձէր ըն-
 տանութիւն եւ Մոտ արհամարհանքով կը մերժէր:

Նա կը մրմբար խուզոտ ձայնովը.

— Շատ երջանի՛կ այս արարողութենէն: որ ինծի կը
 յուսադրէ թէ, քիչ ատենէն իմ կարգս ալ պիտի զայ:

Եւ որովհետեւ Մոտի դէմքը կը կ՛ըկուէր,

— Միտքերնիդ չփոխեցի՞ք գոնէ:

Իր աչքերը կը փայլէին ամէնէն տգեղ ցանկութեամբ :
Մոտ յարեց .

— Զեզի ըսի թէ կ'ընդունիմ սակարկութիւնը :

Այս բառին տակ , ծռեց գլուխը . յետոյ խռպոտ ձայնով մը ըսաւ :

— Այս առտու բոլոր դործերը կարգադրուեցան : Գալով Ալֆոնս . տընէօվիլ փողոցի տան , գնումի պայմանագիրը ստորագրեցի . ուղղակի կրնաք երթալ հոն :

— Լաւ ուրեմն , յարեց Մոտ . վաղը իրիկուն պիտի մեկնինք Սբա , մայրս եւ ես . Շաբաթէ մը պիտի գաք մեզի միանալու : Մեկնեցէ՛ք այժմ :

Հնազանդեցաւ եւ դուրս ելաւ , առանց լսելու , բարկութեամբ եւ գարշանքով Մոտի շրթներէն դուրս ելած ըսպառնալիքը :

« Կորսուէ՛ . թշուառական , դո՛ւն ես որ պիտի վճարես կեանքիս սնանկութիւնը եւ սո՛ւղ պիտի վճարես : »

Ամփոփուեցաւ , անմիջապէս ներս մտնելը տեսնելով Փոլ Լը Թէսիէի :

— Էթիէնէթի նկատմամբ լուրե՞ր կ'ուզէք , ըսաւ նէ :

— Այո , չեմ տեսներ զայն . անհանգիստ եմ : Արդեօք հիւսնո՞ղ է :

— Ո՛չ . նամակ մը ստացաւ այս առտու , երբ դուրս ելլելու վրայ էինք : Պարտաւորուեցաւ երթալ հոն , ուր կանչուած էր :

— Ուրկէ՞ էր նամակը :

— Նախանձոտ մի՛ ըլլաք . չեմ կրնար ըսել ուրկէ . չեմ գիտեր : Բայց կնոջմէ մ'էր :

Լը Թէսիէ , ապահովուած , ձեռքը պագաւ : Մոտ կէս ճշմարտութիւնը կ'ըսէր միայն : Էթիէնէթ ստիպողական նամակ մը ստացած էր զինքը կանչող . այդ նամակը Սիւզաննէն էր , որ Բարիզ կը գտնուէր , առանց որ քոյրը կասկածելու :

Տակաւ առ տակաւ աւանդատունը պարպուած էր . ժազըլին , մայրը եւ Լէսթրանտ միացան Մոտի :

— Ո՛ւֆ , ըսաւ հարսը : Ի՞նչ նեղութիւն : Ամուսին մը

խաբելու համար , եթէ այսքան նեղութիւն քաշել հարկ ըլլար , այլեւս անհաւատարիմ կին չպիտի գտնուէր :

Էքթոր մտնեցաւ Մոտի .

— ՆԱ . կ'ուզէ ձեզի խօսիլ , ըսաւ ականջին :

Դեղնեցաւ նէ , բարկութեան դեզին մը եւ ոչ վախի :

— Ո՞վ է ՆԱ . ժիւլիէնը .

— Ժիւլիէն : Զեզի պիտի հետեւի մինչեւ տուն , եթէ վայրկեան մը չհաճիք հետը խօսակցելու : Խորհուրդ կուտամ ձեզի , հոս խօսելու ըր հետ : Մարդ չկայ , մինչեւ մեծաբանքի ժամուն . . . : Զեզի կը սպասէ նրբանցքին մէջ :

— Լա՛ւ . կ'երթամ :

Կէս մութ նրբանցքին մէջ անոր հանդիպեցաւ :

— Մո՛տ . կ'ուզեմ ձեզ տեսնել վերստին . կ'ուզեմ պէ՛տ է : Տեսէք որքա՛ն չարչարուեցայ . քեզ կը սիրե՛մ այնքան . . .

Զայնը խորտակուած էր , եւ ակունքերը կը կափկափէին :

— Մտի՛կ ըրէ , յարեց Մոտ , որ անոր կը նայէր պիչ պիչ : Այլեւս քուկդ չպիտի ըլլամ , երբեք , երբէք , որովհետեւ խօսքդ դրժեցիր եւ վատ եղար : Աս մէկ : Եւ ութ օրէն ուրիշի մը Պահձուն պիտի ըլլամ : Կը լսե՞ս : Այժմ կորսուէ :

Պաղատեցա՛ւ :

— Մոտ , ինքզինքս պիտի սպաննեմ : Կ'երդնում որ պիտի մեռցնեմ ինքզինքս , եթէ զիս ճամբես :

Անոր նայեցաւ , աչքերը աչքերուն մէջ եւ ցած ձայնով մը կարծես սրտէն ելած , նման անոր , երբ կ'ըսէր ժամանակին նէ « կը սիրե՛մ զձեզ » այս այդ ձայնով աւանդատան դրան մէջ նէ անոր պատասխանեց :

— Լա՛ւ ուրեմն , սպաննէ՛ ինքզինքդ :

.
Ժամ մը յետոյ , Քլէպէր փողոցի հալին մէջ՝ կանանչներով զարդարուած , կը ճաչէին : Սպանիական նուազախումբ մը պարի եղանակներ կը զարնէր , դոյզեր կը պարէին քաղաքի արդուզարդով : Զէին կրցած վար դնել Բոլ

Լը Թէսիէն, որ անմիջապէս վաղած էր Պօմ փողոց, ի խնդիր էթիէնէթիւ Բայց էքթոր հոն էր, առանձնացած մէկ կողմ. կը նայէր լոյսի ցուքերուն տակ, դերասաններու այս մտերմիկ դիւթանքներու տրամներուն... այնքան անգամներ արդէն դիտուած: Ու լռիկ, այլեւս չխառնուելով խըմ բակներուն, կը խորհէր, դառնութեան կաթիլներ կը խառնուէին իր յուսոյ մեղրին.

«Ըսել թէ սիրեցի այս ընկերութիւնը, թէ ճաշակեցի այս մարդոց միտքը, թէ փափաքեցայ այդ կիներուն...»

Քսան տարիներ, առաջին պարահանդէսները, խորհրդաւորութեան յուզումը՝ զոր իրեն առթած էր Բարիզոնին, եւ երկչոտ հիացումը՝ նշանաւոր մարդոց եւ ընտրուեալ գեղեցկութիւններու առջեւ: Յետոյ սովորութիւնը, յուսախաբութիւնը կուգային տարիներու հետ, միեւնոյն մթնոլորտին մէջ: «Ու հիմա կը տեսնեմ որ այս ամէնը ձեռքիս տակն են. մարդերու միտքը, կիներու գեղեցկութիւնը ոչինչ են, եւ անոնցմով անցուցած ժամանակս կորսուած է»: Նման սոյն երիտասարդներուն փնտռած էր զգայնութեան խոռվքը՝ կիներու նայուածքին մէջ, մանկամտեղ աղջիկներու յստակ աչքերուն մէջ. «Ոհ, ալ բաւական է, ամէնուն ալ համը առած եմ: Արդարեւ չկայ մէկ հատ իսկ որուն համար քայլ մը պիտի առնու»: »

Այդ փայլուն եւ մոլի ընկերութիւնը այլեւս զինքը չէր զբօսցնէր: Թող Տորա յետ կիսաւուրը անցնէ նկարիչի մը հետ, թող ժիւլիէն Ավրրզաք իոնայ Սիւպէրսօի գիրկը, թող պզտիկ Բիւլէրսիէները եւ ուրիշներ, մարդոց ընկերութեան մէջ փնտռեն ամուլ ջղայնացումներ, զինքը ոչ եւս կը հետաքրքրէին. եթէ կրթի ազդեցութեամբ կոյսի մը անկումը՝ սուսգիւ աղետարչ հոգիի տրամ մըն է, այս պզտիկ պչրուհիներու սանձաբձակ վայելքներն ալ վտարվիլէ աւելի գերազանց բան մը չէին: «Նէ՛ որ իրաւամբ հոգի մըն էր, Մոտ մեր դեղանի սփինքսը, կը հրաժարի իր հանելուկի կեանքէն, եւ բողբոթիւնը զնէ կը լրտեսէ, ինչպէս միւսները»: Այո՛, բողբոթիւնն էր, որ ծպտուած,

կը լրտեսէր կէս կոյսերը, կեանքի դարձումը քին մէջ: Իրերու զօրութիւնը կ'երեւէր էքթորի, պարզ, անխուսափելի մեքենականութեան մը մէջ. «որովհետեւ կիներու անկեղծ դուրգուրանքին մէջ ծածկուած եւ եկեղեցիէն հրամցուած անձնուրացութիւնը եթէ սեռերու մերձեցումին օրէնքը չէ, այդ մերձեցումը պիտի յանգի շահու եւ սիրոյ հակամարտութիւններուն. եւ ասիկա միայն կրնայ լուծել բողբոթիւնը»:

Գրան գարշանք մը լեցուեցաւ իր մէջ, այս մտածումներուն վրայ: Նուագախումբը ի զուր շէնչող եղանակներ կը զարնէր եւ զոյգերը ի քարշ կը վարէր պարերու փոթորիկին մէջի այդ կանանչներուն, ծաղիկներուն եւ զարդարանքներուն տակը, յամբօրէն կ'երեւէր իր աչքերուն՝ գերեզմանին քարը՝ ուր ծանր ծանր եւ անհոգ կ'իջնէր այդ փտած ընկերութիւնը, մահուան դատապարտուած՝ ցածքեցուցած ըլլալուն համար մարդկային սիրոյ աղբիւրը՝ որ է կոյսերուն անմեղութիւնը, եւ սպաննած ըլլալուն համար ամուսնութիւնը, ջնջելով երիտասարդ աղջիկը...: Այո՛, այդ ընկերութիւնը փտած է, բողբոթեան հոտ դուրս կ'ելլէ անկից»: Ու, յանկարծօրէն փափաք մ'ունեցաւ էքթոր, փախչելու, թողելու այդ ընկերութիւնը, այլեւս հոն չվերադառնալու համար, երջանիկ, կօշիկներուն ծայրով իսկ անոր փոշին հետը չտանելուն: Միեւնոյն հարուածով, տեսաւ, գաւառի անկիւն մը, ստոյգ երիտասարդ կոյսի անբիծ հոգի մը՝ զոր ուղեց սիրելի:

Առանց մէկու մը մնաք բարով ըսելու. դուրս ելաւ, սանդուխներէն իջաւ այդ տանը՝ ուր շատ անգամներ ժըպտուն զուարթութեամբ մը ներս մտած էր: կը խորհէր.

«Ահաւասիկ սանդուղներ՝ ուրկէ այլեւս վեր չպիտի ելլիմ»:

Մեկնելէն վերջ՝ հանդէսը քիչ մը եւս շարունակուեցաւ. լմնալու վրայ էր. երբ եկան կանչելու Մոտը՝ որ կը խօց սակցէր վիպագիր Էսբիէնի հետ.

— Օր. էթիէնէթը կը խնդրէ օրիորդը:
Մոտ, գնաց անոր սենեակը, իրենիսին մօտիկը. ան-

միջապէս, էթիէնէթ իր բարեկամութիւն կուրծքին վրայ
հնկաւ:

— Ո՛հ; սիրելի՛ս, սիրակա՛նս: Որքա՛ն վիշտ ունիմ:
Մոտ զայն նստեցուց իր ծունկերուն վրայ, գգուեց,
համբուրեց. կը սիրէր զնէ, այդ գեղեցիկ ընկերուհին, հո-
գիով առողջ, քիչ մըն ալ նախանձով կը սիրէր անոր ֆիզի-
քական կատարելութեանը եւ առողջութեանը համար՝ զոր
կրցած էր պահել:

— Ի՞նչ կայ, սերունիկս, Սիւզաննը հիւա՛նդ է:

— Ո՛հ, ոչ, ոչ. ատկից աւելի գէշ:

Իր արցունքներուն մէջ՝ պատմեց խղճալի եւ միանգա-
մայն վայրագ պատմութիւնը. առջի օրուան շուայտանք-
պարահանդէսը, գինովցած աղջիկը, բոլորովին մերկ ելած,
հինգ հարիւր կատաղի մարդոց ձեռքերուն տակ. յաջորդ օ-
րը ձերբակալուած եւ գայթակղութիւնը թերթերու մէջ
գրուած:

Յոյց տուաւ լրագիր մը, նայէ՛, ըսելով: Միեւնոյն ա-
տեն, անունները քրոջը, մօրը եւ հօ՛րը...

Փութաջան լրատու մը կը պատմէր արդարեւ Սիւզան-
նի անցեալին վրայ տեղեկութիւններ, որ եւ կը կոչուէր
Մաթիլտ Տիւրուա, եւ սկզբնատառերով ալ, հանգուցեալ
երեսփոխան Ասքէնի անունը:

— Բայց քու անունդ չկայ, մրմնջեց Մոտ, ստուգիւ-
խղճահարելով:

— Ինչ կարեւորութիւն ունի այդ: Ոչ ոք ինձմով կը
հետաքրքրուի. կը հասկնաս: Խեղճ Փոլն է որ կը խորհիմ:

Անկեղծ էր նէ. իր վիշտն էր, իր սիրած մարդուն չար-
չարանքը:

Մոտ մխիթարական բան մը փնտռեց:

— Փոլ գրեց կը սիրէ եւ չազդու իր անանկ բաներէ՛ ո-
րոնց պատասխանատուն դուն չես:

— Ի՛նքը: Խեղճ բարեկամ: Գիտեմ թէ նուազ չպիտի
սիրէ զիս: Եւ սակայն մեր ամուսնութիւնը անկարելի է:
Փոլ պիտի կարծէ թէ, իբր թէ զինքը չեմ ուզեր: Որքա՛ն
պիտի ուրախանային իր քաղաքական թշնամիները: Վնա-
սե՛լ Փոլի: Ո՛հ, երբե՛ք այդ բանը:

Մոտ առարկութիւն չէր գտներ. ըսաւ միայն.

— Ի՞նչ ընել կ'ուզես,

— Պէ՛րն փողոց պիտի վերադառնամ, բոլորովին ա-
ռանձին եւ պիտի աշխատիմ:

— Օ՛ն ուրեմն, ըսաւ Մոտ, ուսերը թոթուելով. տաղտ-
կալի բաներ են ասոնք իրաւ որ սակայն պատճառ չկայ
որ չտեսնես Փոլը՝ որ քեզ կը սիրէ եւ դուն ալ զինքը կը
սիրես: Կարելին ըրաւ ամուսնանալու համար. բայց պարա-
զաները արգելք եղան քեզի, թէեւ սխալը քուկդ չէր:
Քիչ մըն ալ ժամանակին թողունք: Ամէն ինչ կը մոռցուի:
Պիտի դայ օր մը՝ երբ Փոլ պիտի ձգէ պանքան եւ Ծերա-
կոյտը. այն ատեն պիտի ամուսնանաք. բայց, մինչեւ այն
ատեն, սիրեցէ՛ք:

էթիէնէթ յամառօրէն գլուխը կ'երերցնէր:

— Ո՛չ. ինչ որ կ'ըսես, բանաւոր է. կ'ընդունիմ որ
Փոլ հետս պիտի ամուսնանայ, պաշտօնները թողնելէ ետք
եւ այն ատեն ես ալ պիտի համակերպիմ: Բայց, մինչեւ
այն ատեն, չեմ ուզեր ըլլալ իր ՍիՐՈՒՀԻՆ: Չեմ ուզեր.
չեմ կրնար: Անանկ մը կուգայ ինձի, որ այլեւս չպիտի
սիրէի զայն և դժբախտ պիտի ըլլայի:

Կեցան քիչ մը, առանց բան մ'ըսելու: Երկուքն ո՞րը
իրաւունք ունէր: Չէր գիտցուեր. գիտակցութիւնը անդե-
կավար, հանդարտ, պարզապէս իրենց բարեխառնութեան
մղումին ենթակայ:

— Ու ինչպէ՞ս պիտի ապրիս, խեղճ սիրականս, հար-
ցուց Մոտ:

Փպտեցաւ էթիէնէթ, արցունքները՝ դեռ արտեւա-
նունքներուն վրայ:

— Կիթառ պիտի զարնեմ սրահներու մէջ: Կը յիշես,
փետրուարին, երբ եկայ զաշտպանութիւնդ խնդրելու. և
այն օրէն ի վեր, ի՛նչ ղէպքեր, ի՛նչ փոփոխութիւններ մեր
կեանքին մէջ:

Յուշելով իրենց վերանորոգ բարեկամութիւնը, իրա-
րու գիրկ նետուեցան: Գուցէ առաջին անգամ ըլլալով՝
անցեալէն իրենց մնացած այդ՝ առողջ եւ ազնիւ զգուանքի
փարուսին մէջ, ահաբե՛լ կեանքի սեմին վրայ՝ որ ընդու-
նելու վրայ էր, Մոտ խառնեց իր արցունքները՝ էթիէնէթ
Տիւրուաի արցունքներո՛ւն:

«Մոտ, կը հնազանդիմ քեզի. ինքզինքս պիտի սպաննեմ. որոշուծս տուած եմ այն օրէն ի վեր, երբ զիս բըրտօրէն ճամբեցիր, Շանսլէի մէջ: Եթէ գործադրութիւնը ուշացուցի, պատճառը այն չէ, որ մահէն վախցայ, եւ ոչ ալ յուսացի զքեզ կակուղցնել: Բայց կ'ուզէի քեզ վերըստին տեսնել, Մոտ, եւ երբ հասկցայ որ չէիր ուզեր զիս ընդունիլ, սպասեցի ժաղըլինի ամուսնութեան առիթին, քեզ տեսնելու եւ հետդ խօսելու:

«Որ մի պահեր ինծի դէմ, այս բուռն ընթացքիս համար: Ամիսէ մ'ի վեր շատ տառապեցայ քեզի համար, եւ չեմ ուզեր զքեզ...: Քեզի պիտի վերաբերիմ դեռ այն վայրկեանին՝ երբ ատրճանակին պողը պիտի ջրգամ քունքիս վրայ. ինչպէս որ քեզի եղայ այն վայրկեանէն, երբ քեզի հանդիպեցայ: Կը տեսնես, ճիշդ մեռնելէ առաջ՝ կը նշմարեմ յտակօրէն ճշմարտութիւնը՝ որ կը պահուէր ինձմէ, եռուզեռ կեանքիս միջոցին. ստեղծուած չէի կռիւններու համար՝ ուր կ'ուզէիր զիս ի քարշ վարել: Ինչ բանի որ կարծեցի յաղթել եւ ինձմէ հեռացնել, այժմ կը վերադառնայ ինծի եւ զիս կը բռնէ: Ստեղծուած էի բոլորով սրտիւ քեզ սիրելու: հաւատարմօրէն եւ միշտ:

«Այլեւս չես ուզեր զիս. կեանքդ կը նեղեմ. լա՛ւ ուրեմն. ներէ՛ ինծի. ազատ կը թողում ճամբագ: Չեմ խընդրեր որ ցաւիս իմ վրաս եւ ոչ ալ լաս. միայն մտածէ՛ վրաս բարեկամաբար. աւելի ուշ, ի վարձատրութիւն իմ անսխալկան հնազանդութեանս՝ քու վերջին հրամանիդ: Չեմ խնդրեր զիս սիրել՝ մահուընէ անդին. գիտեմ, որ ոչ եւս կը սիրես զիս: Կը պաղատիմ քեզի միայն, որ չարբես քու յիշողութեանդ, թէ զիս սիրեցիր, կը հայցեմ քեզի, յիշէ զիս երբեմն, առանց գէշ յիշակալութեան: Տե՛ս, կը մեկնիմ պարզապէս եւ որքա՛ն տառապեցայ...:

«Զիս սիրած ժամանակամիջոցդ եղաւ իմ ամբողջ կեանքը»

քըս, եւ սիրտս կը զեղու կատարելապէս, ու չեմ զայրանար նախախնամութեան դէմ: Հակառակ իմ այժմու օրհասականիս, գիտեմ թէ, ամէնէն աղուոր, ամէնէն նախանձելի կեանքը ունեցած պիտի ըլլայի, սիրական Մոտս: Ոչինչ կրնայ ջնջել ատիկա. հազուադէպ վայրկեաններու մէջ անձդ լքեցիր ինծի, եւ սէրը ինձմով ճանչցար: Ոչինչ պիտի կրնայ մոռցնել ալ ատիկա. ամէն ժամ կը կրկնեմ ատիկա, ու ամէն անգամ ատիկա ինձ կ'երեւայ այնքա՛ն հըրաշալի, այնքա՛ն պաշտելի, որ կը մոռնամ չարչարանքս:

«Բայց, երբ կը խորհիմ, թէ վաղը ուրիշի մը պիտի ըլլաս, թէ ուրիշ մը քեզի պիտի նայի եւ քեզ պիտի շօշափէ. քունքիս մէջ զնդակի մը ցաւը ինծի կը թուի անմիջապէս փափաքելի: Ահա թէ ինչո՞ւ կ'ուզեմ մեռնիլ, եւ մահը կը դրկե ջերմագին, հակառակ անձանթին սոսկումին, որ անդի՛ն է: Որովհետեւ անպեղծականին կը հաւատամ, Մո՛տ. հաւատքը իմ մէջ արթնցաւ սա վերջին ժամանակի իմ անկումէս ի վեր. Ու քաջութիւնը կ'ունենամ քեզի ըսելու. խաբսւեցանք, չարիք գործեցինք. մեր խըղճին դէմ գործեցինք. արժանի եղանք պատժուելու: Կը մաղթեմ որ պատիժը միայն զիս շանթտարէ:

«Մնաս բարձ՝, սիրական սփինքս, անգութ եւ բարերար. կը մեռնիմ բոլորովին քեզի նուիրուած: Այն պահուն՝ երբ զիս պիտի սպաննեմ, ու հիմա՛, պիտի մտածեմ քու շրթունքներուդ, քու աչքերուդ. քու թեւերուդ եւ մազերուդ հոտին, եւ պիտի մեռնիմ քեզի՛ համար, քու մէջդ, ամէն ինչ քեզի նուիրա՛ծ: Կը սիրե՛մ զքեզ, կը սիրե՛մ զքեզ, կը սիրե՛մ զքեզ»:

Ժիլիլիէն



2.

Աշունը կը սկսէր, նոյն այդ տարւոյ, երբ Փոլ Լը Թի-
սիէ Վէզէրի գնաց կանչուած եղբօրմէն, յանուն իրեն,
Ժանն տը Շանթէլի ձեռքը խնդրելու էքթոր արդէն Վէ-
զէրի կը գտնուէր, վերջին գարնան ղէպքերէն ի վեր՝
երկրորդ անգամն էր որ հոն կը ճամբորդէր:

Սեպտեմբերի պայծառ օրով մը Փոլ առտու հոն հա-
ւաւ: Այգեկուծքը լմննալու վրայ էր, ամէն մէկ ճամբու-
ղարձուածքին, եզներէ լծուած կառքեր կ'անցնէին, բեռ-
նաւորուած խաղողով:

Վէզէրիի կալուածը, իր ընդարձակ թեւերը կը տա-
րածէ այդ անուն գիւղին եւ Վիէննա դետին միջեւ զըտ-
նուող միջոցին վրայ, երկյարկանի դղեակը Լուի Ժ. Գ. ի օ-
րէն մնացած շինութիւն մըն է ընդարձակ բակով, որուն
վրայ կը բացուի աւելի հին եւ տապանի մը պէս ծանրա-
ծանր դուռ մը: Աջ եւ ձախին վրայ ախոռներ եւ տնակներ:

Ծերակուտականը ընդունուեցաւ Տիկին տը Շանթէլի
կողմէ վերնայարկի սրահի մը մէջ:

Ժանն, էքթորի խորհուրդներուն վրայ աւելի արդիա-
կան ճաշակով մը հագուած է, միևնոյն ժամանակ զգու-
շանալով որ «պղտիկ վանտէուհի» թիփը չփոխուէր իր
մէջ, ինչպէս կը կոչէր զինք իր նշանածը: Գալով Մաքսի-
մի, ղէմքը քիչ փոխուած էր, հազիւ իր մագերը սկսած
էին աղբեկիլ եւ կարելի չէր գիտնալ թէ ինչու համար

տասը տարու աւելի մեծ կերեւէր: Թերեւս աչքերուն ար-
տայայտութենէն, շրթունքներէն կամ դէմքին ծալքերէն՝
ուր վիշտը գծուած կ'երեւէր:

Նախաճաշը լմննալուն պէս հետիոտն մեկնեցան, պրտ-
տելու համար ազարակը: Տիկին տը Շանթէլ տունը մնաց,
իսկ Ժանն կ'ընկերանար երեք այրերուն, թուխ կերպասէ
չըջազպետով մը զրկած իր նուրբ հասակը եւ յարգեայ գլ-
խարկով, Մաքսիմի հետ՝ առջեւէն կ'երթար. Փոլ ըսաւ եղ-
բօրը:

— Գեղեցկօրէն գեղեցկացած է նէ: Բարոյապէս ալ փո-
խեցի՞ր զնէ:

— Ոչ. յարեց էքթոր ժպտելով, պիտի զգուշանամ այդ
բանէն: Միշտ ճերմակ ու պղտիկ սագն է, որ գրաւած է
սիրտս, քիչ մ'աւելի արուեստով շտկելու համար իր փե-
տուրները, եւ քիչ մ'աւելի յոյզ: Ահա՛ ամէնը: Ու դուն,
խեղճ եղբայրս, ինչպէ՞ս կ'երթան քու սէրդ ու գգուանք-
ներդ:

Փոլ տխրութեամբ գլուխը երերողաց:

— Ոչինչ նոր: Իր դիմադրութեան մէջ յամառող տը-
ղեկ մը: Եւ ոչ մէկ բան կրնայ զնէ համոզել: Պնդե՞լ, չեմ
համարձակիր իսկ, որովհետեւ կրնայ ըլլալ որ այլևս զիս
չ'ընդուննի: Ոյո, իմ ծերուկ բարեկամս, քառասուն տարե-
կանիս, մարդ մըն եմ, որ ամէն օր, մէկ կամ երկու ժամ
կ'անցնեմ պաշտելի աղջկան մը հետ, փոխը դարձ սլրով եւ
որուն միայն այտերը եւ ճակատը համբուրած եմ:

— Սիւղաննի գործը լմնցաւ եւ այլևս չխօսիր:

— Լմնցած է, հիւանդանոցով, ուր թշուառ աւջ կը
մեռնելու վրայ է:

էքթոր բռնեց անոր թեւը եւ սիրագորով կերպով սեղ-
մեց:

— Օն, վստահ եղիր ապագային վրայ: Ամէն ինչ կանց-
նի, ամէն ինչ կը մոռցուի: Օր մը շնորհակալ պիտի ըլլաս
այդ սիրունիկ էթիէնէթի, քեզի դիմադրած ըլլալուն,
քեզի տալու համար անարատ կիւն մը, որպէսզի քու ամուս-
նութիւնդ անոր հետ ըլլայ նոր թուական մը եւ իրապէս

ունենայ զգալութիւն մը:

Ժանն ու Մաքսիմ հասած էին անտառուտ ըլլալի մը վրայ եւ հոն կը սպասէին հիւրերուն: Երբոր մօտեցան, նէ ըսաւ էքթորի:

Ցոյց տուէք ասոնք մանրամասնօրէն Պ. Փոլի, որպէս-
զի սիրէ իմ երկերս:

Ու աչքերը լուսաւորուած այն անբաղդատելի բոցով՝ որ սիրատարի անմեղութիւնն է, էքթորին կ'ըսէին «Ձեր հա-
ւանութեանն է որ կը սպասեմ, իմ միակ տէրս, կ'ուզեմ որ իմ երկերս սիրուին ձեզմէ»:

Իրենց կեցած տեղէն կը պարզուէր ընդարձակ դաշտե-
րու եւ պղտիկ ըլլալներու հորիզոն մը, որուն խաղաղ հը-
րապօրը մարդ կզգայ երկա՛ր, երկար, Մաքսիմ Փոլի կը
բացատրէր:

— Բլրակին կողքէն անցնող գետակը աջ կը դառնայ,
Ժպտուն եւ տերեւալից գիւղակին առջևը. այդ ջուրը վի-
էննա գետակին մէկ մասը կը կազմէ, մեր կալուածի հա-
րաւը կը քերէ ու կ'անցնի: Ու Ժպտուն գիւղն ալ պատ-
մական է, աւերուած անգլիացուց պաշարուաներէ եւ պա-
տերազմներէ, բողբջական կոիւներու ժամանակ: Չեմ գիտեր
թէ ինչո՛ւ անունը չէ փառաւորուած: Աղէյ-լա-Պաթայլ կը
կոչուի, ուր պիտի այցելինք:

— Հին պաշտպանութեան բեկորներէն բան մը մնա-
ցած է, հարցուց Փոլ:

— Պիտի տեսնէք. անճանաչելի խոշոր քարեր. ուրիշ
«չինչ»:

Յստակ կերպով կը խօսէր, առանց ուրախութեան,
երբեք չխնդալով, ինքն իր մէջ ամփոփուած, անցեալին
վրայ կատարեալ լուութեամբ մը: Ժանն, Փոլ կը Թէսիէի
հետ առաջ անցած՝ կ'ըսէր թէ, ոչ ինք եւ ոչ մայրը չէին
համարձակած զինքը հարցուփորձել, եւ թէ կը գուշակէին
իր մեծ փիչտին պատճառները:

— Բարիօր թողուցինք յուսահատ. Մաքսիմ մեզի բան
մը չէր յայտնիր: Մեր ընտանիքին պետն է, ստոյգ չէ՞: Մե-
զի հրամայեց վե՛զերի. իրեն հնազանդեցանք: Ո՛հ, տխուր

վայրկեաններ անցուցինք: Ինչպէ՛ս այդ կինը կրցած էր
չարչարել Մաքսիմի պէս մարդ մը, որ այնքա՛ն կը սիրէր
զինքը:

Լուութենէ մը վերջ, հարցուց նէ.

— Ամուսնացա՛ւ նէ:

— Ո՛չ, յարեց կը Թէսիէ. գուցէ որ մը պիտի ամուս-
նանայ. բայց, առ ամ մ բացակայ է Բարիզէն եւ ընկերու-
թենէն հետու. Պէ՛տք չէ այլեւս խօսիլ անոր վրայ:

— Ա՛հ, ըրաւ Ժանն, առանց կարմրելու, որովհետեւ
չէր հասկցած ըսածները:

Սակայն, պահիկ մը խորհելէ վերջ՝ աւելցուց.

— Խե՛ղճ կին:

Ազէյ դիւղը կը հասնէին: Կիսաւուր հանգստի ժամն էր
այգեկութքի աշխատող կիներուն եւ մարդոց: Կը վերաջ
դառնային խումբ խումբ ու զուարթագին, խաղողի արիւնը
չրթներուն վրայ:

Մաքսիմ, տխուր եւ խաղաղիկ, տեղույն պատմութիւ-
նը կ'ընէր:

— Դղեակէն միայն այս խոշոր քարերը մնացած են:
Պատմութիւնը կ'ըսէ թէ. հազար մարդիկ այրուեցան աշ-
տարակին հետ: Այսօր, կը տեսնէք, այդ հետքերուն շուրջը՝
բանջարեղէններ կը բուսնին: Նոյն իսկ հողը աւելի արգա-
սարեր է, գուցէ այդ զարհուրելի մտակոյտերուն պատճա-
ռաւ:

Ծերուկ գիւղացի մը կ'անցնէր, կորսաքամակ, արեւա-
հար. Մաքսիմ զայն կ'անչեց:

— Այնպէս չէ՞, հայր Լորան, հողը դղեակին շուրջ ա-
ւելի՛ լաւ է:

— Այո՛, պարոն կոմս, յարեց մարդուկը, շատ աւելի
լաւ. ժամանակաւ հոս տեղի ունեցած պատերազմին պատ-
ճառաւ:

Կը գիտէր նախանձոտ աչքերով այդ պարտա Ֆեւ հա-
րուստ հողը, մարդկային արիւնով սնած: Պատմական սրա
ձութիւններու թատերաւայր հանդիսացող այդ բնդարձակ
տարածութիւնը կը հանդարտէր, իրերու զորութեամբ եւ

բնութեան անխուսափելի բաղձանքովը, վերստին հողագործի կանոնաւոր պէտքերուն դարձած, այսինքն ցանքի, հունձքի, դեղնագոյն ցորենի, ծիրանափայլ խաղողին: Պզտիկ գիւղն ալ, պատերազմի անցքերէն վերջ՝ տարուէ տարի կը մտնէր պատմութիւն չունեցող աւանդութեան մէջ, կեանքին մէջ՝ որ անուն չունի:

Փանն կը ժպտէր այդ արգասաբեր հողին. արեւին, ապագային, իրեն յատուկ երջանիկ եսասիրութեան մէջ, մոռնալով իրեն սիրածներուն ներկայ դժբախտութիւնները եւ հայրենի երկրին ողբերգական անցեալը,

Բայց Փոլ եւ Էքթոր դիտելով Մաքսիմը՝ որ չէր խօսեր, առանձնացած իր երազին մէջ, գուշակեցին այդ երազը. վայրկեան մը իրենց եզբայրական սիրտը, միասին քաբախեց անորինին հետ: Ինչո՞ւ համար, խորտակուած մարդկային հոգւոյն մէջ, անսխալելի օրէնքով մը՝ կեանքը վերստին չի բուսցնէր յոյսը, սէրը, նոր հունձքերը:

«Ազգային գրադարան»



NL0310287

7017

ԳԻՆ՝ 40 ՏՐԱԽՄԻ

Արսպա՝ 20 Քրան՝, Ամերիկա՝ 1 տղար, Թուրքիա՝ 25 դր.

Librairie NOR OK. 18 rue Vouli, Athènes